

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԱՐԲԻՏՐԱԺԻ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ
(ԱԱՄԽ/ICCA)

ՆՅՈՒՅՈՐԲԻ 1958թ. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ
ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ԱԱՄԽ (ICCA)-Ի
ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՁԵՌՆԱՐԿ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԱՐԲԻՏՐԱԺԻ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՆՅՈՒՅՈՐԲԻ 1958Թ. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ
ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ԱԱՄԽ (ICCA)-Ի
ՈՒՂԵՑՈՒՅՑ
ՁԵՌՆԱՐԿ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մշտական արբիտրաժային դատարանի աջակցությամբ
Խաղաղության պալատ, Հաագա



Հրատարակված է Առևտրային արբիտրաժի միջազգային խորհրդի
կողմից
<www.arbitration-icca.org>

ISBN: 978-94-92405-14-2

Բոլոր իրավունքները պաշտպանված են:
© 2019 Առևտրային արբիտրաժի միջազգային խորհուրդ

© Առևտրային արբիտրաժի միջազգային խորհուրդ (ICCA)/(ԱԱՄԽ):
Բոլոր իրավունքները պաշտպանված են: Առևտրային արբիտրաժի
միջազգային խորհուրդը (ICCA)/(ԱԱՄԽ) խրախուսում է սույն
ուղեցույցի (այսուհետ՝ Ուղեցույց) օգտագործումն ուսուցողական և
արբիտրաժի զարգացման նպատակներով: Հետևապես, սույն
Ուղեցույցի վերարտադրումը կամ կրկնօրինակումը թույլատրվում է
պայմանով, որ Ուղեցույցը ճշգրիտ վերարտադրվի, առանց
փոփոխությունների, չմոլորեցնող համատեքստով, և ICCA-ի/ԱԱՄԽ-ի
հեղինակային իրավունքների հստակ նշմամբ:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք կապ հաստատել
մեզ հետ հետևյալ էլ. փոստով՝ icca@pca-cpa.org:

ԹԱՐԳՄԱՆՉԻ ԱՄՓՈՓԱԳԻՐԸ

Սույն թարգմանության գլխավոր խմբագիրն է հանդիսանում՝

ՄՈՒՇԵՂ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

Մուշեղ Մանուկյանը միջազգային մասնավոր իրավունքի ոլորտում հայաստանյան առաջատար մասնագետներից է, ավելի քան 30 գիտական հոդվածների և երկու գրքերի հեղինակ, որոնք տպագրվել են ԱՄՆ-ում, Հայաստանում, Ռուսաստանում և Իտալիայում: Մ. Մանուկյանը Հարվարդի, Ռուսաստանի պետական սոցիալական և Երևանի պետական համալսարանների շրջանավարտ է, ինչպես նաև բազմաթիվ օտարերկրյա կրթաթոշակների կրող: Ներկայումս հանդիսանում է «Թրի Բրաունս» փաստաբանական ընկերության (Three Crowns LLP) վաշինգտոնյան գրասենյակի փաստաբան:

Մ. Մանուկյանը Նյու-Յորքի և Հայաստանի արտոնագրված փաստաբան է: Նախկինում աշխատել է «ՎիվաՄեդ-ՄՏՍ» ընկերությունում որպես փաստաթղթերի իրավաբանական ձևակերպման ստորաբաժանման ղեկավար, «Մոբիդրամ» ընկերությունում որպես գլխավոր իրավաբան, «Նեյշնլ Ինսթրումենթս» ընկերությունում որպես զարգացող շուկաների տարածաշրջանի ավագ իրավաբան, և «ԷյԴիԱր Փարթներս» ընկերության հիմնադիր և գլխավոր տնօրեն: Դասավանդել է միջազգային մասնավոր իրավունք և վեճերի այլընտրանքային լուծում Հայ-Ռուսական (Սլավոնական) և Հայաստանի ամերիկյան համալսարաններում, որտեղ հիմնադրել և ղեկավարել է Մեդիացիոն և Արբիտրաժային կլինիկաներ:

Հատուկ շնորհակալություն Հայաստանի ամերիկյան համալսարանի իրավունքի մագիստրոսական ծրագրի Մեդիացիայի և Արբիտրաժի կլինիկայի մասնակիցներին, ովքեր իրականացրել են Ուղեցույցի նախնական թարգմանության աշխատանքները: Առավել ակտիվ մասնակցությամբ աչքի են ընկել:

Անուշ Հոխոյանը

Հայաստանի ամերիկյան համալսարանի Իրավագիտության մագիստրատուրայի ծրագրի 2-րդ կուրսի ուսանող է: Ներկայումս աշխատում է «Պանարմենիան Մեդիա Գրուպ» ՓԲԸ-ում՝ որպես պայմանագրերի պատասխանատու: Նախկին փորձառությունը ներառում է պրակտիկաները ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակում և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում:

Հասմիկ Մովսեսյանը

Հայաստանում Ֆրանսիական համալսարանի հիմնադրամի իրավաբանական ֆակուլտետի մագիստրատուրայի ուսանող է: Ներկայումս աշխատում է որպես իրավախորհրդատու «Ըդվայզ» խորհրդատվական ընկերությունում, իսկ նախկինում՝ «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամում՝ իրականացնելով «Ավրոբա մարդասիրական նախաձեռնության» իրավական սպասարկումը:

Վիկտորիա Մարգարյանը

Ավարտել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, իսկ այնուհետև շարունակել է

մագիստրոսական կրթությունը Հայաստանի ամերիկյան համալսարանի իրավագիտության բաժնում:

Այնուհետև՝ հավասարաչափ մասնակցություն են ցուցաբերել.

Էլիզաբեթ Մամիկոնյանը

Ավարտել է Երևանի պետական համալսարանը և Հայաստանում ամերիկյան համալսարանը, մասնագիտությամբ իրավաբան է: Աշխատել է «ԼեգալԼար» իրավաբանական ընկերությունում և ֆինանսների նախարարությունում: Այժմ աշխատում է Պետական եկամուտների կոմիտեում որպես կոմիտեի նախագահի օգնական:

Միքայել Արզումանյանը

Հայաստանի ամերիկյան համալսարանի իրավագիտության մագիստրոսական ծրագրի 2-րդ կուրսի ուսանող է և հանդիսանում է միևնույն բուհի գործարարության բակալավրի ծրագրի շրջանավարտ: Ներկայումս աշխատում է ՀՀ վարչապետի աշխատակազմում:

Սուսաննա Ամիրխանյանը

Ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը: Հետագա կրթությունը շարունակել է Հայաստանի ամերիկյան համալսարանի իրավունքի մագիստրատուրայում:

Սվետլանա Կարապետյանը

Հայաստանի ամերիկյան համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրոսական ծրագրի ուսանողուհի է: Աշխատում է որպես իրավաբան:

Սույն հայերեն թարգմանությունը հանդիսանում է Ուղեցույցի բնօրինակի թարգմանությունը, ուստի դրանում պարունակվող տեղեկատվությունը թարմացված է մինչ 2011թ.-ի մայիս ամիսը:

ՆԱԽԱԲԱՆ՝ ՊՐՈՖԵՍՈՐ ՊԻՏԵՐ ՍԱՆԴԵՐՍԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՊԵՍ ՊԱՏՎԱՎՈՐ ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ

Նյու-Յորքի 1958թ. կոնվենցիան միջազգային առևտրային իրավունքի ոլորտում ամենահաջողված բազմակողմ միջազգային փաստաթուղթն է: Այն զբաղեցնում է միջազգային պայմանագրերի և արբիտրաժային օրենքների խճանկարի կենտրոնական մասը, որն ապահովում է արբիտրաժային վճիռների և համաձայնությունների հաստատումը: Դատարանները շուրջ հիսուն տարի կիրառում և մեկնաբանում են Կոնվենցիան, առավել միասնական և ներդաշնակ ձևաչափով:

1958թ.-ին ես մասնակցել եմ Կոնվենցիայի նախագծմանը որպես Նիդեռլանդների ներկայացուցիչ: Սկսեցինք աշխատել մի նախագծի վրա, որը 1955թ.-ին նախապես ներկայացվել էր Միջազգային առևտրային պալատի (ICC)/(ՄԱՊ) կողմից: Նախագիծը նախատեսում էր «միջազգային» վճիռների կատարման հնարավորություն: Այն ներկայացվել էր ՄԱԿ-ի Տնտեսական և Սոցիալական Խորհուրդ (ՄԱԿ-ի ՏՍԽ): ՄԱԿ-ի ՏՍԽ-ն փոփոխեց նախագիծը՝ սահմանելով դրա կիրառելիությունը «օտարերկրյա» արբիտրաժային վճիռների նկատմամբ: Սա այն նախագիծն էր, որի վրա Համագումարն աշխատեց 1958թ.-ի մայիսի 20-ից մինչև հունիսի 10-ը:

Փոփոխություններ և լրացումներ կատարվեցին աշխատանքային նախագծում, որը վերածվեց այսպես կոչված «Նիդեռլանդական նախագծի»: Կրկնակի էկզեկվատուրայի պահանջի վերացումը փոփոխություններից մեկն էր, որը հնարավորություն կտար արբիտրաժային վճիռները կատարման

‘ներկայացնել’ առանց ստանալու վճռի կայացման վայրի դատարանների կողմից տրվող կատարման հռչակագիր: Մեկ այլ փոփոխություն էր արբիտրաժային վճռի կատարման մերժման հիմքերի սահմանափակումը, որոնք ներկայումս արտացոլված են 5-րդ հոդվածի յոթ հիմքերում, ինչպես նաև այդ հիմքերի ապացուցման բեռը կատարման դեմ հանդես եկող կողմի վրա դնելը: Կոնվենցիայում նշված մերժման յոթ հիմքերը դարձան մերժման բացառիկ հիմքեր: Կատարման ընդդիմացող կողմի վրա ապացուցման բեռ դնելը և մերժման բացառիկ հիմքերն այժմ համարվում են Կոնվենցիայի գլխավոր առանձնահատկությունները:

Կոնվենցիայի 2-րդ հոդվածն ավելացվեց նախագծման վերջնական փուլում, նաև որպես «Նիդեռլանդական նախագծի» արդյունք: Այն սահմանում է, որ վավեր արբիտրաժային համաձայնության դեպքում դատարանները *պարտավոր են* կողմերին ուղղորդել դեպի արբիտրաժ: Աշխատանքային նախագծում խոսվում էր միայն օտարերկրյա արբիտրաժային վճիռների կատարման մասին: Արբիտրաժային համաձայնությունների կատարման դրույթի ներառումն առավել արդյունավետ էր, քան տեղ գտած իրավակարգավորումները, որոնք ներառված էին նախորդ երկու միջազգային փաստաթղթերում՝ 1923թ.-ի Ժնևի Արբիտրաժի վերապահումների վերաբերյալ արձանագրությունում և 1927թ.-ի Ժնևի Օտարերկրյա արբիտրաժային վճիռների կատարման վերաբերյալ կոնվենցիայում:

Որպեսզի Նյու-Յորքի կոնվենցիայի կիրառումը լիներ միատեսակ և ներդաշնակ, անհրաժեշտ էր Կոնվենցիան կիրառող գործերի հաշվետվության արդյունավետ համակարգ: Այդ իսկ

պատճառով 1976թ.-ին մեկնարկեց ԱԱՄԽ-ի *Առևտրային արբիտրաժի փարենգրփի* հրատարակումը: Ես վերջինիս գլխավոր խմբագիրն էի: Այդ պահից ի վեր 35 հատոր է հրատարակվել: Տարեգիրքը հասանելի է նաև առցանց՝ www.KluwerArbitration.com կայքում: Տարեգրքում ներկայացվել են Կոնվենցիային միացած 145 երկրներից 65 երկրի Նյու-Յորքի Կոնվենցիայով կայացված 1666 դատական վճիռներ:

Կոնվենցիան հեռատեսական էր: Պրոֆեսոր Մատտուչին՝ Համագումարի իտալացի ներկայացուցիչը, այն համարեց «շատ համարձակ նորարարություն»: Կոնվենցիան դիմացավ ժամանակի փորձությանը: Ավելի քան 50 տարի անց մենք կարող ենք ակնկալել Կոնվենցիայի տեքստի մեկնաբանման նպաստավոր մոտեցումներ, որոնք կրխեն ժամանակակից տեխնոլոգիայի և պրակտիկայի պահանջներին:

1985թ.-ին ՈՒՆՄԻՏՐԱԼ-ի (ՄԱԿ-ի Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողով) կողմից հաստատված և 2006թ.-ին փոփոխված Միջազգային առևտրային արբիտրաժի տիպային օրենքն ընդունվել է շուրջ 70 երկրներում և դաշնային նահանգներում: Որոշ երկրներ տիպային օրենքն ընդունել են առանց փոփոխությունների: Որոշներն էլ ընդունել են ժամանակակից արբիտրաժի օրենքներ՝ ոգեշնչվելով տիպային օրենքից: Ժամանակակից արբիտրաժի օրենքների ընդունմամբ դատարանները կարող են կիրառել իրենց երկրի առավել բարենպաստ դրույթները, որի հնարավորությունը սահմանված է Կոնվենցիայի 7-րդ հոդվածով:

Այդպիսի ժամանակակից օրենքները կարող են նաև պարունակել արբիտրաժային վճռի կատարման գործընթացի վերաբերյալ դրույթներ: Կոնվենցիան միայն սահմանում է

փաստաթղթերի ցանկը, որոնք պետք է տրամադրվեն դատարան (4-րդ հոդված), ինչպես նաև դրույթ, համաձայն որի՝ տեղական արքիտրաժային վճռի կատարման համար սահմանված պայմաններից առավել ծանրաբեռնող պայմաններ կամ առավել բարձր տուրքեր չեն կարող նախատեսվել (3-րդ հոդված): ՈՒՆՍԻՏՐԱԼ-ի քարտուղարությունը Փաստաբանների միջազգային ասոցիացիայի հետ համատեղ ուսումնասիրել է սույն պայմանները և 2008թ.-ի իր գեկույցում եզրակացրել, որ «Կոնվենցիայի հիման վրա արքիտրաժային վճիռների ճանաչման ու կատարման վերաբերյալ տարբեր ընթացակարգային պահանջների համար առկա են զանազան լուծումներ» (ՄԱԿ-ի Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի գեկույց, A/63/17, 353-րդ պարբերություն, էջ 71), և առաջարկել է, որ Քարտուղարությունն աշխատի Կոնվենցիայի կիրառման վերաբերյալ ուղեցույց կազմելու ուղղությամբ՝ խթանելու վերջինիս միատեսակ մեկնաբանումն և կիրառումը: Այդպիսի ուղեցույցը կարող էր միատեսակ կանոններ առաջարկել կիրառման գործընթացի վերաբերյալ:

1958թ. Նյու-Յորքի կոնվենցիայի մեկնաբանման ԱԱՄԽ-ի ուղեցույց ստեղծելու ԱԱՄԽ-ի նախաձեռնությունը. *Դատավորների համար նախադրեալած Ձեռնարկը* հանդիսանում է ԱԱՄԽ-ի Տարեգիրքը «ողջունող» և լրացնող աշխատություն: Այն ճշգրիտ, հստակ և պարզ ոճով սահմանում է այն հարցերի շրջանակը, որոնք ենթակա են պատասխանման, և այն քայլերի հերթականությունը, որոնց պետք է հետևեն դատարանները Նյու-Յորքի Կոնվենցիան կիրառելիս: Այն ընդգծում է արքիտրաժային վճիռների կատարման նկատմամբ Կոնվենցիայի միտվածությունը: Ակնկալում եմ, որ սույն Ուղեցույցը կծառայի որպես արդյունավետ գործիք՝ խթանելու

ՆԱԽԱԲԱՆ

կարգախոսը, որ բազմիցս կրկնել եմ՝ «*Երկար կյանք, զարգացում և աճ 1958թ. Նյու-Յորքի կոնվենցիային (Vivat, Floreat et Crescat New York Convention 1958)*»:

Պիտեր Սանդերս

Շիկագո, 2011թ.-ի ապրիլ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ՝ ՆԵՅԼ ԿԱՊԼԱՆԻ ԿՈՂՄԻՑ

Օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման կոնվենցիայի (հայտնի որպես Նյու-Յորքի կոնվենցիա, 10 հունիսի 1958թ., Նյու-Յորք) Ուղեցույցի գաղափարն ըստ էության ծնվել էր 1990-ական թթ. սկզբին՝ այն հինգ տարիների ընթացքում, երբ ես Հոնկոնգի բարձրագույն դատարանի արբիտրաժի ցանկի միակ դատավոր-պատասխանատուն էի:

Նախքան դատավոր դառնալը ես առնչվում էի արբիտրաժի և Նյու-Յորքի կոնվենցիայի հետ իմ՝ իրավաբանի պրակտիկ աշխատանքում: Հաշվի առնելով, որ այժմ Կոնվենցիան կիրառվում է 145 երկրներում, ինչպես նաև այն, որ վերջին 25 տարիների ընթացքում միջազգային արբիտրաժի կիրառումը էականորեն աճել է, միտքս ուղղեցի այլ երկրների դատավորներին, ովքեր, հնարավոր է, որ ծանոթ չլինեին Կոնվենցիային և դրա ներկայիս մեկնաբանությանը:

Ուրախ էի, որ Առևտրային արբիտրաժի միջազգային խորհրդի գործընկերներիցս շատերը կիսում էին իմ մտահոգությունները և խանդավառվեցի, երբ նրանք համաձայնեցին աջակցել սույն Ուղեցույցը կազմելու աշխատանքներին: Նրանց շարքում էր պրոֆեսոր Գաբրիել Կոֆման-Կոհլերը, ով հռչակավոր գիտնական է և ղեկավարում է Ժնևի համալսարանի միջազգային մասնավոր իրավունքի ամբիոնը, ինչպես նաև բավականին ակտիվ միջազգային արբիտր է՝ հիմնականում մասնագիտացված ներդրումային վեճերի ոլորտում: Նա Ժնևում Լեվի Կոֆման-Կոհլեր իրավաբանական ընկերության համահիմնադիրն է: Պրոֆեսոր Գուիդո Թաուիլը Բուենոս Այրեսի համալսարանի իրավագիտության դպրոցի վարչական իրավունքի ամբիոնի ղեկավարն է և Բուենոս Այրեսի «Էմ-ընդ-Էմ Բոնչիլ»

իրավաբանական ընկերության ավագ գործընկերը: Նա նույնպես փորձառու արքիտր է: Կիմ Ռունին «Ուայթ-Էնդ-Քեյս» իրավաբանական գրասենյակի Հոնկոնգի գրասենյակի գործընկերներից է և զբաղվում է փաստաբանությամբ Հոնկոնգում: Մարիկե Պաուլտոնը պրոֆեսոր Ալբերտ Յան վան դեր Բերգի հետ հանրահայտ աշխատության երկրորդ հրատարակության համահեղինակն է (*Նյու-Յորքի արքիպրամի կոնվենցիա 1958թ.*, Կլովեր, 1981թ.): Նա Բյուսելում հիմնադրված «Հանոտիաու և Վան դեն Բերգ» իրավաբանական ընկերության իրավախորհրդատու է: Մեզ մեծապես աջակցություն է ցուցաբերել Ջուդի Ֆրիդբերգի, Սիլվիա Բորելիի և Ալիս Սիեգելի խմբագրական թիմը, ովքեր ներկայումս կամ անցյալում հանդիսացել են ԱԱՄԽ-ի հրատարակությունների պատասխանատուները:

Սույն Ուղեցույցը նպատակ ունի ներկայացնելու Կոնվենցիայի ամփոփագիրը և ուղղություն ցույց տալու դատավորներին՝ Կոնվենցիայի լույսի ներքո դիտարկելու զանազան հարցեր, որոնք բխում են դրա բնույթից, մեկնաբանությունից և կիրառումից: Դրա նպատակն է ծառայել որպես համապարփակ ուղեցույց՝ գրված պարզ լեզվով, որը կիրառելիության դեպքում, կհանդիսանա իբրև «ճանապարհային քարտեզ» ավելի խորը ուսումնասիրության համար: Ուղեցույցը ստեղծված է պատասխանելու պրակտիկ հարցերին, որոնք կարող են առաջանալ Կոնվենցիայի կիրառման ցանկացած փուլում: Այն չի հանդիսանում այնպիսի աշխատություն, որը կտրամադրի բոլոր հարցերի վերջնական պատասխանը: Ուղեցույցը հասցեագրվում է դատավորներին, ովքեր անգնահատելի դեր ունեն Կոնվենցիան գործարկելու ուղղությամբ:

Հույս ունենք, որ սույն Ուղեցույցը կհետաքրքրի ոչ միայն դատավորներին, այլև ուսանողներին, դասախոսներին և

պրակտիկ իրավաբաններին: Մենք փորձել ենք հնարավորինս զերծ մնալ ակադեմիական ուղղվածությունից, բայց դա միշտ չէ, որ հնարավոր է եղել: Մի շարք բուռն քննարկված և հակասական դատական գործեր, որոնք ակադեմիական շրջանակներում առաջ են բերել մեծ հետաքրքրություն, Կոնվենցիայի առօրեական կիրառությունում հետաքրքրություն չեն ներկայացնում: Չնայած դատական գործերի հղումներ կատարվում են սույն Ուղեցույցում՝ առավել պատկերավոր ներկայացնելու քննարկվող խնդիրը, փորձել ենք սահմանափակել հղումները միայն հիմնական սկզբունքների շրջանակում:

Սույն ուսումնասիրությունը սահմանափակվում է Կոնվենցիայի միայն էական հարցերի դիտարկմամբ: Առավել խորը տեղեկատվություն կարող եք գտնել պրոֆեսոր Վան դեն Բերգի 1981թ.-ի աշխատությունում և դրա 2-րդ հրատարակությունում, որը լույս է տեսել 2012թ.-ին: Առավել մանրամասն տեղեկության հերթական աղբյուր կարող են հանդիսանալ Կոնվենցիան կիրառող դատական վճիռների քաղվածքներն և այդ դատական վճիռների մեկաբանությունները, որոնք սկսած 1976թ.-ից յուրաքանչյուր տարի հրատարակվում են ԱԱՄԽ-ի *Առևտրային արբիտրաժի փարեգրքում*, ինչպես նաև ԱԱՄԽ-ի *Առևտրային արբիտրաժի միջազգային ձեռնարկի*՝ Նյու-Յորքի կոնվենցիային նվիրված գլուխները:

Կոնվենցիան հիմնված է արբիտրաժային վճիռների կատարմանը միտված քաղաքականության վրա: Այն խթանում և երաշխավորում է արբիտրաժային համաձայնությունների և արբիտրաժային վճիռների կատարումը՝ այդպիսով ծառայելով միջազգային առևտրին: Այն լրացուցիչ առևտրային

ապահովություն է ստեղծում միջսահմանային գործարքների կողմերի համար:

Միջազգային առևտրային արբիտրաժի հաջողությունը կառուցված է երկու հիմնապայուների վրա՝ Կոնվենցիայի և ՈւՆԿՏԲԱԼ-ի 1985թ.-ի Միջազգային առևտրային արբիտրաժի տիպային օրենքի (փոփոխված՝ 2006թ.-ին) վրա (ամբողջական տե՛ս Հավելված I և II): Վերջինս հնարավորություն է տալիս արբիտրաժային օրենք չունեցող պետություններին ընդունել արդեն իսկ պատրաստի օրենք կամ փոխարինել իրենց գործող օրենքն առավել ժամանակակից օրենքով: Մի շարք երկրներ էլ ընդունել են արբիտրաժի վերաբերյալ օրենսդրություն, որը թեպետ ամբողջությամբ չի բխում տիպային օրենքից, սակայն գլխավորապես հիմնված է դրա վրա:

Այս ամենը մեծապես նպաստել է միջազգային արբիտրաժային իրավունքի ներդաշնակեցմանը, որն էլ իր հերթին աջակցում է կանխատեսելիության և որոշակիության ձեռք բերմանը՝ որակներ, որոնք առավելապես պահանջված են միջազգային գործարար հասարակության կողմից:

Օրինականության դերի բարձրացումը, միջսահմանային վեճեր լուծելու նպատակով միջազգային արբիտրաժի տարածումը և արբիտրաժային վճիռների կատարումը կախված են ներպետական դատարաններից:

Այսպիսով, հույս ունենք, որ սույն Ուղեցույցն իր փոքր դերակատարումը կունենա աջակցելու տարբեր երկրների դատավորներին՝ մասնակցելու ներդաշնակեցման շարունակական գործընթացին և կիրառելու Կոնվենցիան իր տառին ու ոգուն համահունչ:

Սույն Ուղեցույցում նախ կներկայացնենք Կոնվենցիայի նպատակը՝ որպես միջազգային իրավունքի փաստաթուղթ՝ ներառյալ դրա կիրառումն արբիտրաժային համաձայնությունների նկատմամբ, ինչպես նաև որոշ արբիտրաժային վճիռների ճանաչումը և կատարումը (Գլուխ I): Կներկայացնենք նաև արբիտրաժային համաձայնությունների և դրանց նկատմամբ համապատասխանորեն կայացվող արբիտրաժային վճիռների բնույթն ու շրջանակը: Կբացատրենք նաև, թե որ չափով պետությունները կարող են սահմանափակել Կոնվենցիայի գործողության տիրույթը՝ վերապահումներ կատարելով փոխադարձության սկզբունքին և վեճի առևտրային բնույթին: Կքննարկենք Կոնվենցիայի, ներպետական օրենսդրության և այլ կիրառում պարտադրող ռեժիմների միջև հարաբերությունները, ինչպես նաև այն իրավական չափանիշների բնույթը, որոնք Կոնվենցիան պարտադրում է այն ստորագրող պետություններին: Կներկայացնենք ստորագրող պետության միջազգային պարտավորությունը՝ հավատարիմ մնալու Կոնվենցիայի դրույթներին և դրանք խախտելու հնարավոր հետևանքները (Գլուխ I):

Այնուհետև, կառանձնացնենք կոնվենցիոն սկզբունքները, որոնք կիրառվում են արբիտրաժային համաձայնության կիրառման պահանջի նկատմամբ (Գլուխ II) և արբիտրաժային վճիռի ճանաչման և կատարման նկատմամբ (Գլուխ III):

Դատական գործերի մեծ մասը ներառում է խնդիրներ, որոնք առավելապես առնչվում են արբիտրաժային համաձայնությանը, ոչ թե արբիտրաժային վճիռի կատարման պահանջին: Խնդիրները, որոնք կապված են արբիտրաժային համաձայնության կատարման հետ, ի տարբերություն արբիտրաժային վճիռի կատարման,

դատարան են բերվում անուղղակի ձևով: Օրինակ՝ կողմն արբիտր նշանակելու խնդրանքով կարող է դիմել ներպետական դատարան այն դեպքում, երբ նշանակման համաձայնեցված մեխանիզմ առկա չէ կամ դրա գործարկումը տապալվել է: Դիտարկելով արբիտր նշանակելու իր իրավասությունը՝ դատարանը կարող է դիտարկել պահանջ՝ որոշելու արբիտրաժային համաձայնության վավերականությունը, որն, իհարկե, արբիտր նշանակելու նախապայման է: Հնարավոր է նաև, որ այս խնդիրն առաջանա արբիտրաժին աջակցման ուղղությամբ դատարանի կողմից հայցի ապահովման միջոցներ կիրառելու դիտարկման գործընթացում:

Դատավորները պետք է իրազեկված լինեն այսպիսի հնարավոր խնդիրների մասին, և հույս ունենք, որ սույն Ուղեցույցը կբարձրացնի իրազեկվածության մակարդակը: Որոշ երկրներում պրակտիկ իրավաբանները կարող են բավականին տեղեկացված լինել միջազգային արբիտրաժի հնարավոր խնդիրների վերաբերյալ: Սակայն այն դատական համակարգերում, որտեղ նման իրավաբանների թիվը սակավաթիվ է, դատավորի վրա դրվում է լրացուցիչ բեռ՝ ի հայտ բերելու և կենտրոնանալու Կոնվենցիային առնչվող խնդիրների վրա: Հույս ունենք, որ սույն Ուղեցույցը կաջակցի այդ գործընթացի կարգավորմանը:

ԱԱՄԽ-ն շնորհակալ է, որ պրոֆեսոր Պիետեր Սանդերսը համաձայնել է ներկայացնել նախաբան՝ որպես Ուղեցույցի պատվավոր գլխավոր խմբագիր: Երկար տարիներ նա ոչ միայն առաջատար մասնագետ է եղել միջազգային առևտրային արբիտրաժի ոլորտում, այլ նաև Կոնվենցիայի նախագծման կոմիտեի միակ կենդանի անդամն է, ով շուտով կբոլորի իր ծննդյան 100-ամյակը:

Երկու խոսք ԱԱՄԽ-ի մասին

Առևտրային արբիտրաժի միջազգային խորհուրդը (ԱԱՄԽ) հիմնադրվել է 1961թ.-ի մայիսին միջազգային առևտրային արբիտրաժի ոլորտում հանդես եկող մի խումբ փորձագետների և գործընկերների կողմից: Այն համաշխարհային հասարակական կազմակերպություն է, որը ուղղված է արբիտրաժը, հաշտարարությունը և միջազգային վեճերի լուծման այլ եղանակները խթանելուն և զարգացնելուն: ԱԱՄԽ-ի անդամները տարբեր դատական համակարգերից են, և բոլորը ակտիվորեն ներգրավված են միջազգային արբիտրաժում որպես իրավաբաններ, արբիտրներ, գիտնականներ և դատական համակարգի անդամներ:

Յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ ԱԱՄԽ-ն կազմակերպում է Կոնգրես կամ Կոնֆերանս, որը միջազգային արբիտրաժի օրակարգում հիմնական միջոցառումներից մեկն է: Վերջինը անցկացվել է 2010թ.-ի մայիսին Ռիո դե Ժանեյրոյում՝ ամբողջ աշխարհից շուրջ 900 մասնակիցներով: Հաջորդ ԱԱՄԽ Կոնգրեսը կկայանա Սինգապուրում 2012 թ.-ին:

ԱԱՄԽ-ն արբիտրաժային կենտրոն չէ. այն չի կառավարում արբիտրաժներ կամ գործում որպես նշանակող մարմին: ԱԱՄԽ-ն առավելապես հայտնի է իր հրապարակումներով: 1976թ.-ից ի վեր Նյու-Յորքի Կոնվենցիայով կայացված շուրջ 1600 դատական որոշումներ ավելի քան 60 երկրից ներկայացվել են *Առևտրային արբիտրաժի տարեգրքում*: *Առևտրային արբիտրաժի միջազգային ձեռնարկը* պարունակում է շուրջ 70 երկրների արբիտրաժի օրենքի և պրակտիկայի մասին շարունակաբար թարմացվող զեկույցներ:

ԱԱՄԽ-ի *Կոնգրեսի մայրենաշարը* հրապարակում է ԱԱՄԽ-ի միջոցառումների փաստաթղթերը:

ԱԱՄԽ-ի բոլոր հրապարակումները հասանելի են նաև առցանց՝ www.kluwerarbitration.com կայքում (բաժանորդագրություն է պահանջում): ԱԱՄԽ-ի և ԱԱՄԽ-ի հրապարակումների մասին մանրամասն տեղեկություն կարող եք գտնել անվճար վեբ կայքում՝ www.arbitration-icca.org: ԱԱՄԽ-ի կայքը նաև տրամադրում է որոնման գործիքներ՝ ըստ թեմաների ցանկի որոնելու դատական վճիռներ:

ՄԻԱՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ՝ ՊՐՈՖԵՍՈՐ ՊԻՏԵՐ ՍԱՆԴԵՐՍԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՊԵՍ ՊԱՏՎԱՎՈՐ ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ	ix
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ՝ ՆԵՅԼ ԿԱՊԼԱՆԻ ԿՈՂՄԻՑ	xv
ՄԻԱՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	xxiii

ՆՅՈՒՅՈՐՔԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ ԿԻՐԱՌՈՂ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՏՈՒԳԱՅԱՆԿ	1
--	----------

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ	9
-------------------------	----------

ԳԼՈՒԽ I. ՆՅՈՒՅՈՐՔԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ՝ ՈՐՊԵՍ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՈՐԾԻՔ	15
---	-----------

I. ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	16
---------------------------	-----------

I.1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՎԻԵՆՆԱՅԻ ԿՈՆՎԵՆՑԻԱ	18
---	-----------

I.2. ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՀՕԳՈՒՏ ՃԱՆԱԶՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ, ԿԱՏԱՐՄԱՆԸ ՄԻՏՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	19
--	-----------

II. ԿԻՐԱՌՄԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ	21
---------------------------------------	-----------

II.1 ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎՃԻՌ	21
------------------------	-----------

II.1.1. Անկախ Մեկնաբանություն	22
-------------------------------	-----------

II.1.2. Միջազգային մասնավոր իրավունքի հիման վրա մոտեցում	25
---	-----------

II.2. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆ	26
------------------------------------	-----------

III. ԿԻՐԱՌՄԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ	27
---	-----------

III.1. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎՃԻՌՆԵՐ	28
-----------------------------	-----------

III.1.1. Արբիտրաժային վճիռներ՝ կայացված ոչ այն պետության տարածքում, որտեղ հայցվում են ճանաչումը և կատարումը	28
III.1.2. Ոչ ներպետական արբիտրաժային վճիռներ	29
III.2. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	31
IV. ՎԵՐԱՊԱՀՈՒՄՆԵՐ	33
IV.1. ՓոխԱդարձո՞ւթյուն (ՀՈԴՎԱԾ 1(3) ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ)	33
IV.2. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԸ (ՀՈԴՎԱԾ 1(3) ԵՐԿՐՈՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ)	34
V. ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ (ՀՈԴՎԱԾ 7)	35
V.1. ԱՌԱՎԵԼ ԲԱՐԵՆՊԱՍՏ ՕՐԵՆՍԴԻՐՈՒԹՅՈՒՆ	35
V.2. ՆՅՈՒՅՈՐՔԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ ԵՎ ԱՅԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ	37
V.3. ՆՅՈՒՅՈՐՔԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ ԵՎ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴԻՐՈՒԹՅՈՒՆԸ	38
VI. ՆՅՈՒՅՈՐՔԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԶԿԻՐԱՌՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ	41
VI.1 ՆՅՈՒՅՈՐՔԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԽԱԽՏՈՒՄ	41
VI.2. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԽԱԽՏՈՒՄ	43
VI.3. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎՃԻՌՆԵՐՆ ԱՆՓՈՓՈԽ ԵՆ	44
 ԳԼՈՒԽ II. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՁ	45
I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	48

II. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԿՈՆՎԵՆՑԻՈՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ	
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	51
II.1. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԸ	51
II.2. ՎԱՎԵՐ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐԸ ՊԵՏՔ Է ՈՒՂՂՈՐԴՎԵՆ ԴԵՊԻ ԱՐԲԻՏՐԱԺ	52
II.3. ԻՆՉՊԵՍ ԿՈՂՄԵՐԻՆ «ՈՒՂՂՈՐԴԵԼ» ԴԵՊԻ ԱՐԲԻՏՐԱԺ	52
II.4. Ի ՊԱՇՏՈՆԵ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ԲԱՑԱՌՈՒՄԸ	53
III. ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ	53
III.1. ԱՐԲԻՏՐՆԵՐԸ ՈՒՆԵՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԻՐԵՆՑ ԻՍԿ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	53
III.2. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՏՐԻԲՈՒՆԱԼԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ	54
III.3. ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐԱԲԱՐ ՉԻ ՀԱՆԳԵՑՆՈՒՄ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎԵՐԱՊԱՀՄԱՆ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅԱՆ	55
III.4. ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՆ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ	56
III.5. ՄԻԺԱՄՄԱՆԱԿ ԸՆԹԱՑՈՂ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	56
IV. ՀՈԴՎԱԾ 2-Ի ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵՋԸ	57
IV.1. ԱՐԴՅՈ՞Ք ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ Է	58

IV.2. ԱՐԴՅՈՒՔ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ	
ԿՆՔՎՈՒՄ Է ԳՐԱՎՈՐ ԵՂԱՆԱԿՈՎ	58
IV.2.1. Տեսական նախապատմություն	58
IV.2.2. Պրակտիկա	61
(i) Հիմնական պայմանագիրը հղում է կատարում փաստաթղթին, որում ներառված է արբիտրաժային վերապահումը («ինկորպորացիա հղման միջոցով»)	62
(ii) Պայմանագրային փաստաթղթում առկա արբիտրաժային վերապահումը ստորագրված չէ, սակայն հաջորդիվ կատարվում է կողմերի կողմից՝ համաձայն դրա պայմանների	65
. Պայմանագրային առաջարկն ուղարկվում և հաստատվում է արբիտրաժային վերապահման հետ մեկտեղ: Սակայն, ակցեպտը իր մեջ ներառում է ընդհանուր սահմանափակումներ կամ նախապայմաններ:	65
. Կողմերից մեկը արբիտրաժային վերապահում պարունակող պայմանագրային առաջարկն ուղարկում է մյուս կողմին, որը չի պատասխանում, սակայն այնուամենայնիվ կատարում է պայմանագիրը:	66
(iii) Հլեկորոնային հաղորդագրություններում առկա արբիտրաժային համաձայնությունը	68
IV.3. ԱՐԴՅՈՒՔ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ	
ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ԵՎ ՎԱՎԵՐ Է ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ	69
IV.3.1. Տեսական նախապատմություն	69
IV.3.2. Պրակտիկա	71
(i) «Անվավեր»	71
(ii) «Զգործող արբիտրաժային համաձայնություն»	72
(iii) «Զի կարող կատարվել»	72

·	Երբ արբիտրաժին դիմելը հայեցողական է	73
·	Երբ պայմանագիրը նախատեսում է արբիտրաժի, ինչպես նաև դատարանների իրավասություն	74
·	Երբ արբիտրաժային կանոնները կամ արբիտրաժային կենտրոնը միանշանակ բնորոշված չեն	75
·	Երբ արբիտրների նշանակման կարգը սահմանված չէ («բաց վերապահումներ»)	76
IV.4.	ԱՌԿՎՄ Է ԱՐԴՅՈՒՔ ՎԵՃ. ԱՐԴՅՈՒՔ ԱՅՆ ԱՌԱՋԱՅԵԼ Է ՍԱՀՄԱՆՎԱԾ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ. ԱՐԴՅՈՒՔ ԱՅՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԲՆՈՒՅԹ ՈՒՆԻ, ԹԵ ՈՉ, ԵՎ ԱՐԴՅՈՒՔ ԿՈՂՄԵՐԸ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՈՒՆԵՅԵԼ ԼՈՒԾԵԼՈՒ ԻՐԵՆՑ ՎԵՃԸ ԱՐԲԻՏՐԱԺԻ ՄԻՋՈՑՈՎ:	77
IV.4.1.	Տեսական նախապատմություն	78
IV.4.2.	<i>Պրակտիկա</i>	78
(i)	Արդյո՞ք արբիտրաժային վերապահումը պետք է լայն մեկնաբանել	78
(ii)	Արբիտրաժային համաձայնությունն իր շրջանակից պարունակում է բացառություններ	79
IV.5.	ԱՐԴՅՈՒՔ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏԱԴԻՐ Է ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱՐ, ԵՐԲ ՎԵՃՆ ԱՐԴԵՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ Է	80
IV.5.1.	Տեսական նախապատմություն	80
(i)	Արբիտրաժային համաձայնությունը պարտադիր է միայն կողմերի համար	80
(ii)	Պայմանագրի կողմեր չհանդիսացող անձինք ևս կարող են դիտարկվել որպես արբիտրաժային համաձայնության կողմեր	80

(iii)	Ինչպես որոշել արբիտրաժային համաձայնության սուբյեկտիվ շրջանակը	82
(iv)	Արբիտրաժային համաձայնության սուբյեկտիվ շրջանակի որոշման համար կիրառելի իրավունքը	83
	<i>IV.5.2. Պրակտիկա</i>	84
(i)	Ե՞րբ պատասխանողն ունի արբիտրաժ ուղղորդվելու իրավունք	84
(ii)	Երբ դատարանը որոշում է, որ արբիտրաժային համաձայնությունը պարտադիր չէ պատասխանողի համար	86
	<i>IV.6. ԱՐԴՅՈՒՔ ՏՎՅԱԼ ՎԵՃԸ ԵՆԹԱԿԱ Է ԱՐԲԻՏՐԱԺԻ («ԱՐԲԻՏՐԵԼԻ Է»)</i>	87
	<i>IV.6.1 «Արբիտրաժի միջոցով վեճի առարկայի լուծման հնարավորության» վավերապայմանը նշանակում է «արբիտրելի»</i>	88
	<i>IV.6.2. Արբիտրելիության նկատմամբ կիրառվող իրավունքը</i>	89
	<i>IV.6.3. Միջազգային արբիտրաժային համաձայնությունները պետք է ենթակա լինեն արբիտրելիության միատեսակ չափանիշներին</i>	90
	V. ԱՄՓՈՓՈՒՄ	91

ԳԼՈՒԽ III. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎՃՌԻ ԶԱՆԱԶՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՒՄ	93
I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	95
II. ՓՈՒԼ Ի՝ ՀԱՅՅՎՈՐԻ ԿՈՂԻՑ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՊԱՀԱՆՋՆԵՐ (ՀՈՒՎԱԾ 4)	99
II.1. ԻՆՉ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ	99

II.2. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎՃՌԻ ՊԱՏՇԱՃ ԿԵՐՊՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԻՍԿԱԿԱՆ ՕՐԻՆԱԿԸ ԿԱՄ ԴՐԱ ՊԱՏՇԱՃ ԿԵՐՊՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՊԱՏՃԵՆԸ (<i>Հոդված 4(1)(ա)</i>)	100
II.2.1. Պատշաճ կերպով հաստատում	100
II.2.2. Պատճենի պատշաճ հաստատում	103
II.3. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԻՍԿԱԿԱՆ ՕՐԻՆԱԿԸ ԿԱՄ ԴՐԱ ՊԱՏՇԱՃ ԿԵՐՊՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՊԱՏՃԵՆԸ (<i>Հոդված 4(1)(բ)</i>)	104
II.4. ԴԻՄՈՒՄ ՏԱԼՈՒ ՊԱՀԸ	105
II.5. ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (<i>Հոդված 4(2)</i>)	106
III. ՓՈՒԼ II՝ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ (ՀՈԴՎԱԾ 5).	
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	108
III.1. ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԲԱՑԱՌՈՒՄ	108
III.2. ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻ՝ ՍՊԱՌԻՉ ՀԻՄՔԵՐԻ ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ԲԵՌԸ	109
III.3. ՃԱՆԱՉՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՍՊԱՌԻՉ ՀԻՄՔԵՐԸ	109
III.4. ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՆԵՂ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	111
III.5. ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊԲՈՒՄ՝ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ	114
IV. ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ (ՀՈԴՎԱԾ 5(1))	116
IV.1. ՀԻՄՔ 1. ԿՈՂՄԻ ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅՈՒՆԸ (<i>Հոդված 5(1)(ա)</i>)	116
IV.1.1. Կողմի անգործունակությունը	116
IV.1.2. Արբիտրաժային համաձայնության անվավերությունը	119

IV.2. ՀԻՄՔ 2. ԾԱՆՈՒՑՄԱՆ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ, ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ (<i>Հոդված 5(1)(p)</i>)	123
IV.2. 1. Արդար դատաքննության իրավունքը	123
IV.2.2. Ծանուցման բացակայություն	124
IV.2.3. Պատշաճ ընթացակարգի խախտումներ. «չի կարողացել ներկայացնել իր բացատրությունները»	125
IV.3. ՀԻՄՔ 3. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ ՉՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԿԱՄ ԴՐԱ ՇՐՋԱՆԱԿԻՑ ԴՈՒՐՄ (<i>Հոդված 5(1)(q)</i>)	128
IV.4. ՀԻՄՔ 4. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՏՐԻԲՈՒՆԱԼԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՄ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ (<i>Հոդված 5(1)(η)</i>)	131
IV.4.1. Արբիտրաժային տրիբունալի կազմավորումը	131
IV.4.2. Արբիտրաժային վարույթը	136
IV.5. ՀԻՄՔ 5. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎՃԻՌԸ ՊԱՐՏԱԴԻՐ ՉԷ, ՉԵՂՅԱԼ Է ՃԱՆԱԶՎԵԼ ԿԱՄ ԿԱՍԵՑՎԵԼ Է (<i>Հոդված 5(1)(և)</i>)	139
IV.5.1 Դեռևս պարտադիր իրավական ուժ չստացած արբիտրաժային վճիռ	140
IV.5.2. Չեղյալ ճանաչված կամ կասեցված արբիտրաժային վճիռ	141
(i) Չեղյալ ճանաչված վճիռ	141
(ii) Չեղյալ ճանաչման հետևանքները	142
(iii) «Կասեցված» վճիռ	143
V. ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ Ի ՊԱՇՏՈՆԵ ԲԱՐՁՐԱՑՎՈՂ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐ (<i>ՀՈՒՎԱԾ 5(2)</i>)	144
V.1. ՀԻՄՔ 6. ԵՆԹԱԿԱ ՉԷ ԱՐԲԻՏՐԱԺԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ (ԱՐԲԻՏՐԵԼԻ ՉԷ) (<i>Հոդված 5(2)(ա)</i>)	145

ՄԻԱՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

V.2. ՀԻՄՔ 7. ՀԱԿԱՍՈՒՄ Է ՀԱՆՐԱՅԻՆ	
ԿԱՐԳԻՆ (<i>Հոդված 5(2)(բ)</i>)	147
V.2.1. Ճանաչման և կատարման օրինակներ	149
V.2.2. Ճանաչման և կատարման մերժման օրինակներ	153
VI. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	154
 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	155
 ՀԱՎԵԼՎԱԾ I	155
ՀԱՎԵԼՎԱԾ II՝ ՈՒՆՍԻՏՐԱԼ-ի Տիպային	
օրենք արքիպրաժի մասին	167
ՀԱՎԵԼՎԱԾ III՝ ՈՒՆՍԻՏՐԱԼ-ի Հանձնարարական, 2006թ	209
ՀԱՎԵԼՎԱԾ IV՝ Էլեկտրոնային աղբյուրներ	213

ՄԻԱՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆՅՈՒ-ՅՈՐՔԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ ԿԻՐԱՌՈՂ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՏՈՒԳԱՑԱՆԿ

Սույն Ստուգացանկը սահմանում է պատասխան պահանջող հարցերի շրջանակը և այն քայլերը, որոնց պետք է հետևեն դատարանները Նյու-Յորքի Կոնվենցիան կիրառելիս: Ստուգացանկը սպառիչ չէ և պետք է օգտագործվի Ուղեցույցի հետ համատեղ:

I. Կոնվենցիայի կիրառումը

Ինչի՞ մասին է Կոնվենցիան:

- Արբիտրաժային համաձայնությունների ճանաչում և կատարում (հոդվածներ 1 և 2)
- Արբիտրաժային վճիռների ճանաչում և կատարում (հոդվածներ 1, 3-7)

Ինչպե՞ս պետք է դատարանը մեկնաբանի Կոնվենցիան:

- Վիեննայի Կոնվենցիայի 31-րդ և 32-րդ հոդվածներ
- Հօգուտ ճանաչման և կատարման մեկնաբանություն
- Հոդված 7-ը թույլատրում է առավել բարենպաստ միջազգային պայմանագրի կամ ներպետական օրենսդրության կիրառություն
- Չկիրառելիությունը առաջացնում է Պետության միջազգային պարտասխանատվություն

II. Արբիտրաժային համաձայնության ճանաչման և կատարման դիմում (Հոդվածներ 1 և 2)

Արդյո՞ք Կոնվենցիան կիրառվում է սույն դիմումի նկատմամբ:

- Արդյո՞ք դատարանի գտնվելու վայրի պետությունը Նյու-Յորքի Կոնվենցիայի անդամ է (հոդված 1).

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը

Փոխադարձության վերապահում

Առևտրային վերապահում

- Արդյո՞ք դատարանի գտնվելու վայրի պետությունը ունի կատարման օրենսդրություն և արդյո՞ք այն ներգործում է Կոնվենցիայի կիրառման վրա:
- Կարո՞ղ է Կոնվենցիան կիրառվել արբիտրաժին օժանդակ գործողությունների նկատմամբ:

Օրինակ՝

o Արբիտրի նշանակում

o Հայցի ապահովման միջոցների պահանջ

Արդյո՞ք արբիտրաժային համաձայնությունը ներառված է Կոնվենցիայի կարգավորման առարկայի շրջանակում (հոդված 2):

- Արդյո՞ք արբիտրաժային համաձայնությունը կնքված է գրավոր ձևով (հոդված 2(2)):

Օրինակ՝

o Արդյո՞ք արբիտրաժային համաձայնությունը ինկորպորացվել է հղման միջոցով:

o Արդյո՞ք արբիտրաժային համաձայնությունը ընդունվել է լռելյայն:

- Արդյո՞ք արբիտրաժային համաձայնությունը գոյություն ունի և արդյո՞ք ըստ էության վավեր է (հոդված 2(3)):

Անվավեր

Չգործող արբիտրաժային համաձայնություն

Կատարման անհնարինություն

- Արդյո՞ք առկա է վեճ:
- Արդյո՞ք վեճը առաջանում է սահմանված իրավահարաբերությունից՝ պայմանագրային կամ արտապայմանագրային (հոդված 2(1)):
- Արդյո՞ք կողմերը մտադիր էին լուծել առկա վեճը արբիտրաժի միջոցով:
- Արդյո՞ք արբիտրաժային համաձայնությունը պարտադիր է դատարանի կողմից քննվող վեճի կողմերի համար:
- Արդյո՞ք վեճը ենթակա է արբիտրաժի լուծմանը («արբիտրելի» է):

Արդյո՞ք արբիտրաժային համաձայնությունը Կոնվենցիայի տարածքային շրջանակում է (հոդված 1 *անալոգիայի կիրառմամբ*):

- Արդյո՞ք արբիտրաժի վայրը օտար պետությունում է:
- Արդյո՞ք հետագա արբիտրաժային վճիռը դատարանի գտնվելու վայրի պետությունում կհամարվի ոչ ներպետական:
- Արդյո՞ք առկա է օտարերկրյա տարր:

Արդյո՞ք դատավարական պահանջները բավարարված են:

Օրինակ՝

- Արդյո՞ք կողմը հղում կատարել է արբիտրաժին (*ոչ ի պաշտոնե հղում*):
- Արդյո՞ք քննվող գործընթացը որակվում է որպես արբիտրաժ:
- Արդյո՞ք հայցող կողմը բավարարել է սահմանված նախնական քայլերը:

Օրինակ՝

- Բանակցությունների սահմանված ժամանակահատված
- Հաշտարարություն
- Արդյո՞ք հայցող կողմը հրաժարվել է արբիտրաժի իր իրավունքից:
- Արդյո՞ք առկա է նույն հարցի վերաբերյալ այլ դատարանի որոշում, որը *res judicata* է:

Ո՞րն է կիրառելի օրենսդրությունը:

Օրինակ՝

- Արբիտրաժային համաձայնության կազմման և ըստ էության վավերականության նկատմամբ
- Կողմի գործունակության նկատմամբ
- Արբիտրաժային համաձայնության կիրառելիությունն այդ համաձայնությունը չստորագրած անձանց նկատմամբ:
- Արդյո՞ք հարցն արբիտրելի է:

Արդյո՞ք առկա են հարցեր, որոնք պետք է որոշվեն արբիտրաժային տրիբունալի, և ոչ դատարանի կողմից:

Կարո՞ղ է դատարանը կիրառել հոդված 7-ը, որը թույլ է տալիս հիմնվել առավել բարենպաստ իրավունքի վրա՝ ներառված ներպետական օրենսդրությունում կամ միջազգային պայմանագրում:

Եթե բոլոր պահանջները բավարարված են, դատարանը պարտավոր է ուղղորդել կողմերին դեպի արբիտրաժ:

III. Արբիտրաժային վճռի ճանաչման և կատարման դիմում (հոդված 1, 3-7)

Արդյո՞ք դատարանի գտնվելու վայրի պետությունը Նյու-Յորքի Կոնվենցիայի անդամ է (հոդված 1):

- Ուժի մեջ մտնելու ամսաթիվը

Արդյո՞ք դատարանի գտնվելու վայրի պետությունն ունի իմպլենտացնող օրենսդրություն և արդյո՞ք այն ներգործում է Կոնվենցիայի կիրառման վրա:

Արդյո՞ք Կոնվենցիան կիրառվում է վճռի նկատմամբ:

- Արդյո՞ք վճիռը կայացվել է այլ պետության տարածքում:
- Արդյո՞ք դատարանի գտնվելու վայրի պետությունում վճիռը չի համարվում ներպետական:
- Արդյո՞ք վճիռն առաջանում է ֆիզիկական և իրավաբանական անձանց միջև առկա վեճից:
- Եթե դատարանի գտնվելու վայրի պետությունը փոխադարձության վերապահում է կատարել, արդյո՞ք պետությունը, որտեղ վճիռը կայացվել է, անդամ պետություն է:
- Եթե դատարանի գտնվելու վայրի պետությունն առևտրային վերապահում է կատարել, արդյո՞ք վեճի առարկան ունի «առևտրային» բնույթ:
- Արդյո՞ք վեճի լուծման գործընթացն արբիտրաժ էր:
- Արդյո՞ք որոշումը վճիռ է:

Արդյո՞ք առկա են այլ առավել բարենպաստ կիրառելի միջազգային պայմանագրեր կամ ներպետական օրենսդրություն (հոդված 7):

Արդյո՞ք Կոնվենցիայով չկարգավորվող գործընթացի պահանջները բավարարված են:

Օրինակ՝

- Հայցը ներկայացնելու վերջնաժամկետը
- Իրավասու մարմին
- Դիմումի ձևը
- Ընթացակարգի եղանակը
- Կատարումը հաստատող կամ մերժող որոշման դեմ միջոցներ
- Հակակշիռների կամ հակափաստարկների առկայությունը

Արդյո՞ք հայցվորը ներկայացրել է պահանջված փաստաթղթերը:

- Արբիտրաժային վճռի պատշաճ կերպով հաստատված բնօրինակ կամ դրա պատշաճ կերպով հաստատված պատճեն
- Արբիտրաժային համաձայնության բնօրինակը կամ դրա պատշաճ կերպով հաստատված պատճեն
- Արդյո՞ք թարգմանությունը պարտադիր է:
- Արդյո՞ք փաստաթղթերը հանձնվել են ճիշտ ժամանակին:
- Արդյո՞ք այլ փաստաթղթեր պահանջված (չ)են:

Ինչպե՞ս կիրառել ճանաչումը ու կատարումը մերժելու հիմքերը:

- Ըստ էության վերանայման բացառում
- Ապացուցման բեռը պատասխանող կողմի վրա է
- Կոնվենցիայում թվարկված մերժման հիմքերը սպառիչ են
- Մերժման հիմքերը պետք է նեղ մեկնաբանվեն

Ո՞րն է կիրառելի օրենսդրությունը:

Օրինակ՝

- Պատշաճ կերպով հաստատում
- Պատճենի հավաստում
- Կողմի անգործունակություն
- Արբիտրաժային համաձայնության վավերականությունը

- Արբիտրաժային տրիբունալի կազմավորումը
- Արբիտրաժի գործընթացը
- Դեռևս պարտադիր չդարձած արբիտրաժային վճիռ
- Արբիտրաժային վճռի կասեցում
- Ոչ արբիտրելի վեճի առարկա
- Հակասում է հանրային կարգին

Արդյո՞ք ճանաչումն ու կատարումը մերժող հիմքերից որևէ մեկը ապացուցված է:

- Կողմի անգործունակությունը և արբիտրաժային համաձայնության անվավերությունը
- Պատշաճ ծանուցման բացակայություն կամ ընթացակարգային խախտումներ
- Արբիտրաժային համաձայնությամբ չնախատեսված կամ դրա շրջանակից դուրս արբիտրաժային վճիռ
- Արբիտրաժային տրիբունալի կազմավորման կամ արբիտրաժային գործընթացի խախտումներ
- Արբիտրաժային վճիռը դեռ պարտադիր չէ, չեղյալ է ճանաչվել կամ կասեցված է

Արդյո՞ք առկա են հիմքեր, որոնք դատարանը կարող է ի պաշտոնե կիրառել ճանաչումն ու կատարումը մերժելու համար

- Ոչ արբիտրելի վեճի առարկա
- Հակասում է հանրային կարգին

Միջազգային հանրային կարգի կիրառություն՞

Արդյո՞ք կողմը հրաժարվել է ճանաչումն ու կատարումը մերժելու հիմքից

Ո՞րն է արբիտրաժային վճռի կատարման դատական հայեցողության շրջանակը:

Արդյո՞ք պետք է ճանաչման և կատարման գործընթացը կասեցվի, եթե առկա է արբիտրաժային վճիռը բեկանելու միջնորդություն (հոդված 6)

Եթե ճանաչումն ու կատարումը մերժելու կամ կասեցնելու որևէ հիմք առկա չէ, ապա դատարանը պետք է կատարի արբիտրաժային վճիռը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԱՐԿ

1958թ. Նյու-Յորքի Կոնվենցիան կիրառող դատավորներն առերեսվում են երկու տեսակի մարտահրավերի: Առաջինը՝ միջազգային պայմանագրերի հետ առհասարակ առնչվելիս ներպետական դատավորները բախվում են բարդությունների հետ: Երկրորդ բարդությունն առաջ է գալիս հենց Կոնվենցիայի կիրառմամբ, որն որոշակիորեն ստուգում է ներպետական դատավորի անկողմնակալությունը, քանի որ այն սովորաբար գործարկվում է օտարերկրացու կողմից տեղացի կողմի դեմ: (Սա մասնավորապես ակնառու է օտարերկրյա արբիտրաժային վճիռների կատարման դեպքում, որոնք սովորաբար հայցվում են պարտվող կողմի երկրի դատարանում, քանի որ այդ կողմի գույքը գտնվում է այդտեղ:)

Այս նկատառումը մեծ կարևորություն ունի: Կոնվենցիան միջազգային առևտրային արբիտրաժի հիմնաքարն է, ինչը վճռական դեր ունի միջազգային առևտրային գործարքների վստահության համար: Կոնվենցիան նախատեսում է մեխանիզմ, որը կախված է ներպետական դատարանների համագործակցությունից: Դրա էությունը բխում է փոխադարձ վստահությունից: Եթե որոշ դատարաններ կողմնակալություն ցուցաբերեն հոգուտ իրենց քաղաքացիների, փոխադարձությունը կխաթարվի, քանի որ մյուս դատարանները հնարավոր է փորձեն հետևել այդպիսի վատ օրինակին:

Այս Ուղեցույցի նպատակն է տրամադրել պարզ բացատրություններ Կոնվենցիայի նպատակների վերաբերյալ և մեկնաբանել դրա տեքստը՝ իր գոյության առաջին հիստուն տարվա ընթացքում ձեռք բերված լավագույն միջազգային պրակտիկային համահունչ:

Սկսենք առավել ակնհայտ հարցից:

ԻՆՉԻ՞ ՄԱՍԻՆ Է ՆՅՈՒ-ՅՈՐՔԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ:

Նյու-Յորքի Կոնվենցիան ունի երկու նպատակ.

- Արբիտրաժային համաձայնությունների ճանաչում և կատարում (տես՝ սույն հատվածի 1-ին մասում, տես՝ նաև Գլուխ II-ում),
- Օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչում և կատարում (տես՝ սույն հատվածի 2-րդ մասում, տես՝ նաև Գլուխ III-ում):

I. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆԱԶՈՒՄ ԵՎ ԿԱՏԱՐՈՒՄ

Արբիտրաժը համաձայնության հիման վրա կառուցված գործընթաց է: Այն տեղի կունենա միայն այն դեպքում, երբ կողմերը համաձայնել են հանձնել իրենց վեճն արբիտրաժին: Վեճերն արբիտրաժին ուղղորդելու համաձայնությունը կոչվում է «արբիտրաժային համաձայնություն»:

Արբիտրաժային համաձայնությունն ունի դրական և բացասական իրավական հետևանքներ.

- Այն պարտավորեցնում է կողմերին վեճերը հանձնել արբիտրաժին և իրավասություն է սահմանում արբիտրաժային տրիբունալին արբիտրաժային համաձայնությունում ներառված վեճերի նկատմամբ (**դրական հետևանք**): Եթե առաջանում է վեճ, որը ներառված է արբիտրաժային համաձայնության

շրջանակում, կողմերից յուրաքանչյուրը կարող է հանձնել այն արբիտրաժային տրիբունալի լուծմանը:

- Այն կանխում է կողմերի հնարավորությունն իրենց վեճը հանձնելու դատարանի լուծմանը (**բացասական հետևանք**): Արբիտրաժային համաձայնություն կնքելով՝ կողմերը հրաժարվում են իրենց վեճը դատական կարգով լուծելուց: Արբիտրաժային համաձայնություն կնքած կողմը չի կարող անտեսել այն և փոխարենը գնալ դատարան:

Նյու-Յորքի Կոնվենցիան պարտավորեցնում է անդամ Պետություններին ճանաչել և կատարել սույն իրավական հետևանքները: Պայմանները, համաձայն որոնց՝ դատարանները պետք է առաջնորդվեն նշված կարգով, քննարկված են սույն Ուղեցույցի Գլուխ II-ում:

II. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎՃԻՌՆԵՐԻ ԶԱՆԱԶՈՒՄ ԵՎ ԿԱՏԱՐՈՒՄ

Արբիտրաժը ավարտվում է արբիտրների վերջնական վճռով: Ի հավելումն՝ արբիտրաժի ընթացքում արբիտրները կարող են կայացնել միջանկյալ վճիռներ, ինչպես օրինակ՝ իրավասության կամ պատասխանատվության վերաբերյալ վճիռ: Բոլոր այս հարցերը կարգավորված են Նյու-Յորքի Կոնվենցիայով (տես՝ Գլուխ I):

Շատ իրավական համակարգեր արբիտրաժային վճիռներին հաղորդում են համարժեք իրավական ուժ, ինչ դատական վճիռներին, մասնավորապես՝ *res judicata*-ի ուժ: Ինչպես դատական վճիռների դեպքում է, արբիտրաժային վճռի վերջնական և

պարտավորեցնող ուժը սկզբունքորեն սահմանափակված է այն երկրի տարածքով, որտեղ արբիտրաժային վճիռը կայացվել է: Նյու-Յորքի Կոնվենցիան ապահովում է ճանաչումն ու կատարումն այդ տարածքից *դուրս*:

Արբիտրաժային վճռի **ճանաչումը** գործընթաց է, որն արբիտրաժային վճիռը դարձնում է ազգային իրավահամակարգի մաս: Ճանաչումը շատ հաճախ հայցվում է մեկ այլ գործընթացի համատեքստում: Օրինակ՝ կողմը կարող է արբիտրաժային վճռի ճանաչում հայցել, որպեսզի *res judicata*-ի միջոցով իրավական պաշտպանություն ապահովի և, հետևաբար, բացառի դատարանում այն հարցերի քննումը, որոնք արդեն քննվել են օտարերկրյա արբիտրաժում, կամ կողմը կարող է հաշվանցում պահանջել դատական վարույթում՝ հիմնվելով օտարերկրյա արբիտրաժային վճռի վրա: Ճանաչումը հաճախ բնորոշվում է որպես «իրավական վահան», քանի որ այն հաճախ պաշտպանական մեխանիզմի դեր է կատարում:

Փոխարենը՝ **կատարումը** բնորոշվում է որպես «սուր»: Արբիտրաժում հաղթող կողմերը ձգտելու են ձեռք բերել այն, ինչ արբիտրները վճռել են հոգուտ իրենց: Ճիշտ է, որ վճիռների մեծ մասը կատարվում են կամավոր: Այնուամենայնիվ, երբ պարտվող կողմը չի ենթարկվում վճռին, հաղթած կողմը կարող է դատարանի օժանդակությունը հայցել հարկադիր կատարման միջոցով: Նյու-Յորքի Կոնվենցիան թույլ է տալիս կողմերին հայցել նմանատիպ օժանդակություն:

Այլ կերպ ասած, ճանաչումն ու կատարումը կարող են իրավական հետևանք տալ արբիտրաժային վճռին դրա կայացման վայրի պետության սահմաններից դուրս (տես՝ Գլուխ I): Երբ դատարանի գտնվելու վայրի պետությունում արբիտրաժային

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԱՐԿ

վճիռը ճանաչվել է կատարման ենթակա, հաղթած կողմը կարող է ապավինել տեղական օրենքների ներքո գործող հարկադիր կատարման միջոցներին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԱՐԿ

ԳԼՈՒԽ I. ՆՅՈՒ-ՅՈՐՔԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ՝ ՈՐՊԵՍ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՈՐԾԻՔ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

- I.1. Միջազգային պայմանագրի մեկնաբանություն: Վիեննայի կոնվենցիա
- I.2. Մեկնաբանություն՝ հոգուտ ճանաչման և կատարման: Կատարմանը միտված քաղաքականություն

II. ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ

- II.1. Արբիտրաժային վճիռ
- II.1.1. Անկախ մեկնաբանություն
- II.1.2. Միջազգային մասնավոր իրավունքի հիման վրա մոտեցում
- II.2. Արբիտրաժային համաձայնություն

III. ԿԻՐԱՌՄԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ

- III.1. Արբիտրաժային վճիռներ
- III.1.1. Արբիտրաժային վճիռներ՝ կայացված ոչ այն այն պետության տարածքում, որտեղ հայցվում են ճանաչումը և կատարումը
- III.1.2. Ոչ ներպետական արբիտրաժային վճիռներ
- III.2. Արբիտրաժային համաձայնություններ

IV. ՎԵՐԱՊԱՀՈՒՄՆԵՐ

- IV.1. Փոխադարձություն (*հոդված 1(3), առաջին նախադասություն*)
- IV.2. Առևտրային բնույթը (*հոդված 1(3), երկրորդ նախադասություն*)

- V. **ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱՐԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ (ՀՈԴՎԱԾ 7)**

- V.1. Առավել բարենպաստ օրենսդրություն
- V.2. Նյու-Յորքի կոնվենցիան և այլ միջազգային պայմանագրերը
- V.3. Նյու-Յորքի կոնվենցիան և ներպետական օրենսդրությունը
- VI. ՆՅՈՒ-ՅՈՐԲԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՉԿԻՐԱԾՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ**
- VI.1. Նյու-Յորքի կոնվենցիայի խախտում
- VI.2. Ներդրումային միջազգային պայմանագրի խախտում
- VI.3. Արբիտրաժային վճիռներն անփոփոխ են

I. ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Նյու-Յորքի Կոնվենցիան միջազգային պայմանագիր է: Որպես այդպիսին այն միջազգային հանրային իրավունքի մաս է կազմում: Հետևաբար Կոնվենցիան կիրառող դատարանները պետք է այն մեկնաբանեն համաձայն միջազգային իրավունքի մեկնաբանման կանոնների, որոնք կողիֆիկացված են Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի Կոնվենցիայի 31-րդ և 32-րդ հոդվածներում¹:

¹ Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի Կոնվենցիան, ընդունված Վիեննայում 1969թ.-ի մայիսի 23-ին, ուժի մեջ է մտել 1980թ.-ի հունվարի 27-ին, Միավորված ազգերի կազմակերպության *Միջազգային պայմանագրերի ժողովածու*, հատոր 1155, էջ 331:

Հոդված 31.

«Մեկնաբանման ընդհանուր կանոնը

1. Պայմանագիրը պետք է բարեխղճորեն մեկնաբանվի պայմանագրի հասկացությունների՝ դրանց համատեքստում ունեցած սովորական նշանակությանը համապատասխան, ինչպես նաև պայմանագրի առարկայի և նպատակի լույսի ներքո:

31-րդ և 32-րդ հոդվածներին պետք է հետևել հաջորդաբար. օրինակ, եթե նշանակության պարզաբանումը չի հաջողվում հոդված 31-ում ներառված մեկնաբանման ընդհանուր կանոնի կիրառմամբ, անհրաժեշտ է դիմել հոդված 32-ում ներառված մեկնաբանման լրացուցիչ միջոցներին: Մեկնաբանման ներպետական կանոնները չեն կիրառվում: Միջազգային իրավունքին համաձայն՝ դատարանները պետք է մեկնաբանեն Նյու-Յորքի Կոնվենցիան անկախ ձևաչափով (տես՝ սույն Գլխի I.1

2. Պայմանագրի մեկնաբանման նպատակով համատեքստը, բացի տեքստից, ներառյալ նախաբանը և հավելվածները, ընդգրկում է նաև.

(ա) պայմանագրին վերաբերող ցանկացած համաձայնություն, որը կայացվել է բոլոր մասնակիցների միջև կապված պայմանագրի կնքման հետ,

(բ) ցանկացած փաստաթուղթ, որը կազմվել է մեկ կամ մի քանի մասնակիցների կողմից կապված պայմանագրի կնքման հետ, և մյուս մասնակիցների կողմից ընդունվել է որպես պայմանագրին վերաբերող փաստաթուղթ:

3. Համատեքստի հետ միաժամանակ հաշվի են առնվում.

(ա) պայմանագրի մեկնաբանման կամ դրա դրույթների կիրառման վերաբերյալ մասնակիցների միջև հետագա ցանկացած համաձայնություն,

(բ) պայմանագրի կիրառման հետագա պրակտիկան, որը սահմանում է դրա մեկնաբանման վերաբերյալ մասնակիցների համաձայնությունը,

(գ) մասնակիցների հարաբերություններում կիրառվող միջազգային իրավունքի ցանկացած համապատասխան տրամ:

4. Հասկացությանը տրվում է հատուկ նշանակություն այն դեպքում, եթե սահմանվել է, որ մասնակիցները նման մտադրություն են ունեցել:»

Հոդված 32.

«Մեկնաբանման լրացուցիչ միջոցները

31-րդ հոդվածի կիրառումից բխող նշանակությունը հաստատելու կամ որոշելու նպատակով կարելի է դիմել մեկնաբանման լրացուցիչ միջոցների, այդ թվում նախապատրաստական նյութերին և պայմանագրի կնքման հանգամանքներին, երբ 31-րդ հոդվածին համապատասխան մեկնաբանումը

(ա) նշանակությունը թողնում է երկիմաստ կամ անհասկանալի, կամ

(բ) հանգեցնում է բացարձակ անհեթեթ կամ անմիտ արդյունքի:»

մասում) և հոգուտ ճանաչման և կատարման (տես՝ սույն Գլխի I.2 մասում):

I.1. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՎԻԵՆՆԱՅԻ ԿՈՆՎԵՆՑԻԱ

Սկզբունքորեն Կոնվենցիայում գործածված տերմիններն ունեն անկախ նշանակություն (Վիեննայի Կոնվենցիա, հոդված 31): Եթե Նյու-Յորքի Կոնվենցիայի տեքստը միանշանակ չէ, պետք է դիմել դրա համատեքստին, նպատակին և *travaux préparatoires* (Վիեննայի Կոնվենցիա, 31-րդ և 32-րդ հոդվածներ)²: Տերմինները պետք է մեկնաբանվեն՝ հաշվի առնելով Կոնվենցիայի համատեքստը և նպատակը: Ուստի դատարանները չպետք է մեկնաբանեն Նյու-Յորքի Կոնվենցիայի տերմինները՝ հղում կատարելով ներպետական օրենսդրությանը: Անկախ նրանից, թե Կոնվենցիայի տերմինները որ երկրում են կիրառվում, դրանք պետք է նույն նշանակությունն ունենան: Սա երաշխավորում է Կոնվենցիայի միատեսակ կիրառումը Կոնվենցիայի անդամ բոլոր պետություններում:

Այն երկրների համար, որոնք Կոնվենցիան ներառել են իրենց իրավական համակարգում ինկորպորացիայի ակտ ընդունելու միջոցով, կարևոր է հաշվի առնել վերջինիս տերմինները: Որոշ դեպքերում դրանք փոփոխել են Կոնվենցիայի տերմինները³:

² Կոնվենցիան կազմվել է հինգ պաշտոնական լեզուներով՝ չինարեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն և իսպաներեն:

³ Տես Օտարերկրյա արքիտրաժային վճիռների ճանաչման և կատարման մասին Կոնվենցիայի վերաբերյալ հարցման զեկույցը (Նյու Յորք 1958 թ.): ՈՒՆՄԻՏԲԱԼ Քարտուղարության գրառում. A/CN.9/656 և A/CN.9/656/Add.1, 2008 թ. հունիսի 5:

Ներկայիս նախադեպային իրավունքը, դժբախտաբար, երբեմն դրսևորում է Կոնվենցիայի կիրառման ոչ միատեսակ մոտեցում և ուստի միշտ չէ որ հանդիսանում է որպես օգտակար ուղեցույց: Նման դեպքերում դատարանները պետք է մշտապես կատարմանը միտված քաղաքականության լույսի ներքո մեկնաբանեն Նյու-Յորքի Կոնվենցիան: Դատարանները կարող են նաև հիմնվել գիտական աշխատությունների վրա, ինչպիսին է, օրինակ, պրոֆեսոր Ալբերտ Յան վան դեն Բերգի Նյու-Յորքի Կոնվենցիայի մեկնաբանությունը⁴:

I.2. ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՀՕԳՈՒՏ ՃԱՆԱԶՄԱՆ ԵՎ
ԿԱՏԱՐՄԱՆ. ԿԱՏԱՐՄԱՆԸ ՄԻՏՎԱԾ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Վերը նշվածի համաձայն՝ միջազգային պայմանագիրը պետք է մեկնաբանվի դրա առարկայի և նպատակի լույսի ներքո: Նյու-Յորքի Կոնվենցիայի նպատակն է խթանել միջազգային առևտուրը և արբիտրաժի միջոցով միջազգային վեճերին լուծում տալ: Դրա նպատակն է աջակցել միջազգային արբիտրաժային վճիռների ճանաչմանն ու կատարմանը և արբիտրաժային համաձայնությունների կատարմանը: Ուստի Կոնվենցիան

⁴ Ալբերտ Յան վան դեն Բերգ, *Նյու-Յորքի 1958թ. Արբիտրաժի Կոնվենցիան – Դեպի միադեմոկրատիկ դարական մեկնաբանում* (Կլուվեր, 1981 թ.): Տես նաև՝ պրոֆեսոր վան դեն Բերգի 1958 թ.-ի Նյու-Յորքի Կոնվենցիայի ամփոփ մեկնաբանությունը, Միջազգային առևտրային արբիտրաժի տարեգրքի XXVIII (2003) հատորում, որը ներառում է XXII (1997) հատորից մինչև XXVII (2002) հատորը, ինչպես նաև 1958 թ.-ի Նյու-Յորքի Կոնվենցիայի ամփոփ մեկնաբանությունը, Միջազգային առևտրային արբիտրաժի տարեգրքի XXI (1996) հատորում, որը ներառում է XX (1995) հատորից XXI (1996) հատոր:

մեկնաբանելիս դատարանները պետք է որդեգրեն կատարմանը միտված քաղաքականություն:

Եթե առկա են մի քանի հնարավոր մեկնաբանություններ, դատարանները պետք է ընտրեն ճանաչմանը և կատարմանը միտված քաղաքականությանն ուղղված մեկնաբանությունը (այսպես կոչված՝ **կատարմանը միտված քաղաքականություն**): Սա մասնավորապես ենթադրում է, որ հոդված 5-ում նշված մերժման հիմքերը պետք է նեղ մեկնաբանվեն (տես՝ Գլուխ III-ի III.4 մասում)⁵:

Կատարմանը միտված քաղաքականության համապատասխան, որն առանցքային նշանակություն ունի Նյու-Յորքի Կոնվենցիայի մեկնաբանման համար, կիրառվում է **առավելագույն արդյունավետության սկզբունքը**. Եթե կիրառելի են մեկից ավելի միջազգային պայմանագրեր, դատարանները պետք է կիրառեն այն միջազգային պայմանագիրը, որը ապահովում է արբիտրաժային վճռի կատարումը: Սա արտացոլված է հոդված 7-ում (տես՝ սույն Գլխի V.2 մասում):

Իսպանիայի գերագույն դատարանի մեկ գործում⁶ երկու միջազգային պայմանագիր կարող էին կիրառվել արբիտրաժային վճիռը կատարելու նկատմամբ՝ Իսպանիայի և Ֆրանսիայի միջև

⁵ Դատարանը, որը քննարկում է արբիտրաժային վճռի կատարման դիմում համաձայն Կոնվենցիայի, իրավասու չէ քննել արբիտրաժային տրիբունալի որոշումը ըստ էության և փոխարինել այն սեփական որոշմամբ, անգամ եթե կարծում է, որ արբիտրները սխալ են թույլ տվել փաստերը քննելիս կամ օրենքը կիրառելիս: Կատարման հայցը արբիտրաժային վճռի վերաքննության հայց չէ (տես՝ III Գլխի III.1 մաս):

⁶ *Իսպանիա*. Գերագույն տրիբունալ, Քաղաքացիական պալատ, Առաջին բաժին, 20 հուլիսի 2004 թ. (*Antilles Cement Corporation v. Transficem*), Առևտրային արբիտրաժի տարեգրքի XXXI (2006), էջեր 846-852, (Իսպանիա, 46):

երկկողմ պայմանագիրը և Նյու-Յորքի Կոնվենցիան: Դատարանը որոշեց, որ երկկողմ պայմանագրի կամ Կոնվենցիայի կիրառելիությունն որոշող երկու էական սկզբունքներից մեկը հետևյալն է.

«...առավելագույն արդյունավետության կամ օտարերկրյա որոշումների ճանաչման և կատարման նկատմամբ առավել նպաստավորության սկզբունքը: [Մյուս էական սկզբունքների հետ համակցված Դատարանը որոշեց, որ Կոնվենցիան է հանդիսանում կիրառելի դրույթը, քանի որ այն] նախատեսում է արբիտրաժային համաձայնության և առնչվող արբիտրաժային վճռի վավերականության և արդյունավետության կանխավարկածը, և ուստի տեղափոխում է ապացուցման բեռը դեպի այն կողմը, ում դեմ արբիտրաժային վճիռը գործարկվել է:»

II. ԿԻՐԱՌՄԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ

Արբիտրաժային վճռի կամ համաձայնության՝ Կոնվենցիայի կարգավորման առարկայի շրջանակում ընդգրկված լինելը որոշելու համար դատարանը պետք է հավաստիանա, թե արդյոք այն որակվում է որպես արբիտրաժային համաձայնություն թե որպես արբիտրաժային վճիռ:

II.1 ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎՃԻՌ

«Արբիտրաժային վճիռ» տերմինը չի սահմանվում Կոնվենցիայում: Հետևաբար, դատարանները պետք է որոշեն, թե

ինչ է նշանակում տերմինը Կոնվենցիայի նպատակների համատեքստում: Վերջինս իրագործվում է երկու քայլի միջոցով.

1. Առաջինը՝ դատարանները պետք է պարզեն, թե արդյոք վեճը հանձնվել և լուծվել է *արբիտրաժի* միջոցով: Վեճերի ոչ բոլոր արտադատարանային լուծման միջոցներն են որակվում որպես արբիտրաժ: Առկա են մասնավոր անձանց ներառող վեճերի լուծման տարատեսակ մեխանիզմներ, որոնք չունեն արբիտրաժին համանման հատկանիշներ: Դրանցից են հաշտարարությունը, հաշտեցումը կամ փորձագետի եզրակացությունը: Նյու-Յորքի Կոնվենցիան կարգավորում է միայն արբիտրաժը:
2. Երկրորդը՝ դատարանները պետք է պարզեն, թե արդյոք որոշումն *արբիտրաժային վճիռ* է: Արբիտրաժային տրիբունալները կարող են տարբեր որոշումներ կայացնել: Դրանցից որոշները վճիռներ են, որոշները՝ ոչ:

Դատարաններն երկու տարբեր մեթոդներ են որդեգրել «արբիտրաժ» և «վճիռ» տերմինների իմաստներն որոշելու համար: Դրանք կա՛մ (1) նախընտրում են անկախ մեկնաբանությունը կա՛մ (2) դիմում են ազգային իրավունքին՝ որոշված միջազգային մասնավոր իրավունքի կանոնների համաձայն:

II.1.1. Անկախ Մեկնաբանություն

Առաջին քայլն ուղղված է պարզելու, թե արդյոք քննվող գործընթացը որակվում է որպես *արբիտրաժ*: Արբիտրաժը վեճերի լուծման միջոց է, որտեղ կողմերը համաձայնության են գալիս

իրենց վեճը երրորդ անձի հանձնելու շուրջ, ով դատարանի փոխարեն կկայացնի վերջնական և պարտավորեցնող վճիռ:

Սույն սահմանումը շեշտում է արբիտրաժի երեք հիմնական հատկանիշները: Առաջինը՝ արբիտրաժը համաձայնության վրա հիմնված գործընթաց է: Երկրորդ՝ արբիտրաժը հանգեցնում է վեճի վերջնական և պարտավորեցնող լուծման: Երրորդ՝ արբիտրաժը փոխարինում է դատական գործընթացին:

Երկրորդ քայլը ուղղված է պարզելու, թե արդյոք քննվող որոշումը վճիռ է: Վճիռն որոշում է, որով ամբողջությամբ կամ մասամբ արբիտրաժն ավարտվում է կամ լուծվում է նախնական հարց, որի լուծումն անհրաժեշտ վերջնական վճիռն հասնելու համար: Վճիռը *վերջնականապես* լուծում է այն խնդիրները, որոնք հանձնված են արբիտրաժի լուծման: Նույնիսկ եթե արբիտրաժային տրիբունալն ավելի ուշ ցանկանա այլ որոշում ընդունել, հարցը չի կարող վերաբացվել կամ վերանայվել:

Ուստի, հետևյալ արբիտրաժային որոշումներն են որակվում որպես վճիռ.

- Վերջնական վճիռները, այսինքն՝ վճիռներ, որոնցով արբիտրաժն ավարտվում է: Այդպիսին է նաև տրիբունալին հանձնված վեճի նկատմամբ իրավասությունը մերժող վճիռը:
- Մասնակի վճիռներ, այսինքն՝ վճիռներ, որոնք վերջնական որոշում են տալիս պահանջների մի մասին և մնացած պահանջները թողնում են արբիտրաժի գործընթացի հետագա փուլին: Վճիռը, որը վերաբերում է հավելյալ ծախսերի պահանջին շինարարական արբիտրաժում կամ թողնում է թերությունների ու ուշացումների վնասների հետ կապված պահանջները գործընթացի հետագա փուլին, մասնակի վճիռ է

- (այս տերմինը երբեմն նաև գործածվում է հաջորդ կատեգորիայում, բայց պարզության համար ցանկալի է տարբերակել դրանք),
- Նախնական վճիռներ, երբեմն նաև նախնական կամ միջանկյալ կոչվող վճիռներ, ինչպիսիք են վճիռները, որոնք որոշում են այնպիսի նախնական հարց, որն անհրաժեշտ է կողմերի պահանջները մերժելու համար, օրինակ՝ որոշելու, արդյոք պահանջը բերված է վաղեմության ժամկետի շրջանակում, կիրառվող օրենսդրությանը վերաբերող, կամ պատասխանատվության առկայությանը վերաբերող որոշում,
 - Ծախսերի վճիռներ, այսինքն՝ վճիռներ, որոնք սահմանում են արբիտրաժի ծախսերի չափը և բաշխումը,
 - Համաձայնեցված վճիռներ, այսինքն՝ վճիռներ, որոնք արձանագրում են կողմերի կողմից վճեի խաղաղ լուծումը:

Արբիտրաժային վճիռը, որը կայացվել է առանց կողմերից որևէ մեկի մասնակցության, նույնպես համարվում է վճիռ, եթե այն համապատասխանում է վերը նշված կատեգորիաներից որևէ մեկին:

Ի տարբերություն վերը նշվածի՝ հետևյալ որոշումները սովորաբար արբիտրաժային վճիռ չեն համարվում.

- Ընթացակարգային որոշումները՝ որոշումներ, որոնք ընդամենը համակարգում են ընթացակարգը,
- Ժամանակավոր միջոցների կամ հայցի ապահովման միջոցների վերաբերյալ որոշումներ, քանի որ դրանք միայն կայացվում են արբիտրաժի ընթացքի կանոնակարգման համար և կարող են վերաբացվել միայն դրա ընթացքում. ժամանակավոր

միջոցների վերաբերյալ որոշումները վճիռներ չեն: Դատարանները հակառակ կողմնորոշում ունեն այն տեսության վերաբերյալ, որ նման որոշումները դադարեցնում են ժամանակավոր միջոցների վերաբերյալ կողմերի տարաձայնությունները: Սակայն սա համոզիչ չէ. կողմերն արբիտրաժին չեն համաձայնել որպեսզի արբիտրաժի ընթացակարգային հարցեր լուծեն:

Ի վերջո, արբիտրների կողմից իրենց որոշմանը տրված վերտառությունն որոշիչ չէ: Դատարանները պետք է հաշվի առնեն որոշման առարկան և արդյոք այն վերջնականապես լուծում է հարցը, որպեսզի պարզեն դրա՝ վճիռ լինելը:

II.1.2. Միջազգային մասնավոր իրավունքի հիման վրա մոտեցում

Եթե դատարանը կիրառելու լիներ ներպետական օրենսդրությունը բոլոր վերոնշյալ հարցերի համար նախընտրելի անկախ մեթոդը գործածելու փոխարեն, այն պետք է նախ պարզեր «արբիտրաժային վճիռ» հասկացությունը սահմանող իրավունքը: Այլ կերպ ասած, դատարանը պետք է որդեգրի միջազգային մասնավոր իրավունքի հիման վրա մոտեցում: Այն կարող է կիրառել սեփական ներպետական օրենսդրությունը (*lex fori*) կամ արբիտրաժի գործընթացը կարգավորող օրենքը (*lex arbitri*): Վերջինս սովորաբար արբիտրաժի վայրի օրենսդրությունն է, ոչ հաճախ նաև կողմերի կողմից արբիտրաժի համար ընտրված օրենսդրությունը (ոչ պայմանագրի կամ վեճի էության նկատմամբ կիրառվող իրավունքը, որն այլ խնդիր է):

II.2. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Նյու-Յորքի Կոնվենցիայի 2(1) հոդվածը հստակ սահմանում է, որ այն կիրառվում է գրավոր համաձայնությունների նկատմամբ, որոնցով «կողմերը պարտավորվում են արբիտրաժին հանձնել բոլոր կամ որևէ վեճեր, որոնք, կապված որևէ կոնկրետ պայմանագրային կամ այլ իրավահարաբերության հետ, որի օբյեկտը կարող է արբիտրաժային քննության առարկա լինել, ծագել են կամ կարող են ծագել նրանց միջև»:

«Ծագել են կամ կարող են ծագել» բառերի գործածությունը ցույց է տալիս, որ Կոնվենցիան ներառում է և՛ պայմանագրում ներառված արբիտրաժային վերապահմամբ սահմանված ապագա վեճերը լուծելու հնարավորությունը, և՛ առկա վեճերի լուծման վերաբերյալ համաձայնությունները:

Համաձայն 2(1) հոդվածի՝ արբիտրաժային համաձայնությունը պետք է վերաբերի որոշակի իրավահարաբերության: Սույն պահանջն անկասկած բավարարված է պայմանագրում ներառված արբիտրաժային վերապահման դեպքում, որը վերաբերում է այդ պայմանագրից առաջացող վեճերին: Փոխարենը, այն բավարարված չէր լինի, եթե կողմերն արբիտրաժի հանձնեին բոլոր և ցանկացած առկա և հետագա վեճերը՝ հնարավոր ցանկացած առարկայի վերաբերյալ:

Արբիտրաժային համաձայնությունում ներառված վեճերը կարող են վերաբերել պայմանագրին կամ այլ պահանջների, ինչպիսիք են ոչ պայմանագրային հարաբերությունից ծագող վեճերը, և օրենքով սահմանված այլ պահանջները:

Վերջապես, Կոնվենցիան պահանջում է, որ արբիտրաժային համաձայնությունը լինի «գրավոր», որը սահմանված է 2(2)-րդ հոդվածում և քննարկվում է Գլուխ II-ում:

III. ԿԻՐԱՌՄԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ

Հոդված 1(1)-ը սահմանում է Նյու-Յորքի Կոնվենցիայի կիրառելիության տարածքային շրջանակը արբիտրաժային վճիռների նկատմամբ.

«Սույն Կոնվենցիան կիրառվում է այն արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման նկատմամբ, որոնք կայացվել են այն պետության տարածքում, քան այն պետությունը, որում հայցվում է այդպիսի վճիռների ճանաչումը և կատարումը՝ այն վեճերով, որոնց կողմ կարող են լինել ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձինք: Այն կիրառվում է նաև այն արբիտրաժային վճիռների նկատմամբ, որոնք տեղական վճիռներ չեն համարվում այն պետությունում, որտեղ հայցվում է դրանց ճանաչումը և կատարումը»:

Հետևաբար, Կոնվենցիան վերաբերում է միայն օտարերկրյա և ոչ ներպետական արբիտրաժային վճիռների ճանաչմանը և կատարմանը (տես՝ սույն Գլխի III.1 մասում): Այն չի կիրառվում ներպետական վճիռների ճանաչման և կատարման նկատմամբ: Կոնվենցիան չի ներառում արբիտրաժային համաձայնությունների վերաբերող նմանատիպ դրույթներ: Այնուամենայնիվ, սահմանված է, որ Կոնվենցիան միայն վերաբերում է «օտար» կամ միջազգային արբիտրաժային համաձայնություններին (տես՝ Գլուխ II):

III.1. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎՃԻՌՆԵՐ

III.1.1. Արբիտրաժային վճիռներ՝ կայացված ոչ այն պետության տարածքում, որտեղ հայցվում են ճանաչումը և կատարումը

Ցանկացած վճիռ, կայացված ոչ այն պետության տարածքում, որտեղ հայցվում են ճանաչումը և կատարումը, ներառված է Կոնվենցիայի շրջանակում, այսինքն՝ օտարերկրյա վճիռ է: Հետևաբար, կողմերի ազգությունը, դոմիցիլը կամ բնակության վայրը էական չեն վճռի օտարերկրյա լինելը որոշելու համար: Այնուամենայնիվ, այս գործոնները հնարավոր է կարևոր լինեն՝ որոշելու, թե արդյոք արբիտրաժային համաձայնությունն ընդգրկված է Կոնվենցիայի տարածքային շրջանակում (տես՝ Գլուխ II և Գլուխ III): Ավելին, անհրաժեշտ չէ, որպեսզի պետությունը, որտեղ կայացվել է վճիռը, Կոնվենցիայի անդամ պետություն լինի (բացառությամբ, իհարկե, այն դեպքերի, երբ պետությունը, որտեղ հայցվում են ճանաչումն ու կատարումը, փոխադարձության վերապահում է կատարել. տես՝ սույն Գլխի VI.1 մասում):

Որտե՞ղ է կայացվել վճիռը: Կոնվենցիան չի պատասխանում այս հարցին: Անդամ պետությունների մեծամասնությունը համարում է, որ վճռի կայացման վայրը արբիտրաժի վայրն է: Արբիտրաժի վայրը ընտրում են կողմերը, իսկ նրանց համաձայնության բացակայության դեպքում՝ արբիտրաժային ինստիտուտը կամ արբիտրաժային տրիբունալը: Դա իրավական հասկացություն է, ոչ ֆիզիկական կամ աշխարհագրական: Արբիտրաժի լսումները, քննարկումները և վճռի ստորագրումը և արբիտրաժային գործընթացի այլ փուլերը կարող են արվել այլ վայրում:

III.1.2. Ոչ ներպետական արբիտրաժային վճիռներ

Կոնվենցիայում ընդգրկված արբիտրաժային վճիռների երկրորդ կատեգորիան այն վճիռներն են, որոնք համարվում են ոչ ներպետական այն պետությունում, որտեղ հայցվում են ճանաչումը և կատարումը: Այս կատեգորիան ընդլայնում է Կոնվենցիայի կիրառման շրջանակը:

Կոնվենցիան չի սահմանում, թե որոնք են ոչ ներպետական արբիտրաժային վճիռները: Հազվադեպ կողմերն իրենք են սահմանում, արդյոք իրենց միջև կայացված վճիռը ոչ ներպետական է: Հետևաբար յուրաքանչյուր անդամ պետություն ազատ է սահմանելու, թե որ վճիռն է համարում ոչ ներպետական, և հնարավորություն ունի սահմանելու սույն հարցը Կոնվենցիան իրագործող օրենսդրությունում⁷:

⁷ Օրինակ՝ Միացյալ Նահանգների Ֆեդերալ արբիտրաժի օրենքի (United States Federal Arbitration Act) 9-րդ բաժնի 2-րդ գլխի հետևյալ դրույթներն է ներառում կապված «ոչ ներպետական վճիռների» հետ.

«Հոդված 202. Կոնվենցիայի շրջանակում ընդգրկված համաձայնություն կամ արբիտրաժային վճիռ

Արբիտրաժային համաձայնությունը կամ արբիտրաժային վճիռը, որը առաջանում է պայմանագրային կամ ոչ պայմանագրային իրավահարաբերությունից, որը համարվում է առևտրային իր բնույթով, ինչպիսիք են սույն բաժնի 2-րդ գլխում նկարագրված գործարքը, պայմանագիրը, կամ համաձայնությունը, ընդգրկված են Կոնվենցիայի շրջանակում: Նման իրավահարաբերությունից առաջացող արբիտրաժային համաձայնությունը կամ արբիտրաժային վճիռը, որը ամբողջությամբ Միացյալ Նահանգների քաղաքացիների միջև է, ընդգրկված չէ Կոնվենցիայի շրջանակում, բացառությամբ երբ այդ իրավահարաբերությունը ներառում է այլ երկրում գտնվող գույք, նախատեսում է պարտավորությունների կատարում կամ կիրարկում այլ երկրում, կամ առկա որևէ ողջամիտ կապ մեկ կամ մի քանի այլ պետության հետ: Սույն բաժնի շրջանակներում կորպորացիան

Այս հնարավորությունից օգտվելիս պետությունները սովորաբար հետևյալ արբիտրաժային վճիռներից որոշները կամ բոլորը համարում են ոչ ներպետական.

- Այլ երկրի արբիտրաժային օրենքին համապատասխան կայացված արբիտրաժային վճիռներ,
- Օտարերկրյա տարր պարունակող արբիտրաժային վճիռներ,
- Վերագգային արբիտրաժային վճիռներ:

Առաջին տեսակի վճիռն առաջ է գալիս միայն այն դեպքերում, երբ արբիտրաժի վայրը ճանաչման և կատարման հայցը քննող պետությունում է, որը, սակայն, առաջնորդվել է օտարերկրյա արբիտրաժային օրենսդրությամբ: Սա հազվադեպ երևույթ է, քանի որ դա կնշանակի, որ ճանաչման և կատարման դատարանի ներպետական օրենսդրությունը թույլ է տալիս կողմերին արբիտրաժի նկատմամբ կիրառել արբիտրաժի վայրի իրավունքից (*lex arbitri*) տարբեր իրավունք:

Երկրորդ կատեգորիան վերաբերում է այն արբիտրաժային վճիռներին, որոնք կայացվել են ճանաչման և կատարման դատարանի պետությունում մի վեճի վերաբերյալ, որը ներառում է օտարերկրյա տարր, ինչպիսիք են՝ կողմերի ազգությունը կամ դոմիցիլը կամ վեճի պատճառ հանդիսացող պայմանագրի կատարման վայրը: Չափանիշները, համաձայն որոնց՝ վճիռը կհամարվի ոչ ներպետական այս կատեգորիային համապատասխան, սովորաբար սահմանվում են պետությունների

համարվում է Միացյալ Նահանգների քաղաքացի, եթե այն հիմնվել է Միացյալ Նահանգներում կամ դրա գործունեության գլխավոր վայրը գտնվում է Միացյալ Նահանգներում»:

կողմից Կոնվենցիան իրագործող օրենսդրության շրջանակներում (տես՝ 8-րդ ծանոթագրությունը Միացյալ Նահանգների օրինակի համար): Կողմերը հազվադեպ են սահմանում, որ իրենց արբիտրաժային վճիռը ներպետական չէ:

Երրորդ տեսակը վերաբերում է այն արբիտրաժային վճիռներին, որոնք շրջանցում են ազգային արբիտրաժային օրենսդրությունը, օրինակ՝ երբ կողմերը հստակ բացառել են որևէ ազգային արբիտրաժային օրենսդրության կիրառումը կամ ցանկություն են հայտնել կիրառելու վերազգային կանոններ, ինչպիսիք են՝ արբիտրաժի օրենքի ընդհանուր սկզբունքները: Չնայած նրան, որ որոշ քննարկումներ են եղել Նյու-Յորքի Կոնվենցիայի շրջանակում վերազգային արբիտրաժային վճիռների ներառելու հետ կապված, գերակշռող կարծիքն այն է, որ նման արբիտրաժային վճիռները ընդգրկված են Կոնվենցիայի շրջանակում: Այս արբիտրաժային վճիռները շատ հազվադեպ են:

III.2. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նյու-Յորքի Կոնվենցիան չի սահմանում արբիտրաժային համաձայնությունների հետ կապված կիրառման շրջանակը: Այնուամենայնիվ, Նյու-Յորքի Կոնվենցիան չի կարգավորում ներպետական արբիտրաժային համաձայնությունների ճանաչումը: Նմանապես, ընդունված է նաև, որ Կոնվենցիան կիրառելի է, եթե հետագա արբիտրաժային վճիռը համարվի օտարերկրյա կամ ոչ ներպետական՝ համաձայն 1(1) հոդվածի: Որոշ դատարաններ կարծում են, որ Կոնվենցիան կիրառելի է, եթե արբիտրաժային համաձայնությունը միջազգային բնույթ ունի: Համաձայնության

միջազգային լինելը կախված է կա՛մ կողմերի ազգությունից կամ բնակության վայրից, կա՛մ հայցի հիմքում ընկած գործարքից:

Արբիտրաժային համաձայնության՝ Կոնվենցիայի շրջանակում ներառված լինելը որոշելիս դատարանները պետք է տարբերակեն երեք իրավիճակ.

- Եթե արբիտրաժային համաձայնությունը սահմանում է, որ արբիտրաժի վայրը օտար պետությունում է, դատարանը պետք է կիրառի Նյու-Յորքի Կոնվենցիան,
- Եթե արբիտրաժային համաձայնությունը սահմանում է, որ արբիտրաժի վայրը դատարանի գտնվելու վայրի պետությունում է, դատարանը.
 - պետք է կիրառի Կոնվենցիան, եթե ապագա արբիտրաժային վճիռը կհամարվի ոչ ներպետական՝ համաձայն 1(1) հոդվածի երկրորդ նախադասության,
 - կարող է կիրառել Կոնվենցիան, եթե արբիտրաժային համաձայնությունը միջազգային է կողմերի ազգության կամ բնակության վայրի կամ գործարքում օտարերկրյա տարրերի առկայության պատճառով,
- Եթե արբիտրաժային համաձայնությունը չի նախատեսում արբիտրաժի վայր, դատարանը պետք է կիրառի Կոնվենցիան, եթե ապագա վճիռը հավանական է, որ համարվի օտարերկրյա կամ ոչ ներպետական՝ համաձայն 1(1) հոդվածի: Ի հավելումս, Կոնվենցիան կարող է կիրառվել, եթե դատարանը համաձայնությունը համարում է միջազգային:

IV. ՎԵՐԱՊԱՀՈՒՄՆԵՐ

Որպես կանոն, Կոնվենցիան կիրառվում է օտարերկրյա կամ միջազգային արբիտրաժային բոլոր համաձայնությունների նկատմամբ և օտարերկրյա կամ ոչ ներպետական բոլոր արբիտրաժային վճիռների նկատմամբ: Այնուհանդերձ, անդամ պետությունները կարող են կատարել Կոնվենցիայի կիրառման կապակցությամբ երկու վերապահում:

IV.1. ՓՈԽԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ (ՀՈԴՎԱԾ 1(3) ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ)

Անդամ պետությունները կարող են հայտարարել, որ իրենք կիրառում են Կոնվենցիան, միայն այլ անդամ պետության տարածքում կայացված արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման նկատմամբ: Անդամ պետությունների մոտ երկու երրորդը կատարել է սույն վերապահումը: Փոխադարձության վերապահում կատարած պետության դատարանը կիրառում է Կոնվենցիան միայն այն դեպքում, եթե արբիտրաժային վճիռը կայացվել է այլ անդամ պետության տարածքում, կամ եթե արբիտրաժային վճիռը չի պատկանում ներպետական վճիռների տեսակին և արտացոլում է այլ անդամ պետության հետ կապերի առկայությունը:

IV.2. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԸ (ՀՈԴՎԱԾ 1(3) ԵՐԿՐՈՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ)

Անդամ պետությունները կարող են նաև հայտարարել, որ իրենք կիրառում են Կոնվենցիան միայն այն տարաձայնությունների նկատմամբ, որոնք ծագել են նման հայտարարություն կատարած պետության ներպետական օրենսդրությամբ առևտրային համարվող պայմանագրային կամ ոչ պայմանագրային իրավահարաբերություններից: Անդամ պետությունների մոտ մեկ երրորդը կատարել է նման վերապահում:

Չնայած այն հանգամանքին, որ Կոնվենցիայի բուն տեքստը հղում է կատարում այն երկրի ներպետական օրենսդրությանը, որի դատարանում քննվում է վեճ (որպես անկախ մեկնաբանության սկզբունքից բացառություն), գործնականում դատարանները հաշվի են առնում քննվող գործի առանձնահատկությունները և միջազգային պրակտիկան: Յուրաքանչյուր դեպքում դատարանները, հաշվի առնելով Կոնվենցիայի նպատակը, պետք է լայն մեկնաբանեն «առևտրային» հասկացությունը:

Չնայած այն հանգամանքին, որ Կոնվենցիան նախատեսում է վերապահումներ միայն արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման համատեքստում, ընդհանուր առմամբ համարվում է, որ վերապահումները կիրառվում են նաև արբիտրաժային համաձայնությունների ճանաչման նկատմամբ:

**V. ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՀԵՏ
ՀԱՐԱՐԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ (ՀՈԴՎԱԾ 7)**

Նյու-Յորքի կոնվենցիայի հոդված 7(1) կարգավորում է Կոնվենցիայի և դատարանի գտնվելու վայրի ներպետական օրենսդրության ու արբիտրաժային վճռի կատարումը հայցվող անդամ պետության համար պարտադիր այլ միջազգային պայմանագրերի միջև հարաբերակցությունը՝ սահմանելով հետևյալ դրույթը.

«Սույն Կոնվենցիայի դրույթները չեն շոշափում արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման վերաբերյալ Պայմանավորվող կողմերի կնքած երկկողմ և բազմակողմ միջազգային պայմանագրերի վավերականությունը, և որևէ շահագրգիռ կողմի չեն զրկում ցանկացած արբիտրաժային վճռից այն կարգով և սահմաններում օգտվելու իրավունքից, որոնք թույլատրվում են այն երկրի օրենքով և միջազգային պայմանագրերով, որտեղ հայցվում է այդպիսի արբիտրաժային վճռի ճանաչումը և կատարումը»:

V.I. ԱՌԱՎԵԼ ԲԱՐԵՆՊԱՍՏ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

7(1)-րդ հոդվածը կոչվում է առավել բարենպաստ օրենսդրության դրույթ, քանի որ այն ճանաչում և կատարում հայցող կողմին թույլ է տալիս հիմնվել այն դրույթների վրա, որոնք առավել բարենպաստ են, քան Կոնվենցիայով նախատեսված դրույթները: Առավել բարենպաստ կանոններն առկա են (i) դատարանի գտնվելու վայրի

պետության ներպետական օրենսդրությունում կամ (ii) միջազգային պայմանագրերում, որոնք կիրառելի են այն տարածքում, որտեղ հայցվում են ճանաչում և կատարում:

Գործնականում միջազգային պայմանագրերը և ներպետական օրենսդրությունն առավել բարենպաստ են քան Կոնվենցիան, եթե ճանաչման և կատարման համար առավել մեղմ պահանջներ են նախատեսում ընթացակարգային հարցերի կամ չճանաչման հիմքերի առումով:

Ներկայումս լայնորեն տարածված է (սակայն համընդհանուր ընդունում չունի) այն միտումը, որ հոդված 7(1)-ով սահմանված դրույթները կիրառվում են նաև հոդվածով 2-ով սահմանված արբիտրաժային համաձայնագրերի ճանաչման և կատարման նկատմամբ: Հոդված 7(1)-ը կոչված է հիմնականում շրջանցելու արբիտրաժային համաձայնության նկատմամբ կիրառելի ձևական պահանջները, որոնք սահմանված են հոդվածով 2-ով (տես՝ Գլուխ II, IV.2.1, գրավոր պահանջ):

Միացյալ ազգերի կազմակերպության միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի (ՈՒՆՄԻՏԲԱԼ) կողմից ընդունված 2006թ. հուլիսի 7-ի հանձնարարականով (տես՝ Հավելված III) սահմանված է.

«Օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման վերաբերյալ 1958թ. հունիսի 10-ի Նյու-Յորքի Կոնվենցիայի հոդվածի 7-ի 1-ի մասը պետք է կիրառել այնպես, որպեսզի այն թույլ տա նաև ցանկացած շահագրգիռ կողմին իրացնելու իրավունքները, որոնք անձին պատկանում են այն պետության օրենսդրության կամ միջազգային պայմանագրերի

համաձայն, որտեղ արբիտրաժային համաձայնության հիման վրա հայցվում է դրա վավերականության ճանաչումը»:

Կոնվենցիայի նախապատմությունը ևս պաշտպանում է այս տեսակետը: Արբիտրաժային համաձայնությունների կիրառման վերաբերյալ դրույթը ներառվել է բանակցությունների վերջին օրը: Կոնվենցիայի մնացյալ դրույթները չփոփոխվեցին՝ նկատի ունենալով այս վերջին պահի լրացումը: Այսպիսով, հոդվածը 7-ը չպետք է մեկնաբանվի այնպես, որ Կոնվենցիայի շրջանակից արբիտրաժային համաձայնությունները բացառվեն:

V.2. ՆՅՈՒ-ՅՈՐԲԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ ԵՎ ԱՅԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ

7-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է, որ Կոնվենցիան չի շոշափում կատարող պետությունում արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման վերաբերյալ այլ գործող միջազգային պայմանագրերի վավերությունը: Նույն դրույթի երկրորդ մասը հստակեցնում է, որ կողմերը կարող են հասնել արբիտրաժային վճռի ճանաչմանը և կատարմանը՝ համաձայն Նյու-Յորքի կոնվենցիայի կամ այլ միջազգային պայմանագրերի կամ ներպետական օրենսդրության՝ առավել բարենպաստ իրավունքի սկզբունքով:

Առավել բարենպաստ իրավունքի սկզբունքը շեղվում է միջազգային պայմանագրերի միջև հակասությունների վերաբերյալ միջազգային իրավունքի դասական կանոններից (*lex posterior* and *lex specialis*): Համաձայն առավել բարենպաստ իրավունքի սկզբունքի՝ գերակայում է առավել բարենպաստ նորմը:

Վ.3. ՆՅՈՒՅՈՐՔԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ ԵՎ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Նյու-Յորքի կոնվենցիայի և արբիտրաժային վճռի կատարումը հայցվող պետության ներպետական օրենսդրության փոխհարաբերություններում պետք է առանձնացնել երեք իրավիճակ.

- Նյու-Յորքի կոնվենցիան և ներպետական օրենսդրությունն ունեն նույն իրավական խնդրի վերաբերյալ կանոններ: Այս դեպքում Կոնվենցիան գերակա է ներպետական օրենսդրության նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ ներպետական օրենսդրությունն առավել բարենպաստ է: Որոշ դեպքերում դատարանը պարտավոր է հղում կատարել Կոնվենցիան կիրարկող օրենսդրությանը (ներքոնշյալ *տարբերակ (i)*),
- Նյու-Յորքի կոնվենցիան չի պարունակում սույն խնդիրը կարգավորող դրույթ: Այս դեպքում դատարանները կիրառում են իրենց ներպետական օրենսդրությունը՝ ի լրումն Նյու-Յորքի կոնվենցիայի (ներքոնշյալ *տարբերակ (ii)*),
- Նյու-Յորքի կոնվենցիան ուղղակիորեն հղում է կատարում ներպետական օրենսդրությանը: Այս դեպքում դատարանները պարտավոր են կիրառել ներպետական օրենսդրությունը՝ Կոնվենցիայով նախատեսված սահմաններում (ներքոնշյալ *տարբերակ (iii)*):

Տարբերակ (i) Կոնվենցիան գերակա է ներպետական օրենսդրության նկատմամբ

Տարբերակ (ii) Ներպետական օրենսդրությունը լրացնում է Կոնվենցիան

Նյու-Յորքի կոնվենցիան չի սահմանում օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման ամբողջական ընթացակարգ: Ընթացակարգի վերաբերյալ Կոնվենցիան սահմանում է միայն ապացուցման բեռի և հայցող կողմի կողմից ներկայացվող փաստաթղթերի վերաբերյալ կանոններ: Այլ ընթացակարգերի վերաբերյալ Կոնվենցիան նորմեր չի պարունակում:

Հոդվածը 3-ը սահմանում է, որ անդամ պետությունները պետք է ճանաչեն և կատարեն արբիտրաժային վճիռները այն երկրի ընթացակարգային կանոններով, որտեղ արբիտրաժային վճիռը նախատեսվում է կատարել: Այսպիսով օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման ընթացակարգը կարգավորվում է ներպետական օրենսդրությամբ՝ բացառությամբ ապացուցման բեռի և ներկայացվող փաստաթղթերի վերաբերյալ հարցերի (տես՝ Գլուխ 3-րդ):

Հետևյալ ընթացակարգային խնդիրները կարգավորվում են ներպետական օրենսդրությամբ (ցանկը սպառիչ չէ).

- Ճանաչման և կատարման դիմում ներկայացնելու վաղեմության ժամկետը,
- Արբիտրաժային վճիռները ճանաչող կամ կատարող լիազոր մարմինը,
- Դիմումի ձևը,
- Վարույթի անցկացման կարգը,

- Կատարողական թերթի տրման կամ մերժման վերաբերյալ որոշման դեմ իրավական պաշտպանության միջոցները,
- Արբիտրաժային վճռի դեմ հաշվանցման պաշտպանության կամ հակընդդեմ դիմումի հնարավորությունը:

Իրավական խնդիր կարող է ծագել, երբ պետությունը սահմանում է ընդդատության վերաբերյալ խիստ իրավական պահանջներ՝ կապված դատարանների կողմից հարկադիր կատարման դիմումի ընդունման հետ: Կոնվենցիայի նպատակին և արբիտրաժային վճռի կատարմանը միտված քաղաքականության համապատասխան՝ կատարող պետության տարածքում ակտիվների առկայությունը բավարար է՝ սահմանելու հարկադիր կատարման նպատակների իրականացման համար ընդդատություն: Չնայած այս հանգամանքին, ԱՄՆ մի շարք նահանգներ պահանջում են պատասխանողի և արբիտրաժային վճռի պարտապան հանդիսացող կողմի նկատմամբ անձնական ընդդատության առկայություն:

Տարբերակ (iii) Նյու-Յորքի կոնվենցիան ուղղակիորեն հղում է կատարում ներպետական օրենսդրության

Նյու-Յորքի կոնվենցիայի որոշ դրույթներ ուղղակիորեն հղում են կատարում ներպետական իրավունքին: Որպես օրինակ կարելի է նշել հոդված 1-ը (վերապահում առևտրային տերմինի վերաբերյալ), հոդված 3-ը (ճանաչման և կատարման ընթացակարգի վերաբերյալ) և հոդված 5-ը (չկատարման որոշ հիմքերի առկայությունը պարզելուն ուղղված ներպետական օրենսդրության հղումը): Պարտադիր պայման չէ, որ կիրառելի

ներպետական իրավունքը լինի դատարանի գտնվելու վայրի իրավունքը. այդ իրավունքը այն ներպետական իրավունքն է, համաձայն որի՝ կայացվել է արբիտրաժային վճիռը:

VI. ՆՅՈՒ-ՅՈՐՔԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՉԿԻՐԱՌՄԱՆ ՀՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Նյու-Յորքի կոնվենցիայի չկիրառումը կամ սխալ կիրառումը, որպես կանոն, առաջացնում է պետության միջազգային պատասխանատվություն: Պետության՝ Կոնվենցիայով սահմանված պարտավորությունների խախտումը (տես՝ ներքոնշյալ Գլուխ VI.1) որոշ հանգամանքներում կարող է հանգեցնել նաև բազմակողմ կամ երկկողմ ներդրումային պայմանագրերի խախտման (տես՝ ներքոնշյալ Գլուխ VI.2): Յուրաքանչյուր դեպքում խախտումները որևէ ձևով չեն ազդում արբիտրաժային վճռի վրա (տես՝ ներքոնշյալ Գլուխ VI.3):

VI.1 ՆՅՈՒ-ՅՈՐՔԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԽԱԽՏՈՒՄ

Չնայած այն հանգամանքին, որ Նյու-Յորքի կոնվենցիան չի նախատեսում վեճերի լուծման վերաբերյալ դրույթներ, այնուամենայնիվ Նյու-Յորքի կոնվենցիան անդամ պետությունների համար միջազգային իրավունքի ներքո պարտավորություններ սահմանող միջազգային պայմանագիր է :

Վերոնշյալի համաձայն՝ անդամ պետությունները պարտավորվել են ճանաչել և կատարել օտարերկրյա արբիտրաժային վճիռները և ճանաչել արբիտրաժային համաձայնությունները: Երբ որևէ կողմ պահանջում է Կոնվենցիայի

իրավասության շրջանակում գտնվող արբիտրաժային վճռի կամ համաձայնության կատարում և/կամ ճանաչում, անդամ պետությունը պարտավոր է կիրառել Նյու-Յորքի կոնվենցիան: Անդամ պետությունը չպետք է սահմանի ճանաչման և կատարման վերաբերյալ առավել խիստ ընթացակարգային կանոններ և նյութական պայմաններ, իսկ երբ Կոնվենցիան չի կարգավորում որևէ ընթացակարգ, անդամ պետությունը չի կարող սահմանել էականորեն ավելի խիստ ընթացակարգային պայմաններ, քան նախատեսված է ներպետական արբիտրաժային վճիռների նկատմամբ:

Անդամ պետությունների շրջանակում Նյու-Յորքի կոնվենցիան կիրառող կենտրոնական մարմինը դատարանն է: Միջազգային իրավունքում դատարանների գործողությունները դիտվում են որպես պետության կողմից կատարված գործողություններ: Հետևաբար, եթե դատարանը չի կիրառում կամ ոչ պատշաճ է կիրառում Կոնվենցիան կամ ճանաչումը կամ կատարումը մերժելու համար գտնում է կասկածելի, Կոնվենցիայով չնախատեսված հիմքեր, դատարանի գտնվելու վայրի պետության համար առաջ է գալիս միջազգային պատասխանատվության հարցը:

Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու մասին անդամ պետությանը ծանուցելու պահից անդամ պետությունը միջազգային մակարդակի պատասխանատվություն է կրում՝ անկախ ներպետական օրենսդրությամբ Կոնվենցիան պատշաճ կերպով իմպլեմենտացված լինելու կամ հրապարակված կամ ներպետական կանոններով այլ կերպ հայտարարված լինելու հանգամանքից: Հետևաբար, այն փաստը, որ Կոնվենցիայի տեքստը, որպես օրինակ, չի հրապարակվել համապատասխան պաշտոնական տեղեկագրում, որևէ կերպ չի ազդում պետության

պարտավորությունների վրա կատարելու Կոնվենցիայի պահանջները միջազգային իրավունքին համապատասխան:

VI.2. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԽԱՒՏՈՒՄ

Հանգամանքներից կախված՝ արբիտրաժային համաձայնությունների և վճիռների ճանաչման և կատարման պարտավորության խախտումը կարող է հանգեցնել այլ միջազգային պայմանագրի խախտման: Դա կարող է լինել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան և հատկապես դրա առաջին արձանագրությունը և, ինչպես ցույց տվեցին վերջին զարգացումները, ներդրումային միջազգային պայմանագրերը: Վերջինիս վերաբերյալ պետություններն երաշխավորում են օտարերկրյա ներդրողներին, որ պաշտպանության այլ միջոցներին զուգահեռ, նրանք կօգտվեն արդար և իրավահավասար վերաբերմունքից և չեն ենթարկվի սեփականագրկման (բացառությամբ հատուկ պայմանների առկայության): Վերջերս կայացրած երկու միջազգային ներդրումային արբիտրաժներում արբիտրաժները վճեցին, որ պետությունը խախտել է իր՝ ներդրումային երկկողմ միջազգային պայմանագրով ստանձնած պարտավորությունները, քանի որ ներպետական դատարանը վավեր արբիտրաժային համաձայնությունը չի ճանաչվել:⁸

⁸ *Saipem SpA v. Bangladesh*, Ներդրումային վեճերի լուծման միջազգային կենտրոնի (ICSID) գործ no. ARB/05/07 և *Salini Costruttori SpA v. Jordan*, ICSID գործ no. ARB/02/13, երկուսն էլ հասանելի են անցանց www.icsid.worldbank.org կայքում:

VI.3. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎՃԻՌՆԵՐՆ ԱՆՓՈՓՈՒՆ ԵՆ

Արբիտրաժային վճիռը որևէ ձևով չի փոփոխվում, եթե պետության կողմից դրա կատարումը կամ ճանաչումը Նյու-Յորքի կոնվենցիայի խախտմամբ մերժվում է: Պետության որոշումն իրավական հետևանք է առաջանում միայն իր տարածքում: Հետևաբար հաղթող կողմը կարող է հիմնվել արբիտրաժային վճռի վրա և հայցել դրա կատարումը այլ պետություններում:

ԳԼՈՒԽ II. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՁ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

II. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԿՈՆՎԵՆՑԻՈՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- II.1. Արբիտրաժային համաձայնության վավերականության կանխավարկածը
- II.2. Վավեր արբիտրաժային համաձայնության կողմերը պետք է ուղղորդվեն դեպի արբիտրաժ
- II.3. Ինչպես կողմերին «ուղղորդել» դեպի արբիտրաժ
- II.4. *Ի պաշտոնե* ուղղորդման բացառում

III. ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

- III.1. Արբիտրներն ունեն իրավասություն որոշելու իրենց իրավասությունը
 - III.2. Արբիտրաժային տրիբունալի իրավասության դեմ առարկությունների դատական վերանայման շրջանակը
 - III.3. Հիմնական պայմանագրի անվավերությունը սովորաբար չի հանգեցնում արբիտրաժային վերապահման անվավերության
 - III.4. Ուղղորդման պահանջի ժամանակացույցը արբիտրաժային վարությամբ
 - III.5. Միաժամանակ ընթացող արբիտրաժային վարույթների հաշվի առնելու անհրաժեշտության բացակայություն
- ### **IV. ՀՈԴՎԱԾ 2-Ի ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԸ**
- IV.1. Արդյո՞ք արբիտրաժային համաձայնությունը Կոնվենցիայի շրջանակներում է

IV.2. Արդյո՞ք արբիտրաժային համաձայնությունը կնքվում է գրավոր եղանակով

IV.2.1. Տեսական նախապատմություն

IV.2.2. Պրակտիկա

(i) *Հիմնական պայմանագիրը հղում է կատարում փաստաթղթին, որում ներառված է արբիտրաժային վերապահումը («հնկորպորացիա հղման միջոցով»)*

(ii) *Պայմանագրային փաստաթղթում առկա արբիտրաժային վերապահումը սրորագրված չէ, սակայն հաջորդիվ կատարվում է կողմերի կողմից՝ համաձայն դրա պայմանների*

- Պայմանագրային առաջարկն ուղարկվում և հաստատվում է արբիտրաժային վերապահման հետ մեկտեղ: Սակայն, ակցեպտը իր մեջ ներառում է ընդհանուր սահմանափակումներ կամ նախապայմաններ

- Կողմերից մեկը արբիտրաժային վերապահում պարունակող պայմանագրային առաջարկն ուղարկում է մյուս կողմին, որը չի պատասխանում, սակայն այնուամենայնիվ կատարում է պայմանագիրը:

(iii) *Էլեկտրոնային հաղորդագրություններում առկա արբիտրաժային համաձայնությունը*

IV.3. Արդյո՞ք արբիտրաժային համաձայնությունը գոյություն ունի և վավեր է ըստ էության

IV.3.1. Տեսական նախապատմություն

IV.3.2. Պրակտիկա

(i) «Անվավեր»

(ii) «Զգործող արբիտրաժային համաձայնություն»

(iii) «Չի կարող կատարվել»

- Երբ արբիտրաժին դիմելը հայեցողական է
- Երբ պայմանագիրը նախատեսում է արբիտրաժի, ինչպես նաև դատարանների իրավասություն
- Երբ արբիտրաժային կանոնները կամ արբիտրաժային կենտրոնը միանշանակ բնորոշված չեն
- Երբ արբիտրների նշանակման կարգը սահմանված չէ («բաց վերապահումներ»)

IV. Առկա՞ է արդյոք վեճ. արդյո՞ք այն առաջացել է սահմանված իրավահարաբերություններից. արդյո՞ք այն պայմանագրային բնույթ ունի, թե ոչ, և արդյո՞ք կողմերը մտադրություն են ունեցել լուծելու իրենց վեճը արբիտրաժի միջոցով

IV.4.1. Տեսական նախապատմություն

IV.4.2. Պրակտիկա

- (i) Արդյո՞ք արբիտրաժային վերապահումը պետք է լայն մեկնաբանել
- (ii) Արբիտրաժի համաձայնությունը իր շրջանակներից պարունակում է բացառություններ

IV.5. Արդյո՞ք արբիտրաժային համաձայնությունը պարտադիր է կողմերի համար, երբ վեճն արդեն դատարանում է

IV.5.1 Տեսական նախապատմություն

- (i) Արբիտրաժի համաձայնությունը պարտադիր է միայն կողմերի համար
- (ii) Պայմանագրի կողմ չհանդիսացող անձինք ևս կարող են դիտարկվել որպես արբիտրաժային համաձայնության կողմեր

(iii) Ինչպես որոշել արբիտրաժային համաձայնության սուբյեկտիվ շրջանակը

(iv) Արբիտրաժային համաձայնության սուբյեկտիվ շրջանակի որոշման համար կիրառելի իրավունքը

IV.5.2. Պրակտիկա

(i) Ե՞րբ պատասխանողն ունի արբիտրաժ ուղղորդվելու իրավունք

(ii) Երբ դատարանը որոշում է, որ արբիտրաժային համաձայնությունը պարտադիր չէ պատասխանողի համար

IV.6. Արդյո՞ք տվյալ վեճը ենթակա է արբիտրաժի («արբիտրելի» է)

IV.6.1. «Արբիտրաժի միջոցով վեճի առարկայի լուծման հնարավորության» վավերապայմանը նշանակում է «արբիտրելի»

IV.6.2. Արբիտրելիության նկատմամբ կիրառվող իրավունքը

IV.6.3. Միջազգային արբիտրաժային համաձայնությունները պետք է ենթակա լինեն արբիտրելիության միատեսակ չափանիշներին

V. ԱՄՓՈՓՈՒՄ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ինչպես ներկայացվել էր Գլուխ I-ում, Նյու-Յորքի Կոնվենցիան միտված է խթանելու միջազգային վեճերի կարգավորումը արբիտրաժի միջոցով: Այդ պատճառով անհրաժեշտ է երաշխավորել, որ Պայմանավորվող պետությունների

դատարանները ճանաչեն արբիտրաժի մասին կողմերի համաձայնությունը և դրանից բխող արբիտրաժային վճիռը:

Արբիտրաժային համաձայնությունների մասով Կոնվենցիայի հեղինակները ձգտել են ապահովել կողմերի՝ արբիտրաժ դիմելու նախնական մտադրությունն որևէ ձևով չխախտվի, եթե հետագայում կողմերից մեկը միակողմանի դիմի դատարան: Հետևաբար, հեղինակները դատարանների համար սահմանել են պարտականություն, ըստ որի՝ նրանք պարտավոր են ուղղորդել կողմերին դեպի արբիտրաժ՝ միաժամանակ սահմանափակելով արբիտրաժային համաձայնության վավերականությունը վիճարկելու հիմքերը:

Վերոնշյալը հանգեցրեց հոդված 2-ի ընդունմանը հետևյալ շարադրմամբ.

«1. Յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն ճանաչում է գրավոր համաձայնությունը, համաձայն որի՝ կողմերը պարտավորվում են արբիտրաժին փոխանցել բոլոր կամ ցանկացած առկա կամ ապագա վեճերը, որոնք, կապված են որևէ կոնկրետ պայմանագրային կամ այլ իրավահարաբերության հետ, որի օբյեկտը կարող է արբիտրաժային քննության առարկա լինել:

2. «Գրավոր համաձայնություն» տերմինը ներառում է Կողմերի միջև ստորագրված, կամ փոխանակված նամակներում կամ հեռագրերում պարունակվող պայմանագրի արբիտրաժային վերապահումը կամ արբիտրաժային համաձայնագիրը:

3. Պայմանավորվող պետության դատարանը, եթե քննում է հայց, որի վերաբերյալ Կողմերը սույն հոդվածով նախատեսված համաձայնություն են կնքել, պարտավոր է Կողմերից որևէ մեկի

խնդրանքով, Կողմերին ուղղորդել արբիտրաժ, եթե չի գտնում, որ հիշատակված համաձայնությունն անվավեր է, չգործող կամ չի կարող կատարվել:»

Որոշ դեպքերում նախքան արբիտրաժային վճիռ կայացնելը, դատարանը կարող է բախվել արբիտրաժային համաձայնության վավերականության վիճարկման խնդրի հետ: Ինչպես նշված է հոդված 2(3)-ում, ամենահաճախ հանդիպող դեպքերից է այն, երբ խնդիրը, որի լուծման մասով առկա է արբիտրաժային համաձայնություն, ներկայացվում է դատարան, իսկ պատասխանողը դիմում է դատարանին այն արբիտրաժ ուղղորդելու պահանջով: Ի հավելում՝ կարող է ներկայացվել դիմում, որով հայցվում է ճանաչել արբիտրաժային համաձայնության վավեր կամ անվավեր լինելու փաստը: Նմանապես, դատարան կարող է ներկայացվել արբիտրաժից խուսափելու սահմանափակման դիմում կամ արբիտրաժի վարույթին աջակցելու դիմում, օրինակ՝ մյուս կողմի կողմից չնշանակված արբիտր նշանակելու խնդրանքով, որը կվիճարկվի մյուս կողմի պահանջով՝ արբիտրաժային համաձայնության անվավեր լինելու հիմքով:

Հայտնվելով այսպիսի իրավիճակներում՝ դատարանները պետք է ուղղորդվեն Կոնվենցիայի նպատակով և Անդամ պետությունների լավագույն նախադեպերով, որոնք ձևավորված են հիսունից ավել տարիների ընթացքում:

II. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԿՈՆՎԵՆՑԻՈՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

II.1. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾՐ

Կոնվենցիայի հեղինակները մտադրված նախատեսել են դրույթներ, որոնք կբացառեն արբիտրաժային համաձայնության կողմերից յուրաքանչյուրի կողմից արբիտրաժ դիմելու պարտականության վերանայումը և փոխարենը գործը դատարան դիմելը: Հետևաբար, Կոնվենցիան նախատեսում է «կատարմանը միտված» և «արբիտրաժին միտված» համակարգեր, որոնք հիմնված են արբիտրաժային համաձայնությունների ենթադրող ձևական և նյութական վավերականության վրա («Յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն պետք է ճանաչի այն գրավոր համաձայնությունը...»): Այս ենթադրվող վավերականությունը կարող է բեկանվել սահմանափակ հիմքերով («...բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գտնում է, որ *հիշատակված համաձայնությունն անվավեր է, չգործող կամ չի կարող կատարվել*»):

Կատարմանը միտված քաղաքականությունը նշանակում է, որ Նյու-Յորքի Կոնվենցիան փոխարինում է ներպետական առավել նվազ բարենպաստ օրենսդրությանը: Արբիտրաժային համաձայնությունների վավերականության հարցը որոշելիս դատարանները չեն կարող կիրառել իրենց ներպետական օրենսդրության առավել խիստ պահանջները (օրինակ, պահանջել,

որ պայմանագրում ներառված արբիտրաժային վերապահումը առանձին ստորագրվի):

Մյուս կողմից, մի շարք դատարաններ վճռել են, որ հոդված 2(2)-ը թույլ է տալիս հիմնվելու ներպետական օրենսդրության առավել բարենպաստ դրույթների վրա: Եթե ներպետական օրենսդրությունը հնարավորություն է տալիս արբիտրաժային համաձայնությունը կնքել բանավոր կամ լեռնային, ապա կիրառվում է այդ դրույթը (տես նաև՝ Գլուխ I-ի V.1): Այս դիրքորոշումը քննարկվում է նաև սույն գլխի IV.2. մասում:

II.2. ՎԱՎԵՐ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐԸ ՊԵՏՔ Է ՈՒՂՂՈՐԴՎԵՆ ԴԵՊԻ ԱՐԲԻՏՐԱԺ

Երբ դատարանը գտնում է, որ առկա է վավեր արբիտրաժային համաձայնություն, դատարանը գործը քննելու փոխարեն կողմերից որևէ մեկի խնդրանքով պետք է կողմերին ուղղորդի արբիտրաժ: Սույն ուղղորդման մեխանիզմը ներկայացված է հոդված 2(3)-ում: Այս հարցում Կոնվենցիան դատարաններին հայեցողական լիազորություն տրամադրելու միտում չունի:

II.3. ԻՆՉՊԵՍ ԿՈՂՄԵՐԻՆ «ՈՒՂՂՈՐԴԵԼ» ԴԵՊԻ ԱՐԲԻՏՐԱԺ

«Արբիտրաժ ուղղորդել» եզրույթը ենթադրում է արբիտրաժի ընթացքում դատական գործընթացի դադարեցում կամ հայցի մերժում՝ գործը քննելու իրավասության բացակայության հիմքով՝ հիմնվելով արբիտրաժի կամ դատավարության ներպետական օրենսդրության վրա:

II.4. Ի ՊԱՇՏՈՆՆԵ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ԲԱՑԱՌՈՒՄԸ

Դատարանը կողմերին ուղղորդում է արքիտրաժ *կողմերից որևէ մեկի խնդրանքով*, որը բացառում է սույն գործընթացի իրականացումը դատարանի սեփական նախաձեռնությամբ:

III. ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Կոնվենցիան առանձնահատուկ չի նախատեսում «իրավասության-իրավասություն» սկզբունքը, դատարանների կողմից նախա-արքիտրաժային փուլում արքիտրաժային համաձայնությունների սահմանափակ քննումը կամ դրանց ինքնավարության սկզբունքը: Սակայն, դրա առարկան և նպատակը առավելապես իրագործվում են վերոնշյալ սկզբունքների կիրառմամբ:

III.1. ԱՐԲԻՏՐՆԵՐԸ ՈՒՆԵՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԻՐԵՆՑ ԻՍԿ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Իրավասության-իրավասություն» սկզբունքը (հաճախ անվանվում է նաև որպես *Kompetenz-Kompetenz*) թույլատրում է արքիտրոներին քննելու իրենց իրավասության դեմ ցանկացած վիճարկում և նույնիսկ կայացնելու որոշում իրենց իրավասության բացակայության վերաբերյալ:

Այս հնարավորությունը սկզբունքային է արքիտրոնների համար իրենց առաքելությունը պատշաճ իրականացնելու առումով: Արքիտրաժային համաձայնության վավերականությունը կամ գոյությունը վիճարկելու պատճառով գործը դատարանի

քննությանը հանձնելը լուրջ խոչնդոտ կստեղծի արբիտրաժային գործընթացի համար:

Կոնվենցիան չի պարտադրում իրավասության-իրավասություն սկզբունքի կիրառումը: Սակայն, այն չի ցուցաբերում չեզոք դիրքորոշում: Կոնվենցիայի հոդվածներ 2(3)-ը և 5(1)-ը չեն սահմանփակում արբիտրաժային տրիբունալին և դատարանին որոշում կայացնելու արբիտրի իրավասության վերաբերյալ: Ի հավելում, հոդվածներ 5(1)(ա) և 5(1)(գ)-ը, որոնք վերաբերում են արբիտրաժային վճռի ճանաչմանը և կատարմանը, ենթադրում են, որ արբիտրաժային տրիբունալը վճիռ է կայացրել՝ անկախ իրավասության վիճարկման հայցի առկայությունից:

III.2. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՏՐԻԲՈՒՆԱԼԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

«Իրավասության-իրավասություն» սկզբունքը մի շարք դատարանների կողմից, հատկապես Միացյալ Նահանգներում, մեկնաբանվել է Կոնվենցիայի՝ «կատարմանը միտված քաղաքականության» լույսի ներքո: Ուստի, սեփական իրավասության սահմանման առաջնային դերը վերապահվել է հենց արբիտրաժային տրիբունալին, իսկ դատարանների կողմից ենթադրաբար անվավեր, չգործող, կամ կատարման ոչ ենթակա արբիտրաժային համաձայնության քննությունը վճռի նախնական փուլում արհեստական դեր է կրում: Այս դատարանները վճռել են, որ արբիտրաժային համաձայնությունն անվավեր է միայն ակնհայտ դեպքերում:

Սույն մոտեցմանը համահունչ՝ դատարաններն իրավասություն կունենան ամբողջովին վերանայելու իրավասության վերաբերյալ արբիտրաժային տրիբունալի որոշումը միայն արբիտրաժային վճռի կատարման դիմումի հիման վրա կամ արբիտրաժային վճռի չեղարկման փուլում (վերջինս չի կանոնակարգվում Կոնվենցիայով):

Սույն սահմանումը զուրկ չէ հակասություններից: Եթե վերը նկարագրված իրավիճակը Կոնվենցիայի առարկայի և նպատակի լույսի ներքո ցանկալի է թվում, ապա Կոնվենցիայում առկա ոչ մի ակնհայտ դրույթ չի խոչընդոտում դատարանների՝ արբիտրաժային համաձայնությունների ամբողջական վերանայումն իրականացնելուն և վեճի նախնական փուլում դրա վավերական լինելու մասին վճիռ կայացնելուն:

III.3. ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐԱԲԱՐ ՉԻ ՀԱՆԳԵՑՆՈՒՄ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎԵՐԱՊԱՀՄԱՆ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅԱՆ

«Իրավասության-իրավասություն» սկզբունքի հետ սերտ կապված է նաև հիմնական պայմանագրից արբիտրաժային դրույթի բաժանելիության սկզբունքը (որը հայտնի է նաև «բաժանելիություն» կամ «արբիտրաժային վերապահման ինքնավարություն» անվանմամբ):

Այս սկզբունքը ենթադրում է, որ առաջին՝ հիմնական պայմանագրի վավերականությունը սկզբունքորեն չի ազդում դրանում պարունակվող արբիտրաժային վերապահման վրա, և, երկրորդ՝ հիմնական պայմանագիրն ու արբիտրաժային վերապահումը կարող են կարգավորվել տարբեր իրավունքներով:

III.4. ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՆ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ

Կոնվենցիան վերջնաժամկետ չի սահմանում գործն արբիտրաժ ուղղորդելու պահանջի համար: Արդյո՞ք այդ պահանջը կարող է ներկայացվել մինչ գործն ըստ էության քննությունը սկսելը կամ արդյո՞ք այն կարող է ներկայացվել ցանկացած ժամանակ: Կոնվենցիայում դրույթի բացակայության պայմաններում հարցը լուծվում է՝ հիմք ընդունելով ներպետական արբիտրաժային օրենքը կամ դատավարական օրենսդրությունը: Եթե կողմը չի կարողանում ժամանակին ներկայացնել պահանջը, կարող է համարվել, որ նա հրաժարվել է արբիտրաժին դիմելու իրավունքից, իսկ արբիտրաժային համաձայնությունը դադարել է գործել:

Ներպետական օրենքների գերակշիռ մասը սահմանում է, որ գործը արբիտրաժին ուղղորդելու համար պահանջը պետք է ներկայացվի մինչև գործի ըստ էության քննության փուլում պաշտպանության ներկայացումը, այսինքն՝ *in limine litis*:

III.5. ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ԸՆԹԱՑՈՂ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Եթե ներպետական արբիտրաժային օրենքով այլ բան սահմանված չէ, գործն արբիտրաժ ուղղորդելու պահանջի թույլատրելիության և դրա կապակցությամբ դատարանի ընդդատության հարցը պետք է որոշվի անկախ արբիտրաժային վարույթի հարուցման փաստից:

Չնայած սույնը սահմանված չէ Կոնվենցիայով, դատարանների գերակշիռ մասը գտնում է, որ արբիտրաժային վարույթի սկիզբը պարտադիր պայման չէ գործն արբիտրաժ ուղղորդելու պահանջ ներկայացնելու համար:

IV. ՀՈԴՎԱԾ 2-Ի ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԸ

Արբիտրաժային համաձայնության վավերականության վերաբերյալ Կոնվենցիայի հոդված 2-ի շրջանակներում ներկայացված առարկությունները քննելու համար դատարանը պետք է իրեն առաջադրի հետևյալ հարցերը.

1. Արդյո՞ք արբիտրաժային համաձայնությունը Կոնվենցիայի շրջանակներում է:
2. Արդյո՞ք արբիտրաժային համաձայնությունը կնքվել է գրավոր եղանակով:
3. Արդյո՞ք արբիտրաժային համաձայնությունը գոյություն ունի և ըստ էության վավեր է:
4. Արդյո՞ք առկա է վեճ: Այն ծագե՞լ է սահմանված իրավահարաբերությունից. լինի դա պայմանագրային, թե արտապայմանագրային, և արդյո՞ք կողմերը մտադրություն ունեն սույն վեճը լուծել արբիտրաժի միջոցով:
5. Արդյո՞ք արբիտրաժային համաձայնությունը պարտադիր է դատարանին ներկայացված վեճի կողմերի համար:
6. Արդյո՞ք վեճն ենթակա է արբիտրաժի քննության (արբիտրելի է):

Կողմերը պետք է ուղղորդվեն դեպի արբիտրաժ, եթե սույն հարցերի պատասխանները դրական են:

IV.1. ԱՐԴՅՈ՞Ք ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ
ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ Է

Կոնվենցիայի պաշտպանությունից օգտվելու համար արբիտրաժային համաձայնությունը պետք է լինի Կոնվենցիայի շրջանակներում (տես՝ Գլուխ I-ի II.2)

IV.2. ԱՐԴՅՈ՞Ք ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ
ԿՆՔՎՈՒՄ Է ԳՐԱՎՈՐ ԵՂԱՆԱԿՈՎ

Հոդված 2(1)-ով սահմանում է, որ արբիտրաժային համաձայնությունը պետք է լինի «գրավոր»: Այս նախապայմանը սահմանված է հոդված 2-ում և ներառում է «կողմերի միջև ստորագրված պայմանագրում պարունակվող արբիտրաժային վերապահումը կամ արբիտրաժային համաձայնությունը, որը կարող է ներառված լինել նաև կողմերի միջև փոխանակված նամակներում կամ հեռագրերում»:

IV.2.1. Տեսական նախապատմություն

Արբիտրաժային համաձայնության հարկադիր կատարումը չի կարող ապահովվել Կոնվենցիայի համաձայն, եթե հոդված 2-ում առաջադրված գրավոր պահանջը չի բավարարվել:

Կոնվենցիան սահմանում է միատեսակ միջազգային կանոն: Դրա հեղինակները, ներպետական օրենսդրության նկատմամբ գերակայող գրավոր պահանջի վերաբերյալ համեմատաբար ազատական նյութական կանոն սահմանելով, փորձել են համաձայնության հասնել այն հարցի շուրջ, որի վերաբերյալ

ներպետական օրենսդրություններն ունեցել են և այժմ էլ ունեն տարբեր մոտեցումներ:

Հետևաբար, հոդվածը 2(2)-ը սահմանում է «առավելագույն» չափորոշիչ, որը արգելում է անդամ պետություններին ներպետական օրենսդրությամբ առաջադրելու հավելյալ կամ առավել խիստ ձևական պահանջներ: Առավել խիստ պահանջներ օրինակներ են այնպիսի պահանջները, որոնց համաձայն՝ արբիտրաժային համաձայնությունը պետք է լինի կոնկրետ տառատեսակի և չափի, այն պետք է կնքվի հատուկ պետականորեն սահմանված կարգով (օրինակ՝ նոտարական) կամ առանձին ստորագրություն ունենա:

Ի հավելումն առավելագույն չափորոշիչի՝ հոդված 2(2)-ը նախկինում մեկնաբանվում էր նաև որպես նվազագույն միջազգային պահանջ, ըստ որի՝ դատարաններն իրավունք չունեն պահանջել Կոնվենցիայով սահմանված գրավոր ձևից տարբերվող առավել նվազ պայման: Սակայն, այս մոտեցումն այլևս համընդհանուր ճանաչում չունի:

Ներկայիս միջազգային առևտրային հարաբերությունների պրակտիկայի լույսի ներքո հոդվածը 2(2)-ն առավելապես մեկնաբանվում է այնպես, որ այն չի արգելում անդամ պետությունների կողմից ձևի նկատմամբ առավել նվազ չափորոշիչների կիրառումը:

Հոդված 7(1)-ը նույնպես սատարում է նշված մոտեցումը՝ սահմանելով.

«Սույն Կոնվենցիայի դրույթները...որևէ շահագրգիռ կողմի չեն գրկում ցանկացած արբիտրաժային վճիռից այն կարգով և սահմաններում օգտվելու իրավունքից, որոնք թույլատրվում են

այն երկրի օրենքով և միջազգային պայմանագրերով, որտեղ հայցվում է այդպիսի արբիտրաժային վճռի ճանաչումը և կատարումը»:

Այս հոդվածը նպատակ ունի հնարավոր դարձնել ցանկացած ներպետական կամ միջազգային դրույթի կիրառումը, որը կարող է առավել շահավետ լինել շահագրգիռ կողմի համար: Չնայած հոդված 7(1)-ը սահմանված է արբիտրաժային վճիռների կատարումն ապահովելու համար, միտում է նկատվում այն կիրառելու նաև արբիտրաժային համաձայնությունների նկատմամբ (տե՛ս՝ ա՛հ հոդված 7(1), Գլուխ I-ի V.1):

Սակայն այս մոտեցումը համընդհանուր ճանաչում չունի: Շատ դատարաններ փորձում են բավարարել միջազգային առևտրի ժամանակակից պահանջները՝ ոչ թե հոդված 2(2)-ից ամբողջովին հրաժարվելով, այլ փոխարենը լայնորեն մեկնաբանելով այն, պատրաստակամորեն ընդունելով, որ համաձայնությունը գրավոր եղանակով է կնքվել, կամ մեկնաբանելով այն, որպես հոդված 2(1)-ի շրջանակներում գրավոր համաձայնության գուտ որոշակի օրինակներ տրամադրող դրույթ:

Այս երկու մոտեցումն էլ հաստատվել են ՈՒՆՍԻՏՐԱԼ-ի 2006թ.-ի հուլիսի 7-ի հանձնարարականում (տես՝ **Հավելված III**): ՈՒՆՍԻՏՐԱԼ-ը խորհուրդ է տալիս.

«[Կոնվենցիայի] հոդված 2-ի 2-րդ պարբերությունը պետք է կիրառվի՝ հաշվի առնելով, որ դրանում նկարագրված հանգամանքները սպառիչ չեն»

ինչպես նաև, որ՝

«[Կոնվենցիայի] հոդված 7-ի 1-ին պարբերությունը պետք է կիրառվի այնպես, որ ցանկացած շահագրգիռ կողմի չգրկի ցանկացած արբիտրաժային վճռից այն կարգով և սահմաններում օգտվելու իրավունքից, որոնք թույլատրվում են այն երկրի օրենքով և միջազգային պայմանագրերով, որտեղ հայցվում է այդպիսի արբիտրաժային վճռի ճանաչումը և կատարումը»:

IV.2.2. Պրակտիկա

Ինչպես արդեն վերը նշվել է, Կոնվենցիայի «գրավոր» լինելու պահանջի նկատմամբ լիբերալ մոտեցման դրսևորվման միտում է նկատվում՝ համաձայն կատարմանը միտված քաղաքականության և ներկայիս միջազգային պրակտիկայի, որի շրջանակներում պայմանագրերը կատարվում են տարբեր միջոցներով: Կոնվենցիայի գրավոր պահանջի նկատմամբ ոչ ճկուն մոտեցման կիրառումը կհակասի ներկայումս լայն տարածված գործարար սովորույթներին և Կոնվենցիայի կատարմանը միտված մոտեցմանը:

Այս ոլորտում պրակտիկան ցույց է տալիս, որ դատաբաններն ընդհանուր առմամբ հետևում են այն հիմնարար սկզբունքին, որ արբիտրաժային համաձայնությունը վավեր է, երբ կարելի է ողջամտորեն պնդել, որ գրավոր եղանակով արբիտրաժ դիմելու առաջարկն ընդունվել է («մտադրությունները համընկել են»): Ակցեպտը կարող է կատարվել տարբեր եղանակներով և կախված է կոնկրետ հանգամանքներից:

Ակնհայտ է, որ երկու կողմերի ստորագրած արբիտրաժային համաձայնությունը կամ ստորագրված պայմանագրում առկա

արբիտրաժային վերապահումը բավարարում է գրավոր լինելու պահանջը: Արբիտրաժային վերապահման առանձին ստորագրության անհրաժեշտություն չկա:

Ի հավելումն՝ համաձայն հոդված 2(2)-ի, փոխանակված նամակներում, հեռագրերում կամ նմանատիպ հաղորդակցության միջոցներում պարունակվող արբիտրաժային համաձայնությունը բավարարում է գրավոր լինելու պահանջը: Այս դեպքում, ի տարբերություն հոդված 2(2)-ի առաջին մասի, որը անդրադառնում է կողմերի ստորագրած պայմանագրում առկա արբիտրաժային վերապահմանը կամ արբիտրաժային համաձայնության, նամակների կամ հեռագրերի ստորագրված լինելու պահանջ չկա:

Չնայած այդ հստակ իրադրությանը՝ կան դեպքեր, երբ արբիտրաժային համաձայնությունների ձևական վավերականությունը կարող է վիճարկվել: Հաճախ հանդիպող դեպքեր են.

- (i) *Հիմնական պայմանագիրը հղում է կատարում փաստաթղթին, որում ներառված է արբիտրաժային վերապահումը («ինկորպորացիա հղման միջոցով»)*

Պրակտիկայում տարածված է, որ հիմնական պայմանագիրը կարող է հղում կատարել տիպային պայմաններին կամ տիպային պայմանագրային ձևերին, որոնք կարող են արբիտրաժային վերապահում պարունակել:

Կոնվենցիան այս թեմային չի անդրադառնում: Չկա որևէ բացահայտ ցուցում այն մասին, թե արդյոք ինկորպորացիայի միջոցով ներառված արբիտրաժային վերապահումը

համապատասխանում է հոդվածում 2-ով սահմանված ձևական պահանջին:

Այս հարցի լուծումը կախված է կոնկրետ գործի փաստական կազմից: Ի հավելումն կողմերի կարգավիճակի (օրինակ՝ փորձառու գործարարներ) և գործարար շրջանառության սովորույթների՝ դեպքերը, երբ հիմնական փաստաթուղթը բացահայտ կերպով հղում է կատարում տիպային պայմաններում ընդգրկված արբիտրաժային վավերապահմանն առավել հեշտությամբ կարող են համապատասխանել Կոնվենցիայի հոդված 2-ում սահմանված ձևական պահանջներին, քան այն դեպքերը, երբ հիմնական պայմանագիրը պարզապես հղում է կատարում տիպային պայմանագրային ձևերին՝ առանց արբիտրաժային վերապահմանը կոնկրետ հղում կատարելու:

Ձևական վավերականության չափանիշը պետք է լինի մինչև պայմանագիրը կնքելու պահը կամ հենց կնքելու պահին արբիտրաժային վերապահում պարունակող փաստաթղթի տեղեկացումն այն կողմին, որին այդպիսի փաստաթուղթը ուղղվում է: Եթե ապացույց է ներկայացվում, որ կողմերը տեղյակ էին կամ պետք է տեղյակ լինեին ինկորպորացիայի միջոցով կնքված արբիտրաժային համաձայնության գոյության մասին, դատարաններն ընդհանուր առմամբ հակված են ընդունել, որ արբիտրաժային համաձայնության ձևական վավերականության պահանջը պահպանված է:

Օրինակ՝ արբիտրաժային վերապահումը կարող է համաձայնեցված համարվել, երբ այն առկա է մրցութային

փաստաթղթերի տիպային պայմաններում¹ կամ գնման պատվերի պայմաններում՝ պայմանով, որ արբիտրաժային վերապահումը կցված է այդպիսի փաստաթղթերին կամ դրա մաս է կազմում²:

Դատարանները տարբեր կարծիքներ ունեն այն մասին, թե արդյոք բեռնագրում առկա արբիտրաժային համաձայնությունը բավարարում է սահմանված պահանջը: Այստեղ նույնպես չափանիշն այն է, թե արդյոք կողմերը տեղյակ էին կամ պետք է տեղյակ լինեին արբիտրաժային համաձայնության մասին: Եթե բեռնագիրը հղում է կատարում ֆրախտի պայմանագրում առկա արբիտրաժային վերապահմանը, ապա դա ընդհանուր առմամբ բավարարում է պահանջը³: Դատարանները հազվադեպ են բավարար համարում ֆրախտին կատարված ընդհանուր հղումը⁴:

¹ *Ֆրանսիա*. Փարիզ, Վերաքննիչ դատարան, 26 մարտի 1991թ. (*Comité Populaire de la Municipalité d'El Mergueb v. Société Dalico Contractors*), Արբիտրաժային պարբերական, 1991 թ., էջ 456:

² *Միացյալ Նահանգներ*. Միացյալ Նահանգների շրջանային դատարան, Վաշինգտոնի արևմտյան շրջան, 19 մայիսի 2000թ. (*Richard Bothell and Justin Bothell/Atlas v. Hitachi, et al.*, 19 May 2000, 97 F.Supp.2d. 939 (W.D. Wash. 2000)), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXVI (2001թ.), էջեր 939-948 (ԱՄՆ, 342):

³ *Իսպանիա*. Բարսելոնա, Տարածքային մարմին, 9 ապրիլի 1987թ. (կողմերը նշված չեն), Իսպանիայի արբիտրաժային դատարանի ամսագիր 5 (1988-1989թթ.), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXI (1996), էջեր 671-672 (Իսպանիա, 25):

⁴ *Միացյալ Նահանգներ*. Նյու Յորքի հարավային շրջան, Միացյալ Նահանգների դաշնային շրջանի դատարան, 1977թ. (*Coastal States Trading, Inc. v. Zenith Navigation SA and Sea King Corporation*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք IV (1979թ.), էջեր 329-331 (ԱՄՆ, 19) և Ջորջիայի հյուսիսային շրջան, Միացյալ Նահանգների դաշնային շրջանի դատարան, Ատլանտայի բաժին, 3 ապրիլի 2007թ. (*Interested Underwriters at Lloyd's and Thai Tokai v. M/T SAN SEBASTIAN and Oilmar Co. Ltd.*) 508 F.Supp.2d (N.D. GA. 2007), էջ 1243, Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXXIII (2008թ.), էջեր 935-943 (ԱՄՆ, 619):

Ֆիլիպիններ. Ֆիլիպինների Հանրապետության գերագույն դատարան, երկրորդ բաժին, 26 ապրիլի 1990թ. (*National Union Fire Insurance Company of Pittsburgh v.*

Ավելին, բեռնագիրը, որը հղում է կատարում արբիտրաժային վերապահում պարունակող ֆրախտին, չի կարող համարվել ֆրախտ ստացողի կողմից վեճերն արբիտրաժին հանձնելուն ուղղված համաձայնություն, երբ ֆրախտ ստացողը տեղեկացված չի եղել ֆրախտի մասին⁵:

(ii) *Պայմանագրային փաստաթղթում առկա արբիտրաժային վերապահումը սրորագրված չէ, սակայն հաջորդիվ կարարվում է կողմերի կողմից՝ համաձայն դրա պայմաններին*

Այս դեպքում վեճը արբիտրաժ ներկայացնելու համար անհրաժեշտ համաձայնությունը պետք է սահմանվի գործի հանգամանքների լույսի ներքո, քանի որ հստակ կանոնի բնորոշումը հնարավոր չէ:

- Պայմանագրային առաջարկն ուղարկվում և հաստատվում է արբիտրաժային վերապահման հետ մեկտեղ: Սակայն, ակցեպտը իր մեջ ներառում է ընդհանուր սահմանափակումներ կամ նախապայմաններ:

Այս դեպքում պետք է տարանջատել առաջարկի ընդունումը և հակընդդեմ առաջարկը: Կարելի է ողջամտորեն ենթադրել, որ արբիտրաժային համաձայնությունը կարող է հաստատվել, եթե

Stolt-Nielsen Philippines, Inc.), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXVII (2002թ.), էջեր 524-527 (Ֆիլիպիններ, 1):

⁵ *Ֆրանսիա*. Վճռաբեկ դատարան, 29 նոյեմբերի 1994թ., թիվ 92-14920:

դրա դեմ բացահայտ առարկություններ չեն ներկայացվել: Այսինքն, ընդհանուր վերապահումները սովորաբար չեն ազդում արբիտրաժ դիմելու համաձայնության վրա: Նմանապես, ցանկացած հնարավոր նախապայման (օրինակ՝ նախատեսումը, որ «այս հաստատումն ենթակա է հետագա մանրամասնման») չի ազդի արբիտրաժային վերապահման վրա, որը կարող է լիովին համաձայնեցված համարվել⁶:

- Կողմերից մեկը արբիտրաժային վերապահում պարունակող պայմանագրային առաջարկն ուղարկում է մյուս կողմին, որը չի պատասխանում, սակայն այնուամենայնիվ կատարում է պայմանագիրը:

Այս իրավիճակը առաջացնում է խնդիր՝ կապված արբիտրաժի վերաբերյալ լուեյայն համաձայնության կամ «ենթադրվող արբիտրաժի» հետ: Առևտրային գործառնությունները հաճախ կատարվում են ամփոփ փաստաթղթերի հիման վրա, ինչպիսիք են առուվաճառքի պատվերները կամ ամրագրման ստացականները, որոնք սովորաբար մյուս կողմից գրավոր պատասխան չեն պահանջում:

Սկզբունքորեն, լուեյայն համաձայնությունը չի բավարարում Կոնվենցիայի գրավոր լինելու պահանջը, և որոշ դատարաններ

⁶ Միացյալ Նահանգներ. Միացյալ Նահանգների Վերաքննիչ դատարան, երկրորդ դատական շրջան, 15 փետրվարի 2001թ. (*US Titan Inc. v. Guangzhou ZhenHua Shipping Co.*, 241 F.3d (2nd Cir. 2001)), էջ 135, Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXVI (2001թ.), էջեր 1052-1065 (ԱՄՆ, 354):

հաստատել են այս մոտեցումը⁷: Սակայն, հաշվի առնելով, որ Կոնվենցիան փորձում է հետամուտ լինել միջազգային առևտրային պրակտիկային, որոշ դատարաններ վճռել են, որ գրավոր ներկայացված առաջարկի լռելայն ընդունումը (այն է՝ պայմանագրային պարտավորությունների կատարման միջոցով⁸ կամ այնպիսի առևտրային սովորույթի կիրառման միջոցով, որը հնարավոր է դարձնում արբիտրաժային համաձայնությունների կնքումը լռելայն եղանակով⁹) պետք է բավարար համարվի հոդված 2(2)-ի նպատակների համար:

2006թ.-ին ՈՒՆՍԻՏՐԱԼ-ը փոփոխեց Միջազգային առևտրական արբիտրաժի մասին տիպային օրենքի 7-րդ հոդվածը (արբիտրաժային համաձայնության սահմանումն ու ձևը) (տես՝ **Հավելված II**)՝ առաջարկելով երկու տարբերակ: Առաջին տարբերակը տալիս էր գրավոր համաձայնության ճկուն սահմանում.

«Հոդված 7(3): Արբիտրաժային համաձայնությունը գրավոր է, եթե դրա բովանդակությունն ամրագրված է ցանկացած ձևով, անկախ նրանից՝ արբիտրաժային համաձայնությունը կամ

⁷ Տե՛ս, օրինակ՝ *Գերմանիա*. Դաշնային դատարան, Ֆրանկֆուրտ, 26 հունիս 2006թ.-ի (*արտադրողն ընդդեմ գնորդի*), ՄԻՀ 2007թ., էջեր 42-44, Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXXII (2007թ.), էջեր 351-357 (Գերմանիա, 103):

⁸ *Միացյալ Նահանգներ*. Միացյալ Նահանգների դաշնային շրջանի դատարան, Նյու Յորքի հարավային շրջան, 6 օգոստոսի 1997թ. (*Kahn Lucas Lancaster, Inc. v. Lark International Ltd*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXIII (1998թ.), էջեր 1029-1037 (ԱՄՆ, թիվ 257):

⁹ *Գերմանիա*. Դաշնային դատարան, 3 դեկտեմբեր 1992թ. (*Գնորդն ընդդեմ վաճառողի*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XX (1995թ.), էջեր 666-670 (Գերմանիա, 42):

պայմանագիրը կնքվել է բանավոր, գործողություններով կամ ցանկացած այլ ձևով»:

Այս սահմանումը ընդունում է համաձայնության «բովանդակության» ամրագրման «ցանկացած ձև», որը հավասարազոր է ավանդական գրավոր ձևին: Գրավոր ձևը սակայն անհրաժեշտ է:

Երկրորդ տարբերակը վերացնում է գրավոր ձևի պահանջը:

Չնայած այս փոփոխություններն ուղղակի ազդեցություն չունեն Նյու Յորքի Կոնվենցիայի վրա, դրանք Կոնվենցիայի պահանջի լիբերալ մեկնաբանման միտումի նշան են:

Ի հավելումն՝ ՈւՆՍԻՏՐԱԼ-ը նշում է, որ Նյու Յորքի Կոնվենցիայի հոդված 2(2)-ը պետք է կիրառվի՝ հաշվի առնելով, որ «դրանում սահմանված հանգամանքները սպառիչ չեն» (տե՛ս՝ սույն Գլխի IV.2.1-ում և **Հավելված II-ում**):

(iii) *Էլեկտրոնային հաղորդագրություններում առկա արբիտրաժային համաձայնությունը*

Հոդված 2(2)-ի ձևակերպումը նպատակ ուներ կարգավորել 1958թ.-ին գոյություն ունեցող հաղորդակցման միջոցները: Այն կարելի է ողջամտորեն մեկնաբանել այնպես, որպեսզի ներառի համարժեք ժամանակակից հաղորդակցման միջոցները: Չափանիշն այն է, որ արբիտրաժային համաձայնությունը պետք է ամրագրված լինի գրավոր տեսքով: Հաղորդակցման բոլոր միջոցները, այդ թվում՝ ֆաքսերն ու էլեկտրոնային փոստը, որոնք համապատասխանում են այս չափանիշին, պետք է ընկալվեն որպես հոդված 2(2)-ին համապատասխանող միջոցներ:

Ինչ վերաբերում է էլեկտրոնային փոստին, ապա համաձայն պահպանողական մոտեցման՝ Կոնվենցիայի գրավոր ձևը պահպանված կհամարվի, եթե ստորագրությունները տեխնիկական առումով հուսալի են կամ էլեկտրոնային հաղորդակցությունների արդյունավետ փոխանակումը կարող է ապացուցվել այլ վստահելի միջոցներով: Այս մոտեցումն երաշխավորվել է ՈՒՆՍԻՏՐԱԼ-ի կողմից տիպային օրենքում կատարված 2006թ.-ի փոփոխությունում (տես՝ **Հավելվածը III**):

IV.3. ԱՐԴՅՈՒՔ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ԵՎ ՎԱՎԵՐ Է ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ

Ինչպես ցանկացած այլ պայմանագիր, արբիտրաժային համաձայնությունների նկատմամբ կիրառվում են կնքման և դրանց բովանդակության վերաբերյալ որոշակի կանոններ: Սույնը ամփոփ ներկայացված է հոդված 2(3)-ում, որը սահմանում է, որ դատարանը պետք է ենթարկվի գործն արբիտրաժին հանձնելու պահանջին, եթե չի գտնում, որ արբիտրաժային համաձայնությունն «անվավեր է, չգործող, կամ չի կարող կատարվել»:

Ինչպես արդեն վերը նշվել է, պետք է հիշել, որ Կոնվենցիայի շրջանակներում գտնվող արբիտրաժային համաձայնությունները վավեր են համարվում:

IV.3.1. Տեսական նախապատմություն

Չնայած հոդված 5(1)(ա)-ի առաջին մասը անդրադառնում է այն իրավունքին, որին կողմերն ենթարկել են արբիտրաժային համաձայնությունը՝ որպես արբիտրաժային համաձայնության

վավերականության նկատմամբ կիրառվող իրավունք (տես՝ Գլուխ III), պրակտիկայում կողմերը հազվադեպ են նախապես ընտրում այն իրավունքը, որը կկարգավորի արբիտրաժային համաձայնության կնքումը և բովանդակային վավերականությունը: Հետևաբար, սույն որոշումը պետք է կայացվի այն դատարանի կողմից, որը քննում է արբիտրաժային համաձայնության վիճարկման հարցը: Առկա են մի քանի հնարավորություններ, սակայն լուծումներից առավել ընդունվածներն են (ինչպես նշված է Կոնվենցիայում) արբիտրաժի վայրի իրավունքի կիրառումը, որը պարտադիր չէ որ լինի դատարանի գտնվելու պետության իրավունքը (հոդված 5(1)(ա)-ի երկրորդ կանոն, անալոգիայով), *lex fori* (դատարանի գտնվելու վայրի իրավունքը), կամ պայմանագրի նկատմամբ կիրառվող իրավունքը: Որոշ երկրներ ճանաչել են արբիտրաժային համաձայնությունները վավեր՝ առանց հղում կատարելու որևէ ներպետական իրավունքի, այլ փոխարենը հիմք են ընդունել բացառապես կողմերի ընդհանուր մտադրությունը: Ընդհանուր առմամբ, նյութական իրավունքի ընտրության շարժիչ ուժը կարծես ուղղված է դեպի այն իրավունքը, որն առավել բարենպաստ է արբիտրաժային համաձայնության վավերականության համար¹⁰:

¹⁰ Այս մոտեցման ձևակերպումը տրված է Շվեյցարիայի «Միջազգային մասնավոր իրավունքի մասին» օրենքի 178(2)-րդ հոդվածում, որը սահմանում է.

«Ինչ վերաբերում է բովանդակությանը, արբիտրաժային համաձայնագիրը վավեր է, եթե այն համապատասխանում է կողմերի ընտրած իրավունքի պահանջներին կամ վեճի առարկան կարգավորող իրավունքին և, մասնավորապես, հիմնական պայմանագրին կիրառելի իրավունքին, կամ Շվեյցարիայի իրավունքին»:

IV.3.2. Պրակտիկա

«Անվավեր, չգործող, կամ չի կարող կատարվել» տերմինները չեն մեկնաբանվել Կոնվենցիայի հեղինակների կողմից: Հետևյալ զարգացումները նպատակ ունեն իմաստավորել նշված տերմինները:

(i) «Անվավեր»

«Անվավեր» բացառությունը կարող է մեկնաբանվել այնպես, որ այն վերաբերում է գործերին, որտեղ առկա է արբիտրաժային համաձայնությունը ի սկզբանե անվավեր դարձնող որոշակի հանգամանք: Այս դեպքերից են, օրինակ, խարդախությունը կամ խարդախության դրդումը, գործունակության բացակայությունը, անօրինականությունը կամ սխալը: Արբիտրաժային համաձայնության կնքման թերությունները, ինչպիսիք են՝ իրավունակության կամ լիազորության բացակայությունը նույնպես պետք է ներառվեն (տես՝ նաև՝ Գլուխ III-ի IV.1-ում, հոդված 5(1)(ա), իրավունակության բացակայություն):

Եթե դատարանն ընդունում է արբիտրաժային համաձայնության բաժանելիության սկզբունքը (տես՝ սույն Գլխի III.3 մասում), ապա արբիտրաժային համաձայնության անվավերությունը և ոչ թե հիմնական պայմանագրի անվավերությունը կլսոչընդոտի դատարանին գործը հանձնելու արբիտրաժին: Որպես օրինակ՝ այն պայմանագիրը, որի բուն առարկան մրցակցային կանոնների խախտմամբ շուկայի բաժանումն է, անօրինական է: Սակայն, նման անօրինականությունը չի ազդում առնչվող վեճերն արբիտրաժի

քննությանը հանձնելու համաձայնության վրա, ինչպես նշված է պայմանագրում առկա արբիտրաժային վերապահման մեջ:

(ii) «Չգործող արբիտրաժային համաձայնություն»

Հոդված 2(3)-ով սահմանված չգործող արբիտրաժային համաձայնությունը այն համաձայնությունն է, որը ժամանակին վավեր է եղել, սակայն ներկայումս կորցրել է իր ուժը:

«Չգործող արբիտրաժային համաձայնություն» բացառությունը սովորաբար ներառում է արբիտրաժային համաձայնության կատարման պարտականությունից ազատման, հետ կանչման, չեղարկման, կամ դադարեցման դեպքերը: Նմանապես, արբիտրաժային համաձայնությունը համարվում է չգործող, եթե նույն կողմերի միջև առկա նույն վեճն արդեն լուծվել է դատարանում կամ արբիտրաժային տրիբունալի կողմից (*res judicata* կամ *ne bis in idem*):

(iii) «Չի կարող կատարվել»

Իրավական պաշտպանությունը ներառում է դեպքեր, որոնց ժամանակ արբիտրաժը չի կարող ընթանալ ֆիզիկական կամ իրավական խոչընդոտների պատճառով:

Արբիտրաժի ընթացակարգի ֆիզիկական խոչընդոտները ներառում են միայն սահմանափակ իրավիճակներ, ինչպիսիք են՝ արբիտրաժային համաձայնությունում նշված արբիտրի մահը կամ արբիտրի կողմից նշանակման մերժումը, երբ կողմերը հստակ բացառել են այդ արբիտրի փոխարինումը: Կախված կիրառելի իրավունքի կոնկրետ դրույթներից՝ այս դեպքերը կարող են

հանգեցնել արբիտրաժային համաձայնության կատարման անհնարինության:

Առավել հաճախ արբիտրաժային վերապահումը կարող է այնպիսի էական թերություններով կազմված լինել, որ իրավաբանորեն խոչընդոտի արբիտրաժի մեկնարկին: Այսպիսի վերապահումները սովորաբար անվանում են «պաթոլոգիական»: Առավել հստակ՝ նման արբիտրաժային համաձայնությունները հիմնականում անվավեր են, և հաճախ այս հիմքն է առաջ բերվում դատարանում: Նմանատիպ արբիտրաժային վերապահումները պետք է մեկնաբանվեն ըստ նույն իրավունքի, որը կարգավորում է արբիտրաժային համաձայնության կնքումը և բովանդակային վավերականությունը:

Պրակտիկայում հետևյալ դեպքերը հաճախ են հանդիպում.

- Երբ արբիտրաժին դիմելը հայեցողական է

Որոշ արբիտրաժային համաձայնություններ սահմանում են, որ կողմերին «թույլատրվում է» կամ նրանք «կարող են» իրենց վեճերը հանձնել արբիտրաժի քննությանը: Թույլատրություն ենթադրող նման տերմիններն անորոշ են դարձնում կողմերի արտահայտված կամքը՝ իրենց վեճի լուծման խնդրով դիմելու արբիտրաժին:

Նման արբիտրաժային վերապահումները, այնուամենայնիվ, պետք է կատարվեն մեկնաբանման ընդհանուր սկզբունքի լույսի ներքո, համաձայն որի՝ պայմանագրի պայմանները պետք է մեկնաբանվեն այնպես, որ բոլոր պայմանները գործեն, այլ ոչ այնպես, որ դրանցից որոշները կորցնեն իրենց իրավական ուժը:

- Երբ պայմանագիրը նախատեսում է արբիտրաժի, ինչպես նաև դատարանների իրավասություն

Նման դեպքերում երբեմն հնարավոր է համատեղել երկու պայմանները և կատարել արբիտրաժային համաձայնությունը: Այդ նպատակով դատարանը պետք է բացահայտի կողմերի իրական մտադրությունը: Մասնավորապես, կողմերը պետք է ուղղորդվեն դեպի արբիտրաժ միայն այն դեպքում, եթե իրապես ցանկացել են վեճերը լուծել նման ձևով՝ անկախ այն հանգամանքից՝ առկա է վեճերի լուծման այլ մեխանիզմի հետ համադրություն, թե՛ ոչ:

Որպես օրինակ՝ Սինգապուրի գերագույն դատարանը սահմանել է, որ համաձայնությունը, որը «անվերապահորեն» նախատեսում է Սինգապուրի դատարանների ընդդատությունը, միանշանակ հակասության մեջ չէ միևնույն համաձայնության մեկ այլ՝ արբիտրաժ նախատեսող դրույթի հետ: Սույն գործով դատարանը գտավ, որ կողմերը մտադրություն են ունեցել իրենց վեճերը լուծելու արբիտրաժի միջոցով, իսկ Սինգապուրի դատարաններին դիմելը զուգահեռ է ընտրվել՝ որպես արբիտրաժի վերահսկող դատարան (*lex arbitri*):¹¹

Նման մեկնաբանությունը բխում է այն ընդհանուր սկզբունքից, որի համաձայն՝ պայմանագիրը պետք է մեկնաբանվի այնպես, որ դրա բոլոր պայմանները գործեն:

¹¹ *Սինգապուր. Գերագույն դատարան, 12 հունվարի 2009թ. (P.T. Tri-M.G. Intra Asia Airlines v. Norse Air սահմանափակ հրապարակություն),* Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXXIV (2009), էջեր 758-782 (Սինգապուր, 7):

- Երբ արբիտրաժային կանոնները կամ արբիտրաժային կենտրոնը միանշանակ բնորոշված չեն

Որոշ դեպքերում առանձին դրույթների միաշանակ բնորոշված չլինելն անհնար է դարձնում դատարանի որոշումը, որը թույլ կտա բնորոշելու կողմերի կողմից ընտրված արբիտրաժը: Արդյունքում արբիտրաժ չի կարող իրականացվել, հետևաբար դատարանը պետք է ճանաչի իր ընդդատությունը վեճի նկատմամբ: Մի շարք այլ դեպքերում միանշանակ բնորոշված չլինելը կարող է շտկվել դրույթի ողջամիտ մեկնաբանմամբ: Այլ դեպքերում դատարանները կարող են հստակեցնել «պաթոլոգիական» դրույթը՝ տարանջատելով դրանից այն ձևակերպումը, որն այն դարձնում է կատարման համար ոչ ենթակա՝ պահպանելով, սակայն, արբիտրաժային համաձայնության բավականաչափ հատված արբիտրաժի գործընթացը գործարկելու համար:

Որպես օրինակ՝ Միացյալ Նահանգների Վիսկոնսինի արևելյան շրջանի տարածքային դատարանի մեկ գործում արբիտրաժային համաձայնություն, որը նախատեսում էր (անգլերեն տարբերակում), որ վեճերը պետք է քննվեն արբիտրաժի միջոցով Սինգապուրում՝ «այդ ժամանակ գործող միջազգային արբիտրաժի կանոններին համաձայն», և (չինարեն տարբերակում) նշված էր, որ արբիտրաժը կանցկացվի «Սինգապուրի միջազգային արբիտրաժային կենտրոնում¹²»: Դատարանը մեկնաբանեց սույն դրույթը որպես

¹² *Միացյալ Նահանգներ*. Միացյալ Նահանգների տարածքային դատարան, Վիսկոնսինի արևելյան շրջան, 24 սեպտեմբեր 2008թ. (*Slinger Mfg. Co., Inc. v. Nemak, S.A., et al.*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXXIV (2009), էջեր 976-985 (ԱՄՆ, 656):

«լայնորեն ճանաչված արբիտրաժային կազմակերպություն՝ հայտնի որպես Մինգապուրի միջազգային արբիտրաժի կենտրոն»:

- Երբ արբիտրների նշանակման կարգը սահմանված չէ («բաց վերապահումներ»)

Հնարավոր է, որ արբիտրաժի վերաբերյալ դրույթը պարզապես սահմանի «ընդհանուր, սովորական արբիտրաժ, որը տեղի կունենա Լոնդոնում՝ սովորական պայմաններով»:

Սովորաբար նման դրույթը կարող է համարվել բավարար, միայն եթե այն պարունակում է դրույթ, որը կապ է հաստատում այդ բաց վերապահման և այն երկրի միջև, որի դատարանները կարող են աջակցել արբիտրաժի մեկնարկին:

Նման «կապող դրույթը» նկատելի է վերոնշյալ օրինակում: Կողմերը կարող են դիմել Անգլիայի դատարաններին՝ արբիտրներ նշանակելու նպատակով: Բաց վերապահումը կարող է նաև համարվել բավարար, եթե վկայակոչված «սովորական պայմաններ» հասկացությունը կարելի է նույնացնել արբիտրաժ սկսելու համար անհրաժեշտ տարրերի առկայության հետ: «Սովորական պայմաններ» հասկացությունը կարող է իրապես մեկնաբանվել որպես հղում նույն ապրանքային կամ առևտրային ասոցիացիայի անդամների միջև եղած անցյալ պրակտիկային՝ դրանով առաջարկելով տվյալ ասոցիացիայի արբիտրաժային կանոնների կիրառումը (դրանց առկայության դեպքում)¹³:

¹³ Տես՝ որպես օրինակ *Իտալիա*. Ջենովայի վերաքննիչ դատարան, 3 փետրվարի 1990թ. (*Della Sanara Kustvaart - Bevrachting & Overslagbedrijf BV v. Fallimento Cap. Giovanni Coppola srl, in liquidation*), 46 II Foro Padano (1991) cols. 168-171, Առևտրային արբիտրաժի տարեգիրք XVII (1992), էջեր 542-544 (Իտալիա, 113):

«Կապող դրույթի» բացակայության դեպքում բաց վերապահումը չի կարող բավարար համարվել:

IV.4. ԱՌԿԱՐ Է ԱՐԴՅՈՔ ՎԵՃ. ԱՐԴՅՈՒՔ ԱՅՆ ԱՌԱՋԱՑԵԼ Է ՍԱՀՄԱՆՎԱԾ ԻՐԱՎԱՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ. ԱՐԴՅՈՒՔ ԱՅՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԲՆՈՒՅԹ ՈՒՆԻ, ԹԵ ՈՉ, ԵՎ ԱՐԴՅՈՒՔ ԿՈՂՄԵՐԸ ՄՏԱԴԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՈՒՆԵՑԵԼ ԼՈՒԾԵԼՈՒ ԻՐԵՆՑ ՎԵՃԸ ԱՐԲԻՏՐԱԺԻ ՄԻՋՈՑՈՎ:

Արբիտրաժի կայացման համար պարտադիր նախապայման է կողմերի միջև վեճի առկայությունը: Դատարանները պարտավոր չեն կողմերին ուղղորդել դեպի արբիտրաժ, եթե նրանց միջև չկա վեճ՝ չնայած սա շատ հազվադեպ է պատահում:

Վեճերը ծագում են սահմանված իրավահարաբերություններից, որոնք կարող են լինել պայմանագրային կամ դելիկտային: Դելիկտային վեճից ծագած պահանջն արբիտրաժի իրավասության ներքո լինելու հանգամանքը կախված է արբիտրաժային վերապահման ձևակերպումից, այսինքն՝ արդյոք դրույթը լայն է ձևակերպված, և արդյոք պահանջը բավարար չափով կապված է պայմանագրային պահանջի հետ:

Այնուհանդերձ, արբիտրաժային համաձայնության կողմը միևնույն է կարող է պնդել, որ իր դեմ արբիտրաժային համաձայնության հիման վրա ներկայացված պահանջը չի ընկնում արբիտրաժային համաձայնության շրջանակներում:

IV.4.1. Տեսական նախապատմություն

Պահանջը, որ վեճն ընկնի արբիտրաժային համաձայնության շրջանակներում, որպեսզի կողմերը հնարավորություն ունենան դիմելու արբիտրաժ, անուղղակիորեն նշված է հոդված 2(3)-ում, որի համաձայն՝ սույն նորմի կիրառման համար պարտադիր պայման է, որ գործողությունը լինի «այն հարցի վերաբերյալ, ինչի շուրջ կողմերը կնքել են համաձայնություն՝ սույն հոդվածով նախատեսված կարգով»:

IV.4.2. Պրակտիկա

- (i) Արդյո՞ք արբիտրաժային վերապահումը պետք է լայն մեկնաբանել

Երբեմն հարց է ծագում, արդյոք տառացի մեկնաբանման դեպքում պայմանագրից «ծագող» տերմինը կարող է ունենալ ավելի նեղ իմաստ, քան սահմանված իրավահարաբերությունից «բխող» տերմինը: Նման հարցեր կարող են ծագել «վերաբերող» և «կապված» հասկացությունների վերաբերյալ:

Այնուհանդերձ, ինչպես առաջարկել է Անգլիայի վերաքննիչ դատարանը, Ֆիոնա Թրասթս ընդդեմ Պրիվալովի գործով,¹⁴ ուշադրությունը պետք է կենտրոնացնել այն հարցի վրա, թե արդյոք կարելի է ողջամտորեն եզրակացնել, որ կողմերը մտադրություն են

¹⁴ *Միացյալ Թագավորություններ*. Անգլիայի և Ուելսի վերաքննիչ դատարան, 24 հունվարի, 2007 (*Fiona Trust & Holding Corporation & Ors v. Yuri Privalov & Ors*) [2007] EWCA Civ 20, para. 17, Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXXII (2007), էջեր 654-682 [6] (*Միացյալ Թագավորություն*, 77):

ունեցել բացառելու վեճն արբիտրաժի միջոցով լուծելու հնարավորությունը: Ինչպես դատարանը նշեց.

«Շարքային գործարարին կգարմացնի դատական գործերում առկա նուրբ տարբերությունները, և այն ժամանակը, որը ծախսվում է այն փաստարկների քննարկման վրա, թե արդյոք տվյալ գործը ներառվում է իրար շատ նման բառերի այս կամ այն խմբում»:

Այս որոշումը հաստատվեց Լորդերի պալատի կողմից, որը «ծափահարություններով ողջունեց» Վերաքննիչ դատարանի կարծիքը¹⁵:

- (ii) Արբիտրաժային համաձայնությունն իր շրջանակից պարունակում է բացառություններ

Արբիտրաժային համաձայնությունների տեքստը կարող է ներառել միայն պահանջների որոշակի տեսակ կամ սահմանված լինել միայն որոշակի նպատակի համար: Մյուս կողմից, մինևույն պայմանագրից ծագող վեճերը տարբեր իրավասության մարմիններում քննելու արդյունքում ի հայտ են գալիս էական անբարենպաստ հետևանքներ: Հետևաբար, եթե արբիտրաժային վերապահումը լայն է ձևակերպված, արբիտրաժ դիմելու որոշակի պահանջները բացառող միայն խիստ համոզիչ ապացույցները

¹⁵ *Միացյալ Թագավորություններ. Լորդերի պալատ, 17 հոկտեմբեր 2007թ. (Fili Shipping Company Limited (14th Claimant) and others v. Premium Nafta Products Limited (20th Defendant) and others) [2007] UKHL 40, պարագրաֆ 12, Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXXII (2007), էջեր 654-682 [45] (Միացյալ Թագավորություն, 77):*

կարող են գործադրվել, հատկապես այն դեպքում, երբ բացառումն անորոշ է ձևակերպված:

IV.5. ԱՐԴՅՈ՞Ք ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ
ՊԱՐՏԱԴԻՐ Է ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱՐ, ԵՐԲ ՎԵՃՆ ԱՐԴԵՆ
ԴԱՏԱՐԱՆՈՒՄ Է

Ե՞րբ կարող է արբիտրաժային համաձայնությունը չստորագրած անձը համարվել «բուն» արբիտրաժային համաձայնության կողմ և հաջողությամբ դիմել ուղղորդելու դեպի արբիտրաժ:

IV.5.1. Տեսական նախապատմություն

- (i) Արբիտրաժային համաձայնությունը պարտադիր է միայն կողմերի համար

Պայմանագրային կապի տեսությունը կիրառվում է նաև արբիտրաժային համաձայնությունների նկատմամբ: Այն նշանակում է, որ արբիտրաժային համաձայնությունը նախատեսում է իրավունքներ և պարտականություններ միայն համաձայնության կողմերի համար: Կողմերի համար արբիտրաժային համաձայնության շրջանակը կոչվում է «սուբյեկտիվ» շրջանակ:

- (ii) Պայմանագրի կողմեր չհանդիսացող անձինք ևս կարող են դիտարկվել որպես արբիտրաժային համաձայնության կողմեր

Համաձայնության սուբյեկտիվ շրջանակը չի կարող սահմանվել բացառապես արբիտրաժային համաձայնությունը ստորագրած անձանց նկատմամբ: Արբիտրաժային համաձայնության կողմ չհանդիսացող անձանց համար որոշակի հանգամանքների դեպքում նույնպես կարող են նախատեսվել իրավունքներ և պարտականություններ համաձայնության հիման վրա: Օրինակ՝ ընդունված է, որ պրինցիպալ-գործակալ հարաբերություններում գործակալի կողմից կնքված պայմանագիրը պարտադիր է պրինցիպալի համար: Ի հավելումն այլ տեսությունների՝ իրավահաջորդությունը, կազմակերպությունների խմբի տեսությունը, «կորպորատիվ շղարշի ճեղքման» տեսությունը և հակադրվելու իրավունքից զրկումը (estoppel) կարող են հանգեցնել նրան, որ արբիտրաժային համաձայնությունը իրավունքներ և պարտավորություններ նախատեսի արբիտրաժային համաձայնության կողմ չհանդիսացող անձանց համար:

Հարց է ծագում, թե արդյո՞ք արբիտրաժային համաձայնության կողմ չհանդիսացող անձի համար այդ համաձայնության պարտադիր դառնալու հնարավորությունը կարող է մեկնաբանվել որպես Կոնվենցիայով սահմանված գրավոր պահանջին հակասող: Ամենահիմնավոր պատասխանը «ոչ»-ն է, որը հիմնավորվում է մի շարք պատճառաբանություններով:

Արբիտրաժային համաձայնության ձևական վավերության հարցը կապված չէ արբիտրաժային համաձայնության կողմ լինելու որակումից՝ հարց, որը վերաբերում է վեճի էությանը և չի ենթարկվում ձևի հետ կապված պահանջներին: Երբ հաստատվում է արբիտրաժային համաձայնության ձևական վավերականության առկայությունը, հաջորդ քայլն է պարզել անձանց, ում համար այն պարտադիր է: Երրորդ անձինք, ովքեր ուղղակիորեն հիշատակված

չեն գրավոր ձևով կնքված արբիտրաժային համաձայնությունում, կարող են այուամենայնիվ ներգրավվել դրա *ratione personae*-ի շրջանակներում: Ավելին, Կոնվենցիան չի բացառում արբիտրաժում մեկ անձի կողմից մյուսի համար արբիտրաժի վերաբերյալ համաձայնության ներկայացումը՝ հասկացություն, որը դրված է ենթադրյալ կամ լռելյայն համաձայնության տեսության արմատներում:

(iii) Ինչպես որոշել արբիտրաժային համաձայնության սուբյեկտիվ շրջանակը

Հոդված 2(3)-ը անուղղակիորեն պահանջում է դատարանից որոշելու արբիտրաժային համաձայնության սուբյեկտիվ շրջանակը՝ նշելով, որ «Պայմանավորվող պետության դատարանը, եթե նա հայց է ստանում այնպիսի հարցով, որի վերաբերյալ Կողմերը սույն հոդվածով նախատեսված համաձայնագիր են կնքել...», պարտավոր է Կողմերին ուղղորդել արբիտրաժ:

Մի շարք իրավական հիմքեր կարող են կիրառվել արբիտրաժային համաձայնության կողմ չհանդիսացող անձի նկատմամբ այն պարտադիր դարձնելու համար: Առաջին խումբը ներառում է ենթադրյալ կամ լռելյայն համաձայնության տեսությունները, երրորդ անձ շահառուները, երաշխավորները, հանձնարարությունները և պայմանագրային իրավունքների փոխանցման այլ մեխանիզմները: Այս տեսությունները հիմնվում են կողմերի նկատելի մտադրությունների և առավելապես նաև բարեխղճության սկզբունքների վրա: Դրանք կիրառելի են ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային իրավաբանական անձանց նկատմամբ:

Երկրորդ խումբը ներառում է այնպիսի իրավական դոկտրիններ, ինչպիսիք են գործակալ-պրինցիպալ հարաբերությունների, ակնհայտ լիազորության, «կորպորատիվ շղարշը ճեղքելու» (alter ego), համատեղ գործունեության հարաբերությունների, իրավահաջորդության և հակադրվելու իրավունքից զրկելու (estoppel) վերաբերյալ: Դրանք հիմնվում են ոչ թե կողմերի մտադրության, այլ՝ կիրառելի իրավունքի գործողության վրա:

(iv) Արբիտրաժային համաձայնության սուրյեկտիվ շրջանակի որոշման համար կիրառելի իրավունքը

Ո՞ր իրավունքի համաձայն պետք է որոշվի՝ արդյոք արբիտրաժային համաձայնության կողմ չհանդիսացող անձի համար այն պարտադիր է:

Նախևառաջ սույն հարցը պետք է դիտարկել արբիտրաժային համաձայնությունը կարգավորող իրավունքի լույսի ներքո: Սույն հարցի վերաբերյալ կողմերի համաձայնության բացակայության դեպքում, որպես կանոն, արբիտրաժային համաձայնությունը պետք է կարգավորվի արբիտրաժի վայրի իրավունքով կամ արբիտրաժային համաձայնության հիմքում ընկած պայմանագիրն ամբողջապես կարգավորող իրավունքով կամ որոշ դեպքերում՝ *lex fori*-ով (դատարանի գտնվելու վայրի իրավունքով): Այնուհանդերձ, որոշ դատարաններ սույն խնդիրը լուծել են միջազգային սկզբունքների կամ *lex mercatoria*-ի կիրառմամբ՝ այն հիմնականում համարելով փաստական և ապացուցման խնդիր:

IV.5.2. Պրակտիկա

- (i) Ե՞րբ պատասխանողն ունի արբիտրաժ ուղղորդվելու իրավունք

Սույն հարցի պատասխանը կախված է գործի հանգամանքներից: Դատարանն այս հարցին հանդիպելիս պետք է վերլուծի խնդիրը տվյալ գործի հանգամանքների ներքո, և որոշի՝ արդյոք վիճելի է արբիտրաժային համաձայնության կողմ չհանդիսացող անձի համար դրա պարտադիր լինելը: Եթե այո, ապա ամենանախընտրելի քայլը կողմերին դեպի արբիտրաժ ուղղորդելն է՝ արբիտրաժային տրիբունալին հանձնելով սույն խնդրի ուսումնասիրման և կարգավորման գործառնությունը: Արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչման կամ դրա հարկադիր կատարման փուլում դատարանները հնարավորություն ունենան քննելու արբիտրաժի որոշումը՝ արբիտրաժային համաձայնության կողմ չհանդիսացող անձի նկատմամբ արբիտրաժային համաձայնության պարտադիրության վերաբերյալ:

Դատարանները հաստատում են արբիտրաժային համաձայնության կողմ չհանդիսացող անձանց ներառող վեճերն արբիտրաժի քննությանը հանձնելը, եթե տվյալ համաձայնության կողմ հանդիսացող և չհանդիսացող անձանց միջև ծագած վեճը բավարար չափով կապված է արբիտրաժային վերապահում պարունակող կողմ հանդիսացող անձի պայմանագրի մեկնաբանման կամ կատարման հետ: Հետևաբար, նման վեճը համարվում է արբիտրաժի նյութական շրջանակում գտնվող վեճ:

ԱՄՆ Առաջին շրջանի դատարանի *Sourcing Unlimited Inc. v. Asimco International Inc.* գործում,¹⁶ «Սորսինգ Անլիմիթիդ» ընկերությունը ընկերակցության գրավոր պայմանագիր էր կնքել «ԱԹԼ» ընկերության հետ՝ մեխանիկական պահեստամասերի արտադրության բաժանման և համապատասխանորեն շահույթի բաշխման նպատակով: «Ասիմկո» ընկերությունը հանդիսանում էր «ԱԹԼ»-ի դուստր ձեռնարկությունը, և երկուսն էլ ունեին նույն նախագահը: Պայմանագիրը նախատեսում էր արբիտրաժ, որի վայրը Չինաստանում էր: Կողմերի հարաբերությունները սրվեցին, և «Սորսինգ Անլիմիթիդ»-ը «Ասիմկո»-յի և վերջինիս նախագահի դեմ հայց ներկայացրեց ԱՄՆ դատարաններում՝ մասնավորապես մեղադրելով «Ասիմկո»-յին իր և «ԱԹԼ»-ի միջև պայմանագրային և ֆիդուցիար հարաբերությունները դիտավորյալ միջամտելու մեջ: Պատասխանողները միջնորդություն են ներկայացնում՝ վեճը արբիտրաժի քննությանը հանձնելու վերաբերյալ: Նրանք պնդում էին, որ չնայած իրենք չեն ստորագրել ընկերակցության պայմանագիրը, այնուհանդերձ «Սորսինգ Անլիմիթիդ»-ի հայցն իրենց դեմ պետք է քննվի արբիտրաժային տրիբունալի կողմից, քանի որ հայցում ներկայացված խնդիրները բացահայտորեն բխում են ընկերակցության պայմանագրից: Դատարանը բավարարեց միջնորդությունը՝ որոշելով, որ «ներկա վեճը *բավարար չափով փոխկապակցված է* «Սորսինգ Անլիմիթիդ-ԱԹԼ» պայմանագրի հետ, որպեսզի հակադրվելու իրավունքից զրկումը (estoppel) համարվի կիրառելի:» (Ընդգծումը ավելացված է:)

¹⁶ *Միացյալ Նահանգներ*. Միացյալ Նահանգների վերաքննիչ դատարան, առաջին շրջան, 22 մայիսի 2008թ. (*Sourcing Unlimited Inc. v. Asimco International Inc. and John F. Perkowski*), 526 F.3d 38, para. 9, Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXXIII (2008), էջեր 1163-1171 (ԱՄՆ, 643):

- (ii) Երբ դատարանը որոշում է, որ արբիտրաժային համաձայնությունը պարտադիր չէ պատասխանողի համար

Եթե դատարանը համոզված չէ, որ արբիտրաժային համաձայնությունը դրա կողմ չհանդիսացող անձի համար պարտադիր է, այն պետք է որոշում կայացնի այն հարցի կապակցությամբ, թե արդյոք արբիտրաժային համաձայնության կողմերին ուղղորդի դեպի արբիտրաժ՝ միևնույն ժամանակ իր իրավասությունը ճանաչելով արբիտրաժային համաձայնության կողմ չհանդիսացող անձանց վեճի նկատմամբ, թե սահմանի իր իրավասությունն ամբողջ վեճի նկատմամբ:

Անշուշտ, խնդիր կարող է առաջանալ, որ համապատասխան կողմերին դեպի արբիտրաժ ուղղորդելը կարող է բաժանել գործի լուծումը երկու աստիճանների միջև՝ վտանգ ստեղծելով, որ նույն փաստական կազմի և օրենքի հիման վրա երկու տարբեր որոշումներ կարող են կայացվել:

Որոշ իտալական դատարանների մոտեցումը հետևյալն է եղել, որ երբ իրենց առաջադրված վեճը ընդգրկում է ինչպես արբիտրաժային համաձայնության կողմ հանդիսացող անձանց, այնպես էլ երրորդ անձանց (որոնց համար դատարանն արբիտրաժային համաձայնությունը ճանաչել է ոչ պարտադիր), ինչպես նաև ներառում է փոխկապակցված պահանջներ, ապա դատարանն իրավասություն է ստանձնում վեճն ամբողջապես լուծելու առաքելությունը, իսկ արբիտրաժային համաձայնությունը դառնում է «կատարման ոչ ենթակա»¹⁷: Ամենայն

¹⁷ *Իդրալիա*. Վճռաբեկ դատարան, 4 օգոստոսի 1969թ., no. 2949 և Վճռաբեկ դատարան, 11 փետրվարի 1969թ., no. 457, մեջբերված Ա.Շ. վան դեն Բերգի

հավանականությամբ այլ իրավական համակարգեր չեն հետևի նման մոտեցմանը և վերջինս չի կարող համարվել ընդհանուր տեսակետ արտահայտող մոտեցում:

Հոդված 2(3)-ը դատարանին պարտադրում է արբիտրաժային համաձայնության կողմերին ուղղորդել նրանց կողմից ընտրված արբիտրաժ, եթե այդպիսի պահանջ է ներկայացվել՝ պայմանով, որ հոդված 2(3)-ի պահանջները պահպանված են: Այսպիսով, մի կողմի պահանջով դատարանը սահմանափակ հնարավորություն ունի արբիտրաժային համաձայնության կողմ հանդիսացող անձանց արբիտրաժ ուղղորդելուց խուսափելու համար՝ միևնույն ժամանակ ճանաչելով իր իրավասությունն արբիտրաժային համաձայնության կողմ չհանդիսացող անձանց հետ կապված վեճի նկատմամբ:

IV.6. ԱՐԴՅՈՒՔ ՏՎՅԱԼ ՎԵՃԸ ԵՆԹԱԿԱ Է ԱՐԲԻՏՐԱԺԻ («ԱՐԲԻՏՐԵԼԻ Է»)

Դատարանը կարող է քննել պահանջ, որ արբիտրաժային համաձայնության առարկան «ենթակա չէ արբիտրաժի լուծմանը»՝ հոդված 2(1)-ի նպատակներին համապատասխան, և այդպիսով չի կարող ճանաչվել կամ կատարվել:

կողմից, Նյու-Յորքի արբիտրաժի մասին 1958թ. կոնվենցիան՝ ուղղված միատեսակ մեկնաբանմանը (Կլովեր, 1981), էջ 162, րո. 124:

IV.6.1 «Արբիտրաժի միջոցով վեճի առարկայի լուծման
հնարավորության» վավերապայմանը նշանակում է
«արբիտրելի»

Որպես կանոն, այս տերմինները վերաբերում են «ոչ արբիտրելի» հարցերի շրջանակին, քանի որ դրանք ընկած են դատարանների բացառիկ իրավասության ներքո: Յուրաքանչյուր պետություն որոշում է, թե որ հարցերի շրջանակը կարող է կամ չի կարող լուծվել արբիտրաժի միջոցով՝ իր քաղաքական, սոցիալ և տնտեսական կարգին համապատասխան: Դասական օրինակներից են ընտանեկան հարաբերությունները (ամուսնալուծությունները, ծնողական իրավունքների վերաբերյալ վեճերը և այլն), քրեական հանցագործությունները, աշխատանքային կամ զբաղվածության հայցերը, սնանկությունը և այլն: Այդուհանդերձ ոչ-արբիտրելի հարաբերությունների շրջանակն աստիճանաբար նեղացել է, ինչը կապված է արբիտրաժի դերի բարձրացման հետ: Ներկայումս հազվադեպ չէ, երբ աշխատանքային որոշ վեճեր կամ սնանկության հետ կապված որոշ հարցեր համարվեն արբիտրելի:

Ավելին, մեծ թվով առաջատար իրավական համակարգեր ճանաչում են բացառապես ներքին և միջազգային բնույթ ունեցող արբիտրաժների միջև առկա տարբերությունը, և վերջինիս համար արբիտրելի հարցերի առավել լայն շրջանակ են նախատեսում:

IV.6.2. Արբիտրելիության նկատմամբ կիրառվող իրավունքը

Հոդված 2(1)-ը չի կարգավորում արբիտրելիության նկատմամբ կիրառվող իրավունքի հարցը՝ թողնելով այն դատարանի հայեցողությանը:

Ինչ վերաբերում է վեճի նախնական փուլում դրա արբիտրելիությանը՝ դատարանները կարող են ընտրել մի քանի տարբերակներ՝ ներառյալ *lex fori* (դատարանի՝ արբիտրելիության վերաբերյալ ներպետական չափանիշները), արբիտրաժի վայրի իրավունքը, արբիտրաժային համաձայնությունը կարգավորող իրավունքը, եթե արբիտրաժային համաձայնության կողմ է պետությունը կամ պետական ձեռնարկությունը՝ դրա նկատմամբ կիրառվող իրավունքը, կամ արբիտրաժային համաձայնության հարկադիր կատարման վայրի իրավունքը:

Պրակտիկայում առավել պատշաճ և նվազագույնս խնդրահարույց լուծումն է *lex fori*-ի կիրառումը: Այն առավելապես համապատասխանում է Կոնվենցիային (քանի դեռ դատարանը ունի իրավասություն արբիտրաժային համաձայնության բացակայության պայմաններում), քանի որ այս մոտեցումը բխում է հոդված 5(2)(ա)-ից, որը սահմանում է արբիտրաժային վճռի հարկադիր կատարման նկատմամբ *lex fori*-ի արբիտրելիության չափանիշների կիրառումը: Այն նվազագույնս խնդրահարույց է, քանի որ ներպետական դատարանների կողմից արբիտրելիության միջազգային չափանիշների կիրառումը դժվարություն է առաջացնում այնքանով, որքանով դրանք ոչ միշտ են ամրագրված իրավական ակտերում, այլ հաճախ տեղ են գտնում պրակտիկ գործերում՝ ենթադրելով օտարերկրյա իրավական համակարգերի խորը հետազոտություն:

Այն դեպքում, երբ պետությունն է հանդիսանում կողմ, ներկայումս առավել տարածված է այն մոտեցումը, որ պետությունը չի կարող վկայակոչել իր սեփական իրավունքը, համաձայն որի՝ վեճի առարկան համարվում է ոչ արբիտրելի¹⁸:

IV.6.3. Միջազգային արբիտրաժային համաձայնությունները պետք է ենթակա լինեն արբիտրելիության միատեսակ չափանիշներին

Ցանկացած դեպքում արբիտրելիության չափանիշները պետք է մեկնաբանվեն միջազգային արբիտրաժային համաձայնությունների ենթադրյալ վավերականության լույսի ներքո, որն ամրագրված է Կոնվենցիայում: Հետևաբար ոչ բոլոր ոչ-արբիտրելիության բացառությունները, որոնք կարող են հաջողությամբ կիրառվել ներպետական արբիտրաժային համաձայնությունների նկատմամբ, կարող են կիրառելի չլինել միջազգային արբիտրաժային համաձայնությունների դեմ առարկելու դեպքում:

Գոյություն չունեն համընդհանուր չափանիշներ, որոնք կսահմանեն միջազգային գործերում անտեսման ենթակա ոչ-արբիտրելիության բացառություններ: Որոշ երկրների օրենքներ

¹⁸ Շվեյցարիայի «Միջազգային մասնավոր իրավունքի մասին» օրենքի 177-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է.

«Եթե արբիտրաժային համաձայնության մի կողմը պետություն է կամ պետությանը ենթարկվող ձեռնարկություն կամ վերջինիս կողմից կառավարվող կազմակերպություն, այն չի կարող հղում կատարել իր սեփական օրենքին՝ վիճարկելու վեճի արբիտրելիությունը կամ իր՝ արբիտրաժի իրավասությանը ենթակա լինելու կարողությունը»:

պարունակում են ձևական սահմանումներ (օրինակ՝ տարբեր ազգային պատկանելությունը), այլ երկրների էլ՝ հղում են կատարում «միջազգային գործարքներին» առանց հավելյալ սահմանման:

V. ԱՄՓՈՓՈՒՄ

Հիմք ընդունելով արբիտրաժային համաձայնությունների հարկադիր կատարման վերաբերյալ Կոնվենցիայով նախատեսված կարգավորումների համառոտ ակնարկը՝ Կոնվենցիայի շրջանակներում համարվող արբիտրաժային համաձայնությունների նկատմամբ կիրառվում են հետևյալ ամփոփիչ սկզբունքները.

1. Կոնվենցիան ընդունվել է միջազգային վեճերն արբիտրաժի միջոցով կարգավորումը խթանելու նպատակով: Այն սահմանել է «կատարման ուղղված» և «արբիտրաժին ուղղված» մոտեցումներ:
2. Արբիտրաժային համաձայնության ձևական վավերականության պահանջը համարվում է պահպանված, երբ դատարանը գտնում է, որ արբիտրաժ դիմելու գրավոր արված առաջարկն ընդունվել է մյուս կողմի կողմից: Կոնվենցիան սահմանում է ձևի նկատմամբ առավելապես միատեսակ չափանիշներ: Այնուամենայնիվ, դատարանը կարող է կիրառել ներպետական նվազ խիստ չափանիշներ, քան Կոնվենցիայի հոդված 2-ի պահանջներն են:
3. Դատարանները պետք է թույլատրեն ներպետական օրենքով սահմանված արբիտրաժային համաձայնության

բացակայության և անվավերության սահմանափակ դատական պաշտպանության հնարավորություններ:

4. Արբիտրաժային համաձայնությունը կարող է պարտադիր լինել դրա կողմ չհանդիսացող անձանց համար:
5. Դատարանը պետք է հաստատի կողմերի միջև վեճի առկայությունը:
6. Արբիտրելի չլինելն ուղղակիորեն չի կարգավորվում Կոնվենցիայով, այլ թողնված է ներպետական իրավական համակարգին: Այնուհանդերձ, արբիտրաժի ենթակա չլինելու բացառությունները պետք է ընդունվեն սահմանափակ կերպով:

ԳԼՈՒԽ III. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎՃՌԻ ՃԱՆԱԶՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

II. ՓՈՒԼ Ի՝ ՀԱՅՅՎՈՐԻ ԿՈՂԻՑ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՊԱՀԱՆՁՆԵՐ (ՀՈԴՎԱԾ 4)

- II.1. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ
- II.2. Արբիտրաժային վճռի պատշաճ կերպով հաստատված իսկական օրինակը կամ դրա պատշաճ կերպով հաստատված պատճենը (*Հոդված 4(1)(ա)*)
 - II.2.1. Պատշաճ կերպով հաստատում
 - II.2.2. Պատճենի հաստատում
- II.3. Արբիտրաժային համաձայնության իսկական օրինակը կամ դրա պատշաճ կերպով հաստատված պատճենը (*հոդված 4(1)(բ)*)
- II.4. Դիմում տալու պահը
- II.5. Թարգմանություններ (*հոդված 4(2)*)

III. ՓՈՒԼ II՝ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ (ՀՈԴՎԱԾ 5). ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- III.1. Ըստ էության վերանայման բացառում
- III.2. Պատասխանողի՝ սպառիչ հիմքերի ապացուցման բեռը
- III.3. Ճանաչման և կատարման մերժման սպառիչ հիմքերը
- III.4. Մերժման հիմքերի նեղ մեկնաբանություն
- III.5. Մերժման հիմքերի առկայության դեպքում՝ կատարումը թույլատրելու համար սահմանափակ հայեցողական լիազորություն

IV. ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ (ՀՈԴՎԱԾ 5(1))

IV.1. Հիմք 1. Կողմի անգործունակությունը և արբիտրաժային համաձայնության անվավերությունը (*հոդված 5(1)(ա)*)

IV.1.1. Կողմի անգործունակությունը

IV.1.2. Արբիտրաժային համաձայնության անվավերությունը

IV.2. Հիմք 2. Ծանուցման բացակայությունը և ընթացակարգային խախտումները, արդար դատաքննության իրավունքը (*հոդված 5(1)(բ)*)

IV.2.1. Արդար դատաքննության իրավունքը

IV.2.2. Ծանուցման բացակայությունը

IV.2.3. Պատշաճ ընթացակարգի խախտումներ. «չի կարողացել ներկայացնել իր բացատրությունները»

IV.3. Հիմք 3. Արբիտրաժային համաձայնությամբ չնախատեսված կամ դրա շրջանակից դուրս (*հոդված 5(1)(գ)*)

IV.4. Հիմք 4. Արբիտրաժային տրիբունալի կազմավորման կամ արբիտրաժային գործընթացի խախտումներ (*հոդված 5(1)(դ)*)

IV.4.1. Արբիտրաժային տրիբունալի կազմավորումը

IV.4.2. Արբիտրաժային վարույթը

IV.5. Հիմք 5. Արբիտրաժային վճիռը պարտադիր չէ, չեղյալ է ճանաչվել կամ կասեցվել է (*հոդված 5(1)(ե)*)

IV.5.1. Դեռևս պարտադիր իրավական ուժ չստացած արբիտրաժային վճիռ

IV.5.2. Չեղյալ ճանաչված կամ կասեցված

արբիտրաժային վճիռ

(i) Չեղյալ ճանաչված վճիռ

(ii) Չեղյալ ճանաչման հետևանքները

(iii) «Կասեցված» վճիռ

V. ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ Ի ՊԱՇՏՈՆԵ ԲԱՐՁՐԱՑՎՈՂ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐ (ՀՈԴՎԱԾ 5(2))

V.1. Հիմք 6. Ենթակա չէ արբիտրաժի քննության (Արբիտրելի չէ) (*հոդված 5(2)(ա)*)

V.2. Հիմք 7. Հակասում է հանրային կարգին (*հոդված 5(2)(բ)*)

V.2.1. Ճանաչման և կատարման օրինակներ

V.2.2. Ճանաչման և կատարման մերժման օրինակներ

VI. ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արբիտրաժային վճիռների ճանաչումը և կատարումը սկզբունքորեն կարող են իրականացվել ցանկացած դատարանի կողմից: Արբիտրաժային վճիռների կայացման վայրի սահմաններից դուրս գտնվող պետությունում արբիտրաժային վճիռների կատարումը սովորաբար իրականացվում է Նյու-Յորքի Կոնվենցիայի հիման վրա: Պրակտիկայում արբիտրաժային վճռի ճանաչման ու կատարման իրավական գործողությունը սահմանափակված է այն տարածքով, որի շրջանակներում վճիռ կայացրած դատարանն ունի իրավասություն:

Համաձայն հոդված 3-ի՝ ներպետական դատարանները պետք է ճանաչեն և կատարեն օտարերկրյա արբիտրաժային վճիռներն այն վայրի ընթացակարգերին համապատասխան, որտեղ ներկայացվել է ճանաչման և կատարման դիմումը (տես՝ Գլուխ I) և ըստ Կոնվենցիայի պայմանների:

Արբիտրաժային վճիռների կատարման համար ներպետական օրենքները կարող են կիրառել երեք տեսակի դրույթներ.

- Նյու-Յորքի Կոնվենցիան գործադրելու վերաբերյալ հատուկ կարգավորում,
- միջազգային արբիտրաժի վերաբերյալ հատուկ կարգավորում,
- պետության ընդհանուր արբիտրաժային օրենք:

Հոդված 3-ը պարտադրում է անդամ պետություններին ճանաչել Կոնվենցիայի համաձայն կայացված արբիտրաժային վճիռները, եթե առկա չէ հոդված 5-ի մերժման հիմքերից մեկը: Դատարանները, սակայն, կարող են կատարել արբիտրաժային վճիռներն առավել բարենպաստ պայմաններով (հոդված 7(1)-ի համաձայն, տես՝ Գլուխ I): Կոնվենցիայով չկարգավորվող և ուստի ներպետական օրենքներով կարգավորվող հարցերի օրինակներն են՝

- իրավասու դատարան(ներ)ը, որտեղ ներկայացվում է դիմումը,
- ապացույցների պահանջ,
- վաղեմության ժամկետները,
- ապահովման միջոցներ,
- արդյո՞ք ճանաչում և կատարում շնորհելը կամ մերժելը ենթակա է բողոքարկման կամ իրավունքի խախտման միջոցների,
- գույքի նկատմամբ կատարողական վարույթի անցկացման չափորոշիչները,
- ճանաչման և կատարման գործընթացի գաղտնիությունը:

Ցանկացած դեպքում ներպետական համապատասխան օրենսդրությամբ սահմանված դատավարական պահանջները չեն կարող հակասել տվյալ պետության օտարերկրյա արբիտրաժային

վճիռները կատարելու միջազգային իրավական պարտավորություններին (տես՝ Գլուխ I-ի VI կետ):

Նյու Յորքի Կոնվենցիայի պահանջն է, որ արբիտրաժային վճիռների ճանաչումը և կատարումը, որոնց նկատմամբ կիրառվում է Կոնվենցիան, չենթարկվեն զգալիորեն առավել խիստ պայմանների կամ առավել բարձր վճարների կամ տուրքերի, քան գանձվում են ներպետական արբիտրաժային վճիռների ճանաչման կամ կատարման համար: Այս դրույթը գործնականում խնդիրներ չի առաջացրել և կիրառվել է կատարման տարբեր հարցերի նկատմամբ: Օրինակ՝ Կանադայի Գերագույն դատարանի որոշմամբ հոդված 3-ի համաձայն կանադական ոչ մի նահանգ չի կարող կիրառել այնպիսի ժամկետային սահմանափակում, որն առավել կարճ և ուստի առավել խիստ է, քան Կանադայի որևէ տարածքում կիրառվող ներպետական արբիտրաժային վճիռների կայացման համար առկա ժամկետային սահմանափակումը¹:

Նյու-Յորքի Կոնվենցիայում ներառված *ընթացակարգային կանոնները* սահմանափակվում են այնպիսի հարցերով, ինչպիսիք են դիմումի ձևը և իրավասու մարմինը, որոնք Նյու-Յորքի Կոնվենցիան թողնում է ներպետական օրենսդրության կարգավորմանը: Այնուամենայնիվ, *կատարման պայմանները* ներկայացված են Նյու-Յորքի Կոնվենցիայում և ղեկավարվում են բացառապես Կոնվենցիայով, այսինքն՝ հայցվորը՝ արբիտրաժային վճռի ճանաչում կամ կատարում հայցող անձը, միայն պետք է ներկայացնի արբիտրաժային համաձայնության և արբիտրաժային վճռի բնօրինակը կամ պատճենը և ամենայն հավանականությամբ

¹ Կանադա. Կանադայի գերագույն դատարան, 20 մայիսի 2010թ. (*Yugraneft Corporation ընդդեմ Rexx Management Corporation*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXXV (2010), էջեր 343 – 345 (Կանադա, 31):

նաև դրանց թարգմանությունը, իսկ պատասխանողը կարող է միայն ապավինել Նյու-Յորքի Կոնվենցիայում նշված սպառիչ հիմքերին: Այս հարցերն ավելի մանրամասն կքննարկվեն ստորև:

Հոդված 4-ով սահմանված փաստաթղթերը ներկայացնելուն պես հայցվորը ձեռք է բերում արբիտրաժային վճռի ճանաչման և կատարման իրավունք, եթե պատասխանողը չի ապացուցում, որ առկա են հոդված 5(1)-ով սահմանված արբիտրաժային վճռի ճանաչումը և կատարումը մերժող հիմքեր, կամ եթե դատարանը չի գտնում, որ հոդված 5(2)-ի հիմքերից որևէ մեկը կիրառելի է:

Ընդհանուր կանոնը, որին դատարանները հետևում են, հանգում է նրան, որ հոդված 5-ում նշված մերժման հիմքերը պետք է նեղ մեկնաբանվեն, ինչը նշանակում է, որ դրանց գոյությունը ընդունվում է միայն կարևոր դեպքերում: Սա հատկապես արդի է հանրային կարգի խախտումների պահանջների դեպքում, որոնք հաճախ բարձրացվում են հուսահատ կողմերի կողմից, բայց շատ հազվադեպ են ընդունվում դատարանների կողմից: Օրինակ, թեև Լոնդոնն աշխարհի խոշոր ֆինանսական կենտրոններից մեկն է, որտեղ կողմերը հաճախ ձգտում են կատարման, չկա անգլիական դատարանի որևէ որոշում, որով երբևէ օտարերկրյա արբիտրաժային վճիռ մերժվել է հանրային կարգի հիմքով (տես՝ սույն Գլուխը V.2-ի ստորև):

2010 թ.-ի դրությամբ Կոնվենցիայի վերաբերյալ ԱԱՄԽ-ի «Առևտրային արբիտրաժի տարեգրքի» երեսունհինգ տարվա ընթացքում ներկայացված հաշվետվությունները ցույց են տալիս, որ միայն ճանաչման և կատարման դեպքերի 10%-ն է մերժվել Կոնվենցիայի հիմքերով՝ չնայած նրան, որ վերջին տարիներին այս տոկոսը մի փոքր աճել է:

Դատարանները հակված են Նյու-Յորքի Կոնվենցիայի համաձայն կատարման իրագործմանը՝

- **կիրառելով կատարմանը միտված խիստ քաղաքականության մոտեցում և**
- **պրագմատիկ, ճկուն և ոչ ձևական մոտեցում:**

Այս գովելի, լիբերալ վերաբերմունքը լիովին գործածում է այս ամենահաջողված միջազգային պայմանագրի ներուժը, որին անդամակցում են ավելի քան 145 պետություններ՝ միջազգային առևտրին սպասարկելու և խթանելու նպատակով (տես՝ Ընդհանուր ակնարկի I.2 կետը):

II. ՓՈՒԼ I՝ ՀԱՅՑՎՈՐԻ ԿՈՂԻՑ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՊԱՀԱՆՁՆԵՐ (ՀՈԴՎԱԾ 4)

Դատավարության այս փուլում հայցվորը կրում է ապացուցման բեռը և պարտավոր է ներկայացնել Նյու Յորքի Կոնվենցիայում թվարկված փաստաթղթերը (հոդված 4): Հայցվորը պարտավոր է ներկայացնել *prima facie* ապացույցներ: Փուլ I-ը վերահսկվում է կատարման դատարանի կողմից կատարմանը միտված քաղաքականության և գործնական մտածողությամբ:

II.1. ԻՆՉ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ

Արբիտրաժային վճռի ճանաչման և/կամ կատարման վերաբերյալ դիմումը քննելիս դատարանները ստուգում են, արդյոք հայցվորը դիմումի հետ ներկայացրել է.

- արբիտրաժային վճռի պատշաճ կերպով հաստատված իսկական օրինակը կամ դրա պատշաճ կերպով հաստատված պատճենը (հոդված 4(1)(ա)),
- 2-րդ հոդվածում հիշատակված համաձայնության իսկական օրինակը կամ դրա պատշաճ կերպով հաստատված պատճենը (հոդված 4(1)(բ)) և
- Այս փաստաթղթերի թարգմանությունը այն պետության լեզվով, որտեղ արբիտրաժային վճիռը վկայակոչվում է՝ ըստ անհրաժեշտության (հոդված 4(2))

II.2. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎՃՌԻ ՊԱՏՇԱՃ ԿԵՐՊՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԻՍԿԱԿԱՆ ՕՐԻՆԱԿԸ ԿԱՄ ԴՐԱ ՊԱՏՇԱՃ ԿԵՐՊՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՊԱՏՃԵՆԸ (Հոդված 4(1)(ա))

II.2.1. Պատշաճ կերպով հաստատում

Արբիտրաժային վճռի հաստատումն այն գործընթացն է, որի շրջանակում իրավասու մարմինը հաստատում է վճռում առկա ստորագրություններն որպես իսկական: Արբիտրաժային վճռի իսկական օրինակի կամ դրա պատճենի պատշաճ կերպով հաստատման նպատակն է հավաստել, որ դա *իսկական* տեքստն է և կազմած է նշանակված արբիտրների կողմից: Չափազանց անսովոր կլինի, եթե սույն հարցը պրակտիկայում խնդիրներ առաջացնի:

Կոնվենցիան չի սահմանում պատշաճ հաստատման պահանջը կարգավորող իրավունքը: Այն նաև չի նշում, թե արդյոք պատշաճ կերպով հաստատման պահանջները պետք է համապատասխանեն այն երկրի չափանիշներին, որտեղ կայացվել է արբիտրաժային

վճիռը կամ այն երկրների չափանիշներին, որտեղ հայցվում է վճռի ճանաչումն ու կատարումը: Դատարանների գերակշիռ մասը կարծես ընդունում է պատշաճ հաստատման ցանկացած ձև, որը կհամապատասխանի ցանկացած նշված երկրների իրավունքներից մեկին: Ավստրիայի Գերագույն դատարանն իր որոշմամբ հստակ նշել է, որ պատշաճ հաստատումը կարող է իրականացվել կա՛մ այն երկրի իրավունքի համաձայն, որտեղ կայացվել է արբիտրաժային վճիռը, կա՛մ այն երկրի իրավունքի համաձայն, որտեղ իրականացվելու է արբիտրաժային վճռի կատարումը²: Կատարման պահանջը քննող այլ դատարաններ կիրառում են իրենց սեփական իրավունքը³:

Ավստրիայի Գերագույն դատարանը իր մի որոշմամբ ամրագրեց.

«Նյու Յորքի Կոնվենցիան հստակ չի սահմանում, թե արդյոք միայն արբիտրաժային վճռի կայացման երկրի պատշաճ հաստատման կամ ճշգրտության պահանջներն են, որ կիրառվում են արբիտրաժային վճռի և արբիտրաժային համաձայնության կամ դրանց պատճենների նկատմամբ, թե պետք է նաև հետևել ճանաչման երկրի՝ օտարերկրյա փաստաթղթեր հավաստագրելու պահանջներին», և որ

«Գերագույն դատարանը հետևողականորեն աջակցում է... այն կարծիքին, որ ավստրիական հավաստագրման

² Տես՝ օրինակ, *Ավստրիա*. Գերագույն դատարան, 11 հունիսի 1969թ. (*կողմերը նշված չեն*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք II (1977), էջ 232 (Ավստրիա, 3):

³ Տես՝ օրինակ, *Իտալիա*. Վճռաբեկ դատարան, 14 մարտի 1995թ., N 2919 (*SODIME – Società Distillerie Meridionali v. Schuurmans & Van Ginneken BV*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXI (1996), էջեր 607-609 (Իտալիա, 140):

պահանջները չեն կիրառվում բացառիկության կարգով...: Ուստի Գերագույն դատարանը համարեց, որ արբիտրաժային վճռի կայացման երկրի իրավունքի համաձայն սահմանված հավաստագրման պահանջների համապատասխանությունը բավարար է»⁴:

Փաստաթղթերը պարզապես նպատակադրված են հաստատելու արբիտրաժային վճռի իսկությունը և այն փաստը, որ վճիռը կայացվել է Կոնվենցիայով սահմանված արբիտրաժային համաձայնության հիման վրա: Այդ իսկ պատճառով Գերմանիայի դատարաններն ընդունում են, որ պատշաճ հաստատում չի պահանջվում, երբ արբիտրաժային վճռի իսկությունը չի վիճարկվում, օրինակ, տես՝ Մյունխենի Վերաքննիչ դատարանի ստորև նշված երկու որոշումները⁵:

Ընդամենը մի քանի դեպք է արձանագրվել, երբ կողմը չի կարողացել բավարարել այս ընթացակարգային պարզ պահանջները (օրինակ, 2003թ. Իսպանիայի Գերագույն դատարանի գործերից մեկում՝ հայցվորը միայն տրամադրել էր արբիտրաժային վճռի պատշաճ հաստատում չունեցող և ոչ

⁴ *Ավստրիա*. Գերագույն դատարան, 3 սեպտեմբերի 2008թ. (*O Limited, et al. v. C Limited*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXXIV (2009), էջեր 409-417 (Ավստրիա, 20):

⁵ *Գերմանիա*. Վերաքննիչ դատարան, Մյունխեն, 17 դեկտեմբերի 2008թ. (*Վաճառողը ընդդեմ գերմանական հանձնակարարին*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXXV (2010), էջեր 359-361 (Գերմանիա, 125) և Վերաքննիչ դատարան, Մյունխեն, 27 փետրվարի 2009թ. (*Փոխադրող ընդդեմ գերմանական հաճախորդի*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXXV (2010), էջեր 365-366 (Գերմանիա, 127):

իսկական պատճենները)⁶: Դատարանները չեն կարող պահանջել լրացուցիչ փաստաթղթի ներկայացում, կամ ընթացակարգային պահանջներին ավելի խիստ մեկնաբանություն տալով՝ դրանք որպես խոչընդոտ օգտագործել դիմումի դեմ:

II.2.2. Պատճենի պատշաճ հաստատում

Արբիտրաժային վճռի պատճենի հաստատման նպատակն է հավաստել, որ արբիտրաժային վճռի պատճենը բնօրինակի հետ նույնական է: Կոնվենցիան չի սահմանում պատճենի պատշաճ հաստատման ընթացակարգը կարգավորող իրավունքը, որն ընդհանրապես ենթակա է *lex fori*-ի (*դատարանի գրնվելու վայրի իրավունքի*) գործողությանը:

Արբիտրաժային վճռի պատճենը հաստատելու իրավունք ունեցող անձինք սովորաբար այն նույն անձինքն են, որոնք լիազորված են հաստատելու արբիտրաժային վճռի իսկական օրինակը: Բացի դրանից, արբիտրաժը կառավարած արբիտրաժային կենտրոնի գլխավոր քարտուղարի կողմից կատարված հաստատումը շատ դեպքերում համարվում է բավարար:

⁶ *Բսպանիա*. Գերագույն դատարան, Քաղաքացիական պալատ, 1 ապրիլի 2003թ. (*Satico Shipping Company Limited v. Maderas Iglesias*), Տարեգիրք XXXII (2007), էջեր 582-590 (Բսպանիա, 57):

II.3. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԻՍԿԱԿԱՆ
ՕՐԻՆԱԿԸ ԿԱՄ ԴՐԱ ՊԱՏՇԱՃ ԿԵՐՊՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ՊԱՏՃԵՆԸ (ՀՈԴՎԱԾ 4(1)(Բ))

Այս դրույթը միայն պահանջում է, որ կատարում հայցող կողմը տրամադրի փաստաթուղթ, որն *աներևոյթ (prima facie)* վավեր արբիտրաժային համաձայնություն է: Այս փուլում դատարանը չպետք է հաշվի առնի, թե արդյոք համաձայնությունը «գրավոր է», ինչպես սահմանված է հոդված 2(2)-ում (տես՝ Գլուխ II-ի IV.2 մասում), կամ վավեր է կիրառվող իրավունքի համաձայն⁷:

Արբիտրաժային համաձայնության վավերականության բովանդակային քննությունը և դրա համապատասխանությունը Կոնվենցիայի հոդված 2(2)-ին տեղի է ունենում ճանաչման կամ կատարման դատավարական գործընթացի 2-րդ փուլում (տես՝ սույն Գլխի IV.1 մասը, հոդված 5(1)(ա)):

Այն պետությունների դատարանները, որտեղ ներպետական իրավունքը չի պարտավորեցնում հայցվորին ներկայացնելու արբիտրաժային համաձայնության իսկական օրինակը կամ պատշաճ կերպով հաստատված պատճենը, կարող են Կոնվենցիայի 7-րդ հոդվածի առավել բարենսպաստ իրավունքի սկզբունքի լույսի ներքո ամբողջությամբ մերժել սույն պահանջի կիրառումը (տես՝ Գլուխ I-ի V.1 մասում): Սա բնորոշ է գերմանական դատարաններին, որոնք հետևողականորեն կիրառում են այն մոտեցումը, որ Գերմանիայում օտարերկրյա արբիտրաժային վճռի

⁷ Տես օրինակ՝ *Մինգապուր*. Մինգապուրի գերագույն դատարան, Բարձրագույն դատարան, 10 մայիսի 2006թ. (*Aloe Vera of America, Inc v. Asianic Food (S) Pte Ltd and Another*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXXII (2007), էջեր 489-506 (Մինգապուր, 5):

կատարում հայցող կողմը Կոնվենցիայի համաձայն պետք է միայն ներկայացնի արբիտրաժային վճռի պատշաճ հաստատված իսկական օրինակը կամ պատշաճ հաստատված պատճենը⁸:

II.4. ԴԻՄՈՒՄ ՏԱԼՈՒ ՊԱՀԸ

Եթե փաստաթղթերը չեն ներկայացվում դիմումի հետ միասին, դատարաններն առհասարակ թույլատրում են կողմերին կատարման վարույթի ընթացքում ուղղել այս թերությունը⁹:

Իտալական դատարանները, այնուամենայնիվ, համարում են, որ փաստաթղթերի ներկայացումը ճանաչման կամ կատարման վարույթ սկսելու նախապայմանն է, և, եթե այս պայմանը բավարարված չէ, ապա դիմումը կարող է մերժվել: Իտալական գերագույն դատարանը պարբերաբար ընդունել է այնպիսի մոտեցում, որ արբիտրաժային համաձայնության իսկական կամ օրինակը կամ դրա պատշաճ կերպով հաստատված պատճենը պետք է տրամադրվի դիմումը տալու պահին, և, եթե այս պայմանը բավարարված չէ, ապա դիմումը մերժվում է: Սույն թերությունը կարող է ուղղվել նոր դիմում ներկայացնելու միջոցով¹⁰:

⁸ Տես օրինակ՝ *Գերմանիա*. Վերաքննիչ դատարան, Մյունխեն, 12 հոկտեմբերի 2009թ. (*Swedish Seller v. German Buyer*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXXV (2010), էջեր 383-385 (Գերմանիա, 134):

⁹ Տես օրինակ՝ *Իսպանիա*. Գերագույն դատարան, 6 ապրիլի 1989թ. (*Sea Traders SA v. Participaciones, Proyectos y Estudios SA*), Տարեգիրք XXI (1996), էջեր 676-677 (Իսպանիա, 27), *Ավստրիա*. Գերագույն դատարան, 17 նոյեմբերի 1965թ. (*Party from F.R. Germany v. Party from Austria*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք I (1976), էջ 182 (Ավստրիա, 1):

¹⁰ Տես օրինակ՝ *Իտալիա*. Վճռաբեկ դատարան, Քաղաքացիական առաջին պալատ, 23 հուլիսի 2009թ., N 17291 (*Microwave s.r.l. in liquidation v. Indicia*

II.5. ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (Հոդված 4(2))

Արբիտրաժային վճռի ճանաչում և կատարում հայցող կողմը պետք է ներկայացնի հոդված 4(1)(ա) և (բ)-ով սահմանված արբիտրաժային վճռի և արբիտրաժային համաձայնության իսկական օրինակի թարգմանությունը, եթե այն պետության պետական լեզվով չեն, որտեղ հայցվում է ճանաչումը և կատարումը (հոդված 4(2)):

Դատարանները հակված են ընդունել պրագմատիկ մոտեցում: Թեև Կոնվենցիան հստակորեն չի սահմանում, որ թարգմանությունները պետք է ներկայացվեն ճանաչման և կատարման դիմումը տալու պահին, այնուամենայնիվ, մի շարք պետությունների դատարաններ պահանջում են թարգմանություն հենց դիմում տալու պահին:

Գործերի օրինակներ, երբ թարգմանություն չի պահանջվել, ներկայացված են ստորև.

- Ամստերդամի տարածքային դատարանի նախագահը գտել էր, որ արբիտրաժային վճռի և արբիտրաժային համաձայնության թարգմանության կարիք չկա, քանի որ այդ փաստաթղթերը «կազմված էին անգլերեն լեզվով, որին մենք բավականաչափ տիրապետում ենք՝ ամբողջական պատկերացում կազմելու համար¹¹»:

Diagnostics S.A.), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXXV (2010), էջեր 418-419 (Իտալիա, 182):

¹¹ *Նիդերլանդներ. Նախագահ, դատարան, Ամստերդամ, 12 հուլիսի 1984թ. (SPP (Middle East) Ltd. v. The Arab Republic of Egypt)*, Առևտրային արբիտրաժի տարեգիրք X (1985), էջեր 487-490 (Նիդերլանդներ, 10):

- Ցյուրիխի վճռաբեկ դատարանն ընդունեց որոշում, ըստ որի՝ կարիք չկա ներկայացնել արբիտրաժային վերապահումը պարունակող ամբողջ պայմանագրի թարգմանությունը. արբիտրաժային վերապահում պարունակող մասի թարգմանությունը լիովին բավարար է: Պետք է նշել, որ հավելվածների հետ միասին շինարարական պայմանագրերը կարող են կազմել 1,000 էջ¹²:

Գործերի օրինակներ, երբ պահանջվել է թարգմանություն, ներկայացված են ստորև.

- Արգենտինական դաշնային վճռաբեկ դատարանը կայացրել է որոշում, ըստ որի՝ թարգմանությունը՝ կատարված մասնավոր, այլ ոչ թե պաշտոնական կամ հավատարմագրված թարգմանչի կողմից, ով նաև լիցենզավորված չէր գործել կատարման դատավարական գործընթացի անցկացման վայրում, չի բավարարում Կոնվենցիայի պահանջները¹³:
- Ավստրիական գերագույն դատարանի մեկ գործում, որտեղ հայցվորը միայն տրամադրել էր Առևտրի միջազգային պալատի վճռի դիսպոզիտիվ մասի թարգմանությունը, վճռվեց, որ թերությունները վերացնելու նպատակով գործը պետք է

¹² *Շվեյցարիա*. Տարածաշրջանային դատարան, Ցյուրիխ, 14 փետրվարի 2003թ. և Բարձրագույն դատարան, Ցյուրիխ, 17 հուլիսի 2003թ. (*խրաչական կողմն ընդդեմ շվեյցարական կողմի*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXIX (2004), էջեր 819-833 (*Շվեյցարիա*, 37):

¹³ *Արգենտինա*. Դաշնային վերաքննիչ պալատ, Մար դել Պլատա քաղաք, 4 դեկտեմբերի 2009թ. (*Far Eastern Shipping Company v. Arhenpez S.A.*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXXV (2010), էջեր 318-320 (*Արգենտինա*, 3):

վերադարձվի առաջին ատյանի դատարան, որին տրվել էր կատարման դիմումը¹⁴:

III. ՓՈՒԼ II՝ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ (ՀՈԴՎԱԾ 5). ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Այս փուլը բնորոշվում է հետևյալ ընդհանուր սկզբունքներով՝

- Ըստ էության վերանայման բացառում,
- Պատասխանողի՝ սպառիչ հիմքերի ապացուցման բեռը,
- Ճանաչման և կատարման մերժման սպառիչ հիմքեր,
- Մերժման հիմքերի նեղ մեկնաբանություն,
- Անգամ մերժման հիմքերի առկայության դեպքում՝ ճանաչումը և կատարումը թույլատրելու համար սահմանափակ հայեցողական լիազորություն:

III.1. ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԲԱՑԱՌՈՒՄ

Դատարանն իրավասու չէ արբիտրաժային տրիբունալի վճռի փոխարեն ընդունել սեփական որոշում՝ անդրադառնալով վեճին ըստ էության, նույնիսկ եթե արբիտրները թույլ են տվել փաստի կամ օրենքի սխալ:

Կոնվենցիան չի թույլատրում ընթացակարգային խնդիրների վերաբերյալ *դե ֆակտո* բողոքարկում. փոխարենը՝ այն հիմքեր է տրամադրում ճանաչման կամ կատարման մերժման համար, եթե համապատասխան իրավասու մարմինը գտնում է, որ թույլ են

¹⁴ *Ավստրիա*. Գերագույն դատարան, 26 ապրիլի 2006թ. (*D SA v. W GmbH*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXXII (2007), էջեր 259-265 (Ավստրիա, 16):

տրվել մերժման մեկ կամ մի քանի հիմքերի խախտում, որոնցից շատերը ներառում են արդար դատաքննության խախտումներ:

III.2. ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻ՝ ՍՊԱՌԻՉ ՀԻՄՔԵՐԻ ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ԲԵՌԸ

Պատասխանողը կրում է ապացուցման բեռը և կարող է ընդդիմանալ վճռի ճանաչմանն ու կատարմանը միայն հոդված 5(1)-ով սահմանված հիմքերով: Այս հիմքերը նեղ սահմանմամբ նշված են Նյու-Յորքի Կոնվենցիայում: Դատարանը կարող է իր իսկ միջնորդությամբ մերժել ճանաչումն ու կատարումը հոդված 5(2)-ով սահմանված հիմքերով:

III.3. ՃԱՆԱՉՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՍՊԱՌԻՉ ՀԻՄՔԵՐԸ

Ամփոփելով՝ պետք է նշել, որ կողմը, որն ընդդիմանում է ճանաչմանն և կատարմանը, կարող է հիմնվել և պետք է ապացուցի ստորև նշված հինգ հիմքերից մեկը.

- (1) Կողմերի անգործունակության կամ արբիտրաժային համաձայնության անվավերության հիմքով արբիտրաժի համար վավեր համաձայնություն առկա չէ (հոդված 5(1)(ա)),
- (2) Պատասխանողին պատշաճ ծանուցում չի տրվել կամ պատասխանողը զրկված է եղել իր գործը պատշաճ ներկայացնելու հնարավորությունից (հոդված 5(1)(բ))՝ արդար դատաքննության խախտումների հետևանքով,

- (3) Վճիռը վերաբերում է արբիտրաժային համաձայնությամբ չստանալով կամ դրա շրջանակից դուրս գտնվող վեճին (հոդված 5(1)(գ)),
- (4) Արբիտրաժային տրիբունալի կազմը կամ արբիտրաժային ընթացակարգը չի համապատասխանել կողմերի համաձայնությանը կամ այդպիսի համաձայնության չկատարելը չի համապատասխանել այն պետության արբիտրաժային օրենքին, որտեղ տեղի է ունեցել արբիտրաժը (հոդված 5(1)(դ)),
- (5) Վճիռը դեռևս պարտադիր չէ կողմերի համար, չեղյալ է ճանաչվել կամ կասեցվել է այն պետության իրավասու մարմնի կողմից, որտեղ կամ որի օրենքների համաձայն կայացվել է վճիռը (հոդված 5(1)(ե)):

Սրանք են այն սպառիչ հիմքերը, որոնց վրա պատասխանողը կարող է հիմնվել:

Բացի այդ, դատարանը կարող է իր իսկ միջնորդությամբ հրաժարվել ճանաչումից և կատարումից ստորև նշված հիմքերով: Այնուամենայնիվ, պրակտիկայում պատասխանողը նաև վկայակոչում է հետևյալ հիմքերը.

- (6) Արբիտրաժի վեճի առարկան արբիտրելի չէր այն պետության իրավունքով, որտեղ հայցվում է կատարումը (հոդված 5(2)(ա)),
- (7) Վճռի կատարումը հակասում է պետության հանրային կարգին, որտեղ հայցվում է կատարումը (հոդված 5(2)(բ)):

III.4. ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՆԵՂ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով Կոնվենցիայի նպատակը, մասնավորապես, «միատեսակ դարձնելու այն չափանիշները, որոնց համաձայն՝ ... արբիտրաժային վճիռները կատարվում են անդամ երկրներում¹⁵» (տես՝ Գլուխ I-ի I.2-ում)՝ հեղինակները նպատակ են ունեցել, որ Կոնվենցիայի համաձայն ընդունված արբիտրաժային վճիռների ճանաչմանն ու կատարմանն ընդդիմանալու հիմքերը պետք է նեղ մեկնաբանվեն, իսկ կատարման մերժումը պետք է հաստատվի միայն լուրջ դեպքերում:

Դատարանների գերակշիռ մասը հոդված 5-ի հիմքերի նկատմամբ կիրառում է նշված նեղ մոտեցումը: Օրինակ՝ ԱՄՆ Երրորդ շրջանի Վերաքննիչ դատարանը 2003 թ. «*China Minmetals Materials Import & Export Co., Ltd. v. Chi Mei Corp.*» գործում նշել է.

«Համաձայն օտարերկրյա արբիտրաժային վճիռների կատարումը խրախուսող քաղաքականության՝ դատարանները խստորեն սահմանափակել են կատարման դեմ բերվող պաշտպանության հիմքերը և բավարարվել են Կոնվենցիայի հոդված 5-ում ամրագրված պաշտպանության հիմքերով՝ ընդհանուր առմամբ այդ բացառություններին տալով նեղ մեկնաբանությունը»:¹⁶

¹⁵ *Ամերիկայի Միացյալ Նահանգներ*. Միացյալ Նահանգներ Գերագույն դատարան, 17 հունիս 1974թ. (*Fritz Scherk v. Alberto-Culver Co.*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք I (1976), էջեր 203-204 (ԱՄՆ, 4):

¹⁶ *Ամերիկայի Միացյալ Նահանգներ*. ԱՄՆ Երրորդ Շրջանի վերաքննիչ դատարան, 26 հունիս 2003թ. (*China Minmetals Materials Import and Export Co., Ltd. v. Chi Mei Corporation*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXIX (2004), էջեր 1003-1025 (ԱՄՆ, 459):

Նմանապես, Նյու Բրանսվիքի դատարանի Թագուիու պալատը 2004 թ.-ին նշել է.

«Հոդված 5-ում տեղ գտած մերժման հիմքերին պետք է տրվի նեղ և սահմանափակ կառուցվածք»:¹⁷

Կոնվենցիան չի առնչվում այն խնդրի հետ, թե ինչ է պատահում, եթե արբիտրաժի կողմը տեղյակ է արբիտրաժային գործընթացի թերության մասին, սակայն չի առարկում դրա կապակցությամբ արբիտրաժի ընթացքում: Նույն խնդիրը ծագում է ընդդատության առարկությունների առնչությամբ, որոնք առաջին անգամ բարձրացվում են կատարման փուլում:

Արդար դատաքննության ընդհանուր սկզբունքը (երբեմն նաև անվանվում է որպես հրաժարում կամ էստոպել), որը վերաբերում է ընթացակարգային, ինչպես նաև նյութական խնդիրներին, պետք է կանխի կողմերի կողմից որոշակի փաստարկներ որպես պահուստ պահելը:¹⁸

¹⁷ *Կանադա*. Նյու Բրանսվիքի Թագուիի նստարանի դատարան, Գատավարական բաժին, Սելնթ Ջոնի դատական տարածաշրջան, 28 հուլիսի 2004թ. (*Adamas Management & Services Inc. v. Aurado Energy Inc.*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXX (2005), էջեր 479-487 (Կանադա, 18):

¹⁸ ՈՒՆԻՄՏՐԱԼ-ի միջազգային առևտրային արբիտրաժի մասին տիպային օրենքի 4-րդ հոդվածը 2006թ. փոփոխությամբ նախատեսում է, որ.

«Եթե կողմին հայտնի է, որ սույն Օրենքի որևէ դրույթ, որի կիրառումը կողմերը կարող են սահմանափակել, կամ արբիտրաժային համաձայնության որևէ պահանջ չի պահպանվել, և, այդուհանդերձ, կողմը շարունակում է արբիտրաժային վարույթը՝ չհայտնելով իր առարկությունները այդպիսի չպահպանման վերաբերյալ առանց անհարկի ձգձգման, կամ այդպիսի առարկություն ներկայացնելու համար կոնկրետ ժամկետ սահմանված լինելու

Օրինակ.

- Ռուսաստանի Դաշնության Հյուսիսարևմտյան շրջանի դաշնային արբիտրաժային (առևտրային) դատարանը համարեց, որ արբիտրաժային ընդդատության բացակայության վերաբերյալ առարկությունը, որը չի բարձրացվել արբիտրաժի ընթացքում, չի կարող առաջին անգամ բարձրացվել կատարման վարույթում,¹⁹
- Իսպանիայի Գերագույն դատարանը նշել է, որ ընկալելի չէ այն, որ պատասխանողը «մերժում է արբիտրաժային համաձայնությունն այն հիմքերով, որոնք կարող էին բարձրացվել արբիտրաժի ընթացքում»:²⁰

Այս սկզբունքը կիրառվում է նաև որոշ դատարանների կողմից, երբ կողմը չի բարձրաձայնում հիմքի առկայության մասին արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման ընթացակարգի ընթացքում.

- Բեռլինի վերաքննիչ դատարանը գտել է, որ պատասխանողը (Գերմանիա) չի կարող ապավինել Նյու-Յորքի կոնվենցիայով

դեպքում՝ այդ ժամկետի ընթացքում, *սպա համարվում է, որ փյալ կողմը հրաժարվել է առարկություն ներկայացնելու իր իրավունքից:* (Ընդգծումն ավելացվել է:)

¹⁹ Ռուսաստանի Դաշնություն. Դաշնային Արբիտրաժի (առևտրային) դատարան, հյուսիսարևմտյան տարածաշրջան, 9 դեկտեմբերի 2004թ. (*Dana Feed A/S v. OOO Arctic Salmon*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXXIII (2008), էջեր 658-665 (Ռուսաստանի Դաշնություն, 16):

²⁰ *Իսպանիա*. Գերագույն դատարան, Քաղաքացիական դատարան, II ապրիլի 2000թ. (*Union Générale de Cinéma, SA v. X Y Z Desarrollos, SA*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXXII (2007), էջեր 525-531 (Իսպանիա, 50):

սահմանված մերժման հիմքերին, քանի որ չէր բարձրաձայնել դրանց մասին Ուկրաինայում տեղի ունեցած չեղարկման վարույթի շրջանակներում՝ Ուկրաինայի օրենքով սահմանված երեք ամսվա ընթացքում: Դատարանը պատճառաբանել է, որ չնայած Կոնվենցիան էստոպել չի նախատեսում, կանխարգելման (*Präklusion*) դրույթը, որը գերմանական իրավունքում սահմանված է ներպետական արբիտրաժային վճիռների համար, կիրառելի է նաև օտարերկրյա արբիտրաժային վճիռների կատարման նկատմամբ²¹:

III.5. ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊԲՈՒՄ՝ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՀԱՅՑՑՈՂԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ

Դատարանները սովորաբար մերժում են կատարումը, երբ գտնում են, որ համաձայն Նյու-Յորքի Կոնվենցիայի առկա է մերժման հիմք:

Այնուամենայնիվ, որոշ դատարաններ գտնում են, որ լիազորված են թույլատրելու կատարումը նույնիսկ այն դեպքում, երբ ապացուցվել է կատարման համար կոնվենցիոն մերժման հիմքի առկայությունը: Դատարաններն ընդհանրապես այսպես են վարվում, երբ մերժման հիմքը վերաբերում է արբիտրաժային վարույթի կանոնների փոքր խախտմանը, այսինքն կիրառվում է *de minimis* կանոնը, կամ երբ պատասխանողն արբիտրաժի

²¹ *Գերմանիա*. Գերագույն դատարան, Բեռլին, 17 ապրիլի 2008թ. (*Գնորդն ընդդեմ վաճառողի*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXXIV (2009), էջեր 510-515 (*Գերմանիա*, 109):

ընթացքում մերժման այդ հիմքը չի վկայակոչել²²: (Տես՝ նաև սույն Գլխում նկարագրված գործերը՝ վերը նշված III.4-ում):

Այս դատարանները հիմնվում են հողված 5(1)-ի անգլերեն տարբերակի ձևակերպման վրա, որը սկսվում է «Արբիտրաժային վճռի ճանաչումը և կատարումը *կարող են* մերժվել ... » բառերով: Այս ձևակերպումը նաև առկա է Կոնվենցիայի հինգ պաշտոնական տեքստերից երեքում, մասնավորապես՝ չինարեն, ռուսերեն և իսպաներեն տեքստերում: Այնուամենայնիվ, ֆրանսերեն տեքստը նմանատիպ արտահայտություն չի պարունակում և միայն սահմանում է, որ ճանաչումը և կատարումը «*seront refusées*», այսինքն՝ պետք է մերժվեն:

²² *Հոնկոնգ*. Հոնկոնգի Գերագույն դատարան, Բարձրագույն դատարան, 15 հունվարի 1993թ. (*Paklito Investment Ltd. v. Klockner East Asia Ltd.*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XIX (1994), էջեր 664-674 (Հոնկոնգ, 6) և Հոնկոնգի Գերագույն դատարան, Բարձրագույն դատարան, 16 դեկտեմբերի 1994թ. (*Nanjing Cereals, Oils and Foodstuffs Import & Export Corporation v. Luckmate Commodities Trading Ltd*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXI (1996), էջեր 542-545 (Հոնկոնգ, 9),

Բրիտանական Վիրջինյան կղզիներ. Վերաքննիչ դատարան, 18 հունիսի 2008թ. (*IPOC International Growth Fund Limited v. LV Finance Group Limited*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXXIII (2008), էջեր 408-432 (Բրիտանական Վիրջինյան կղզիներ, 1),

Միացյալ Թագավորություն. Բարձրագույն դատարան, Թագուհու պալատական բաժանմունք (Առևտրային դատարան), 20 հունվարի 1997թ. (*China Agribusiness Development Corporation v. Balli Trading*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXIV (1999), էջեր 732-738 (Միացյալ Թագավորություն, 52):

IV. ՊԱՏԱՄԽԱՆՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԱՊԱՅՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ (ՀՈԴՎԱԾ 5(1))

IV.1. ՀԻՄՔ 1. ԿՈՂՄԻ ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅՈՒՆԸ (ՀՈԴՎԱԾ 5(1)(ա))

«2-րդ հոդվածում նշված համաձայնության կողմերը նրանց նկատմամբ կիրառվող իրավունքի համաձայն որևէ չափով անգործունակ են եղել, կամ այդ համաձայնությունն անվավեր է համաձայն այն իրավունքի, որին Կողմերը ենթարկել են այդ համաձայնությունը, իսկ այդպիսի ցուցումի բացակայության դեպքում, համաձայն այն երկրի իրավունքի, որտեղ կայացվել է որոշումը»:

IV.1.1. Կողմի անգործունակությունը

Այս հիմքի համաձայն ծագող հարցերի շրջանակը ներառում է իրավական պաշտպանության մեխանիզմներ՝ հիմնված մտավոր գործունակության բացակայության, ֆիզիկական անգործունակության, իրավաբանական անձի անունից հանդես գալու լիազորությունների բացակայության կամ պայմանագիր ստորագրելու համար սահմանված տարիքից ցածր լինելու (անչափահաս) փաստը:

Բացի այդ, «անգործունակություն» տերմինը հոդված 5(1)(ա)-ի համատեքստում մեկնաբանվում է «պայմանագիր կնքելու իրավունքի բացակայություն»: Օրինակ՝ սա կարող է առաջանալ այն դեպքերում, երբ կիրառելի իրավունքն արգելում է կողմին,

ինչպես օրինակ՝ պետական ձեռնարկությանը, կնքել արքիտրաժային համաձայնություն որոշակի տեսակի վեճերի համար: Օրինակ՝ որոշ երկրներում պետական ձեռնարկությանը կարող է օրենքով արգելվել արքիտրաժային համաձայնություն կնքել պաշտպանության ոլորտին վերաբերող պայմանագրերի առնչությամբ (տես՝ Գլուխ II-ի IV.6.2-ում՝ որպես օրինակ հղում կատարելով շվեյցարական միջազգային մասնավոր իրավունքի մասին օրենքին):²³

Պետք է նշել, որ պետությունները, պետական ձեռնարկությունը և այլ հանրային մարմիններ չեն բացառվում Կոնվենցիայի շրջանակներից զուտ իրենց կարգավիճակի պատճառով: Կոնվենցիայի հոդված 1(1)-ում հիշատակված «ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձինք» արտահայտությունը ընդհանրապես համարվում է, որ ներառում է հանրային իրավաբանական անձանց առևտրային պայմանագրային հարաբերությունները մասնավոր կողմերի հետ: Դատարանները գրեթե միշտ մերժում են պետության կողմից արքիտրաժային համաձայնության կատարման և արքիտրաժային վճռի ճանաչման և կատարման դեմ հայցվող ինքնիշխանության անձեռնմխելիության պաշտպանությունը՝ հիմնվելով սահմանափակող անձեռնմխելիության տեսության և

²³ Շվեյցարիայի «Միջազգային մասնավոր իրավունքի» օրենքի 177-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ.

«Եթե արքիտրաժային համաձայնության մի կողմը պետություն է կամ պետությանը ընթարկվող ձեռնարկություն կամ վերիջինիս կողմից կառավարվող կազմակերպություն, այն չի կարող հղում կատարել իր սեփական օրենքին՝ վիճարկելու վեճի արքիտրելիությունը կամ իր՝ արքիտրաժի իրավասությանը ենթակա լինելու կարողությունը»:

անձեռնմխելիությունից հրաժարվելու վրա: Նրանք նաև հաճախ ընդգծում են *acta de jure gestionis* և *acta de jure imperii* տարբերությունը կամ ապավինում են *pacta sunt servanda* և *ordre public réellement international* ստեղծմանը: Այս տարբերությունը որոշ դեպքերում արդիական է նաև կատարման հետ կապված:

Օրինակ՝ Հոնկոնգի 2010թ.-ի «*FG Hemisphere*»-ի դատական գործը, որտեղ հայցվում էր Չինաստանի պետական ձեռնարկության (CSOE) ակտիվների դեմ երկու օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչում և կատարում, մասնավորապես «CSOE»-ի կողմից Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությանը տրամադրվող մուտքի վճարների կապակցությամբ, որոնք առնչվում էին որոշակի հանքային իրավունքներին («CSOE»-ի ակտիվները)²⁴: Չինաստանի կառավարությունը պնդում էր, որ այն ներկայում կիրառում և անցյալում հետևողականորեն կիրառել է բացարձակ ինքնիշխանության անձեռնմխելիության սկզբունքը, և այդպիսով «CSOE»-ի ակտիվները անձեռնմխելի են հարկադիր կատարման համար: Այնուամենայնիվ, Վերաքննիչ դատարանը վճռեց, որ Հոնկոնգի դատարանները պետք է կիրառեն սահմանափակ անձեռնմխելիության մոտեցումը և որպես հետևանք «CSOE»-ի ակտիվների այն մասը, որն ինքնիշխանության նպատակներին չի վերաբերում, հարկադիր կատարումից անձեռնմխելի չէ:

²⁴ Հոնկոնգ. Վճռաբեկ դատարան, 10 փետրվարի 2010թ. և 5 մայիսի 2010թ. (*FG Hemisphere Associates LLC v. Democratic Republic of the Congo, et al.*), CACV 373/2008 & CACV 43/2009 (10 փետրվար 2010թ.), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXXV (2010), էջեր 392-397 (Հոնկոնգ, 24): Սույն աշխատությունը կազմելու ժամանակ, այս վճռի բողոքարկումը Հոնկոնգի Վերջնական վճռաբեկ դատարանում դեռ ընթացքի մեջ էր:

Կոնվենցիան չի սահմանում, թե ինչպես կարելի է բնորոշել կողմի գործունակության նկատմամբ կիրառվող իրավունքը («նրանց նկատմամբ կիրառվող օրենքը»): Հետևաբար, այս իրավունքը պետք է որոշվի այն դատարանի միջազգային մասնավոր իրավունքի կանոնների կիրառությամբ, որտեղ հայցվում են ճանաչումը և կատարումը, այն է՝ ֆիզիկական անձի համար սովորաբար դոմիցիլի իրավունքը, իսկ կազմակերպության համար՝ գրացման վայրի իրավունքը:

IV.1.2. Արբիտրաժային համաձայնության անվավերությունը

Հոդված 5(1)(ա)-ը մերժման համար հիմք է սահմանում այն դեպքում, երբ «2-րդ հոդվածում նշված» արբիտրաժային համաձայնությունը «անվավեր է համաձայն այն իրավունքի, որին Կողմերը ենթարկել են այդ համաձայնությունը, իսկ այդպիսի ցուցումի բացակայության դեպքում, ըստ այն երկրի իրավունքի, որտեղ կայացվել է արբիտրաժային վճիռը»: Պրակտիկայում մերժման այս հիմքը հաճախ է վկայակոչվում:

Այս հիմքի ներքո պատասխանողները հաճախ պնդում են, որ արբիտրաժային համաձայնությունը վավեր չէ ձևի նկատմամբ առաջադրվող պահանջների տեսանկյունից, քանի որ այն «գրավոր եղանակով» չի կնքվել, ինչպես պահանջվում է հոդված 2(2)-ով (տես՝ Գլուխ II-ի IV.2-ում): Որպես կատարումը մերժելու համար հարակից հիմք վկայակոչվում է այն, որ Կոնվենցիայի իմաստով արբիտրաժային համաձայնությունն առկա չէ: Հաճախ հանդիպող իրավական պաշտպանության մյուս օրինակները, որոնք կարող են վկայակոչվել այս հիմքի ներքո, ներառում են անօրինականության, ճնշման կամ խարդախության պահանջները:

Ժամանակ առ ժամանակ պատասխանողը կարող է ապավինել սույն հիմքին՝ վիճարկելով, որ ինքը հանդիսանում է համապատասխան արբիտրաժային համաձայնության կողմ: Այս հարցը որոշվում է դատարանի կողմից՝ վերանայելով գործի փաստերը՝ անկախ արբիտրների կողմից ընդունված որոշումից: Օրինակ՝ «*Sarhank Group*»-ի գործի շրջանակներում պատասխանողը պնդում էր, որ կողմերը ստորագրված գրավոր արբիտրաժային համաձայնություն չեն կնքել²⁵: Միացյալ Նահանգների Երկրորդ շրջանի Վերաքննիչ դատարանի մի գործում դատարանը վճռեց, որ տարածքային դատարանը սխալմամբ ապավինել էր արբիտրների վճռի այն եզրակացությանը, որ եզիպտական օրենքի համաձայն արբիտրաժային վերապահումը պարտադիր է պատասխանողի համար: Փոխարենը, արբիտրաժային վճռի կատարումը դիտարկելիս՝ տարածքային դատարանը պիտի կիրառեր այս հարցի վերաբերյալ Միացյալ Նահանգների դաշնային օրենքը: Դատարանն ուստի վերադարձրեց գործը տարածքային դատարանին, որպեսզի այն «փաստական կազմով պարզի, թե արդյոք [պատասխանողը] համաձայնել էր արբիտրաժին՝ ամերիկյան պայմանագրային իրավունքի կամ գործակալության իրավունքի... ցանկացած... հիմքի հիման վրա»:

Վերջերս վճռված *Dollah Real Estate & Tourism Holding Co v. Pakistan* գործում անգլիական գերագույն դատարանը պարզաբանեց իրավասության-իրավասություն սկզբունքի

²⁵ *Ամերիկայի Միացյալ Նահանգներ*. ԱՄՆ վճռաբեկ դատարան, Երկրորդ շրջանի դատարան, 14 ապրիլի 2005թ. (*Sarhank Group v. Oracle Corporation*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXX (2005), էջեր 1158-1164 (ԱՄՆ, 523):

կիրառման շրջանակն Անգլիայում:²⁶ Գերագույն դատարանի որոշմամբ թեև արբիտրաժային տրիբունալն իրավունք ունի որոշել իր իրավասությունն որպես նախնական հարց, Նյու-Յորքի Կոնվենցիայի համաձայն ներկայացված կատարման դիմումի դեպքում, որտեղ առարկություն է բարձրացվում իրավասության վերաբերյալ, դատարանն իրավունք ունի ամբողջովին քննել փաստերը և հարցերը՝ որոշելու իրավասության խնդիրը:

Անգլիայի Գերագույն դատարանը դիտարկել էր աշխարհի տարբեր երկրներում իրավասության-իրավասություն սկզբունքի կիրառման առանձնահատկությունները: Իր որոշման պարագրաֆ 25-ում դատարանը նշել էր, որ «յուրաքանչյուր երկիր ... որոշակի ձևով է իրականացնում արբիտրի իրավասության որոշման դատական վերանայման գործընթացը: Ի վերջո պայմանագիրը չի կարող արբիտրաժային մարմինն որևէ լիազորություններով օժտել ... եթե կողմերը երբեք չեն կնքել այն» (հղում կատարելով ամերիկյան *China Minmetals* գործին, տես՝ ծանոթագրությունը 16):

Այսպիսով, այն, որ տրիբունալը կարող է որոշել իր իրավասությունը, չի օժտում վերջինիս այդ հարցի շուրջ բացառիկ իրավասությամբ: Հարկադիր կատարման դատարանը, որը չի գտնվում արբիտրաժի վայրում, իրավասու է վերանայել տրիբունալի իրավասությունը:

Թեև դատարանը (Լորդ Կոլինզի նախագահությամբ) ընդունեց, որ միջազգայնորեն միտում է նկատվում սահմանափակելու դատարանի՝ արբիտրաժային տրիբունալի կողմից որոշված հարցերի վերանայման հնարավորությունը՝ շեշտելով նաև Նյու-Յորքի Կոնվենցիայի կատարմանը միտված քաղաքականությունը,

²⁶ *Միացյալ Թագավորություն*. [2009] EWCA Civ 755, [2010] 2 W.L.R. 805 (CA (Civ Div)):

դատարանը նաև գտավ, որ նշվածները գերակայություն չունեն: Նա վճռեց, որ համաձայն Անգլիայի 1996թ.-ի արբիտրաժային օրենքի (մաս 30) տրիբունալն իրավունք ունի որպես նախնական խնդիր որոշելու իր իրավասության հարցը: Սակայն, եթե հարցը դատարանի քննությանն է հանձնվում, ապա դատարանը պարտավոր է անկախ քննություն իրականացնել, այլ ոչ թե պարզապես քննել արբիտրների որոշումը: Գերագույն դատարանը հաշվի առավ, որ դիրքորոշումը չի տարբերվում Ֆրանսիայում կիրառվող մոտեցումից, որտեղ կայացվել էր արբիտրաժային վճիռը: Անգլիայի գերագույն դատարանի որոշումից կարճ ժամանակ անց Ֆրանսիայի Վերաքննիչ դատարանը մերժեց քննվող երեք արբիտրաժային վճիռները չեղյալ ճանաչելու մասին դիմումը՝ եզրակացնելով, որ արբիտրաժային դատարանի որոշումը վերջինիս իրավասության վերաբերյալ ճիշտ էր²⁷: Թեև դատարանը տեսակետ չարտահայտեց արբիտրաժային տրիբունալի իրավասության դատական քննության շրջանակի մասին, այն ամբողջովին քննեց տրիբունալի որոշումը:

(Տես՝ նաև Գլուխ II-ի III.2՝ արբիտրաժ ուղղորդելու վերաբերյալ դիմումը քննող դատարանի քննության ենթակա հարցերի շրջանակի վերաբերյալ):

²⁷ *Ֆրանսիա. Վերաքննիչ դատարան, 17 փետրվարի 2011թ. (Gouvernement du Pakistan – Ministère des Affaires Religieuses v. Dallah Real Estate and Tourism Holding Company)*:

IV.2. ՀԻՄՔ 2. ԾԱՆՈՒՑՄԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ, ԱՐԴԱՐ
ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ (ՀՈԴՎԱԾ 5(1)(Բ))

«Կողմը, որի դեմ որոշում է կայացվել արբիտրի նշանակման մասին կամ արբիտրաժային քննության մասին, կամ այլ պատճառներով չի կարողացել ներկայացնել իր բացատրությունները:»

Հոդված 5(1)(բ)-ն սահմանում է մերժման այն հիմքը, որ կողմը, ում դեմ վկայակոչվում է արբիտրաժային վճիռը, չի ունեցել որևէ հնարավորություն կամ որևէ խելամիտ հնարավորություն ներկայացնելու իր բացատրությունները, քանի որ (i) նա պատշաճ կերպով չի տեղեկացվել արբիտրի նշանակման մասին կամ արբիտրաժային քննության մասին, կամ (ii) այլ պատճառներով չի կարողացել ներկայացնել իր բացատրությունները:

Այնուամենայնիվ, մերժման այս հիմքը ուղղված չէ նրան, որ ընթացակարգային հարցերի վերաբերյալ ներպետական դատարանը արբիտրաժային տրիբունալի ընդունած որոշումներից տարբերվող որոշում ընդունի: Պետք է ապացուցվի, որ կողմը, որն ընդդիմանում է հարկադիր կատարմանը, ինչ-որ կերպով զրկվել է իր բացատրությունները ներկայացնելու և արբիտրաժային դատարանի կողմից քննվելու իր իրավունքից:

IV.2. 1. Արդար դատաքննության իրավունքը

Հոդված 5(1)(բ)-ը պահանջում է, որ կողմերն ապահովվեն արդար դատաքննության իրավունքով՝ երաշխավորելու

արդարության նվազագույն պահանջները: Միացյալ Նահանգների յոթերորդ շրջանի վերաքննիչ դատարանը հետևյալ ձևով է բնութագրում արդարության նվազագույն չափանիշները, որոնք ներառում են «պատշաճ ծանուցում, ապացույցների վերաբերյալ դատաքննություն և արբիտրի կողմից անկողմնակալ որոշում»: Այսպիսով, արբիտրներն օժտված են արբիտրաժը վարելու համար գործողությունների լայն հայեցողությամբ և այլն իրավունքներով:

IV.2.2. Ծանուցման բացակայություն

Գործնականում կողմը հազվադեպ չի ծանուցվում արբիտրի նշանակման կամ արբիտրաժային վարույթի մասին: Եթե տվյալ կողմն ակտիվորեն մասնակցել է արբիտրաժին, ապա հետագայում նրա համար անհնար կլինի բողոքարկել ծանուցման ոչ պատշաճ լինելը:

Մյուս կողմից, եթե պատասխանողը չի մասնակցում գործընթացին, ծանուցման ապացույցին պետք է լուրջ ուշադրություն դարձնել արբիտրաժի բոլոր փուլերում:

Ծանուցման բացակայությունը կարող է լինել նաև, երբ, օրինակ, մի կողմը առանց մյուս կողմին տեղեկացնելու փոխել է իր հասցեն, կամ երբ մի կողմը գտնվում է այնպիսի վայրում, որտեղ հուսալի կերպով չի աշխատում ֆաքսը կամ հաղորդակցության այլ միջոցները: Նման դեպքերում արբիտրներն և հայցվոր կողմը պետք է կատարեն ողջամտորեն ամեն հնարավորը՝ պատասխանողին տեղեկացնելու արբիտրաժի գոյության և արբիտրաժային դատարանի նշանակման մասին, և արձանագրելու այս ուղղությամբ գործադրած ջանքերի վերաբերյալ անկախ ապացույցներ: Հակառակ դեպքում՝ արբիտրաժային դատարանի

կողմից ընդունված վճռի հարկադիր կատարումը կարող է մերժվել: Նման մեկ գործում Շվեդիայի Գերագույն դատարանը մերժել էր հարկադիր կատարումը՝ գտնելով, որ արբիտրներն արհամարհել էին այն փաստը, որ շվեդական կողմի նախկին հասցեին ուղարկված հաղորդագրություններն առանց առաքվելու հետ են վերադարձվել²⁸:

Այնուամենայնիվ, գործին չմասնակցելը կարող է պարզապես լինել տվյալ կողմի ընտրությունը: Եթե պատասխանողը ստանում է արբիտրաժի մասին ծանուցումը, սակայն չի մասնակցում կամ հրաժարվում է մասնակցել արբիտրաժին, ապա դատարանները համարում են, որ հոդված 5(1)(բ)-ով սահմանված պատշաճ ընթացակարգի խախտում տեղի չի ունեցել: Եթե կողմը ընտրում է արբիտրաժին չմասնակցելու ճանապարհը, ապա դա չի կարող հիմք լինել՝ մերժելու արբիտրաժային վճռի կատարումը:

IV.2.3. Պատշաճ ընթացակարգի խախտումներ. «չի կարողացել ներկայացնել իր բացատրությունները»

Միացյալ Նահանգների «*Iran Aircraft Industries v. Avco Corp.*» հայտնի գործն օրինակ է այն իրավիճակի, երբ արբիտրաժային վճռի ճանաչումը և կատարումը մերժվել են այն հիմքով, որ պատասխանողը զրկված է եղել իր բացատրությունները ներկայացնելու հնարավորությունից²⁹: Արբիտրաժային դատարանի

²⁸ *Շվեդիա. Högsta Domstolen*, 16 ապրիլի 2010թ. (*Lenmornioprojekt OAO v. Arne Larsson & Partner Leasing Aktiebolag*), Տարեգիրք XXXV (2010), էջեր 456-457 (Շվեդիա, 7):

²⁹ *Միացյալ Նահանգներ. Երկրորդ շրջանի վերաքննիչ դատարան*, 24 նոյեմբերի 1992թ. (*Iran Aircraft Industries and Iran Helicopter Support and Renewal Company v. Avco Corporation*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք, XVIII (1993), էջեր 596-605 (ԱՄՆ, 143):

նախագահողի հետ (ով հետագայում փոխարինվեց) խորհրդակցելուց հետո պատասխանողը նախագահողի խորհրդով որոշեց չներկայացնել որոշակի ապրանքագրեր՝ հիմնավորելու մասնագիտացված հաշվապահական ընկերության կողմից կատարված վնասների վերաբերյալ վերլուծությունը: Պատասխանողը հիմնվել էր միայն իր տվյալների վրա, սակայն, նշել էր, որ անհրաժեշտության դեպքում պատրաստ էր տրամադրել լրացուցիչ ապացույցներ: Արբիտրաժային դատարանը վերջնականորեն մերժեց վնասների վերաբերյալ պահանջը՝ հիմք ընդունելով ապացույցների անբավարար լինելը: Միացյալ Նահանգների Երկրորդ շրջանի վերաքննիչ դատարանը մերժեց վճռի ճանաչումն ու կատարումը՝ հիմք ընդունելով այն, որ պարտվող կողմը հնարավորություն չի ունեցել ներկայացնելու վնասների վերաբերյալ իր բացատրությունները:

Մի շարք արբիտրաժային վճիռների ճանաչումը և կատարումը մերժվել է, քանի որ արբիտրները տվյալ հանգամանքներում արդար չեն գործել: Նմանատիպ օրինակները են հետևյալները.

- Նեապոլի վերաքննիչ դատարանը մերժել է ավստրիական արբիտրաժային վճռի կատարումը՝ հիմք ընդունելով այն, որ իտալական պատասխանողին Վիեննայում արբիտրաժային նիստին մասնակցելու համար դրանից մեկ ամիս առաջ ծանուցելը բավարար չէր, քանի որ այդ ժամանակ այն պատասխանողի գտնվելու վայրում լուրջ երկրաշարժ էր տեղի ունեցել³⁰,

³⁰ *Իդալիա*. Նեապոլի վերաքննիչ դատարանը (Սալերնոյի բաժին), 18 մայիսի 1982թ. (*Bauer & Grossmann OHG v. Fratelli Cerrone Alfredo e Raffaele*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք X (1985), էջեր 461-462 (Իտալիա, 70):

- Անգլիայի վարաքննիչ դատարանն որոշում էր ընդունել մերժելու հնդկական արքիտրաժային վճռի կատարումը՝ հիմնավորելով, որ կողմերից մեկի լուրջ հիվանդությունն անհնար էր դարձրել նրա մասնակցությունն արքիտրաժին, որն այդ կողմն ապարդյուն կերպով վկայակոչել էր արքիտրաժային նիստի ժամանակ՝ հայցելով նիստի հետաձգում: Դա հիմք կարող էր հանդիսանալ ակնկալելու, որ այդ կողմը չի մասնակցելու արքիտրաժային նիստերին, այդ թվում՝ չի ներկայացնելու հայցի պատասխան³¹,
- Հոնկոնգի Բարձր դատարանը մերժել է արքիտրաժային վճռի կատարումը՝ պնդելով, որ Չինաստանի Միջազգային տնտեսական և առևտրային արքիտրաժի հանձնաժողովը պատասխանողին հնարավորություն չի տվել մեկնաբանելու արքիտրաժային դատարանի կողմից նշանակված մասնագետի գեկույցները³²:

Պատշաճ ընթացակարգի բացակայության վերաբերյալ չընդունված առարկությունների օրինակներ են հետևյալ դեպքերը.

- Արբիտրը հրաժարվում է փոփոխել լսումների ժամանակացույցը՝ ի հարմարություն այն վկայի, ով հրավիրվել է վճռի հարկադիր կատարումն առարկող կողմի կողմից,

³¹ Միացյալ Թագավորություն. Վերաքննիչ դատարան (Բաղաքացիական պալատ), 21 փետրվարի 2006թ. և 8 մարտի 2006թ. (*Ajay Kanoria, et al. v. Tony Francis Guinness*), Առևտրային արքիտրաժի տարեգիրք XXXI (2006), էջեր 943-954 (Միացյալ Թագավորություն, 73):

³² Հոնկոնգ. Հոնկոնգի Վճռաբեկ դատարան, Բարձր դատարանը, 15 հունվարի 1993թ. (*Paklito Investment Ltd. v. Klockner East Asia Ltd.*), Առևտրային արքիտրաժի տարեգիրք XIX (1994), էջեր 664-674 (Հոնկոնգ, 6):

- Տրիբունալը հրաժարվում է հետաձգել լսումները և մերժում է լրացուցիչ բացահայտումները,
- Տրիբունալը մերժում է լսումների հավելյալ հետաձգումը և արբիտրաժի դադարեցումը սնանկության գործընթացի պատճառով,
- Տրիբունալը կայացնում է որոշում ենթադրությունների հիման վրա և ապացուցման բեռի բաշխման վերաբերյալ,
- Տրիբունալը ենթադրաբար վճիռ կայացնելիս հիմնվում է իրավական նոր տեսությունների վրա, որոնք նախկինում չեն քննարկվել,
- Տրիբունալը սահմանափակում է վկաների խաչաձև հարցաքննումը,
- Կողմերը չեն ներկայանում արբիտրաժային նիստին՝ վախենալով բանտարկվելուց արբիտրաժի գտնվելու վայրում, և
- Ընկերության ներկայացուցիչն անկարող է ներկայանալ արբիտրաժային նիստին մուտքի վիզայի մերժման պատճառով:

IV.3. ՀԻՄՔ 3. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ
ՉՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԿԱՄ ԴՐԱ ՇՐՋԱՆԱԿԻՑ ԴՈՒՐՍ
(Հոդված 5(1)(4))

«Նշված վճիռը կայացվել է այն վեճով, որը նախատեսված չէ կամ չի ընկնում արբիտրաժին դիմելու հնարավորության շրջանակներում, կամ վճիռը պարունակում այնպիսի հարցերով որոշումներ, որոնք ընկնում են արբիտրաժի ենթակա շրջանակից դուրս՝ պայմանով, սակայն, որ եթե արբիտրաժին ենթակա հարցերով որոշումները կարող են անջատվել արբիտրաժին ոչ ենթակա որոշումներից, ապա արբիտրաժային

վճռի այն մասը, որը որոշումներ է պարունակում արբիտրաժին ենթակա հարցերով, կարող է ճանաչել և կատարել:»

Համաձայն հոդված 5(1)(գ)-ի՝ արբիտրաժային վճռի ճանաչման և կատարման մերժման հիմք են հանդիսանում, երբ.

- Արբիտրաժային վճիռը կայացվել է այն վեճով, որը նախատեսված չէ կամ չի համապատասխանում արբիտրաժային համաձայնությանը կամ արբիտրաժային վերապահման հետ,
- Արբիտրաժային վճիռը պարունակում է որոշումներ այնպիսի հարցերի շուրջ, որոնք դուրս են արբիտրաժային համաձայնության կամ պայմանագրի արբիտրաժային վերապահման շրջանակից:

Հոդված 5(1)(գ)-ով նախատեսված հիմքերը մարմնավորում են այն սկզբունքը, որ արբիտրաժային դատարանն իրավասություն ունի որոշումներ կայացնելու միայն այն խնդիրների շուրջ, որոնց վերաբերյալ կողմերն իրենց համաձայնությունն են տվել:

Պարզելու համար, թե ինչ հարցեր են կողմերը վերապահել արբիտրաժային դատարանի իրավասությանը, պետք է ուշադրություն դարձնել արբիտրաժային համաձայնությանը և կողմերի կողմից արբիտրաժային դատարան ներկայացրած հայցադիմումներին: Արբիտրաժային համաձայնության տեքստը, որն արտահայտում է, թե կողմերը որ հարցերի շուրջ են համաձայնության եկել արբիտրաժային դատարանի իրավասությանը վերապահելու առումով, խիստ կարևոր է.

դիտարկվող հարցերը պետք է մնան համաձայնության շրջանակներում:

Արբիտրաժային կենտրոնների կողմից հրատարակված տիպային արբիտրաժային վերապահումներն այնպես են մշակված, որ արբիտրաժային դատարանն ունենա ընդարձակ իրավասություն՝ որոշելու այն բոլոր վեճերը, որոնք ծագում են կամ կապ ունեն կողմերի կնքած պայմանագրերի հետ: Պահանջների հաստատությունն և նման հարցերը սովորաբար թույլատրելիության առարկա են և ոչ թե իրավասության և հետևապես ենթակա չեն դատարանների կողմից վերանայման (տես նաև՝ Գլուխ II-ի III.1 կետ արբիտրների «իրավասության-իրավասության» սկզբունքի և դատարանի կողմից արբիտրաժային համաձայնությունների վերանայման վերաբերյալ):

Դատարանն իր հայեցողությամբ իրավունք ունի վճռի մասնակի կատարման որոշում կայացնել, եթե վճիռը միայն մասնակի է դուրս գալիս արբիտրաժային դատարանի իրավասության շրջանակից՝ պայմանով, որ արբիտրաժային դատարանի իրավասության տակ ընկնող հատվածը կարող է տարանջատվել: Սրա մասին խոսվում է հոդված 5(1)(գ)-ի վերջում («պայմանով, սակայն, որ եթե արբիտրաժին ենթակա հարցերով որոշումները կարող են անջատվել արբիտրաժին ոչ ենթակա որոշումներից, ապա արբիտրաժային վճռի այն մասը, որը որոշումներ է պարունակում արբիտրաժին ենթակա հարցերով, կարող է ճանաչել և կատարել:»)

IV.4. ՀԻՄՔ 4. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՏՐԻԲՈՒՆԱԼԻ
ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՄ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ
ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԽԱՆՏՈՒՄՆԵՐ (ՀՈԴՎԱԾ 5(1)(Դ))

«Արբիտրաժային տրիբունալի (մարմնի) կազմավորումը կամ արբիտրաժային վարույթը չեն համապատասխանել Կողմերի համաձայնությանը, կամ դրա բացակայության դեպքում, չեն համապատասխանել այն երկրի իրավունքին, որտեղ տեղի է ունեցել արբիտրաժը»:

Հոդված 5(1)(դ)-ն պարունակում է խախտումների երկու հիմնական տեսակ, որոնք վերաբերում են՝

- արբիտրաժային տրիբունալի կազմին,
- արբիտրաժային վարույթին:

IV.4.1. Արբիտրաժային տրիբունալի կազմավորումը

Հոդված 5(1)(դ)-ով սահմանված առաջին դեպքը կիրառվում է, եթե մի կողմը գրկվել է արբիտր նշանակելու իր իրավունքից կամ իր վեճն արբիտրաժային տրիբունալի կողմից լուծելու իրավունքից, որի կազմը համապատասխանում է կողմերի համաձայնությանը:

Այն դեպքերը, երբ մի կողմը հրաժարվում է արբիտր նշանակելուց, և արբիտրը նշանակվում է դատարանի կողմից, կամ երբ արբիտրները բացարկի արդյունքում հեռացվում են և փոխարինվում են կողմերի կողմից ընտրված կիրառվող կանոնների և կիրառվող իրավունքի համաձայն, հաջողության չեն կարող հասնել սույն հիմքի շրջանակներում:

Հոդված 5(1)(դ)-ն սահմանում է, որ դատարանը նախնառաջ պետք է պարզի հետևյալը.

1. Արդյոք կողմերը համաձայնության են եկել արբիտրաժային տրիբունալի կազմավորման վերաբերյալ,
2. Եթե առկա է համաձայնություն վերոնշյալի շուրջ, որոնք են համաձայնության պայմանները,
3. Արդյոք այդ համաձայնությունը խախտվել է,
4. Միայն այն դեպքերում, երբ կողմերի միջև առկա չէ արբիտրաժային տրիբունալի կազմավորման վերաբերյալ համաձայնություն, դատարանը պետք է կիրառի այն երկրի իրավունքը, որտեղ տեղի է ունեցել արբիտրաժը՝ որոշելու դրա համապատասխանությունը տվյալ իրավունքին:

Օրինակ՝ կողմերը հնարավոր է արբիտրաժային վերապահման մեջ նախապես համաձայնել են նշանակող մարմնի շուրջ, որը կնշանակի նախագահին կամ արբիտրին, բայց փաստացիորեն մեկ ուրիշն է նշանակում արբիտրին: Նման խնդիր է ծագում, երբ արբիտրը պետք է ընտրվի մարդկանց որոշակի խմբից, սակայն ընտրվում է մեկ այլ խմբից: Այս դեպքում դատարանը պետք է, այնուամենայնիվ, մանրամասն քննի արդյոք իսկապես անհրաժեշտ է վճռի կատարման մերժումը, քանի որ այն կողմը, որը հրաժարվում է ճանաչել և կատարել վճիռը, զրկվել է իր իրավունքներից, թե ըստ էության այդ կողմը ստացել է արբիտրաժային արդար դատաքննություն՝ ընդամենը մեկ չնչին ընթացակարգային շեղումով: Սա դատական գործի այն տեսակն է, որտեղ դատարանն իրավասու է որոշում կայացնել վճռի հարկադիր կատարման տրամադրման վերաբերյալ, եթե առկա է «*de minimis*» խախտում (տես՝ Գլուխ III.5-ում):

Օրինակ՝ «*China Nanhai*» գործում Հոնկոնգի Բարձր դատարանը որոշում կայացրեց առ այն, որ չնայած արբիտրաժային տրիբունալի կազմավորման վերաբերյալ կողմերի միջև համաձայնությունը չի պահպանվել, վճռի կատարումը հարկադրող դատարանը պետք է իր հայեցողությամբ հարկադրի վճռի կատարումը, քանի որ դատարանը տեղ գտած խախտումը համեմատաբար աննշան է համարել:³³

Արբիտրաժային համաձայնությունը կարող է նախատեսել մեկ կամ մի քանի արբիտրների համար որոշակի որակավորում, ինչպես օրինակ, մի քանի լեզուների իմացություն, որոշակի պետության քաղաքացիության առկայություն, որոշակի երկրի փաստաբանի լիցենզիայի առկայություն, ինժեներական կրթություն և այլն: Նման դեպքերում դատարանը պետք է մեծ ուշադրություն դարձնի այն փաստին, թե արդյոք նախատեսված որակավորումներից որևէ մեկի անհամապատասխանությունը ընթացակարգի իմաստով անարդար է: Օրինակ, եթե արբիտրաժային վերապահումը պահանջում է, որ արբիտրը լինի գործարար ոլորտի ներկայացուցիչ կամ անձ, ով փորձառություն ունի որոշակի ոլորտում, իսկ փոխարենը՝ նշանակվում է իրավաբան, ով չունի նման որակավորում, այնուամենայնիվ, արդարությունը կարող է պահանջել, որ վճիռը կատարվի՝ չնայած նման խախտման առկայության:

Դատարանի կողմից հոդված 5(1)(դ)-ի առաջին տարբերակի համաձայն՝ մերժված առարկությունների օրինակներ են հանդիսանում.

³³ *Հոնկոնգ*. Հոնկոնգի Գերագույն դատարան, Բարձր դատարան, 13 հուլիս 1994թ., (*China Nanhai Oil Joint Service Corporation Shenzhen Branch v. Gee Tai Holdings Co. Ltd.*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XX (1995), էջեր 671-680 (Հոնկոնգ, 8):

- Մյունխենի Վերաքննիչ դատարանը մերժել էր այն առարկությունը, ըստ որի՝ արբիտրաժային տրիբունալի կազմավորումը չէր համապատասխանել կողմերի միջև կնքած համաձայնությանը: Արբիտրաժային տրիբունալը կազմվել էր միայն մեկ արբիտրից, մինչդեռ արբիտրաժային վերապահմամբ կողմերը համաձայնել էին նշանակել երկու կամ ավելի արբիտրներ: Դատարանը նշել էր, որ պատասխանողը տեղյակ է եղել արբիտրաժային տրիբունալի կազմավորման մասին, բայց չէր առարկել վարույթի ընթացքում³⁴:
- Իսպանիայի Գերագույն դատարանի կողմից դիտարկվող գործում արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված էր լուծել արբիտրաժային վեճերը Ֆրանսիայի կինեմատոգրաֆիստների ասոցիացիային կից արբիտրաժային և հաշտության կենտրոնի միջոցով (Association Cinématographique Professionnelle de Conciliation et d'Arbitrage): Երբ պատասխանողը չնշանակեց արբիտրին, վերջինիս նշանակումը կատարեց Կինոարտադրողների ասոցիացիաների միջազգայի միության նախագահը: Դատարանը մերժեց պատասխանողի առարկությունն առ այն, որ այդ նշանակումը խախտել էր կողմերի միջև կնքված համաձայնությունը՝ գտնելով, որ այդ նշանակումը համապատասխանում էր Ասոցիացիայի կանոնների դրույթներին³⁵:

³⁴ *Գերմանիա*. Oberlandesgericht, Մյունխեն, 15 մարտի 2006թ. (*Manufacturer v. Supplier, in liquidation*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXXIV (2009), էջեր 499-503 (Գերմանիա, 117):

³⁵ *Իսպանիա*. Իսպանիայի Գերագույն դատարանի, քաղաքացիական պալատ, 11 ապրիլի 2000թ. (*Union Générale de Cinéma, SA v. X Y Z Desarrollos, SA*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXXII (2007), էջեր 525-531 (Իսպանիա, 50):

Դատարանի կողմից հոդված 5(1)(դ)-ի առաջին տարբերակի համաձայն ընդունված առարկությունների օրինակները են հետևյալ դեպքերը՝

- 1978թ.-ին Ֆլորենցիայի վերաքննիչ դատարանը մի գործով գտավ, որ Լոնդոնում արբիտրաժային վայրով երկու արբիտրից բաղկացած արբիտրաժային տրիբունալը խախտել էր կողմերի միջև կնքված արբիտրաժային համաձայնությունը, չնայած նրան, որ դա համապատասխանում էր այն երկրի օրենսդրությանը, որտեղ տեղի էր ունեցել արբիտրաժը: Արբիտրաժային վերապահումը նախատեսում էր երեք արբիտրների նշանակում, սակայն կողմերի կողմից նշանակված երկու արբիտրները չէին նշանակել երրորդին, քանի որ իրենք գործի ելքի վերաբերյալ համաձայնության էին եկել, որը տվյալ պահին գործող անգլիական օրենսդրության համաձայն թույլատրելի էր³⁶:
- Միացյալ Նահանգների Երկրորդ շրջանի վերաքննիչ դատարանը հրաժարվեց ճանաչել և կատարել արբիտրաժային վճիռը՝ հիմնավորելով, որ կողմերի միջև կնքված համաձայնությամբ նախատեսված արբիտրաժային տրիբունալի կազմավորման մասին դրույթը խախտվել է, քանի որ համաձայնությամբ նախատեսված նշանակման գործընթացը չի կատարվել: Կողմերից մեկի դիմումի հիման վրա նախագահողին դատարանն էր նշանակել, այսինչ արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված էր, որ

³⁶ *Իդալիա*. Ֆլորենցիայի վերաքննիչ դատարան, 13 ապրիլի 1978թ. (*Rederi Aktiebolaget Sally v. srl Termarea*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք IV (1979), էջեր 294-296 (Իտալիա, 32):

նախագահողի վերաբերյալ համաձայնության գալու համար կողմերի կողմից նշանակված երկու արբիտրներին ժամանակ պետք է տրվեր: ³⁷

IV.4.2. Արբիտրաժային վարույթը

Նյու Յորքի կոնվենցիայի նպատակը պարտվող կողմին արբիտրաժային տրիբունալի ընթացակարգային որոշումները բողոքարկելու իրավունք վերապահելը չէ: Հոդված 5(1)(դ)-ի այս տարբերակն ուղղված չէ վճռի ճանաչման և կատարման մերժմանը, եթե տվյալ գործը քննող դատարանի իրավական տեսակետը տարբերվում է արբիտրների տեսակետից, ինչպես օրինակ, արդյոք անհրաժեշտ էր լսել վկային, թույլատրել խաչաձև հարցաքննումը, կամ որքան պետք է լիներ գրավոր դիմումների թույլատրելի քանակը:

Ավելին, հոդված 5(1)(դ)-ի այս երկրորդ տարբերակն ուղղված է համաձայնեցված ընթացակարգից առավել հիմնարար շեղումների, որոնք ներառում են իրավիճակներ, որտեղ կողմերը համաձայնել են օգտագործել մի կենտրոնի կանոններ, մինչդեռ արբիտրաժի վարումը կատարվում է մեկ այլ կենտրոնի կանոններով կամ նույնիսկ, երբ կողմերը համաձայնել են, որ ոչ մի ինստիտուցիոնալ կանոններ չեն կիրառվելու:

Դատարանի կողմից հոդված 5(1)(դ)-ի երկրորդ տարբերակի համաձայն մերժված առարկությունների օրինակները ներառում են.

³⁷ *Ամերիկայի Միացյալ Նահանգներ*. Միացյալ Նահանգների Երկրորդ շրջանի վերաքննիչ դատարանը, 31 մարտի 2005թ. (*Encyclopaedia Universalis S.A. v. Encyclopaedia Britannica, Inc.*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXX (2005), էջեր 1136-1143 (ԱՄՆ, 520):

- Բրեմենի վերաքննիչ դատարանը չի ընդունել պատասխանողի առարկությունն առ այն, որ Թուրքիայում կայացած արբիտրաժային վարույթը խախտել է Թուրքիայի քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, քանի որ արբիտրաժային տրիբունալը չի բավարարել պատասխանողի՝ բանավոր նիստ անցկացնելու մասին միջնորդությունը և մերժել է նրա կողմից նոր ապացույցի ներկայացումը: Դատարանը գտավ, որ արբիտրաժային տրիբունալը գործել է Ստամբուլի Առևտրային Պալատի արբիտրաժային կանոնների համաձայն, որի վերաբերյալ առկա էր կողմերի համաձայնությունը³⁸,
- ԱՄՆ Հյուսիսային Ֆլորիդայի շրջանային դատարանում պատասխանող «Դեվոն» ընկերությունը (արբիտրաժային գործով հայցվորը, որը ընթացել էր Չինաստանի Ծովային Արբիտրաժի Հանձնաժողովում) պնդում էր, որ արբիտրաժային վարույթը չի ընթացել Չինաստանի դատավարական օրենսդրության համաձայն, քանի որ Հանձնաժողովը նախ մերժել էր հակառակ կողմի հակընդեմ հայցը, սակայն հետագայում թույլ էր տվել ներկայացնել առանձին պահանջ, որը արդյունքում միացվել էր «Դեվոնի» պահանջի հետ: Դատարանը չընդունեց այս փաստարկը՝ գտնելով, որ Դեվոնին չհաջողեց ապացուցել, որ Հանձնաժողովի որոշումը խախտել էր չինական օրենքը³⁹:

³⁸ *Գերմանիա*. Hanseatisches Oberlandesgericht, Բրեմեն, 30 սեպտեմբերի 1999թ. (*Հայցորդ ընդդեմ Պարասխանողի*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXXI (2006), էջեր 640-651 (*Գերմանիա*, 84):

³⁹ *Ամերիկայի Միացյալ Նահանգներ*. ԱՄՆ շրջանային դատարան, Ֆլորիդային հյուսիսային շրջան, Պենսակոլա բաժանմունք, 29 մարտ 2010թ. (*Pactrans Air & Sea, Inc. v. China National Chartering Corp., et al.*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXXV (2010), էջեր 526-527 (ԱՄՆ, 697):

Հոդված 5(1)(դ)-ի երկրորդ տարբերակի ներքո առարկությունների հաջող օրինակներ են հետևյալները՝

- Շվեյցարիայի վերաքննիչ դատարանը մերժեց գերմանական արքիտրաժային վճռի ճանաչումը և կատարումը՝ գտնելով, որ արքիտրաժային վարույթը չի ընթացել կողմերի համաձայնությանը համապատասխան: Արքիտրաժային համաձայնությունը նախատեսում էր արքիտրաժի անցկացում Համբուրգում, որտեղ «բոլոր վեճերը պետք է լուծվեին մեկ և միևնույն արքիտրաժային վարույթի ընթացքում»: Փոխարենը՝ արքիտրաժային վարույթը ընթացել էր երկու փուլով. առաջինը՝ մասնագիտական արքիտրաժ երկու մասնագետի մասնակցությամբ, իսկ երկրորդը՝ պատշաճ արքիտրաժային վարույթ՝ երեք արքիտրից բաղկացած տրիբունալի առաջ⁴⁰,
- Թուրքիայի վերաքննիչ դատարանը մերժեց շվեյցարական արքիտրաժային վճռի ճանաչումը և կատարումը այն հիմքով, որ կողմերի միջև համաձայնեցված ընթացակարգային նորմերը չէին կիրառվել⁴¹,
- Իտալիայի Վճռաբեկ դատարանը ճանաչեց և կատարեց ստոկհոլմյան արքիտրաժային վճիռը, սակայն մերժեց նույն վեճի վերաբերյալ պեկինյան վճիռը: Դատարանը գտավ, որ պեկինյան վճիռը հակասում էր կողմերի համաձայնությանը, որն

⁴⁰ *Շվեյցարիա*. Appellationsgericht, Բազել-Շտադտ, 6 սեպտեմբեր 1968թ. (*Corporation X AG, buyer v. Firm Y, seller*), Առևտրային արքիտրաժի տարեգիրք I (1976), էջ 200 (Շվեյցարիա, 4):

⁴¹ *Թուրքիա*. Վերաքննիչ դատարան, 15-րդ Իրավաբանական քաժանմունք, 1 փետրվար 1996թ. (*Osuuskunta METEX Andelslag V.S. v. Türkiye Elektrik Kurumu Genel Müdürlüğü General Directorate, Ankara*), Առևտրային արքիտրաժի տարեգիրք XXII (1997), էջեր 807-814 (Թուրքիա, 1):

ենթադրում էր միայն մեկ արբիտրաժային վարույթ՝ կամ Ստոկհոլմում կամ Պեկինում՝ կախված նրանից, թե կողմերից ով առաջինը կսկսի արբիտրաժային վարույթը⁴²:

IV.5. ՀԻՄՔ 5. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎՃԻՌԸ ՊԱՐՏԱԴԻՐ ՉԷ,
ՉԵՂՅԱԼ Է ՃԱՆԱԶՎԵԼ ԿԱՄ ԿԱՍԵՑՎԵԼ Է (*Հոգս*
5(1)(ե))

«Արբիտրաժային վճիռը կողմերի համար դեռևս չի ստացել պարտադիր իրավական ուժ, չեղյալ է ճանաչվել կամ կասեցվել է այն երկրի իրավասու մարմնի կողմից, որտեղ կամ որի օրենսդրության ներքո այդ վճիռը կայացվել էր»:

Հոդված 5(1)(ե)-ն նախատեսում է արբիտրաժային վճռի ճանաչման և կատարման մերժում այն դեպքում, երբ պատասխանողը կապացուցի, որ վճիռը.

- Դեռ չի դարձել կողմերի համար «պարտադիր իրավական ուժ» ունեցող վճիռ, կամ
- Չեղյալ է ճանաչվել կամ կասեցվել է այն երկրի իրավասու մարմնի կողմից, որտեղ կամ որի օրենսդրության ներքո այդ վճիռը կայացվել է:

⁴² *Իդալիա*. Վճռաբեկ դատարան, 7 փետրվար 2001թ., թիվ 1732 (*Tema Frugoli SpA, in liquidation v. Hubei Space Quarry Industry Co. Ltd.*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXXII (2007), էջեր 390-396 (Իտալիա, 170):

IV.5.1 Դեռևս պարտադիր իրավական ուժ չստացած արբիտրաժային վճիռ

Նյու-Յորքի Կոնվենցիայի հեղինակների կողմից սույն համատեքստում առավելապես օգտագործվել է «պարտադիր իրավական ուժ ունեցող» եզրույթը, քան թե «վերջնական» եզրույթը (վերջինս համարժեքորեն կիրառվել է 1927թ.-ի Ժնևի Օտարերկրյա արբիտրաժային վճիռների կատարման վերաբերյալ կոնվենցիայում)⁴³: «Պարտադիր իրավական ուժ ունեցող» եզրույթի օգտագործումը նպատակ ուներ հստակեցնելու այն, որ կողմն իրավունք ունի դիմել արբիտրաժային վճռի ճանաչման և կատարման համար այն բանից հետո, երբ այդ վճիռը կայացվել է արբիտրաժային տրիբունալի կողմից: Սա նշանակում էր, որ կողմի համար անհրաժեշտություն չկար ստանալու կատարողական թերթ (*exequatur*) կամ թողնել դրա ստացումն այն երկրի դատարանի վրա, որտեղ կամ որի օրենսդրության համաձայն վճիռը կայացվել էր (հայտնի է որպես կրկնակի կատարողական թերթ (*double exequatur*)), ինչպես պահանջվում էր 1927 թվականի Ժնևի կոնվենցիայով:

Կոնվենցիայի ներքո կրկնակի կատարողական թերթ ստանալու անհրաժեշտության բացակայությունը համընդհանուր ճանաչում ունի դատարանների և մեկնաբանների շրջանում:

Դատարանների մոտեցումներն առ այն, թե որ պահից սկսած է վճիռը հողված 5(1)(ե)-ի ներքո ձեռք բերում պարտադիր իրավական ուժ, տարբերվում են: Որոշ դատարաններ գտնում են, որ այդ պահն որոշվում է այն երկրի ներպետական իրավունքով, որտեղ վճիռը

⁴³ Օտարերկրյա արբիտրաժային վճիռների կատարման մասին կոնվենցիայում, կնքված Ժնևում, 26 սեպտեմբեր 1927թ.:

կայացվել է⁴⁴: Այլ դատարաններ որոշում են այս հարցն անկախ վճռի նկատմամբ կիրառվող իրավունքից և գտնում են, որ օտարերկրյա արբիտրաժային վճիռները կողմերի համար ձեռք են բերում պարտադիր իրավական ուժ այն դեպքում, երբ դրանց դեմ բողոքարկման տարրական միջոցներ առկա չեն կամ այլևս առկա չեն⁴⁵: Սա նշանակում է, որ արբիտրաժային վճիռն այլևս ենթակա չէ ըստ էության բողոքարկման արբիտրաժային վերաքննիչ մարմնում կամ դատարանում: Այս համատեքստում դատարաններն որոշ դեպքերում հիմնվում են կողմերի համաձայնության վրա: Եթե, օրինակ, կողմերը որոշել են կիրառել Առևտրի միջազգային պալատի կանոնները, ապա դրանց հոդված 28(6)-ը սահմանում է, որ «Յուրաքանչյուր արբիտրաժային վճիռ պետք է կողմերի համար ունենա պարտադիր իրավական ուժ»:

IV.5.2. Չեղյալ ճանաչված կամ կասեցված արբիտրաժային վճիռ

(i) Չեղյալ ճանաչված վճիռ

Կախված երկրից՝ այս ընթացակարգը կարող է անվանվել նաև «vacatur» կամ «չեղարկում»:

Վճիռը չեղյալ ճանաչման իրավասություն ունեն միայն այն երկրի դատարանները, որտեղ վճիռը կայացվել է կամ համարվում է, որ կայացվել է, այն է՝ արբիտրաժի վայրը (տես՝ Գլուխ I-ի III.1.1

⁴⁴ Տե՛ս՝ օրինակ, *Ֆրանսիա*. Մեծ ատյանի դատարան, Ստրասբուրգ, 9 հոկտեմբերի 1970թ. (*Animalfeeds International Corp. v. S.A.A. Becker & Cie*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք II (1977), էջ 244 (Ֆրանսիա, 2):

⁴⁵ Տե՛ս՝ օրինակ, *Շվեյցարիա*. Դաշնային դատարան, Առաջին քաղաքացիական պալատ, 9 դեկտեմբերի 2008թ. (*Compagnie X SA v. Federation Y*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXXIV (2009), էջեր 810-816 (Շվեյցարիա, 40):

մասում): Համարվում է, որ այս դատարանները ունեն «վերահսկողական» կամ «առաջնային» իրավասություն վճռի նկատմամբ: Ի հակառակ սրան՝ այն դատարանները, որոնց առջև հայցվում է վճռի ճանաչում և կատարում, համարվում են վճռի նկատմամբ «կատարողական» կամ «երկրորդական» իրավասություն ունեցող, որոնք սահմանափակված են միայն իրավասությամբ որոշելու, թե արդյոք առկա են Կոնվենցիայով նախատեսված ճանաչման կամ կատարման մերժման հիմքեր:

Շատ երկրներում վճիռը պետք է չեղյալ ճանաչված լինի առաջնային իրավասություն ունեցող դատարանի կողմից, որպեսզի վճիռը չեղյալ ճանաչված լինելու մասին առարկությունը ընդունվի: Վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ միջնորդությունը բավարար չէ վճիռը չեղյալ ճանաչելու համար: Սա կանխում է պարտվող կողմի կողմից չեղարկման գործընթացի միջոցով կատարումը հետաձգելու հնարավորությունը:

Վճիռը չեղյալ ճանաչելու կամ կասեցնելու միջնորդության դեպքերը կարգավորվում են հոդված 6-ով, որը սահմանում է, որ նման պարագայում կատարող դատարանը իր որոշմամբ կարող է հետաձգել կատարման վերաբերյալ որոշման կայացումը: Այնուամենայնիվ, միջնորդությունը պետք է ներկայացվի հոդված 5(1)(ե)-ով սահմանված իրավասու դատարանին, այն է՝ առաջնային իրավասություն ունեցող դատարանին:

(ii) Չեղյալ ճանաչման հետևանքները

Թեև արբիտրաժային վճռի կատարումը չեղյալ է ճանաչվում այն երկրում, որտեղ կամ որի օրենսդրության ներքո վճիռը կայացվել է, այլ երկրի դատարանը կարող է այդուհանդերձ ճանաչել և

կատարել վճիռը Նյու-Յորքի Կոնվենցիայի ռեժիմից դուրս: Ֆրանսիան այս հարցում լավագույն օրինակն է, որտեղ վճիռը ճանաչվում է կատարման ենթակա՝ չնայած այն հանգամանքին, որ այն չեղյալ է ճանաչվել դրա կայացման երկրում: Ֆրանսիայի նմանօրինակ վարքագիծը հիմնվում է ոչ թե Նյու-Յորքի Կոնվենցիայի, այլ Ֆրանսիայի ներպետական օրենքի, որը շրջանցում է Նյու-Յորքի Կոնվենցիան հոդված 7(1)-ի միջոցով, որն առավել բարենպաստ իրավունքի վերաբերյալ դրույթն է: Այս դրույթը թույլ է տալիս դատարաններին կիրառել կատարման վերաբերյալ առավել բարենպաստ ռեժիմ, քան Նյու-Յորքի Կոնվենցիայի ռեժիմն է, այսինքն այն ռեժիմը, որը կհանգեցնի վճռի ճանաչման և կատարման այն դեպքում, երբ Կոնվենցիան դա չի ապահովում (տես՝ Գլուխ I-ի V.1 մասը):

(iii) «Կասեցված» վճիռ

Հոդված 5(1)(ե)-ը նախատեսում է նաև վճռի կատարման մերժման հնարավորություն, եթե կողմը, ում դեմ կայացվել է վճիռը, ապացուցում է, որ վճիռը «կասեցվել» է այն երկրի դատարանում, որտեղ կամ որի օրենսդրության համաձայն վճիռը կայացվել է: Ինչպես վերը նշված է սույն մասի IV.5.2.-ի (i) կետում, Կոնվենցիայի 6-րդ հոդվածը նախատեսում է, որ դատարանը կարող է հետաձգել իր՝ կատարման վերաբերյալ որոշման կայացումը, եթե պատասխանողը ծագման երկրում դիմել է վճռի կասեցման համար:

Վճռի «կասեցումը» սահմանված չէ Կոնվենցիայով: Դատարանները հիմնականում բացատրել են այս հասկացությունը՝ անդրադառնալով արբիտրաժային վճռի կայացման երկրում

դատարանի կողմից վճռի կատարման կասեցմանը (հետևաբար ոչ օրենքի գործողության արդյունքում, օրինակ, երբ վճռի չեղյալ ճանաչման մասին որոշման քննությունն է ընթանում):

V. ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ Ի ՊԱՇՏՈՆԵ ԲԱՐՁՐԱՑՎՈՂ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐ (ՀՈԴՎԱԾ 5(2))

Կոնվենցիայի հոդված 5(2)-ը նախատեսում է.

«Արբիտրաժային վճռի ճանաչումն ու կատարումը կարող է նաև մերժվել, եթե այն երկրի իրավասու մարմինը, որտեղ ճանաչումն ու կատարումը հայցվում է, գտնում է, որ.

(ա) Այդ երկրի իրավունքի համաձայն վեճի առարկան չի կարող լինել արբիտրաժի քննարկման առարկա, կամ

(բ) Վճռի ճանաչումն ու կատարումը հակասում է այդ երկրի հանրային կարգին»:

Հոդված 5(2)-ով նախատեսված հիմքերը կոչված են պաշտպանելու այն երկրի հանրային շահերը, որտեղ հայցվում է կատարումը, և հետևաբար դատարանը վճռի ճանաչման և կատարման մասին միջնորդության ստացման պարագայում կարող է հիմնվել հանրային շահի վրա *ի պաշտոնե*: Սովորաբար, այն կողմը, որը ընդդիմանում է վճռի ճանաչմանը և կատարմանը, կարող է վկայակոչել նաև այս հիմքերը, եթե գտնում է, որ դրանք վերաբերելի են:

V.1. ՀԻՄՔ 6. ԵՆԹԱԿԱ ՉԷ ԱՐԲԻՏՐԱԺԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ
(ԱՐԲԻՏՐԵԼԻ ՉԷ) (Հոդված 5(2)(ա))

Հոդված 5(2)(ա)-ով նախատեսված մերժման հիմքը՝ «ենթակա չէ արբիտրաժի», կիրառվում է այն դեպքում, երբ վեճը ներառում է բառացապես դատարանի քննությանը վերապահված վեճի առարկա:

Օրինակ՝ ակնհայտ է, որ քրեական գործերը ենթակա չեն արբիտրաժին: Նմանապես, այն գործերը, որոնք ենթակա են բացառապես իրավասու դատարանի քննությանը, արբիտրելի չեն, ներառյալ հետևյալները՝

- Ամուսնալուծություն
- Երեխաների խնամքի հարցեր
- Սեփականության բաժանման վերաբերյալ վեճեր
- Կտակ
- Մնասնկություն
- Կազմակերպությունների լուծարում:

Ժամանակակից միտումը հանգեցնում է նրան, որ միայն սահմափակ թվով վեճեր են վերապահվում դատարանների բացառիկ իրավասությանը, որը արդյունք է բազմաթիվ գործոնների, այդ թվում՝ միտումը ծախսերի հաշվարկման, արբիտրաժային համաձայնության վերաբերյալ դատարանների ազատական վերաբերմունքի և ներպետական օրենսդրության կողմից միջազգային արբիտրաժի աջակցության: Սրա կապակցությամբ պետք է նաև նշել, որ «ոչ արբիտրելի» արտահայտությունը միջազգային գործերի համատեքստում ունի

այլ նշանակություն ի տարբերություն ներպետական գործերի (տես՝ նաև Գլուխ II–ի IV.6.1 կետը այն վեճերի վերաբերյալ, որոնք «ենթակա են լուծման արբիտրաժի միջոցով»):

Այն հարցը, թե արդյոք վեճի առարկան ենթակա չէ արբիտրաժի, պետք է որոշվի այն երկրի իրավունքով, որտեղ վճռի ճանաչման և կատարման դիմում է ներկայացվել: Արբիտրաժին ենթակա չլինելու հանգամանքը պետք է վերաբերի պահանջի նյութական մասին և ոչ թե ձևական:

Հոդված 5(2)(ա)-ի ներքո կատարումը մերժելու վերաբերյալ սակավաթիվ գործեր են առկա, որոնցից են հետևյալները.

- Բելգիայի վճռաբեկ դատարանի որոշումն արբիտրաժային վճռի կատարումը մերժելու մասին այն հիմքով, որ վեճի առարկա բացառիկ դիստրիբյուցիայի պայմանագրի դադարեցումն, ենթակա չէր արբիտրաժային կարգով լուծման ըստ Բելգիայի օրենսդրության, քանի որ դիստրիբյուտորներին վերաբերող հատուկ օրենքով Բելգիայի դատարաններին էր վերապահված նմանատիպ գործերով բացառիկ իրավասություն⁴⁶,
- Մոսկվայի շրջանի Դաշնային *Արբիտրաժային* (Առևտրային) դատարանի որոշումն առ այն, որ Սլովակիայի արբիտրաժային վճիռն ենթակա չէր կատարման, քանի որ այն կայացվել էր այն բանից հետո, երբ արբիտրաժային դատարանը ռուս պատասխանողին ճանաչել էր սնանկ: Ռուսաստանի Դաշնության սնանկության մասին օրենքի համաձայն՝ արբիտրաժային դատարաններն ունեն բացառիկ

⁴⁶ *Բելգիա*. Վճռաբեկ դատարան, Առաջին պալատ, 28 հունիսի 1979թ. (*Audi-NSU Union AG v. SA Adelin Petit & Cie*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք V (1980), էջեր 257-259 (Բելգիա, 2):

իրավասություն սնանկ ճանաչված անձի պարտապանների հանդեպ ունեցած պահանջների բնույթի և չափի մասով: Դատարանն իր որոշումը հիմնավորել է Կոնվենցիայի 5(2)(բ) հոդվածով, քանի որ արբիտրելի լինելու հարցը կարող է ներառվել պետության հանրային կարգի շրջանակում⁴⁷:

V.2. ՀԻՄՔ 7. ՀԱԿԱՍՈՒՄ Է ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԳԻՆ (ՀՈԴՎԱԾ 5(2)(Բ))

Հոդված 5(2)(բ)-ն թույլ է տալիս արբիտրաժային վճռի ճանաչումը և կատարումը քննող դատարանին մերժել ճանաչումը և կատարումը, եթե այն «հակասում է այդ երկրի հանրային կարգին»:

Այնուամենայնիվ, հոդված 5(2)(բ)-ն չի սահմանում, թե ինչ է նշանակում «հանրային կարգ»: Նմանապես, այն չի նախատեսում, թե արդյոք հանրային կարգի վերաբերյալ ներպետական սկզբունքները, կամ հանրային կարգի միջազգային մոտեցման վրա հիմնված հանրային կարգի սկզբունքները պետք է կիրառվեն Նյու-Յորքի Կոնվենցիայի ներքո ներկայացված ճանաչման և կատարման դիմումների նկատմամբ: Հանրային կարգի միջազգային մոտեցումը սովորաբար ավելի նեղ է, քան ներպետական հանրային կարգի մոտեցումը: Ինչպես ներկայացվեց սույն բաժնի V.1. կետում, միևնույն տարբերակումը կիրառելի է նաև արբիտրելիության հարցի նկատմամբ:

⁴⁷ *Ռուսաստանի Դաշնություն*. Դաշնային արբիտրաժային դատարան (առևտրային), Մոսկվայի շրջան, 1 նոյեմբերի 2004թ. (*AO Slovenska Konsolidachna, A.S. v. KB SR Yakimanka*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXXIII (2008), էջեր 654-657 (ՌԴ, 15):

Ներպետական դատարանների գերակշիռ մասը ընդունել է միջազգային հանրային կարգի վերաբերյալ ավելի նեղ չափանիշներ՝ կիրառելով միջազգային աղբյուրների նյութական նորմեր:

«Հանրային կարգի» վերաբերյալ 2002թ.-ին հրատարակված Միջազգային Իրավունքի Ասոցիացիայի խորհրդատվությունները («ՄԻԱ Խորհրդատվություններ») համարվում են միջազգային լավագույն փորձի արտացոլում⁴⁸:

ՄԻԱ Խորհրդատվությունների շրջանակներում ընդհանուր խորհրդատվություններից է այն, որ վճիռների վերջնական լինելը «միջազգային առևտրային արբիտրաժում պետք է հարգվի բացառությամբ բացառիկ հանգամանքների առկայության դեպքում» (Ընդհանուր բաժին, հոդված 1(ա)), և այդպիսի բացառիկ հանգամանքները «մասնավորապես կհամարվեն առկա, եթե միջազգային արբիտրաժային վճիռ ճանաչումը կամ կատարումը հակասի միջազգային հանրային կարգին» (Ընդհանուր բաժին, հոդված 1(բ)):

ՄԻԱ Խորհրդատվությունների հոդված 1(գ) սահմանում է, որ «միջազգային հանրային կարգ» արտահայտությունը դրանցում օգտագործվում է նշելու երկրի կողմից ճանաչված սկզբունքների և կանոնների ամբողջությունը, որոնք, իրենց բնույթից ելնելով, կարող են արգելել միջազգային առևտրային արբիտրաժի շրջանակներում ընդունված արբիտրաժային վճիռ ճանաչումը կամ կատարումը այն դեպքում, երբ այդպիսի վճիռ ճանաչումը կամ կատարումը կարող է հանգեցնել դրանց խախտման, կամ դատավարական նորմերի մասով, համաձայն որոնց՝ այն ընդունվել

⁴⁸ Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <www.ila-hq.org/download.cfm/docid/032880D5-46CE-4CB0-912A0B91832E11AF>:

էր (միջազգային հանրային դատավարական կարգ) կամ բովանդակության մասով (միջազգային հանրային նյութական կարգ):

ՄԻԱ Խորհրդատվությունները սահմանում են (դրույթ 1(դ)), որ յուրաքանչյուր պետության միջազգային հանրային կարգը ներառում է հետևյալը.

- (i) արդարադատության և բարոյականության հետ կապված հիմնարար սկզբունքներ, որոնք պետությունը ցանկանում է պաշտպանել, անգամ եթե խնդիրն ուղղակիորեն իրեն չի վերաբերում,
- (ii) կանոններ, որոնք նպատակ ունեն ծառայել պետության էական քաղաքական, սոցիալական կամ տնտեսական շահերին, որոնք հայտնի են “*lois de police*” կամ «հանրային կարգի կանոններ» անվամբ, և
- (iii) պետության պարտականությունը հարգելու այլ պետությունների կամ միջազգային կազմակերպությունների հանդեպ ստանձնած իր պարտավորությունները:

V.2.1. Ճանաչման և կատարման օրինակներ

Սելի Վերաքննիչ դատարանի գերմանական գործերից մեկով վաճառողը հայցել էր Ռուսաստանի Դաշնության Առևտրի և արդյունաբերական պալատի Միջազգային առևտրային արբիտրաժային դատարանի վճռի կատարումը (ՄԿԱԿ)⁴⁹: Գնորդը

⁴⁹ Գերմանիա. Oberlandesgericht, Սելե, 6 հոկտեմբերի 2005թ. (Վաճառողն ընդդեմ Գնորդի), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXXII (2007), էջեր 322-327 (Գերմանիա, 99):

փաստարկում էր, որ կատարումը թույլատրելով կարող է խախտվել հանրային կարգը այն հիմքով, որ տեղի են ունեցել դատավարական խախտումներ արբիտրաժային վարույթի ընթացքում կամ արբիտրաժային վճիռը նախատեսել է անհամաչափ բարձր պայմանագրային տուգանք: Դատարանը մերժեց վաճառողի փաստարկը՝ գտնելով, որ.

«Օտարերկրյա արբիտրաժային վճիռների դեպքում ներպետական օրենսդրության իմպերատիվ նորմերից շեղումը օտարերկրյա արբիտրաժում [ինքնաբերաբար] չի հանգեցնում հանրային կարգի խախտման: Փոխարենը՝ պետք է առկա լինի միջազգային հանրային կարգի խախտում: Հետևաբար, օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչումը, որպես կանոն, ենթակա է ավելի մեղմ ռեժիմի, քան ներպետական արբիտրաժային որոշումների ճանաչումը: Խնդիրը նրանում չէ, թե արդյոք գերմանացի դատավորն այլ արդյունքի կհանգեր Գերմանիայի իմպերատիվ նորմերի կիրառման պարագայում: Այլ՝ առավելապես նրանում, որ միջազգային հանրային կարգի խախտումն առկա է միայն այն դեպքում, երբ կոնկրետ գործով օտարերկրյա իրավունքի կիրառման հետևանքներն այն աստիճանի են հակասում գերմանական կարգավորումներին, որ դառնում են անընդունելի գերմանական սկզբունքների համաձայն: Սակայն այստեղ սա չէ խնդիրը»:

Ֆրանսիական գործերից մեկով, *SNF v. Cytec*, SNF-ը Cytec -ի հետ կնքել էր երկու առուվաճառքի պայմանագրեր՝ քիմիական

բաղադրություններ գնելու համար⁵⁰: Երկրորդ պայմանագրի համաձայն՝ «Cytec»-ը պետք է լիներ բացառիկ մատակարար: Արբիտրաժային տրիբունալը գտավ, որ երկրորդ պայմանագիրը խախտել է ԵՄ-ի Մրցակցության պաշտպանության մասին օրենքը: Այնուհետև արբիտրաժային տրիբունալը որոշում կայացրեց ի օգուտ «Cytec»-ի: Վերաքննիչ դատարանում «SNF»-ը փաստում էր, որ դատարանը չպետք է թույլատրի վճռի կատարումը, որը հիմնված էր մրցակցությունը խախտող համաձայնության վրա և հետևաբար հակասում էր ԵՄ կարգավորումներին և հանրային կարգին: Դատարանը գտավ, որ այն դեպքերում (ինչպես այս գործում է), երբ քննարկման հարցը վերաբերում է միջազգային հանրային կարգին, դատարանները վճռի կատարումը կանխելու համար կմիջամտեն բացառապես միջազգային հանրային կարգի «կոպիտ, արդյունավետ և կոնկրետ» խախտման պարագայում:

Արբիտրաժային վճռի կամ արբիտրաժային տրիբունալի վարքագծի հիմքում ընկած իրավական վերլուծության ինչ-որ չափով թերի լինելը չի խախտում հանրային կարգը, քանի դեռ այդ թերությունը չի ազդում այն իրավական համակարգի բարոյականության և արդարադատության հիմնարար սկզբունքների վրա, որտեղ հայցվում է արբիտրաժային վճռի կատարումը, այլ խոսքով՝ չի խախտում միջազգային հանրային կարգը: Օրինակ՝ Հոնկոնգի Հատուկ վարչական շրջանի Վերջնական Վերքննիչ դատարանը որոշում կայացրեց առ այն, որ պատասխանողի բացակայության պարագայում կատարված ստուգումը հիմք չէ վճռի կատարումը մերժելու համար, որովհետև

⁵⁰ *Ֆրանսիա*. Վճռաբեկ դատարան, Քաղաքացիական Առաջին Պալատ, 4 հունիսի 2008թ. (*SNF sas v. Cytec Industries BV*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXXIII (2008), էջեր 489-494 (*Ֆրանսիա*, 47):

պատասխանողը ծանուցվել էր, որ նման ստուգում է կատարվել և չէր պահանջել վերստուգում կատարել իր ներկայացուցիչների ներկայությամբ⁵¹:

Չնայած հանրային կարգի ենթադրյալ խախտմանը՝ ճանաչման և կատարման այլ օրինակներ են.

- Ֆինանսական միջոցների բացակայություն. Պորտուգալիայի Արդարադատության բարձրագույն դատարանը մերժել է հանրային կարգի խախտման այն հիմնավորումը, ըստ որի՝ պորտուգալացի պատասխանողը չէր ներկայացել Նիդեռլանդների արբիտրաժային դատարան ֆինանսական միջոցների բացակայության պատճառով,⁵²
- Արբիտրների անկողմնակալության բացակայություն. դատարանները գտնում են, որ «կողմնակալության տպավորությունը» բավարար չէ: Պետք է լինի «իրական կողմնակալություն», այսինքն՝ արբիտրը պետք է գործի կողմնակալ կերպով⁵³,

⁵¹ *Հոնկոնգ*. Հոնկոնգի Հատուկ վարչական շրջանի վերջնական վերաքննիչ դատարան, 9 փետրվարի 1999թ. (*Hebei Import and Export Corporation v. Polytek Engineering Company Limited*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXIV (1999), էջեր 652-677:

⁵² *Պորտուգալիա*. Պորտուգալիայի Արդարադատության բարձրագույն դատարանը, 9 հոկտեմբերի 2003թ. (*A v. B. o Cia. Ltda., et al.*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXXII (2007), էջեր 474-479 (Պորտուգալիա, 1):

⁵³ Տես, օր.՝ *Գերմանիա*. Oberlandesgericht, Շտուտգարտ, 18 հոկտեմբերի 1999թ. և Bundesgerichtshof, 1 փետրվարի 2001թ. (*Dutch Shipowner v. German Cattle and Meat Dealer*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXIX (2004), էջեր 700-714 (Գերմանիա, 60):

Միացյալ Նահանգներ. ԱՄՆ Նյու-Յորքի Հարավային տարածքի տարածքային տատարան, 27 հունիսի 2003թ., և ԱՄՆ Երկրորդ շրջանային դատարանի

- Արբիտրաժային վճռում առկա հիմքերի բացակայություն. այն երկրների դատարանները, որտեղ արբիտրաժային վճռում հիմքերի առկայությունը պարտադիր է, ընդհանուր առմամբ կատարում են այն արբիտրաժային վճիռները, որոնք որևէ հիմք չեն պարունակում, սակայն ընդունվեն են այնպիսի երկրներում, որտեղ նման վճիռները վավեր են համարվում⁵⁴:

V.2.2. Ճանաչման և կատարման մերժման օրինակներ

Հոդված 5(2)(բ)-ի ներքո ճանաչման և կատարման մերժման օրինակներ են.

- Բավարիայի վերաքննիչ դատարանը մերժել է ռուսական վճռի ճանաչումն ու կատարումը հանրային կարգին հակասելու հիմքով, քանի որ վճիռը կայացվել էր այն բանից հետո, երբ կողմերն արդեն եկել էին համաձայնության, որի մասին արբիտրները տեղյակ չէին եղել⁵⁵,
- Ռուսաստանի Դաշնության Տոմսկ շրջանի Դաշնային արբիտրաժային (առևտրային) դատարանը մերժել էր Ֆրանսիայում կայացված Առևտրի միջազգային պալատի վճիռը՝

վերաքննիչ դատարան, 3 օգոստոսի 2004թ. (*Lucent Technologies Inc., et al. v. Tatung Co.*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXX (2005), էջեր 747-761 (ԱՄՆ, 483):

⁵⁴ Տես, օրինակ, *Գերմանիա*. Oberlandesgericht Düsseldorf, 15 դեկտեմբերի 2009թ. (*Վաճառողն ընդդեմ գերմանական գնորդի*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXXV (2010), էջեր 386-388 (Գերմանիա, 135):

⁵⁵ *Գերմանիա*. Bayerisches Oberstes Landesgericht, 20 նոյեմբերի 2003թ. (*Վաճառողն ընդդեմ Գնորդի*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXIX (2004), էջեր 771-775 (Գերմանիա, 71):

գտնելով, որ փոխառության մասին համաձայնությունները, որոնց վերաբերյալ ընդունվել էր վճիռը, կնքվել են միևնույն խմբի ընկերությունների միջև անօրինական կերպով, իսկ կողմերի միջև ծագած վեճը արհեստականորեն էր ստեղծված⁵⁶:

VI. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արբիտրաժային վճռի ճանաչման և կատարման դիմումի մերժման բացառիկ հիմքերի հետազոտությունը և այն սկզբունքները, որոնց հիման վրա այդ հիմքերը պետք է մեկնաբանվեն, արտահայտում է Կոնվենցիայի կատարմանը միտված բնույթը, որը դատարանները պետք է հարգեն և ողջամտորեն կիրառեն:

⁵⁶ Ռուսաստանի Դաշնություն. Տոմսկ շրջանի Դաշնային արբիտրաժային (առևտրային) դատարանը, 7 հուլիսի 2010թ. (*Yukos Capital S.A.R.L. v. OAO Tomskneft VNK*), Առևտրային արբիտրաժի տարեգիրք XXXV (2010), էջեր 435-437 (Ռուսաստանի Դաշնություն, 28):

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Հավելված I* – Նյու Յորքի Կոնվենցիա, 1958թ.
Հավելված II – Միջազգային առևտրային արբիտրաժի մասին ՈՒՆՍԻՏՐԱԼ-ի տիպային օրենք
Հավելված III – ՈՒՆՍԻՏՐԱԼ-ի հանձնարարական, 2006թ.
Հավելված IV – Էլեկտրոնային աղբյուրներ

ՀԱՎԵԼՎԱԾ I

ՆՅՈՒ ՅՈՐԶԻ ԿՈՆՎԵՆՑԻԱ, 1958Թ.

*Օրարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և
կատարման մասին Միացյալ ազգերի կազմակերպության
կոնվենցիա*

ՀՈՒՎԱԾ 1

1. Սույն Կոնվենցիան կիրառվում է այն արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման նկատմամբ, որոնք կայացվել են այն պետության տարածքում, քան այն պետությունը, որում հայցվում է այդպիսի վճիռների ճանաչումը և կատարումը՝ այն վեճերով, որոնց կողմ կարող են լինել ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձինք: Այն կիրառվում է նաև այն արբիտրաժային վճիռների նկատմամբ, որոնք տեղական վճիռներ չեն համարվում այն պետությունում, որտեղ հայցվում է դրանց ճանաչումը և կատարումը:

ՀԱՎԵԼՎԱԾ I

2. «Արբիտրաժային վճիռներ» տերմինը ներառում է ոչ միայն յուրաքանչյուր առանձին գործով նշանակված արբիտրների կայացրած արբիտրաժային վճիռները, այլև արբիտրաժային այն վճիռները, որոնք կայացվել են մշտապես գործող այն արբիտրաժային մարմինների կողմից, որոնց դիմել են կողմերը:

3. Սույն Կոնվենցիայի ստորագրման, վավերացման, կամ միացման, կամ սույն Կոնվենցիայի 10-րդ հոդվածով նախատեսված կարգով ժամկետի երկարաձգման ծանուցման դեպքում, ցանկացած պետություն, փոխադարձության հիման վրա, կարող է հայտարարել, որ սույն Կոնվենցիան կիրառելու է միայն այն արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման նկատմամբ, որոնք կայացվել են մյուս Պայմանավորվող պետության տարածքում: Կարող է նաև հայտարարվել, որ սույն Կոնվենցիան պետությունը կիրառելու է միայն պայմանագրային կամ այլ իրավահարաբերություններից ծագող այն վեճերի նկատմամբ, որոնք այդպիսի հայտարարություն կատարող պետության ազգային իրավունքով համարվում են առևտրային:

ՀՈԴՎԱԾ 2

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն ճանաչում է գրավոր համաձայնությունը, համաձայն որի՝ կողմերը պարտավորվում են արբիտրաժին փոխանցել բոլոր կամ ցանկացած առկա կամ ապագա վեճերը, որոնք, կապված են որևէ կոնկրետ պայմանագրային կամ այլ իրավահարաբերության հետ, որի օբյեկտը կարող է արբիտրաժային քննության առարկա լինել:

2. «Գրավոր համաձայնություն» տերմինը ներառում է Կողմերի միջև ստորագրված, կամ փոխանակված նամակներում կամ

հետագրերում պարունակվող պայմանագրի արբիտրաժային վերապահումը կամ արբիտրաժային համաձայնագիրը:

3. Պայմանավորվող պետության դատարանը, եթե քննում է հայց, որի վերաբերյալ Կողմերը սույն հոդվածով նախատեսված համաձայնություն են կնքել, պարտավոր է Կողմերից որևէ մեկի խնդրանքով, Կողմերին ուղղորդել արբիտրաժ, եթե չի գտնում, որ հիշատակված համաձայնությունն անվավեր է, չգործող կամ չի կարող կատարվել:

ՀՈԴՎԱԾ 3

Յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն արբիտրաժային վճիռները ճանաչում է որպես պարտադիր և դրանք կատարում է այն տարածքի դատավարական նորմերին համապատասխան, որում հայցվում է ճանաչումը և կատարումը՝ ներքոշարադրյալ հոդվածներով նախատեսված պայմաններով:

Կոնվենցիայով կարգավորված արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման նկատմամբ չպետք է կիրառվեն էապես ավելի ծանրաբեռնող պայմաններ կամ ավելի բարձր տուրքեր կամ գանձումներ, քան այնպիսիք, որոնք կիրառվում են ներքին արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման նկատմամբ:

ՀՈԴՎԱԾ 4

1. Նախորդ հոդվածում հիշատակված ճանաչումը և կատարումը ստանալու համար ճանաչում և կատարում հայցող Կողմը այդպիսի խնդրանքով դիմելու պահին ներկայացնում է՝

ՀԱՎԵԼՎԱԾ I

(ա) արբիտրաժային վճռի պատշաճ կերպով հաստատված բնօրինակը կամ դրա պատշաճ կերպով հաստատված պատճեն,

(բ) 2-րդ հոդվածում հիշատակված համաձայնության բնօրինակը կամ դրա պատշաճ կերպով հաստատված պատճեն:

2. Եթե նշված արբիտրաժային վճիռը կամ համաձայնությունը շարադրված է ոչ այն երկրի պաշտոնական լեզվով, որտեղ հայցվում է այդ վճռի ճանաչումը և կատարումը, ապա ճանաչում և կատարում հայցող Կողմը ներկայացնում է այդ փաստաթղթերի՝ այդ լեզվով թարգմանությունը: Թարգմանությունը հաստատվում է պաշտոնական կամ երդվյալ թարգմանչի, դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչի կողմից:

ՀՈՌՎԱԾ 5

1. Արբիտրաժային վճռի ճանաչումը և կատարումը կարող է մերժվել այն Կողմի խնդրանքով, որի դեմ է այն ուղղված, եթե այդ Կողմը ճանաչման և կատարման վայրի իրավասու մարմնին ներկայացնի ապացույց առ այն, որ.

(ա) 2-րդ հոդվածում նշված համաձայնության Կողմերը նրանց նկատմամբ կիրառվող իրավունքի համաձայն որևէ կերպ անգործունակ են եղել, կամ այդ համաձայնությունն անվավեր է ըստ այն իրավունքի, որին Կողմերն ենթարկել են այդ համաձայնությունը, իսկ այդպիսի ցուցումի բացակայության դեպքում, ըստ այն երկրի իրավունքի, որտեղ կայացվել է արբիտրաժային վճիռը, կամ

- (բ) Կողմը, որի դեմ արքիտրաժային վճիռ է կայացվել, արքիտրի նշանակման մասին կամ արքիտրաժային քննության մասին չի ծանուցվել, կամ այլ պատճառներով չի կարողացել ներկայացնել իր բացատրությունները, կամ
- (գ) նշված արքիտրաժային վճիռը կայացվել է այն վեճով, որը նախատեսված չէ կամ չի ընկնում արքիտրաժին դիմելու հնարավորության շրջանակներում, կամ արքիտրաժային վճիռը պարունակում է այնպիսի հարցերով որոշումներ, որոնք ընկնում են արքիտրաժի ենթակա հարցերի շրջանակից դուրս՝ պայմանով, սակայն, որ եթե արքիտրաժին ենթակա հարցերով որոշումները կարող են անջատվել արքիտրաժին ոչ ենթակա որոշումներից, ապա արքիտրաժային վճռի այն մասն, որը որոշումներ է պարունակում արքիտրաժին ենթակա հարցերով, կարող է ճանաչել և կատարել, կամ
- (դ) արքիտրաժային տրիբունալի կազմավորումը կամ արքիտրաժային վարույթը չեն իրականացվել համաձայն Կողմերի համաձայնության, կամ վերջինիս բացակայության դեպքում՝ չեն համապատասխանել այն երկրի իրավունքին, որտեղ տեղի է ունեցել արքիտրաժը, կամ
- (ե) արքիտրաժային վճիռը Կողմերի համար դեռևս պարտադիր չի դարձել, չեղյալ է ճանաչվել կամ դրա կատարումը կասեցվել է այն երկրի իրավասու մարմնի կողմից, որտեղ կամ որի իրավունքի համաձայն արքիտրաժային վճիռը կայացվել է:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

2. Արբիտրաժային վճռի ճանաչումը և կատարումը կարող է մերժվել նաև, եթե երկրի իրավասու մարմինը, որին հայցվում է ճանաչումը և կատարումը, գտնի, որ.

(ա) ըստ այդ երկրի իրավունքի, վեճի առարկան չի կարող լինել արբիտրաժի քննարկման առարկա, կամ

(բ) այդ վճռի ճանաչումը և կատարումը հակասում են այդ երկրի հանրային կարգին:

ՀՈԴՎԱԾ 6

Եթե 5-րդ հոդվածի 1-ին կետի «ե» ենթակետում նշված իրավասու մարմինն դիմում է ներկայացվել արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու կամ դրա կատարումը կասեցնելու մասին, ապա այն մարմինը, որին դիմել են այդ վճռի ճանաչման և կատարման մասին դիմումով, կարող է, եթե նպատակահարմար գտնի, հետաձգել այդ արբիտրաժային վճիռը կատարելու մասին հարցի լուծումը, և կարող է նաև կատարում հայցող Կողմի միջնորդությամբ մյուս Կողմին պարտավորեցնել ներկայացնելու հայցի պատշաճ ապահովում:

ՀՈԴՎԱԾ 7

1. Սույն Կոնվենցիայի դրույթները չեն ազդում արբիտրաժային վճռիների ճանաչման և կատարման վերաբերյալ Պայմանավորվող կողմերի կնքած երկկողմ և բազմակողմ համաձայնագրերի վավերականության վրա, և որևէ շահագրգիռ կողմի չեն գրկում ցանկացած արբիտրաժային վճռից այն կարգով և սահմաններում օգտվելու իրավունքից, որոնք թույլատրվում են այն երկրի

իրավունքով և միջազգային պայմանագրերով, որտեղ նախատեսվում է այդպիսի արբիտրաժային վճռի կիրարկումը:

2. Արբիտրաժային վերապահումների մասին 1923 թ.-ի Ժնևյան Արձանագրությունը և Արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման մասին 1927 թ.-ի Ժնևյան Կոնվենցիան ուժը կորցնում են Պայմանավորվող կողմերի համար, երբ վերջիններիս համար պարտադիր է դառնում սույն Կոնվենցիան:

ՀՈԴՎԱԾ 8

1. Սույն Կոնվենցիան բաց է ստորագրման համար Միավորված ազգերի կազմակերպության ցանկացած անդամի համար մինչև 1958 թ.-ի դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև ցանկացած պետության համար, որը հանդիսանում է կամ հետագայում կդառնա Միավորված ազգերի կազմակերպության որևէ մասնագիտացված հաստատության անդամ, կամ որը հանդիսանում է կամ հետագայում կդառնա ՄԱԿ-ի Միջազգային դատարանի կանոնադրության անդամ, ինչպես նաև ցանկացած այլ պետության համար, որը կիրավիրվի Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից:

2. Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման, և վավերացման մասին փաստաթուղթը ի պահ է հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

ՀՈԴՎԱԾ 9

1. Սույն Կոնվենցիան միանալու համար բաց է հողված 8-ում հիշատակված բոլոր պետությունների համար:

2. Կոնվենցիային միանալը ուժի մեջ է մտնում միացման մասին փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու պահին:

ՀՈԴՎԱԾ 10

1. Ցանկացած պետություն կարող է սույն Կոնվենցիայի ստորագրման, վավերացման կամ դրան միանալու ժամանակ հայտարարել, որ սույն Կոնվենցիան տարածվում է բոլոր կամ որոշ այն տարածքների վրա, որոնց միջազգային հարաբերությունների համար նա պատասխանատվություն է կրում: Այդպիսի հայտարարությունն ուժի մեջ է մտնում սույն Կոնվենցիայի՝ այդ պետության համար ուժի մեջ մտնելու հետ միաժամանակ:

2. Վերոհիշյալից հետո ցանկացած ժամանակ այդպիսի հայտարարություն կարող է կատարվել Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի անվամբ ծանուցելու միջոցով, և ուժի մեջ է մտնում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի կողմից այդ ծանուցումն ստանալու օրվանից հաշված իննսուներորդ օրը, կամ տվյալ պետության համար Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրը՝ կախված այն բանից, թե որ ժամկետն է ավելի ուշ լրանում:

3. Ինչ վերաբերում է այն տարածքներին, որոնց վրա սույն Կոնվենցիան չի տարածվելու դրա ստորագրման, վավերացման կամ դրան միանալու դեպքում, ապա յուրաքանչյուր շահագրգիռ պետություն պետք է դիտարկի այնպիսի միջոցներ ձեռնարկելու հնարավորությունը, որոնք անհրաժեշտ են նշված տարածքների նկատմամբ սույն Կոնվենցիայի կիրառումը տարածելու համար՝ այն

տարածքների կառավարությունների համաձայնության պայմանով, որն անհրաժեշտ է սահմանադրա-իրավական հիմքերով:

ՀՈԴՎԱԾ 11

1. Դաշնային կամ ոչ ունիտար պետությունների նկատմամբ կիրառվում են հետևյալ դրույթները.

(ա) սույն Կոնվենցիայի այն հոդվածներով, որոնք ներառվում են դաշնային օրենսդիր իշխանության իրավասության շրջանակներում, դաշնային կառավարության պարտավորությունները համապատասխան սահմաններում նույն են, ինչ այն Պայմանավորվող պետությունների պարտավորությունները, որոնք դաշնային պետություններ չեն հանդիսանում,

(բ) սույն Կոնվենցիայի այն հոդվածներով, որոնք դաշնության սահմանադրական համակարգի համաձայն ներառվում են դաշնության առանձին նահանգի կամ տարածքի օրենսդիր իշխանության իրավասության շրջանակներում, և որոնք պարտավոր չեն օրենսդրական ակտ ընդունել, դաշնային կառավարությունը պարտավոր է իր բարենպաստ երաշխավորությամբ այդ հոդվածները հնարավոր սեղմ ժամկետներում ի գիտություն հայտնել նահանգների կամ տարածքների համապատասխան իշխանություններին,

(գ) սույն Կոնվենցիայի մասնակից դաշնային պետությունը՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի միջոցով փոխանցված ցանկացած մյուս Պայմանավորող պետության պահանջով, տեղեկանք է ներկայացնում սույն Կոնվենցիայի որևէ կոնկրետ դրույթի

ՀԱՎԵԼՎԱԾ I

վերաբերյալ, դաշնության և նրա բաղկացուցիչ մասերի օրենսդրության և պրակտիկայի մասին՝ նշելով, թե ինչ չափով է այդ դրույթը կենսագործվել օրենսդրական և այլ միջոցներով:

ՀՈԴՎԱԾ 12

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում վավերացման կամ միացման մասին երրորդ փաստաթուղթը ի պահ հանձնելու օրվանից հաշված ինստուներորդ օրը:
2. Յուրաքանչյուր պետության համար, որը վավերացրել է սույն Կոնվենցիան կամ միացել է դրան վավերացման կամ միացման մասին երրորդ փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո, սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այդ պետության կողմից վավերացման կամ միացման մասին իր փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո ինստուներորդ օրը:

ՀՈԴՎԱԾ 13

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն կարող է դադարեցնել սույն Կոնվենցիայի գործողությունը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին գրավոր ծանուցելու միջոցով: Գործողության դադարեցումն ուժի մեջ է մտնում այդ ծանուցումը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալու օրվանից մեկ տարի հետո:
2. Յուրաքանչյուր պետություն, որը հայտարարություն կամ ծանուցում է կատարել 10-րդ հոդվածին համապատասխան, կարող է հետագայում ցանկացած ժամանակ Միավորված ազգերի

կազմակերպության Գլխավոր քարտուղարին գրավոր ծանուցելու միջոցով հայտարարել, որ սույն Կոնվենցիայի գործողությունը համապատասխան տարածքի նկատմամբ կդադարի Գլխավոր քարտուղարի կողմից այդ ծանուցումը ստանալու օրվանից մեկ տարի հետո:

3. Սույն Կոնվենցիան կշարունակի կիրառվել այն արբիտրաժային վճիռների նկատմամբ, որոնց ճանաչման կամ կատարման վերաբերյալ գործերը սկսվել են մինչև Կոնվենցիայի գործողության դադարեցման ուժի մեջ մտնելը:

ՀՈԴՎԱԾ 14

Ոչ մի Պայմանավորվող պետության իրավունք չունի սույն Կոնվենցիայից օգտվելու ընդդեմ մյուս Պայմանավորվող պետությունների, ոչ այլ կերպ, քան այն սահմաններում, որոնցում նա պարտավոր է կիրառել սույն Կոնվենցիան:

ՀՈԴՎԱԾ 15

Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը 8-րդ հոդվածում նշված պետություններին տեղեկացնում է հետևյալի մասին.

- (ա) 8-րդ հոդվածի համաձայն ստորագրությունների և վավերացումների մասին,
- (բ) 9-րդ հոդվածի համաձայն միացումների մասին,
- (գ) 1-ին, 10-րդ և 11-րդ հոդվածներից բխող հայտարարությունների և ծանուցումների մասին,

ՀԱՎԵԼՎԱԾ I

- (դ) 12-րդ հոդվածի համաձայն սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու մասին,
- (ե) 13-րդ հոդվածի համաձայն գործողության դադարեցման և ծանուցումների մասին:

ՀՈԴՎԱԾ 16

1. Սույն Կոնվենցիան, որի անգլերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն տեքստերը հավասարազոր են, ի պահ է հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության արխիվներին:
2. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Կոնվենցիայի հաստատված պատճեններն ուղարկում է 8-րդ հոդվածում նշված պետություններին:

Կոնվենցիայի անդամ պետությունների թարմացված ցուցակը տես՝ ՄԱԿ-ի միջազգային պայմանագրերի ժողովածուի կայքը <http://treaties.un.org>:

ՀԱՎԵԼՎԱԾ II

ՈՒՆՄԻՏՐԱԼ-Ի ՏԻՊԱՅԻՆ ՕՐԵՆՔ ԱՐԲԻՏՐԱԺԻ ՄԱՍԻՆ

*1985 թ.-ի ՈՒՆՄԻՏՐԱԼ-ի Միջազգային առևտրային
արբիտրաժի մասին փիլպային օրենք
2006 թ.-ին ընդունված փոփոխություններով*

ԳԼՈՒԽ 1. Ընդհանուր դրույթներ

Հոդված 1. Կիրառման շրջանակը¹

(1) Սույն Օրենքը կիրառվում է միջազգային առևտրային² արբիտրաժի նկատմամբ՝ սույն Պետության կամ որևէ այլ պետության կամ պետությունների միջև գործող պայմանագրերի պահպանման պայմանով:

¹ Հոդվածների վերնագրերը հետապնդում են միայն հղում կատարելու նպատակ և չեն կարող օգտագործվել մեկնաբանման նպատակներով:

² «Առևտրային» եզրույթը պետք է լայն մեկնաբանել, այնպես որ ներառի առևտրային բնույթ ունեցող հարաբերություններից բխող բոլոր հարցերը՝ անկախ պայմանագրային կամ ոչ պայմանագրային լինելու հանգամանքից: Առևտրային բնույթ ունեցող հարաբերությունները ներառում են, առանց սահմանափակման, հետևյալ գործարքները. ապրանքների և ծառայությունների մատակարարմանը կամ փոխանակմանն ուղղված ցանկացած առևտրային գործարք, դիստրիբյուցիայի պայմանագիր, առևտրային ներկայացուցչություն կամ գործակալություն, ֆակտորինգ, լիզինգ, աշխատանքների կատարման, խորհրդատվության, ինժեներական, լիցենզային, ներդրումային, ֆինանսավորման, բանկային, ապահովագրական, շահագործման պայմանագիր կամ կոնցեսիա, համատեղ ձեռնարկատիրություն կամ արդյունաբերական կամ ձեռնարկատիրական բնույթի այլ համագործակցություն, բեռների և ուղևորների ծովային, երկաթգծային, ճանապարհային կամ օդային փոխադրում:

(2) Սույն Օրենքի դրույթները, բացառությամբ 8-րդ, 9-րդ, 17Ը-րդ, 17Թ-րդ, 17Ժ-րդ, 35-րդ և 36-րդ հոդվածների, կիրառվում են միայն, եթե արբիտրաժի վայրը սույն Պետության տարածքում է:

(1-ին հոդվածի 2-րդ մասը փոփոխվել է 2006 թվականին, Հանձնաժողովի 39-րդ նստաշրջանի ընթացքում)

(3) Արբիտրաժը միջազգային է, եթե.

(ա) Արբիտրաժային համաձայնության կնքման ժամանակ վերջինիս կողմերի ձեռնարկատիրական գործունեությունն վայրերը գտնվում են տարբեր պետություններում, կամ

(բ) Ստորև ներկայացված վայրերից որևէ մեկը գտնվում է այն Պետության տարածքից դուրս, որտեղ գտնվում է Կողմերի ձեռնարկատիրական գործունեության վայրերը.

(i) Արբիտրաժի վայրը, եթե այն որոշված է արբիտրաժային համաձայնությամբ կամ համաձայն դրա,

(ii) ցանկացած վայր, որտեղ պետք է կատարվի առևտրային հարաբերության պարտավորությունների էական մասը կամ վայր, որի հետ վեճի առարկան առավել սերտ է կապված, կամ

(գ) Կողմերը բացահայտ համաձայնել են առ այն, որ արբիտրաժային համաձայնության առարկան կապված է մեկից ավելի պետությունների հետ:

(4) Սույն հոդվածի 3-րդ մասի նպատակներից ելնելով.

(ա) եթե Կողմը ունի ձեռնարկատիրական գործունեության իրականացման մեկից ավելի վայր, ձեռնարկատիրական գործունեության վայր է համարվում այն վայրը, որի հետ արբիտրաժային համաձայնությունն ունի առավել սերտ կապ,

(բ) Եթե Կողմը չունի ձեռնարկատիրական գործունեության իրականացման վայր, ապա հղումը կատարվում է նրա հիմնական բնակության վայրին:

(5) Սույն Օրենքը որևէ ներգործություն չունի սույն Պետության որևէ այլ օրենքների նկատմամբ, որոնց ուժով որոշ վեճեր չեն կարող հանձնվել արբիտրաժի քննությանը կամ կարող են հանձնվել արբիտրաժի քննությանը միայն այլ դրույթների համաձայն, որոնք նախատեսված չեն սույն Օրենքով:

Հոդված 2. Հասկացություններ և մեկնաբանման կանոններ

Սույն Օրենքի իմաստով.

ա) «Արբիտրաժ» նշանակում է ցանկացած արբիտրաժ՝ անկախ նրանից իրականացվում է մշտապես գործող արբիտրաժային հաստատության կողմից, թե ոչ,

բ) «Արբիտրաժային տրիբունալ» նշանակում է միանձնյա արբիտր կամ արբիտրների կազմ,

գ) «Դատարան» նշանակում է Պետության դատական համակարգի մարմին,

դ) Երբ սույն Օրենքի դրույթը, բացառությամբ 28-րդ հոդվածի, Կողմերին իրավունք է վերապահում ազատորեն որոշելու որոշակի խնդիր, այդպիսի ազատությունը ներառում է նաև Կողմերի իրավունքը լիազորելու երրորդ անձին, ներառյալ հաստատության՝ կայացնելու այդ որոշումը,

ե) Երբ սույն Օրենքի դրույթը հղում է կատարում այն փաստին, որ Կողմերը համաձայնել են կամ հնարավոր է համաձայնեն կամ որևէ այլ ձևով հղում է կատարում Կողմերի համաձայնությանը, այդպիսի

համաձայնությունը ներառում է արբիտրաժային այն բոլոր կանոնները, որոնց այդ համաձայնությունը հղում է կատարում, զ) Երբ սույն Օրենքի դրույթը, բացառությամբ 25(ա) և 32(2)(ա) հոդվածների, կիրառելի է հայցի նկատմամբ, ապա այն հավասարապես կիրառելի է նաև հակընդդեմ հայցի նկատմամբ, և երբ կիրառելի է պատասխանի նկատմամբ, հավասարապես կիրառելի է նաև հակընդդեմ հայցի պատասխանի նկատմամբ:

Հոդված 2(ա). Միջազգային ծագումը և ընդհանուր սկզբունքները (Ընդունված 2006 թվականին, Հանձնաժողովի 39-րդ նստաշրջանի ընթացքում)

(1) Սույն Օրենքի մեկնաբանման շրջանակներում հարկ է հաշվի առնել դրա միջազգային ծագումը և դրա միատեսակ կիրառումն ու բարեխղճության պահպանումը խթանելու անհրաժեշտությունը:

(2) Սույն Օրենքով նախատեսված այն հարցերը, որոնք ուղղակիորեն կարգավորված չեն դրանով, պետք է կարգավորվեն այն ընդհանուր սկզբունքներին համապատասխան, որոնց վրա հիմնված է սույն Օրենքը:

Հոդված 3. Գրավոր հաղորդակցության ստացումը

(1) Եթե այլ բան նախատեսված չէ Կողմերի համաձայնությամբ, ապա.

(ս) ցանկացած գրավոր հաղորդակցություն կհամարվի ստացված, եթե այն անձամբ հասցված է հասցեատիրոջը կամ նրա ձեռնարկատիրական գործունեության իրականացման վայր, հիմնական բնակության վայր կամ փոստային հասցեով: Եթե ողջամիտ հարցում կատարելուց հետո նշվածներից ոչ մեկի առկայությունը չի հիմնավորվում, ապա գրավոր հաղորդակցությունը համարվում է ստացված, եթե այն ուղարկված է հասցեատիրոջ վերջին հայտնի ձեռնարկատիրական գործունեության վայր, բնակության վայր կամ փոստային հասցեով՝ պատվիրված նամակով կամ նշված հաղորդակցությունն հասցնելու փորձի գրանցումն ապահովող որևէ այլ ձևով:

(բ) հաղորդակցությունը համարվում է ստացված դրա հասցվելու օրը:

(2) Սույն հոդվածի դրույթները չեն կիրառվում դատական ընթացակարգերի ժամանակ առկա հաղորդակցությունների նկատմամբ:

Հոդված 4. Առարկելու իրավունքից հրաժարվելը

Եթե կողմին հայտնի է, որ սույն Օրենքի որևէ դրույթ, որի կիրառումը կողմերը կարող են սահմանափակել, կամ արբիտրաժային համաձայնության որևէ պահանջ չի պահպանվել, և, այդուհանդերձ, կողմը շարունակում է արբիտրաժային վարույթը՝ չհայտնելով իր առարկությունները այդպիսի չպահպանման վերաբերյալ առանց անհարկի ձգձգման, կամ այդպիսի առարկություն ներկայացնելու համար կոնկրետ ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ այդ ժամկետի ընթացքում, ապա

համարվում է, որ տվյալ կողմը հրաժարվել է առարկություն ներկայացնելու իր իրավունքից:

Հոդված 5. Դատարանի միջամտության սահմանները

Արգելվում է որևէ դատական միջամտություն սույն Օրենքով կարգավորվող հարցերին, բացառությամբ սույն Օրենքով նախատեսված դեպքերի:

Հոդված 6. Արբիտրաժի աջակցության կամ վերահսկման որոշակի գործառնությունների համար Դատարան կամ այլ իրավասու մարմին

11(3), 11(4), 13(3), 14, 16(3) և 34(2) հոդվածներով նախատեսված գործառնությունները պետք է իրականացվեն հետևյալ ձևակերպմամբ ... [սույն տիպային օրենքը կիրարկող յուրաքանչյուր Պետություն պետք է հստակեցնի այն դատարանը, դատարանները կամ ըստ անհրաժեշտության այլ լիազոր մարմին, որը իրավասու է իրականացնել նշված գործառնությունները]:

ԳԼՈՒԽ 2. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Տարբերակ 1

*Հոդված 7. Արբիտրաժային համաձայնության հասկացությունը և
ձևը*

*(Ընդունված 2006 թվականին, Հանձնաժողովի 39-րդ նստաշրջանի
ընթացքում)*

(1) «Արբիտրաժային համաձայնություն»-ը Կողմերի համաձայնությունն է հանձնել արբիտրաժի քննությանը բոլոր կամ որոշակի վեճեր, որոնք ծագել կամ կարող են ծագել նրանց միջև որոշակի իրավահարաբերության կապակցությամբ, անկախ իրավահարաբերության պայմանագրային կամ ոչ պայմանագրային լինելու հանգամանքից: Արբիտրաժային համաձայնությունը կարող է լինել ինչպես պայմանագրում արբիտրաժային վերապահման ձևով, այնպես էլ առանձին պայմանագրի ձևով:

(2) Արբիտրաժային համաձայնությունը կնքվում է գրավոր եղանակով:

(3) Արբիտրաժային համաձայնությունը համարվում է գրավոր եղանակով կնքված, եթե դրա բովանդակությունը արտահայտված է որևէ ձևով, անկախ նրանից արբիտրաժային համաձայնությունը կամ պայմանագիրը կնքված է բանավոր, կոնկլուդենտ գործողություններով կամ որևէ այլ եղանակով:

(4) Արբիտրաժային համաձայնության գրավոր լինելու պահանջը համարվում է բավարարված էլեկտրոնային հաղորդակցության միջոցով, եթե դրանում պարունակվող տեղեկատվությունը հասանելի է այնպես, որ այն ենթակա լինի

օգտագործման հետագա հղման համար. «Էլեկտրոնային հաղորդակցություն» նշանակում է ցանկացած հաղորդակցություն, որը Կողմերն իրականացնում են տվյալների հաղորդագրության միջոցով. «տվյալների հաղորդագրություն» նշանակում է էլեկտրոնային, մագնիսական, օպտիկական կամ նման եղանակով մշակվող, ուղարկվող, ստացվող կամ պահպանվող տեղեկատվություն, որոնք ներառում են, սակայն չեն սահմանափակվում, տվյալների էլեկտրոնային փոխանակում (ՏԷՓ), էլեկտրոնային փոստ, հեռագիր, հեռատիպ կամ հեռապատճեն:

(5) Ի հավելումն՝ արբիտրաժային համաձայնությունը համարվում է գրավոր, եթե այն ներառված է փոխանակված հայցադիմումում կամ պատասխանում և որոնցում համաձայնության առկայությունը վկայակոչվում է մի կողմի կողմից և չի մերժվել մյուս կողմի կողմից:

(6) Պայմանագրում արբիտրաժային վերապահում պարունակող ցանկացած փաստաթղթի կատարվող հղումը համարվում է գրավոր արբիտրաժային համաձայնություն, եթե հղումն այնպիսին է, որ նշված վերապահումը դարձնում է պայմանագրի մաս:

Տարբերակ 2

Հոդված 7. Արբիտրաժային համաձայնության հասկացությունը (Ընդունված 2006 թվականին, Հանձնաժողովի 39-րդ նախաշրջանի ընթացքում)

«Արբիտրաժային համաձայնություն»-ը Կողմերի համաձայնությունն է հանձնել արբիտրաժի քննությանը բոլոր կամ որոշակի վեճեր, որոնք ծագել կամ կարող են ծագել նրանց միջև որոշակի իրավահարաբերության կապակցությամբ, անկախ իրավահարաբերության պայմանագրային կամ ոչ պայմանագրային լինելու հանգամանքից:

Հոդված 8. Արբիտրաժային համաձայնությունը և հայցի հարուցումը դատարան՝ ըստ վեճի էության

- (1) Դատարանը, որին հայց է ներկայացված այն վեճի վերաբերյալ, որի շուրջ առկա է արբիտրաժային համաձայնություն, պարտավոր է կողմերից մեկի միջնորդության հիման վրա, որը բերվել է ոչ ուշ, քան վեճի էության շուրջ այդ կողմի առաջին հայտարարության ներկայացումը, կողմերին ուղղորդել դեպի արբիտրաժ, բացառությամբ եթե արբիտրաժային համաձայնությունը անվավեր է, չգործող կամ չի կարող կատարվել:
- (2) Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հայցի առկայության դեպքում արբիտրաժային վարույթը, այդուհանդերձ, կարող է սկսվել կամ շարունակվել, և կարող է վճիռ կայացվել հարցը դատարանում գտնվելու ընթացքում:

Հոդված 9. Արբիտրաժային համաձայնությունը և դատարանի կողմից ընդունվող հայցի ապահովման միջոցները

Արբիտրաժային համաձայնության հետ անհամատեղելի չէ և արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված իրավունքներից հրաժարում չի հանդիսանում արբիտրաժի կողմի՝ արբիտրաժից առաջ կամ դրա ընթացքում հայցի ապահովման միջոցներ կիրառելու միջնորդությամբ դատարան դիմելը և դատարանի՝ նման ապահովման միջոցներ ձեռնարկելու մասին որոշում կայացնելը:

**ԳԼՈՒԽ 3. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՏՐԻԲՈՒՆԱԼԻ
ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ**

Հոդված 10. Արբիտրների թիվը

- (1) Կողմերը ազատ են որոշելու արբիտրների թիվը:
- (2) Արբիտրների թվի շուրջ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում արբիտրաժային տրիբունալը ձևավորվում է երեք արբիտրի կազմով:

Հոդված 11. Արբիտրների նշանակումը

- (1) Ոչ ոք չի կարող իր քաղաքացիության (ազգության) պատճառով զրկվել արբիտր նշանակվելու իրավունքից, եթե կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ:

(2) Կողմերն ազատ են համաձայնելու արբիտրի կամ արբիտրների նշանակման կարգի շուրջ՝ համաձայն սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի դրույթների:

(3) Նման համաձայնության չհասնելու պարագայում.

(ա) երեք արբիտրից բաղկացած արբիտրաժում կողմերից յուրաքանչյուրը նշանակում է մեկ արբիտր, և երկու նշանակված արբիտրները նշանակում են երրորդ արբիտրին. եթե կողմն արբիտր նշանակելու մասին մյուս կողմի պահանջի ստացման պահից 30 օրվա ընթացքում չի նշանակում արբիտր, կամ եթե նշանակված արբիտրները իրենց նշանակման պահից 30 օրվա ընթացքում չեն նշանակում երրորդ արբիտրին, ապա կողմի խնդրանքով նշանակումը կատարում է սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված դատարանը կամ այլ իրավասու մարմինը:

(բ) Միանձնյա արբիտրով արբիտրաժի պարագայում, եթե Կողմերը համաձայնության չեն գալիս արբիտրի շուրջ, ապա Կողմի պահանջով արբիտրը նշանակվում է դատարանի կամ 6-րդ հոդվածով նախատեսված այլ իրավասու մարմնի կողմից:

(4) Երբ Կողմերի միջև համաձայնեցված նշանակման ընթացակարգի համաձայն՝

(ա) Կողմը չի գործում այդպիսի ընթացակարգի համաձայն, կամ

(բ) Կողմերը կամ երկու արբիտրները չեն կարողանում գալ այդպիսի ընթացակարգով նրանցից ակնկալվող համաձայնության, կամ

(գ) Երրորդ անձը, այդ թվում հաստատությունը, չի կատարում այդպիսի ընթացակարգով իրեն վստահված գործառույթը, ապա.

Կողմերից ցանկացածը կարող է պահանջել դատարանին կամ 6-րդ հոդվածով նախատեսված այլ իրավասու մարմնին ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումները, եթե նշանակման ընթացակարգի մասին համաձայնությունը չի նախատեսում նշանակման ապահովման վերաբերյալ այլ միջոցներ:

(5) Սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված դեպքերի վերաբերյալ դատարանին կամ 6-րդ հոդվածով նախատեսված այլ իրավասու մարմնին ուղղված որոշումը չի կարող բողոքարկվել: Դատարանը կամ այլ իրավասու մարմինը, արբիտրին նշանակելիս, պետք է պատշաճ վերաբերմունք ցուցաբերի Կողմերի համաձայնությամբ արբիտրին ներկայացվող որակավորմանը և այնպիսի նկատառումներին, որոնք հավանական է, որ կապահովեն անկախ և անկողմնակալ արբիտրի նշանակումը, և միանձնյա կամ երրորդ արբիտրի պարագայում, պետք է հաշվի առնի նաև Կողմերի ազգությունից տարբերվող այլ ազգություն ունեցող արբիտրի նշանակման նպատակահարմարությունը:

Հոդված 12. Բացարկի հիմքերը

(1) Երբ անձին՝ իր արբիտր նշանակվելու հավանականության կապակցությամբ դիմում են, նա պարտավոր է հայտնել ցանկացած հանգամանք, որը հնարավոր է արդարացված կասկած հարուցի իր անկողմնակալության կամ անկախության վերաբերյալ: Արբիտրը, իր նշանակման պահից ի վեր և արբիտրաժային ընթացակարգերի ողջ ընթացքում, պետք է անհապաղ Կողմերին հայտնի այդպիսի հանգամանքների մասին, եթե նա ավելի վաղ չի հայտնել վերջիններիս դրանց մասին:

(2) Արբիտրին բացարկ կարող է հայտնվել միայն եթե առկա են իր անկողմնակալության կամ անկախության վերաբերյալ արդարացված կասկած հարուցող հանգամանքներ, կամ եթե նա չունի Կողմերի միջև համաձայնեցված որակավորում: Կողմը կարող է իր կողմից նշանակված արբիտրին կամ նրան, ում նշանակմանը մասնակցել է, բացարկ հայտնել միայն այն հանգամանքների կապակցությամբ, որոնք իրեն հայտնի են դարձել նշանակումից հետո:

Հոդված 13. Բացարկ հայտնելու ընթացակարգը

(1) Կողմերն ազատ են համաձայնելու արբիտրին բացարկ հայտնելու ընթացակարգի շուրջ՝ համաձայն սույն հոդվածի 3-րդ մասի դրույթների:

(2) Այդպիսի համաձայնության բացակայության պարագայում, Կողմը, որը ցանկանում է բացարկ հայտնել արբիտրին, պետք է արբիտրաժային տրիբունալի ստեղծման մասին տեղեկանալուց կամ 12(2) հոդվածով նախատեսված հանգամանքների մասին տեղեկանալուց հետո 15 օրվա ընթացքում բացարկի պատճառների մասին գրավոր հայտարարություն ուղարկի արբիտրաժային տրիբունալին: Եթե արբիտրը, որին բացարկ է հայտնվել, ինքնաբացարկ չի հայտնում, կամ մյուս կողմը չի համաձայնում բացարկին, ապա բացարկի հարցը որոշում է արբիտրաժային տրիբունալը:

(3) Եթե կողմերի համաձայնեցրած կամ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով հայտնված բացարկը մերժվում է, ապա բացարկ հայտնած կողմը բացարկի մերժման մասին որոշումը ստանալուց հետո 30-օրյա ժամկետում, կարող է դիմել

դատարան կամ 6-րդ հոդվածով սահմանված իրավասու այլ մարմին՝ բացարկի վերաբերյալ որոշում ընդունելու խնդրանքով, որի կայացրած ակտը բողոքարկման ենթակա չէ: Քանի դեռ կողմի նման դիմումի վերաբերյալ որոշում ընդունված չէ, արբիտրաժային տրիբունալը, ներառյալ՝ այն արբիտրը, որին բացարկ է հայտնվել, կարող է շարունակել արբիտրաժային վարույթը և վճիռ կայացնել:

Հոդված 14. Գործելու անհնարինություն կամ անկարողություն

(1) Այն դեպքում, երբ արբիտրը իրավաբանորեն (de jure) կամ փաստացի (de facto) ի վիճակի չէ կատարել կամ այլ պատճառներով չի կատարում իր գործառույթներն առանց անհարկի ձգձգման, ապա նրա լիազորությունը դադարում են, եթե նա ինքնաբացարկ է հայտնում, կամ եթե Կողմերը համաձայնության են գալիս դադարեցման կապակցությամբ: Հակառակ դեպքում, երբ առկա են տարաձայնություններ այդ հիմքերից որևէ մեկի վերաբերյալ, կողմերից յուրաքանչյուրը կարող է դիմել դատարան կամ 6-րդ հոդվածով նախատեսված այլ իրավասու մարմնի որոշում կայացնելու լիազորության դադարեցման վերաբերյալ, որը ենթակա չէ բողոքարկման:

(2) Եթե սույն հոդվածի կամ 13(2) հոդվածի համաձայն արբիտրը ինքնաբացարկ է հայտնում կամ Կողմը համաձայնություն է տալիս արբիտրի լիազորությունը դադարեցնելու վերաբերյալ, ապա դա չի ենթադրում սույն հոդվածով կամ 12(2) հոդվածով նախատեսված որևէ հիմքի ընդունում:

Հոդված 15. Փոխարինող արբիտրի նշանակումը

Այն դեպքում, երբ արբիտրի լիազորությունները դադարում են 13-րդ կամ 14-րդ հոդվածի համաձայն կամ ցանկացած այլ պատճառով ինքնաբացարկ հայտնելու հիմքով կամ Կողմերի համաձայնությամբ՝ նրա լիազորությունների դադարեցման հիմքով կամ իր լիազորությունների որևիցե այլ հիմքով դադարեցվելու դեպքում, փոխարինող արբիտրը պետք է նշանակվի այն կանոնների համաձայն, որոնց համաձայն նշանակվել էր փոխարինվող արբիտրը:

**ԳԼՈՒԽ 4. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՏՐԻԲՈՒՆԱԼԻ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ**

*Հոդված 16. Արբիտրաժային տրիբունալի իր իսկ իրավասության
վերաբերյալ որոշում կայացնելու իրավասությունը*

(1) Արբիտրաժային տրիբունալը կարող է որոշում կայացնել իր իրավասության վերաբերյալ, ներառյալ արբիտրաժային համաձայնության գոյության կամ վավերականության կապակցությամբ արված ցանկացած առարկության վերաբերյալ: Այդ նպատակով արբիտրաժային վերապահումը, որը կազմում է պայմանագրի բաղկացուցիչ մասը, պետք է դիտարկվի որպես պայմանագրի մյուս դրույթներից անկախ համաձայնություն: Արբիտրաժային տրիբունալի որոշումն առ այն, որ պայմանագիրն անվավեր է չպետք է ipso jure (օրենքի ուժով) հանգեցնի արբիտրաժային վերապահման անվավերության:

(2) Արբիտրաժային տրիբունալի իրավասության բացակայության վերաբերյալ հայտարարությունը պետք է ներկայացվի ոչ ուշ, քան հայցի պատասխանի ներկայացումը: Կողմի՝ արբիտր նշանակելու կամ արբիտրի նշանակմանը մասնակցելու հանգամանքը նրան չի զրկում այդպիսի հայտարարություն անելու իրավունքից: Արբիտրաժային տրիբունալի կողմից իր իրավասությունը գերազանցելու վերաբերյալ հայտարարությունը պետք է արվի անմիջապես այն բանից հետո, երբ կողմի կարծիքով արբիտրաժի ընթացքում շոշափվում է այնպիսի հարց, որը դուրս է արբիտրաժային տրիբունալի իրավասության շրջանակից: Արբիտրաժային տրիբունալը ցանկացած դեպքում կարող է ընդունել ուշացված հայտարարությունը, եթե ուշացումը համարի արդարացված:

(3) Սույն հոդվածի 2-րդ մասում նշված հայտարարության վերաբերյալ արբիտրաժային տրիբունալը կարող է կայացնել որոշում՝ որպես նախնական բնույթ ունեցող հարց, կամ անդրադառնալ դրան վեճն ըստ էության լուծող որոշման մեջ:

Եթե արբիտրաժային տրիբունալն որոշում է կայացնում առ այն, որ այն ունի իրավասություն, որպես նախնական բնույթ ունեցող հարց, ապա կողմերից յուրաքանչյուրն այդ որոշման մասին ծանուցում ստանալուց հետո 30-օրյա ժամկետում կարող է դիմել 6-րդ հոդվածով նախատեսված դատարան տվյալ հարցի վերաբերյալ որոշում կայացնելու պահանջով, որի կայացրած որոշումը բողոքարկման ենթակա չէ: Մինչև դատարանի կողմից այդ հարցի լուծումը արբիտրաժային տրիբունալը կարող է շարունակել արբիտրաժային վարույթը և վճիռ կայացնել:

**ԳԼՈՒԽ 4Ա. ՀԱՅՑԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ
ՆԱԽՆԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

*(Ընդունված 2006 թվականին, Հանձնաժողովի 39-րդ նստաշրջանի
ընթացքում)*

Բաժին 1. Հայցի ապահովման միջոցները
*Հոդված 17. Արբիտրաժային տրիբունալի լիազորությունը՝ հայցի
ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ*

(1) Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, Կողմի պահանջով արբիտրաժային տրիբունալը կարող է կիրառել հայցի ապահովման միջոցներ:

(2) Հայցի ապահովման միջոց է համարվում ցանկացած ժամանակավոր միջոց, որը ընդունվել է արբիտրաժային վճռի կամ այլ ձևով, և որով, նախքան վեճը վերջնականապես լուծող արբիտրաժային վճռի կայացումը, արբիտրաժային տրիբունալը կարգադրում է Կողմին.

(ա) Վեճի լուծման ընթացքում պահպանել կամ վերականգնել status quo (նախկինում առկա իրավիճակը),

(բ) Ձեռնարկել կանխարգելիչ միջոց կամ ձեռնպահ մնալ այնպիսի գործողությունների կատարումից, որոնք հնարավոր է պատճառեն առկա կամ անմիջական վնաս արբիտրաժային վարույթին կամ նախապաշարմունք արբիտրաժային վարույթի նկատմամբ,

(գ) Տրամադրել ակտիվների պահպանման միջոցներ, որոնցից հետագայում կարող է տրվել արբիտրաժային վճռով բավարարում, կամ

(դ) Պահպանել վեճի լուծման համար կիրառելի կամ վերաբերելի ապացույցները:

Հոդված 17Ա. Հայցի ապահովման միջոց շնորհելու պայմանները

(1) Կողմը, որը 17(2)(ա), (բ) և (գ) հոդվածով հայցում է հայցի ապահովման միջոց, պետք է արբիտրաժային տրիբունալին բավարարի առ այն, որ.

(ա) Վնասների հատուցման վերաբերյալ վճռով ողջամտորեն չհատուցվող վնաս կատճառվի, եթե հայցի ապահովման միջոց չկիրառվի, և այդպիսի վնասը զգալիորեն գերազանցում է այն վնասը, որը հնարավոր է պատճառվի այն կողմին, ում դեմ ուղղված է միջոցը, եթե այն կիրառվի, և

(բ) Առկա է ողջամիտ հնարավորություն առ այն, որ դիմող կողմը հաջողություն կունենա գործ ըստ էության լուծելիս: Այսպիսի հնարավորության կապակցությամբ որոշում կայացնելը չպետք է անդրադառնա արբիտրաժային տրիբունալի հայեցողության վրա հետագայում որևէ այլ որոշում կայացնելիս:

(2) 17(2)(դ) հոդվածի համաձայն հայցի ապահովման միջոց հայցելիս սույն հոդվածի (1)(ա) և (բ) կետերի պահանջները պետք է կիրառվեն այնքանով, որքանով արբիտրաժային տրիբունալը կհամարի կիրառելի:

Բաժին 2. Նախնական կարգադրություններ

*Հոդված 17Բ. Նախնական կարգադրությունների
միջնորդությունները և նախնական կարգադրությունների
տրամադրման պայմանները*

(1) Եթե այլ բան նախատեսված չէ Կողմերի համաձայնությամբ, Կողմերից յուրաքանչյուրը կարող է առանց արբիտրաժային վարույթի մյուս կողմին ծանուցելու դիմել հայցի ապահովման միջոց կիրառելու համար՝ միաժամանակ ներկայացնելով նախնական կարգադրություն տալու մասին միջնորդություն՝ ուղղորդելով Կողմին չխափանել հայցվող ապահովման միջոցի նպատակը:

(2) Արբիտրաժային տրիբունալը կարող է արձակել նախնական կարգադրություն, եթե գտնի, որ հայցի ապահովման միջոց կիրառելու դիմումի մասին նախապես այն կողմին տեղեկացնելը, որի դեմ այն ուղղված է, կարող է անհնարին դարձնել հայցի ապահովման միջոցի կատարումը:

(3) 17Ա հոդվածով սահմանված պայմանները կիրառվում են ցանկացած նախնական կարգադրության նկատմամբ՝ հաշվի առնելով, որ 17Ա(1)(ա) հոդվածի ներքո գնահատման ենթակա վնասը այն վնասն է, որը հնարավոր է առաջանա կարգադրությունը տալու կամ չտալու հետևանքով:

Հոդված 17Գ. Նախնական կարգադրությունների հապուկ ռեժիմը

(1) Արբիտրաժային տրիբունալի կողմից նախնական կարգադրություն տալու մասին միջնորդության վերաբերյալ

որոշում կայացվելուց անմիջապես հետո արբիտրաժային տրիբունալը բոլոր կողմերին ծանուցում է հայցի ապահովման միջոց սահմանելու դիմումի, նախնական կարգադրություն տալու մասին միջնորդության, առկայության դեպքում՝ նախնական կարգադրության և կողմերից յուրաքանչյուրի և արբիտրաժային տրիբունալի միջև դրանց վերաբերյալ մյուս բոլոր հաղորդագրությունների մասին, այդ թվում՝ նշելով ցանկացած բանավոր հաղորդագրության բովանդակությունը:

(2) Միաժամանակ, արբիտրաժային տրիբունալը պետք է ցանկացած կողմին, ում դեմ ուղղված է նախնական կարգադրությունը, ընձեռի հնարավորություն առավել հարմարավետ ժամանակում կազմակերպելու իր պաշտպանությունը:

(3) Արբիտրաժային տրիբունալը պետք է պատշաճ կարգով որոշում ընդունի նախնական կարգադրության կապակցությամբ արված ցանկացած առարկության վերաբերյալ:

(4) Նախնական կարգադրության գործողությունը դադարում է արբիտրաժային տրիբունալի կողմից այդ մասին որոշումն ընդունվելու օրվանից քսան օր հետո: Արբիտրաժային տրիբունալը կարող է սահմանել հայցի ապահովման միջոց՝ ընդունելով կամ փոփոխելով նախնական կարգադրությունը նրանից հետո, երբ այն կողմը, որի համար նախատեսված է նախնական կարգադրությունը, ծանուցվել և հնարավորություն է ստացել ներկայացնելու իր դիրքորոշումը:

(5) Նախնական կարգադրությունն ունի պարտադիր ուժ կողմերի համար, սակայն ենթակա չէ հարկադիր կատարման դատարանի կողմից: Այսպիսի նախնական կարգադրությունը վճիռ չի համարվում:

Բաժին 3. Հայցի ապահովման միջոցների և նախնական կարգադրությունների նկատմամբ կիրառվող դրույթները

Հոդված 17Դ. Փոփոխում, կասեցում ու դադարեցում

Արբիտրաժային տրիբունալը կարող է փոփոխել, կասեցնել կամ դադարեցնել իր սահմանած հայցի ապահովման միջոցը կամ նախնական կարգադրությունը՝ կողմերից մեկի դիմումի հիման վրա, կամ բացառիկ դեպքերում կողմերին նախապես ծանուցելուց հետո՝ իր նախաձեռնությամբ:

Հոդված 17Ե. Ապահովության տրամադրում

- (1) Արբիտրաժային տրիբունալը կարող է հայցի ապահովման միջոց կիրառելու հայցող կողմից պահանջել տրամադրելու հայցի ապահովման միջոցի կապակցությամբ պատշաճ ապահովություն:
- (2) Արբիտրաժային տրիբունալը պետք է նախնական կարգադրություն հայցող կողմից պահանջի տրամադրելու կարգադրության կապակցությամբ պատշաճ ապահովություն, բացառությամբ, եթե արբիտրաժային տրիբունալը կհամարի այն անհարկի և ոչ անհրաժեշտ:

Հոդված 17Զ. Տեղեկատվության բացահայտում

- (1) Արբիտրաժային տրիբունալը կարող է պահանջել ցանկացած կողմից անհապաղ բացահայտելու ապահովման միջոցի կիրառում հայցելու կամ այն տրամադրելու հիմքում ընկած հանգամանքների ցանկացած էական փոփոխություն:

(2) Նախնական կարգադրություն հայցող կողմը պարտավոր է արբիտրաժային տրիբունալին բացահայտել այն բոլոր հանգամանքները, որոնք հավանական է վերաբերելի լինեն կարգադրություն տալու կամ պահպանելու վերաբերյալ արբիտրաժային տրիբունալի որոշման կայացման համար, այդպիսի պարտավորությունը շարունակում է գործել այնքան, քանի դեռ կողմը, որի դեմ հայցվել է նախնական կարգադրությունը, հնարավորություն կունենա ներկայացնելու իր պաշտպանությունը: Դրանից հետո ենթակա է կիրառման սույն հոդվածի առաջին մասը:

Հոդված 17Է. Ծախսերը և վնասները

Կողմը, որը պահանջում է կիրառել ապահովման միջոց կամ հայցում է նախնական կարգադրություն, կրում է այդպիսի միջոցի կամ կարգադրության հետևանքով ցանկացած կողմին պատճառված բոլոր ծախսերն ու վնասները, եթե արբիտրաժային տրիբունալը հետազայում գտնի, որ նմանատիպ հանգամանքներում այդպիսի միջոց կամ կարգադրություն չպետք է տրամադրվեր: Արբիտրաժային տրիբունալը կարող է այդպիսի ծախսերը և վնասները հատուցելու վերաբերյալ որոշում կայացնել վարույթի ցանկացած փուլում:

*Բաժին 4. Հայցի ապահովման միջոցների ճանաչումը և
կարարումը*

Հոդված 17Ը. Ճանաչում և կարարում

(1) Արբիտրաժային տրիբունալի կողմից կիրառված հայցի ապահովման միջոցը ճանաչվում է որպես պարտադիր, և, եթե այլ բան սահմանված չէ արբիտրաժային տրիբունալի կողմից, ենթակա է կատարման իրավասու դատարանին միջնորդություն ներկայացնելու միջոցով՝ անկախ նրանից, թե որ երկրում է կայացվել այդպիսի միջոցը՝ հաշվի առնելով 17Թ հոդվածի դրույթները:

(2) Այն կողմը, որը հայցում է հայցի ապահովման միջոցի ճանաչում կամ կատարում, կամ որի համապատասխան հայցը բավարարվել է, պետք է անհապաղ տեղեկացնի դատարանին այդպիսի հայցի ապահովման միջոցի դադարեցման, կասեցման կամ փոփոխման մասին:

(3) Պետության դատարանը, որտեղ հայցի ապահովման միջոցը ճանաչելու կամ կատարելու միջնորդություն է ներկայացվել, եթե այն համարի տեղին, կարող է հայցող կողմին կարգադրել տրամադրելու պատշաճ ապահովություն, եթե արբիտրաժային տրիբունալն արդեն իսկ չի կայացրել որոշում ապահովության առնչությամբ, կամ եթե այդպիսի որոշումն անհրաժեշտ է երրորդ անձանց իրավունքները պաշտպանության համար:

Հոդված 17Թ. Ճանաչումը կամ կատարումը մերժելու հիմքերը³

(1) Հայցի ապահովման միջոցի ճանաչումը կամ կատարումը կարող է մերժվել միայն՝

(ա) այն կողմի խնդրանքով, որի դեմ է այն ուղղված, եթե դատարանը գտնում է, որ՝

(i) այդպիսի մերժումն արդարացված է 36 (1)(ա)(i), (ii), (iii) կամ (iv) հոդվածով սահմանված հիմքերով, կամ

(ii) արբիտրաժային տրիբունալի կողմից կիրառված հայցի ապահովման միջոցի հետ կապված ապահովում տրամադրելու վերաբերյալ արբիտրաժային տրիբունալի որոշումը չի կատարվել, կամ

(iii) հայցի ապահովման միջոցը դադարեցվել կամ կասեցվել է արբիտրաժային տրիբունալի կողմից կամ համապատասխան իրավասություն ամկայության պարագայում՝ դատարանի կողմից, որտեղ տեղի է ունենում արբիտրաժը, կամ այն Պետության օրենսդրության ներքո, որի համաձայն՝ կայացվել է հայցի ապահովման միջոցի մասին որոշումը, կամ

(բ) եթե դատարանը գտնում է, որ՝

(i) հայցի ապահովման միջոցն անհամատեղելի է դատարանին վերապահված իրավասությունների հետ,

³ 17Թ հոդվածով նախատեսված պայմանները նպատակ են հետապնդում սահմանափակելու այն հանգամանքները, որոնց ամկայության պարագայում դատարանը կարող է մերժել հայցի ապահովման միջոցի կատարումը: Պետությունների կողմից սահմանափակ թվով հանգամանքների ընդունումը, որոնց դեպքում կատարումը կարող է մերժվել, չի կարող դիտարկվել որպես սույն տիպային դրույթների միջոցով ներդաշնակեցման մակարդակ ապահովելու դեմ ուղղված գործողություն:

- բացառությամբ եթե դատարանը որոշում է վերաձևակերպել հայցի ապահովման միջոցն այնքանով, որքանով անհրաժեշտ է այն իր իրավասություններին և ընթացակարգերին համապատասխանեցնելու համար՝ հայցի ապահովման այդ միջոցը կատարելու նպատակով և առանց դրա բովանդակությունը փոփոխելու, կամ
- (ii) 36 (1)(բ)(i) կամ (ii) հոդվածով սահմանված հիմքերից ցանկացածը կիրառվում է հայցի ապահովման միջոցի ճանաչման կամ կատարման նկատմամբ:
- (2) Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված որևէ հիմքով դատարանի կողմից կայացված ցանկացած որոշում գործում է միայն հայցի ապահովման միջոցը ճանաչելու և կատարելու վերաբերյալ միջնորդության ներկայացման նպատակներով: Այն դատարանը, որտեղ հայցվում է հայցի ապահովման միջոցի ճանաչումը կամ կատարումը, այդպիսի որոշումն ընդունելիս չպետք է ձեռնարկի հայցի ապահովման միջոցի բովանդակության վերանայում:

Բաժին 5. Դատարանի կողմից կիրառվող հայցի ապահովման միջոցները

Հոդված 17Ժ. Դատարանի կողմից կիրառվող հայցի ապահովման միջոցները

Արբիտրաժային վարույթի շրջանակներում դատարանը պետք է ունենա հայցի ապահովման միջոց կիրառելու նույնպիսի իրավասություն, ինչպիսին ունի դատական գործի վարույթում՝ անկախ նրանից, այդ միջոցների կիրառման վայրը այդ Պետության

տարածքում է, թե ոչ: Դատարանը պետք է իրականացնի այդպիսի իրավասությունը իր ընթացակարգերին համապատասխան՝ հաշվի առնելով միջազգային արբիտրաժի առանձնահատկությունները:

ԳԼՈՒԽ 5. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Հոդված 18. Կողմերի նկատմամբ հավասար վերաբերմունք

Կողմերի նկատմամբ պետք է ցուցաբերվի հավասար վերաբերմունք և յուրաքանչյուր կողմին պետք է տրվի իր պաշտպանությունը ներկայացնելու ամբողջական հնարավորություն:

Հոդված 19. Ընթացակարգային նորմերի սահմանումը

- (1) Սույն Օրենքի դրույթների պահպանմամբ՝ կողմերը ազատ են համաձայնելու այն ընթացակարգի շուրջ, որի համաձայն՝ արբիտրաժային տրիբունալը կիրականացնի արբիտրաժային վարույթը:
- (2) Նման համաձայնության բացակայության պարագայում արբիտրաժային տրիբունալը, սույն Օրենքի դրույթների պահպանմամբ, կարող է արբիտրաժն իրականացնել իր կողմից պատշաճ համարվող ձևով: Արբիտրաժային տրիբունալին տրված իրավասությունը ներառում է նաև ցանկացած ապացույցի թույլատրելիությունը, վերաբերելիությունը, էականությունը կամ կշիռը որոշելու լիազորությունը:

Հոդված 20. Արբիտրաժի անցկացման վայրը

(1) Կողմերն ազատ են որոշելու արբիտրաժի անցկացման վայրը: Նման համաձայնության բացակայության պարագայում արբիտրաժի անցկացման վայրը որոշվում է արբիտրաժային տրիբունալի Կողմից՝ հաշվի առնելով գործի հանգամանքները, ներառյալ կողմերի համար հարմարավետությունը:

(2) Չնայած սույն հոդվածի 1-ին մասի դրույթներին՝ արբիտրաժային տրիբունալը կարող է, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, նիստ գումարել ցանկացած այլ վայրում, որը հարմար է գտնում, արբիտրների միջև խորհրդակցություն իրականացնելու, վկաներին, փորձագետներին կամ կողմերին լսելու կամ ապրանքներ, այլ գույք կամ փաստաթղթեր գննելու (ուսումնասիրելու) նպատակով:

Հոդված 21. Արբիտրաժային վարույթի սկիզբը

Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա տվյալ վեճի հետ կապված արբիտրաժային վարույթը համարվում է սկսված՝ վեճն արբիտրաժին փոխանցելու մասին ծանուցումը պատասխանողի կողմից ստանալու օրը:

Հոդված 22. Արբիտրաժի լեզուն

(1) Կողմերն ազատ են որոշելու արբիտրաժային վարույթում կիրառվող լեզուն (լեզուները): Նման համաձայնության բացակայության դեպքում արբիտրաժային տրիբունալն ինքն է որոշում արբիտրաժի ժամանակ կիրառելի լեզուն (լեզուները): Այդ

համաձայնությունը կամ որոշումը, եթե դրանցում այլ բան չի նշվում, վերաբերում է կողմերի ցանկացած գրավոր հայտարարություններին, գործի ցանկացած լսումներին կամ արբիտրաժային տրիբունալի ցանկացած վճռին, որոշմանը կամ հաղորդակցությանը:

(2) Արբիտրաժային տրիբունալը կարող է որոշել, որ գրավոր ապացույցը ուղեկցվի այն լեզվի կամ լեզուների թարգմանությամբ, որի մասին կողմերը պայմանավորվել են, կամ որի վերաբերյալ արբիտրաժային տրիբունալը որոշում է կայացրել:

Հոդված 23. Պահանջը և պատասխանը

(1) Կողմերի կողմից համաձայնեցված կամ արբիտրաժային տրիբունալի կողմից սահմանված ժամկետում հայցվորը պետք է ներկայացնի իր պահանջը հիմնավորող փաստերը, վիճելի հարցերը և հատուցուման պահանջները, իսկ պատասխանողը պետք է ներկայացնի իր պատասխանն այդ պահանջների առնչությամբ, բացառությամբ եթե կողմերը սահմանել են այդպիսի պահանջների նկատմամբ այլ անհրաժեշտ տարրեր: Կողմերը իրենց պահանջներին կից կարող են ներկայացնել բոլոր այն փաստաթղթեր, որոնք նրանք կհամարեն վերաբերելի կամ կարող են հղում կատարել այն փաստաթղթերին և ապացույցներին, որոնք նրանք կներկայացնեն հետագայում:

(2) Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, յուրաքանչյուր կողմ կարող է արբիտրաժային վարույթի ընթացքում փոփոխել կամ համալրել իր պահանջը կամ պատասխանը, բացառությամբ եթե արբիտրաժային տրիբունալը

կհամարի անհարկի նման փոփոխություն թույլ տալը՝ հաշվի առնելով դրա ներկայացման ուշացման փաստը:

Հոդված 24. Լսումները և գրավոր վարույթը

(1) Կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չլինելու պարագայում, արբիտրաժային տրիբունալը որոշում է կայացնում ապացույցները կամ բանավոր փաստարկները ներկայացնելու նպատակով բանավոր լսումներ անցկացնելու կամ վարույթը փաստաթղթերի կամ այլ նյութերի հիման վրա անցկացնելու մասին: Այնուամենայնիվ, եթե կողմերը չեն համաձայնել, որ լսումներ տեղի չեն ունենալու, կողմերից մեկի միջնորդության հիման վրա արբիտրաժային տրիբունալը պետք է անցկացնի այդպիսի լսումներ վարույթի համապատասխան փուլում:

(2) Կողմերը պետք է նախապես պատշաճ ձևով ծանուցվեն արբիտրաժային տրիբունալի ցանկացած նիստի կամ ապրանքների, այլ գույքի զննման կամ փաստաթղթերի ուսումնասիրման նպատակով ցանկացած հանդիպման մասին: Կողմերից մեկի կողմից արբիտրաժային տրիբունալին ներկայացվող ցանկացած հայտարարություն, փաստաթուղթ կամ այլ տեղեկատվություն պետք է տրամադրվի նաև մյուս կողմին: Բացի այդ, փորձագետի ցանկացած եզրակացություն կամ ապացուցողական նշանակության փաստաթուղթ, որոնց հիման վրա արբիտրաժային տրիբունալը կարող է հիմնվել իր որոշումը կայացնելիս, պետք է տրամադրվի կողմերին:

Հոդված 25. Կողմի չներկայանալը

Կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չլինելու դեպքում՝ եթե առանց բավարար պատճառների՝

(ա) հայցվորը չի ներկայացնում իր պահանջը 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, ապա արբիտրաժային տրիբունալը պետք է դադարեցնի վարույթը,

(բ) պատասխանողը չի ներկայացնում իր պատասխանը 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, ապա արբիտրաժային տրիբունալը պետք է շարունակի վարույթը որպես այդպիսին, առանց համարելու այդ բացթողումը ինքնին որպես հայցվորի պահանջների ընդունում,

(գ) որևիցե կողմ չի ներկայանում լսումներին կամ չի ներկայացնում փաստաթղթային ապացույց, ապա արբիտրաժային տրիբունալը կարող է շարունակել վարույթը և վճիռ կայացրել առկա ապացույցների հիման վրա:

Հոդված 26. Արբիտրաժային տրիբունալի կողմից նշանակված փորձագետը

(1) Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, արբիտրաժային տրիբունալը՝

(ա) կարող է նշանակել մեկ կամ մի քանի փորձագետ՝ արբիտրաժային տրիբունալի կողմից որոշված հարցերի վերաբերյալ եզրակացություն տալու համար,

(բ) պահանջել կողմից՝ փորձագետին տրամադրել գործին վերաբերող ցանկացած տեղեկություն կամ ուսումնասիրության համար ներկայացնել գործին վերաբերող փաստաթղթեր,

ապրանքներ և այլ գույք կամ այդպիսի փաստաթղթերի, ապրանքների և այլ գույքի ուսումնասիրության հնարավորություն ստեղծել:

(2) Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա կողմերից մեկի միջնորդությամբ, կամ եթե արբիտրաժային տրիբունալն անհրաժեշտ համարի, փորձագետը պարտավոր է իր գրավոր կամ բանավոր եզրակացությունը ներկայացնելուց հետո մասնակցել նիստին, որտեղ արբիտրաժային տրիբունալին և կողմերին հնարավորություն կտրվի նրան հարցեր տալու, ինչպես նաև կողմերը կարող են ներկայացնել փորձագետ-վկաներ՝ քննվող հարցերի շուրջ բացատրություններ տալու նպատակով:

Հոդված 27. Ապացույց ձեռք բերելիս դատարանի աջակցությունը

Արբիտրաժային տրիբունալը կամ արբիտրաժային տրիբունալի թույլտվությամբ՝ կողմը, կարող է Պետության իրավասու դատարանից ապացույց ձեռք բերելու կապակցությամբ աջակցություն պահանջել: Դատարանը կարող է կատարել այդպիսի պահանջը իր իրավասության շրջանակներում և համաձայն ապացույցների ձեռքբերման վերաբերյալ կանոնների:

ԳԼՈՒԽ 6. ՎՃՌԻ ԿԱՅԱՑՈՒՄԸ ԵՎ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՎԱՐՏԸ

Հոդված 28. Վեճի էության նկատմամբ կիրառելի կանոնները

(1) Արբիտրաժային տրիբունալը վեճերը լուծելիս կիրառում է կողմերի համաձայնությամբ ընտրված իրավունքի նորմերը:

Ցանկացած պետության իրավունքին կամ իրավական համակարգին կատարված հղումը, եթե հստակ սահմանված չէ, պետք է մեկնաբանվի որպես տվյալ պետության իրավունքի նյութական, այլ ոչ թե կոլիզիոն նորմերին կատարված հղում:

(2) Կողմերի համաձայնության բացակայության դեպքում արբիտրաժային տրիբունալը կիրառում է այն իրավունքը, որը որոշված է իր կողմից կիրառելի համարվող կոլիզիոն նորմերով:

(3) Արբիտրաժային տրիբունալը կարող է վեճը լուծել արդարության ընդհանուր սկզբունքների հիման վրա (*ex aequo et bono*) կամ որպես հաշտարար միջնորդ (*amiable compositeur*) միայն այն դեպքում, եթե կողմերն արբիտրաժային տրիբունալին ուղղակիորեն լիազորել են այդ կապակցությամբ:

(4) Բոլոր դեպքերում արբիտրաժային տրիբունալը վեճը լուծում է պայմանագրի պայմանների համաձայն՝ հաշվի առնելով տվյալ գործարքի համար կիրառելի առևտրային սովորույթները:

Հոդված 29. Արբիտրաների խմբի կողմից որոշման կայացումը

Մեկից ավելի արբիտրաների մասնակցությամբ վեճի քննության դեպքում արբիտրաժային տրիբունալը վճիռ է կայացնում իր անդամների ձայների մեծամասնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ: Այնուամենայնիվ, նախագահողը կարող է որոշում կայացնել վարույթին առնչվող հարցերի շուրջ, եթե դրա համար լիազորված է կողմերի կամ արբիտրաժային տրիբունալի բոլոր անդամների կողմից:

Հոդված 30. Հաշտության համաձայնություն

(1) Եթե արբիտրաժի ընթացքում կողմերը հաշտությամբ լուծում են վեճը, ապա արբիտրաժային տրիբունալը դադարեցնում է գործի քննությունը, և կողմերի խնդրանքով արբիտրաժային տրիբունալի կողմից առարկության բացակայության դեպքում համաձայնեցված պայմաններով կայացնում է արբիտրաժային վճիռ՝ հաշտության համաձայնության մասին:

(2) Համաձայնեցված պայմանների շուրջ կայացված հաշտության համաձայնության վերաբերյալ արբիտրաժային վճիռը պետք է կայացվի սույն օրենքի 31-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ և պետք է պարունակի նշում այն մասին, որ այն հանդիսանում է արբիտրաժային վճիռ: Այդպիսի վճիռն ունի նույն կարգավիճակը և ուժը, ինչպես արբիտրաժային տրիբունալի կողմից ըստ գործի էության կայացվող ցանկացած այլ վճիռ:

Հոդված 31. Արբիտրաժային վճռի ձևը և բովանդակությունը

(1) Արբիտրաժային վճիռը պետք է կայացվի գրավոր ձևով և ստորագրվի միանձնյա արբիտրի կամ արբիտրների կողմից: Մեկից ավելի արբիտրների մասնակցությամբ արբիտրաժային վարույթի դեպքում բավական է արբիտրաժային տրիբունալի անդամների մեծամասնության ստորագրությունների առկայությունը այն պայմանով, որ վճռում նշվեն բացակայող ստորագրությունների պատճառները:

(2) Արբիտրաժային վճիռը պետք է լինի պատճառաբանված, բացառությամբ եթե կողմերը համաձայնել են, որ պատճառաբանություններ չպետք է նշվեն վճռում, կամ եթե

կայացվել է համաձայնեցված պայմանների շուրջ վճիռ՝ սույն օրենքի 30-րդ հոդվածին համապատասխան:

(3) Արբիտրաժային վճռում նշվում են արբիտրաժի անցկացման ամսաթիվը և վայրը՝ սույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան: Արբիտրաժային վճիռը համարվում է կայացված վճռում նշված վայրում:

(4) Արբիտրաժային վճռի կայացումից հետո յուրաքանչյուր կողմին պետք է ուղարկվի դրա պատճենը՝ ստորագրված արբիտրների կողմից՝ սույն հոդվածի 1-ին մասին համապատասխան:

Հոդված 32. Վարույթի ավարտը

(1) Արբիտրաժն ավարտվում է արբիտրաժային տրիբունալի կողմից վճռի կամ սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որոշման կայացմամբ:

(2) Արբիտրաժային տրիբունալն արբիտրաժի ավարտի վերաբերյալ կայացնում է որոշում այն դեպքում, երբ՝

(ա) հայցվորը հրաժարվում է հայցից, բացառությամբ, երբ պատասխանողն առարկում է գործի վարույթի ավարտման դեմ, և արբիտրաժային տրիբունալը ճանաչում է նրա օրինական շահը վեճի վերջնական կարգավորման հարցում.

(բ) կողմերը պայմանավորվում են վարույթի դադարեցման վերաբերյալ.

(գ) արբիտրաժային տրիբունալը գտնում է, որ գործի քննության շարունակումը որոշակի պատճառներով դարձել է ավելորդ կամ անհնարին:

(3) Արբիտրաժային տրիբունալի լիազորությունները դադարում են արբիտրաժի ավարտի հետ միաժամանակ՝ սույն

օրենքի 33-րդ հոդվածով և 34-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դրույթների հաշվառմամբ:

Հոդված 33. Վճռի ուղղումը և մեկնաբանումը. լրացուցիչ վճիռ

(1) Վճռի ստացումից 30 օրվա ընթացքում, եթե կողմերը այլ ժամանակահատված չեն համաձայնեցրել.

(ա) կողմը, տեղեկացնելով մյուս կողմին, կարող է դիմել արբիտրաժային տրիբունալ՝ խնդրելով ուղղել վճռում տեղ գտած թվաբանական սխալները, վրիպակները կամ տառախալները կամ նմանաբնույթ այլ սխալներ.

(բ) եթե կողմերը համաձայնեցրել են, մի կողմը, տեղեկացնելով մյուս կողմին, կարող է խնդրել արբիտրաժային դատարանին մեկնաբանել վճռի հատուկ կետ կամ մաս:

Եթե արբիտրաժային տրիբունալը այդ խնդրանքը հիմնավոր է համարում, ապա միջնորդության ստացումից հետո 30 օրվա ընթացքում պետք է կատարի ուղղումը կամ մեկնաբանումը: Մեկնաբանումը կազմում է վճռի մի մասը:

(2) Վճռի ընդունման օրվանից 30 օրվա ընթացքում արբիտրաժային տրիբունալը կարող է իր նախաձեռնությամբ ուղղել սույն հոդվածի 1-ին (ա) մասով նախատեսված ցանկացած տիպի սխալ:

(3) Եթե այլ կերպ համաձայնեցված չէ կողմերի կողմից, մի կողմը, տեղեկացնելով մյուս կողմին, վճռի ստացումից 30 օրվա ընթացքում կարող է խնդրել արբիտրաժային դատարանին կայացնել լրացուցիչ վճիռ արբիտրաժային վարույթում ներկայացված այն պահանջների վերաբերյալ, որոնք դուրս են մնացել արբիտրաժային վճռից: Եթե արբիտրաժային դատարանը

այդ խնդրանքը հիմնավոր է համարում, ապա պետք է կայացնի լրացուցիչ վճիռը 60 օրվա ընթացքում:

(4) Անհրաժեշտության դեպքում արբիտրաժային տրիբունալը կարող է երկարաձգել սույն հոդվածի 1-ին կամ 3-րդ մասերով նախատեսված սխալների ուղղման, պարզաբանման կամ լրացուցիչ վճռի կայացման ժամկետները:

(5) Վճռի ուղղման, պարզաբանման կամ լրացուցիչ վճռի կայացման դեպքերում կիրառվում են սույն օրենքի 31-րդ հոդվածի դրույթները:

ԳԼՈՒԽ VII. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎՃՌԻ ՎԻՃԱՐԿՈՒՄԸ

Հոդված 34. Չեղյալ ճանաչման դիմումը՝ որպես արբիտրաժային վճռի վիճարկման բացառիկ միջոց

(1) Արբիտրաժային վճռի վիճարկումը դատարանում կարող է կատարվել միայն չեղարկման դիմումի միջոցով սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համապատասխան:

(2) Արբիտրաժային վճիռը կարող է չեղարկվել 6-րդ հոդվածով սահմանված դատարանի կողմից, եթե միայն՝

(ա) դիմում ներկայացնող կողմն ապացույցներ ներկայացնի այն մասին, որ.

(i) սույն օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված արբիտրաժային համաձայնության կողմերից մեկը, իր հանդեպ կիրառելի իրավունքի համաձայն, եղել է անգործունակ, կամ արբիտրաժային համաձայնությունը կողմերի ընտրած իրավունքի կամ այդպիսին ընտրած

չլինելու դեպքում, սույն Պետության իրավունքի համաձայն, անվավեր է, կամ

(ii) տվյալ կողմը պատշաճ կերպով տեղեկացված չի եղել արբիտրի նշանակման կամ արբիտրաժի մասին կամ այլ պատճառներով զրկված է եղել իր գործը ներկայացնելու հնարավորությունից, կամ

(iii) վճիռ է կայացվել այնպիսի վեճի կապակցությամբ, որը նախատեսված չէր արբիտրաժային համաձայնությամբ կամ չի համապատասխանում նրա պայմաններին կամ պարունակում է այնպիսի որոշումներ, որոնք դուրս են արբիտրաժային համաձայնության սահմաններից, պայմանով սակայն, որ եթե արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված մասով կայացված որոշումները կարող են առանձնացվել այն որոշումներից, որոնք դուրս են արբիտրաժային համաձայնության սահմաններից, ապա կարող է չեղյալ ճանաչվել արբիտրաժային վճռի միայն այն մասը, որը ներառում է արբիտրաժային համաձայնությամբ չնախատեսված որոշումներ, կամ

(iv) արբիտրաժային տրիբունալի կազմավորումը կամ ընթացակարգը չի համապատասխանել կողմերի արբիտրաժային համաձայնությանը, բացառությամբ եթե այդ համաձայնությունը հակասում է սույն օրենքի պարտադիր դրույթներին, կամ նման համաձայնության բացակայության դեպքում այն չի համապատասխանել սույն օրենքին, կամ

(բ) դատարանը պարզի, որ

(i) համաձայն սույն Պետության իրավունքին՝ վեճի առարկան ենթակա չէ լուծման արբիտրաժի կողմից, կամ

(ii) արբիտրաժային վճիռը հակասում է սույն Պետության հանրային կարգին:

(3) Չեղյալ ճանաչման մասին դիմումը չի կարող ներկայացվել արբիտրաժային վճիռը ստանալուց երեք ամիսը լրանալուց հետո, իսկ այն դեպքում, երբ դիմում է ներկայացվել սույն օրենքի 33-րդ հոդվածով սահմանված կարգով՝ արբիտրաժային տրիբունալի կողմից այդ դիմումի կապակցությամբ կայացված վճռի օրվանից երեք ամիսը լրանալուց հետո:

(4) Դատարանը, որին ներկայացվել է արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու մասին դիմում, կարող է նպատակահարմար գտնել կամ կողմերից մեկի խնդրանքով որոշակի ժամանակով հետաձգել վարույթի չեղարկումը, որպեսզի հնարավորություն ընձեռի արբիտրաժային տրիբունալին վերսկսելու արբիտրաժային վարույթը կամ ձեռնարկելու այլ միջոցներ, որոնք արբիտրաժային տրիբունալի կարծիքով կարող են վերացնել արբիտրաժային վճռի բեկանման հիմքերը:

ԳԼՈՒԽ VIII. ՎՃՌԻ ԶԱՆԱԶՈՒՄԸ ԵՎ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Հոդված 35. Արբիտրաժային վճռի ճանաչումը և կատարումը

(1) Արբիտրաժային վճիռը, անկախ այն բանից, թե որ երկրում է այն կայացվել, պետք է ճանաչվի որպես պարտադիր և համապատասխան դատարանին գրավոր դիմելու դեպքում կատարվի սույն հոդվածի դրույթներին և 36-րդ հոդվածին համապատասխան:

(2) Վճռի վրա հիմնվող կամ վճռի կատարման համար միջնորդող կողմը պետք է ներկայացնի վճռի բնօրինակը կամ պատճենը: Եթե վճիռը շարադրված չէ տվյալ պետության պաշտոնական լեզվով, ապա դատարանը կարող է խնդրել, որ կողմը ներկայացնի դրա թարգմանությունը:⁴

(35-րդ հոդվածի 2-րդ կետը փոփոխվել է Հանձնաժողովի 39-րդ նստաշրջանի ժամանակ, 2006 թվականին)

Հոդված 36. Ծանաչումը և կատարումը մերժելու հիմքերը

(1) Արբիտրաժային վճռի ճանաչումը կամ կատարումը, անկախ այն բանից, թե որ երկրում է ընդունվել վճիռը, կարող է մերժվել միայն՝

(ա) այն կողմի խնդրանքով, որի դեմ այն ուղղված է, եթե այդ կողմն ապացույցներ ներկայացնի դատարան, որտեղ հայցվում է վճռի ճանաչումը կամ կատարումը այն մասին, որ.

(i) սույն օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված արբիտրաժային համաձայնության կողմերից մեկը եղել է անգործունակ, կամ տվյալ արբիտրաժային համաձայնությունը անվավեր է կողմերի ընտրած իրավունքի համաձայն կամ այդպիսին ընտրած չլինելու դեպքում տվյալ Պետության իրավունքով, կամ

(ii) տվյալ կողմը պատշաճ կերպով տեղեկացված չի եղել արբիտրի նշանակման կամ արբիտրաժային վարույթի

⁴ Սույն մասում տեղ գտած պայմանները նպատակամղված են սահմանելու առավելագույն չափանիշները: Հետևաբար, եթե պետությունը սահմանի պակաս ծանրաբեռնող պայմաններ, ապա դա չի հակասի ներդաշնակությանը, որին ձգտում է հասնել տիպային օրենքը:

մասին կամ այլ պատճառներով անկարող էր իր գործը ներկայացնել, կամ

(iii) վճիռ է կայացվել այնպիսի վեճի կապակցությամբ, որը նախատեսված չէր արբիտրաժային համաձայնությամբ կամ չի համապատասխանում նրա պայմաններին կամ պարունակում է այնպիսի որոշումներ, որոնք դուրս են արբիտրաժային համաձայնության սահմաններից, պայմանով սակայն, որ եթե արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված մասով կայացված որոշումները կարող են առանձնացվել այն որոշումներից, որոնք դուրս են արբիտրաժային համաձայնության սահմաններից, ապա արբիտրաժային վճռի միայն այն մասը, որը ներառում է արբիտրաժային համաձայնությամբ չնախատեսված որոշումներ, կարող է ճանաչվել և կատարվել, կամ

(iv) արբիտրաժային տրիբունալի կազմավորումը կամ ընթացակարգը չի համապատասխանել կողմերի արբիտրաժային համաձայնությանը կամ նման համաձայնության բացակայության դեպքում չի համապատասխանել վճռի կայացման երկրի օրենսդրությանը,

(v) արբիտրաժային վճիռը դեռևս չի դարձել պարտադիր կողմերի համար կամ չեղյալ է ճանաչվել, կամ դրա կատարումը կասեցվել է այն պետության դատարանի կողմից, որտեղ կամ որի իրավունքի համաձայն կայացվել է այդ վճիռը, կամ

(բ) դատարանը պարզի, որ

- (i) համաձայն տվյալ Պետության իրավունքին՝ վեճի առարկան ենթակա չէ լուծման արբիտրաժի կողմից, կամ
 - (ii) վճռի ճանաչումը կամ կատարումը հակասում է տվյալ Պետության հանրային կարգին:
- (2) Եթե սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ե» ենթակետով նախատեսված դատարանին դիմում է ներկայացվել վճիռը չեղյալ ճանաչելու կամ վճռի կատարումը կասեցնելու վերաբերյալ, ապա դատարանը, որտեղ հայցվում են վճռի ճանաչումը և կատարումը, կարող է իր հայեցողությամբ հետաձգել իր կողմից կայացվելիք որոշումը, ինչպես նաև պարտադրել մյուս կողմին ներկայացնել համազոր ապահովում՝ հիմք ընդունելով վճռի ճանաչումը և կատարումը հայցող կողմի դիմումը:

Լրացուցիչ տեղեկության համար տես ՈՒՆՄԻՏՐԱԼ-ի պաշտոնական կայքը «www.uncitral.org» էլեկտրոնային հասցեով կամ կապվել ՈՒՆՄԻՏՐԱԼ-ի քարտուղարությանը՝

Վիեննայի միջազգային կենտրոն

P.O. Box 500, 1400

Վիեննա, Ավստրիա

Հեռ.: (+43-1) 26060-4060

Ֆաքս: (+43-1) 26060-5813

Էլ. հասցե: «www.uncitral.org»

Էլ. փոստ: uncitral@uncitral.org

ՀԱՎԵԼՎԱԾ III

ՈՒՆՍԻՏՐԱԼ-Ի ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ, 2006Թ.

Օրարերկրյա արքիպրաժային վճիռների ճանաչման և կարարման մասին 1958թ. հունիսի 10-ի Նյու-Յորքի կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ մասի և 7-րդ հոդվածի 1-ին մասի մեկնաբանության վերաբերյալ հանձնարարական՝ ընդունված ՄԱԿ-ի Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի կողմից:

ՄԱԿ-ի Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովը,

Վկայակոչելով Գլխավոր ասամբլեայի 1966թ. դեկտեմբերի 17-ի 2205 բանաձևը(XXI), որով հիմնվեց ՄԱԿ-ի Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովը, նպատակ ունենալով աջակցել միջազգային առևտրային իրավունքի առաջ ընթացող ներդաշնակությունը և ունիֆիկացիան, այդ թվում՝ խթանելով այն ուղիները և միջոցները, որոնք կապահովեն միջազգային կոնվենցիաների միատեսակ մեկնաբանությունը և կիրառումը և միջազգային առևտրային իրավունքի ոլորտում միատեսակ օրենքները,

Գիտակցելով այն փաստը, որ աշխարհի տարբեր իրավական, սոցիալական և տնտեսական համակարգեր, ինչպես նաև զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրներ ներկայացված են Հանձնաժողովում,

Վերհիշելով Գլխավոր ասամբլեայի հաջորդող բանաձևերը, որոնք վերահաստատում են ՄԱԿ-ի համակարգում Հանձնաժողովի իրավասությունը միջազգային առևտրային իրավունքի ոլորտում

որպես առանցքային մարմին՝ համակարգելու այս ոլորտի ծրագրերը,

Համոզված լինելով, որ Օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման մասին 1958թ. հունիսի 10-ի Նյու-Յորքի կոնվենցիայի լայն ընդունումը նշանակալից ձեռքբերում է եղել իրավունքի գերակայության աջակցության գործում, հատկապես միջազգային առևտրի ոլորտում,

Վկայակոչելով Նախապատրաստող Հանձնաժողովը, որը նախապատրաստել է և ներկայացրել Կոնվենցիան ստորագրելու համար, ընդունեց մի բանաձև, որը, մասնավորապես, նշում է, որ Կոնֆերանսը «գտնում է, որ արբիտրաժի վերաբերյալ ազգային օրենսդրությունների համընդհանուր միատեսակությունը կնպաստի արբիտրաժի միջոցով մասնավոր իրավունքի ոլորտում ծագած վեճերի կարգավորման արդյունավետությանը»,

Հաշվի առնելով Կոնվենցիայի պահանջների տարատեսակ մեկնաբանությունները, որոնք մասամբ բխում են Կոնվենցիայի հինգ համահավասար վավեր տեքստերի տարբերվող ձևակերպումներից,

Նկատի ունենալով Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասը, որի նպատակն է առավելագույնս հնարավորություն տալ օտարերկրյա արբիտրաժային վճիռների կատարմանը, հատկապես ճանաչելով ցանկացած շահագրգռված կողմի իրավունքը՝ օգտվելու այն երկրի օրենսդրությունից կամ միջազգային պայմանագրերից, որտեղ հայցվում է վճիռի կատարումը, ներառյալ այնտեղ, որտեղ նման օրենսդրությունը կամ միջազգային պայմանագրերը տրամադրում են առավել նպաստավոր պայմաններ, քան Կոնվենցիան,

Հաշվի առնելով էլեկտրոնային առևտրի լայն կիրառումը,

Նկատի ունենալով այնպիսի միջազգային իրավական գործիքներ, ինչպիսիք են Միջազգային առևտրային արբիտրաժի մասին 1985թ. ՈՒՆՄԻՏԲԱԼ-ի տիպային օրենքը, իր հետագա վերանայված տարբերակով, մասնավորապես ի նկատի ունենալով 7-րդ հոդվածը, Էլեկտրոնային առևտրի մասին ՈՒՆՄԻՏԲԱԼ տիպային օրենքը, Էլեկտրոնային ստորագրությունների մասին ՈՒՆՄԻՏԲԱԼ տիպային օրենքը և Միջազգային պայմանագրերում Էլեկտրոնային հաղորդակցությունների օգտագործման մասին ՄԱԿ-ի կոնվենցիան,

Հաշվի առնելով նաև ներպետական օրենսդրության ընդունումը, ինչպես նաև առավել նպաստավոր նախադեպային իրավունքը, քան արբիտրաժային համաձայնությունների ձևի նկատմամբ Կոնվենցիայի պահանջները, արբիտրաժային վարույթների և արբիտրաժային վճիռների կատարման վերաբերյալ,

Նկատի ունենալով, որ Կոնվենցիան մեկնաբանելիս ուշադրություն պետք է դարձնել արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման աջակցության անհրաժեշտության վրա,

1. *Հանձնարարում է,* որ Օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման մասին 1958թ. հունիսի 10-ի Նյու-Յորքի կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ մասը կիրառվի՝ ճանաչելով դրանում նկարագրված հանգամանքները որպես ոչ սպառիչ,

2. *Հանձնարարում է նաև,* որ Օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման մասին 1958թ. հունիսի 10-ի Նյու-Յորքի կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասը պետք է կիրառվի այնպես, որ թույլատրվի շահագրգիռ կողմին օգտվելու իր իրավունքներից, որոնք վերջինս կարող է ունենալ, համաձայն այն

ՀԱՎԵԼՎԱԾ III

երկրի իրավունքին կամ միջազգային պայմանագրերին, որտեղ հայցվում է արբիտրաժային համաձայնության կատարումը՝ պահանջելու նման արբիտրաժային համաձայնության վավերականության ճանաչումը:

Լրացուցիչ տեղեկության համար տես ՈՒՆՄԻՏՐԱԼ-ի պաշտոնական կայքը «www.unictral.org» էլեկտրոնային հասցեով կամ կապիվել ՈՒՆՄԻՏՐԱԼ-ի քարտուղարությանը՝

Վիեննայի միջազգային կենտրոն

P.O. Box 500, 1400

Վիեննա, Ավստրիա

Հեռ.: (+43-1) 26060-4060

Ֆաքս: (+43-1) 26060-5813

Էլ. հասցե: «www.uncitral.org»

Էլ. փոստ: uncitral@uncitral.org

ՀԱՎԵԼՎԱԾ IV

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Նյու-Յորքի կոնվենցիայի վերաբերյալ նախադեպային իրավունքի մասին հնարավոր է փնտրել Առևտրային արբիտրաժի միջազգային խորհրդի պաշտոնական կայքէջում.

«www.arbitration-icca.org»

Կայքն անվճար է: Այն պարունակում է ավելի քան 1666 դատական որոշումներ, որոնք կիրառել են Նյու-Յորքի կոնվենցիան և հրատարակվել են 1976 թ.-ից ի վեր այս ոլորտի առաջնակարգ հրատարակությունում՝ ԱԱՀՄԽ-ի *Առևտրային արբիտրաժի տարեգրքում* (ICCA's Yearbook Commercial Arbitration): Որոշումները ցուցակագրված են ըստ Կոնվենցիայի հոդվածների և ըստ թեմայի: Որոշումներն իրենց հերթին հրատարակվում են *Տարեգրքի* հատորներում, ինչպես նաև հասանելի են «KluwerArbitration» կայքին բաժանորդագրվելու դեպքում «www.kluwerarbitration.com» կայքում: Այս կայքում տեղ գտած բոլոր նյութերն ամբողջովին փնտրվող են տարբեր գործիքների գործադրմամբ:

Կոնվենցիային վերաբերյալ նախադեպային իրավունքի վերաբերյալ նաև հնարավոր է փնտրել ԱՄՆ-ի Մայամիի համալսարանի՝ Նյու-Յորքի կոնվենցիային նվիրված կայքէջում.

«www.newyorkconvention.org»

Կայքն անվճար է: Այն նույնպես պարունակում է Կոնվենցիայի վերաբերյալ որոշումներ, որոնք հրատարակվել են *Տարեգրքում* 1976 թ.-ից ի վեր՝ ցուցակագրված ըստ հոդվածների և ըստ թեմաների: Կայքում նաև գետեղված են՝

- Նյու-Յորքի կոնվենցիայի աուտենտիկ տեքստերը,
- Կոնվենցիայի թարգմանությունները որոշ լեզուներով,
- պրոֆեսոր Ալբերտ Յան վան դեն Բերգի մեկնաբանությունը,
- պայմանավորվող Պետությունների ցանկը:

ՆՇՈՒՄՆԵՐ

